

891.9944

+

00 AUG 2010

1-73K3



ՀԱՆԴԵՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

NL

Ա.

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ

Փ Ա Ր Ի Ձ
1933

„V E M“
REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE
DIRECTEUR: S. VRATZIAN.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

«ՎԷՄ» (Խմբ.)	1
ՊՐՈՖ. Ն. ԱԳՈՆՅ.— Խաչատուր Աբովեանի վախճանը	5
Ա. ԶԱՄԱԼԵԱՆ.— Ամենայն Հայոց Բանաստեղծը	14
Յ. ԶԱԻՐԵԱՆ.— Սայեաք Նովա	28
Ռ. ԲԵՐԲԵՐԵԱՆ.— Ռ. Պատկանեանի անտիպ նամակները	39
Շ. ՆԱՐԴՈՒՆԻ.— Փորձ Համեմատութեան երբբայական Բանաստեղծութեան և Գոյքան երգերու միջեւ	53
Ա. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ.— Օպոգիցիան Հանրապ. Հայաստանում	63
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ.— Հայկական Բարենորոգումները	83
Վ. ՄԻՆԱՆՈՐԵԱՆ.— Անջատականները	100
ԲԺ. Մ. ԶԱԼԵԱՆ.— 80ական և 90ական քականները	121
Յ. ԹԱԴԵՈՍԵԱՆ.— Մոսկւայում	
ԱՆՅԵԱԼՔ.— Ա. Շախաբունեան (Ն. Աղաբեան).— Արմէն Գարօ.— Նար-Դոս	122
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ.— Հայրիկի նամակը.— Շահան Զրպետի նամակը Ղուկաս կաթ.—ին	133
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ.— Հեքում Պատմիչ և չինական նկարչութիւնը.— Խ. Աբովեանի արձանը.— Ռուսահայ Թատրոնի 75ամեակը	141
ԳԻՐԳ ԵՒ ՄԱՄՈՒԼ.— «Հայ Մամուլը»	144
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ.—	148
ՅԱԻԵԼԻԱՅ.— Վահրամ եպ. Մանկունի, «Գէորգ Դ. և իր ժամանակը»	1-16

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ


Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Իտալիա՝	տարեկան 65 ֆրանք
Ֆրանսա և այլ երկրներ	50 ֆրանք
Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան, Սիրիա, Պարսկաստան	40 ֆրանք

Հասցէ՝ նամակների, դրամի, յօդածների և ուրիշ ամէն տեսակ առաքումների համար —

S. VRATZIAN,
4, Sq. Léon de Bertalot, Courbevoie-Bécon (S).

Vem-Pierre.

Gérant: V. Hampartzoumian.



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ
ՄՇԱԿՈՅԹ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՏԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 1.

1933

ՍԵՊՏ.—ՀՈԿՏԵՄԲԵՐ

„Վ Է Մ“

Թերթ ու պարբերական շատ ունիմք արտասահմանում, կարելի է ասել՝ շուայութեան աստիճան շատ, այդ պատճառով այս նոր հանդէսը ունանց կողմից, բերես, դիտի ուժերի և նիւթական միջոցների աւելւորդ սպառում: Մեզ քում է, որ այսպէս մտածողները կը սխալեն: Մեր համոզումով «ՎԷՄ»ը ծնունդ է կեանքի իրական պահանջի:

Ի՞նչ է լինելու «ՎԷՄ»ի նպատակը, նրա գրադուրի հիմնական առարկան:

Երկու խօսքով՝ ՄՇԱԿՈՅԹ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ:

Մշակոյթը մի ժողովրդի հոգեւոր և նիւթական ստեղծագործութեան արդիւնքն է, ազգային հանճարի խտացումը, այն ամուր-անասան վէմը, որի վրա հաստատուած է ազգային գոյութեան շէնքը: Ժողովուրդները մշակոյթով են ազգ: Առանց գարգացած, կենդանի մշակոյթի ազգ չկայ:

Մշակոյթը իր էութեամբ ազգային է: Ո՛չ միջազգային, ո՛չ դասակարգային — գերազանցապէս ազգային: Որպէս մի ժողովրդի մտաւոր, բարոյական ու տնտեսական, մի խօսքով, բովանդակ կարողութիւնների քանճարացեալ արտայայտութիւն՝ մշակոյթն իր վրա կրում է ազգային անհատականութեան կնիքն ու քաղի: Ինչքան մի ժողովուրդ վեր է քաղաքակրթութեան սանդուխի վրա, այնքան բարձր ու կատարեալ է նրա մշակոյթը: Ասել է՝ մշակոյթը ժողովուրդների գարգացման և յառաջդիմութեան աստիճանաչափն է: Այս իսկ պատճառով՝ ով ուզում է ծառայել իր ժողովրդի յառաջդիմութեան՝ ամենից առաջ պէտք է աշխատի բարձրացնել ու կատարելութեան հասցնել նրա մշակոյթը:



491-2001

Պատմական դէպքերի բերումով հայ ժողովուրդն այսօր բաժանած է երկու խոշոր հաստատությունների՝ ա՛յն որ ապրում է հորհրդային Միության սահմաններում, ա՛յն որ ցրած է ծագացի ծագս աշխարհի՝ տարագիր եւ անհայրենիք: Հայ մշակույթն էլ իր գոյութեան պայմաններով եւ զարգացման հնարաւորութիւններով գտնուում է այն երկու տրամագծօրէն տարբեր միջավայրերի ազդեցութեան ներքոյ — այնտեղ՝ առարկայ ընկերային խելացնոր փորձերի, այստեղ՝ ուժացման ու փոշիացման սպառնալիքի տակ: Այնտեղ՝ «ձեռով ազգային, բովանդակութեամբ միջազգային կուտուրայի» ֆաղափակնութեան կիրառումով խորհրդային իշխանութիւնը ձգտում է արմատախիլ անել հայ ժողովրդի ինքնուրոյն գոյութեան եւ զարգացման հիմքերը, ազգային ազատ անհատականութեան տեղ հաստատել անկերպարան ու դիմագուրկ կոլխոզ: Այստեղ, իրրեւ հետեւանք տիրող բացարձակ ազատութեան մշակույթի ասպարէզում, փանակով ու որակով թոյլ մշակույթները արագութեամբ ձեւափոխուում ու լուծուում են մեծ ազգերի մշակույթի անծայրածիր ովկիանոսներում:

Այս պայմաններում երկու միջավայրերի մէջ էլ հայ ժողովրդի համար ստիպողական գործ է դառնում ինքնապաշտպանութիւնը, ազգային մշակույթի, հետեւաբար եւ ազգային հաւաքական գոյութեան հնարաւորութիւնների ամրապնդման պահանջը: Այնտեղ՝ պաշտպանել *բունի* այլասերման եւ ապազգայնացման դէմ. այստեղ՝ պաշտպանել *ազա՛տ* այլասերման եւ ապազգայնացման դէմ: Ե՛ւ այնտեղ, ե՛ւ այստեղ ֆաղափական պայքարի կողքին անխուսափելի կերպով լայնանում է, խորանում է նաեւ մշակութային պայքարի ընդհանուր գակատը: Վե՛ր հանել անցեալի ու ներկայի արժէքները, շնչել ազգային մշակույթի մթնոլորտում, համակել, ապրել ու ոգեւորել հայ արւեստով ու գրականութեամբ, մեր սփանչելի ժողովրդի մտքի ու բազուկի, նրա անշէշ լոյսի պէս դարեր ու դարեր վառուղ հանճարի ստեղծագործած արգասիքներով — մեր դատի յաջողութեան համար նոյնքան մեծ եւ անհրաժեշտ գործ է, որքան եւ պայքարը ֆաղափական գետնի վրա:

Ազգային ինքնապաշտպանութեան եւ զարգացման տեսակետից նոյնքան կարեւոր ազդակ է եւ պատմութիւնը: Եթէ անվիճելի է, որ այսօրը կամուրջ է երէկւայ եւ վաղւայ միջեւ, որ ապագան՝ անցեալի շարունակութիւնն է, նշմարիտ է նոյնպէս, որ ապագայի շէնքի լաւագոյն կառուցման համար, ամենից առաջ, հարկաւոր է հանաչում անցեալի: Պատմութիւնը լաւագոյն, դպրոցն է, որ

իմաստութեան դասեր է աւանդում: Սոսկական անհատ քէ ժողովուրդ, ազգ քէ դասակարգ, պետութիւն քէ մասնաւոր կազմակերպութիւն, ընկերային իւրաքանչիւր կենդանի մարմին պարտաւոր է գիտնալ իր անցեալ կեանքի հանգամանքները, որպէսզի կարողանայ առողջ եւ հաստատուն հիմքերի վրա դնել իր ներկան ու ապագան: Անցեալի փորձը պատմութեան միջոցով է փոխանցուում նոր սերունդներին: Ապրւած փորձից օգտւել, պատմութիւնից իմաստութեան եւ ներշնչումի խրատներ առնել, անցեալի լոյսով լուսաւորել գալիքը, անցեալի միջոցով ծառայել ապագային — ա՛յս է պատմութեան բուն նպատակը: Կամ մեր մեծ երգիծաբան Յ. Պարոնեանի խօսքով՝ «Պատմութիւնը՝ ետիդ նայել, առջեւդ տեսնել»: Աւելի եւս վնասկան. «Կապրին ա՛յն ժողովուրդները, որոնք անցեալի հպարտութիւնն ունին, ներկային պիտի փարած են իրենց ստեղծագործութիւններով ու իտէլաներով եւ որոնք իրաւամբ վստահաբար կը նային ապագային» (Յ. Շահրիկեան):

Այս տեսակետից, չափազանց մեծ աշխատանք կայ դեռ հայ մտաւորականութեան առջեւ: Ճիշտ է, վերջին տասնամեակում շօշափելի գործ է կատարւած այս ուղղութեամբ, բայց մեր պատմութիւնը, մանաւանդ նրա նորագոյն շրջանը, որ «ՎԷՄ»ի գրադումի գլխաւոր առարկան է հանդիսանալու, կարելի է ասել, մնացել է կատարեալ արօս՝ չհերկւած հող: Վաղուց արդէն ժամանակն է, որ պատմական նիւքերը հանեն հանրային եւ անհատական դիւանների փոշիների տակից, աւելի լայն չափերով փնտենն ու լուսաբանեն՝ պարզելու համար հայ անցեալ կեանքի իրական պատկերը իր բոլոր արտայայտութիւններով:

Վերջապէս, չպէտք է մոռանալ եւ այն կարեւոր հանգամանքը, որ, ինչպէս ամէն ժողովուրդ, հայն էլ ստեղծւած չէ արտաքին աշխարհից անկախ, մեկուսի կեանքով ապրելու համար: Նրա կեանքն ու ֆակտագիքն էլ հազար ու բիւր թելերով կապւած են ուրիշ ժողովուրդների կեանքին ու ֆակտագիքին: Այդ պատճառով, քէկուզ հեճց հայ մշակույթի եւ պատմութեան ուղիների նշտարշման համար անհրաժեշտ է ծանօթ լինել ու հետեւել նաեւ ուրիշ ժողովուրդների կեանքին եւ զարգացման պայմաններին:

Ահա ա՛յս նպատակներին է ուզում սպասաւորել «ՎԷՄ»ը: Բնականաբար, նա ոչ առաջինն է այս ասպարէզում, ոչ էլ վերջինն է լինելու: Նա չի գալիս նոր Ամերիկաներ բանալու խոստումով: Նրա դերը լինելու է համեստ — միասնալ ուրիշների թափած ուրիշներ՝ այն համոզումով, որ ինչքան շատ լինեն մշակույթի եւ պատմ-

մութեան բնագաւառում աշխատողները, այնքան լաւ հայ ժողովրդի համար:

Առանց աղմուկի, կամ ի յառաջագունէ կազմած կարծիքի եւ նախասիրութեան, «ՎԷՄ»ը ջանալու է արձանագրել, երեսն հանել, քննել ու վերլուծել հայ, կարելիութեան սահմաններում նաեւ ուրիշ ժողովուրդների մշակոյթի եւ անցեալ կեանքի փաստերն ու հանգամանքները, պարզել նրանց ներքին իմաստը եւ կապակցութեան մէջ դնել ապագայ զարգացման հեռանկարների հետ: «ՎԷՄ»ի ղեկավար սկզբունքն է լինելու գիտական առարկայականութիւնն ու նշմարտութիւնը, միայն նշմարտութիւնը, ամբողջ նշմարտութիւնը՝ համոզւած, որ անգամ ամենադառն նշմարտութիւնը աւելի օգտակար է, քան ոսկեգօծ ու շաքարապատ սուտը:

Իր առաջադրած նպատակին հասնելու համար «ՎԷՄ»ը չի փակելու դաւանաբանական կամ հատուծական պարիսպների մէջ: Նրա էջերը բաց պիտի լինեն մեր մտաւորականութեան բոլոր ստեղծագործ խաւերի առջեւ, որոնք տոգորւած են հայ ժողովրդի հաւաքական գոյութեան ու զարգացման մտահոգութիւններով եւ անկեղծօրէն ցանկանում են ծառայել հայ մշակոյթի եւ պատմութեան դասին: Եթէ ներքին է այս համեմատութիւնը, «ՎԷՄ»ը իր սահմանում ձգտելու է դառնալ յառաջադէմ մտաւորականութեան կռաւիթոն, մի տեսակ խորհրդարան մտքի ու խօսքի, ուր ծեծւելու են մեր անցեալի հարցերը՝ ապագայի անսխալ ուղիներ հարթելու նպատակով: Անցեալ դէպքերի միշտ լուսաբանութեան եւ գնահատութեան համար հայեացքների տարբերութիւնը, կամ նոյն իսկ ներհակութիւնն ու բախումը անպայման դրական գործօն է:

Վերջացնելուց առաջ, երկու խօսք էլ հանդէսի նիւթական կողմի մասին: Մենք չենք փաշտում ասելու, որ «ՎԷՄ»ի նիւթական ապահովութիւնը ամբողջապէս կախած է ընթերցող հասարակութեան ցոյց տալիք հետաքրքրութեան, համակրանքի եւ աջակցութեան աստիճանից: «ՎԷՄ»ը գոտ գաղափարական ձեռնարկ է, նրա քիւրիոսֆում անհատ կամ կազմակերպւած յեռարաններ չկան: «ՎԷՄ»ի միակ յեռարանը իր հաւատն է դէպի սկսած գործի կարեւորութիւնը: Իսկ յայտնի է, որ հաւատով լեռներ կարելի է շարժել տեղից:

ԽՄԲ.

ՊՐՈՓ. ՆԻԿ. ԱԳՈՆՑ

ԽՍԶԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆԻ ՎԱԽՃԱՆԸ

Այն մարդը, որ պէտք է խաղաղ հանգչէր փառքի թաւհայ բարձերի վերա, կորաւ անյայտութեան մէջ: Շատերը փորձեցին լուծել այս խորհրդաւոր անհետացումի կնճիւղը: Ի զուր: Ահա մի նոր փորձ եւս. Խաչատուր Արովեանի անյայտ բացակայումը, Ա. Բակունց*):

Արդե՞օք յաջողել է Ա. Բակունց պատուել անյայտութեան քօղը: Տարաբախտաբար, ո՛չ: Կարելի է ասել, որ եղած քօղի վրա պարզել է մի նոր եւ բանաստեղծական շղարշ:

Երիտասարդ հեղինակը տրամադրել է նոր եւ մինչեւ այժմ անծանօթ նիւթեր եւ եկել է այն օտարոտի եղբակացութեան, թէ Արովեանի չբացումը գաղտնի կապ է ունեցել 1848 թվի փետրւարեան յեղափոխութեան հետ, այսինքն, մեծ ընդլզումի ձայնը հրապուրել է Արովեանին եւ ստիպել թողնել տուն-տեղ, ընտանիք եւ անցնել անխօսէն Երասխը դէպի Տաճկահայաստան եւ այնտեղից էլ թերեւս մի ուրիշ(°) տեղ:

Այս անհեթեթ գաղափարը կաշկանդել է հեղինակի մտածողութիւնը եւ թիւր ու կամայական ուղղութիւն տուել ամբողջ հետազօտութեան:

Արտասովոր ներողամտութեամբ անպարտ է արձակել պ. Բակունց այն անձերին, որոնք անպայման համարատու են տխուր իրողութեան, եթէ ոչ իսկական մեղաւորներ:

Նա անցցոյշ է, երբ պնդում է, որ գաւառապետն ու ոստիկանապետը, այդ երկու ոխերիմները անբախտ Արովեանի, կատարել են իրենց պարտականութիւնը խղճմտօրէն, ամիսներ շարունակ, որպէս թէ որոնել են, եւ բնաւ յանցապարտ չեն, եթէ արդիւնքի չեն հասել:

Սակայն, փաստերը այլ բան են ասում, այն փաստերը, որ բերում է ինքը Բակունցը:

*) Ակսէլ Բակունց, Խաչատուր Արովեանի անյայտ բացակայումը, Երեւան, 1932.

Արժուեանը դուրս է եկել տանից 1848 թվին ապրիլի 2ին եւ այլեւս չի վերադարձել:

Մարտ 9ից նա արդէն արձակած էր տեսչական պաշտօնից, եւ մնացել էր դպրոցում որպէս պաշտօնակատար տեսչի մինչեւ նոյն ամսի 31. նոր տեսուչը, նրա փոխանորդը, ոմն Տուրկեստանով ժամանել էր մարտի 30ին եւ նոյն օրն եւեթ շտապել էր ստանալ դպրոցի դիւանը: Բայց հաղիւ կարողացել էր ստուգել նախորդ տարւայ դործերը: Զարմանալի է որ այդքան անհամբեր նոր տեսուչը չէ շարունակել հաշւառութիւնը հետեւեալ՝ մարտի 31 եւ ապրիլի 1 օրերը: Այն ինչ մարտի 31ին Արժուեանը թուում է թէ եղել է դպրոցում, քանի որ իր ձեռքով կազմած ցուցակը ուսուցչական ռոճիկների վերաբերում է այդ օրւան: Այսպէս, որ Բախունց տւել է միայն Արժուեանի ստացականը. արժէր բերել ամբողջ ցուցակը: Հին տեսուչը թէեւ արդէն պաշտօնաթող էր մարտի 9ից, բայց շարունակել է վարել դպրոցի դործերը մինչեւ մարտի 31, եւ չնայելով այս հանգամանքին, նրա ռոճիկը հաշւած է միմիայն մինչեւ մարտի 9ը, որ է 9 րուբլի 33 կոպեկ: Պաշտօնակատարութեան համար վարձատրութիւն չեն տւել, մի բան, որ բնորոշում է իշխանութեան անարդար վերաբերումը դէպի երէկւայ տեսուչը:

Միանգամայն բնական է հարցնել, ինչո՞ւ Արժուեանի յաջորդը, որ այնպէս հապճեպով, իր դալստեան օրն եւ եթ ձեռքը դրել էր դպրոցի դործերի վերա, յանկարծ դադում է իր աշխոյժը եւ չի հետաքրքրում դպրոցական դործով ո՛չ մարտի 31, ո՛չ ապրիլի մէկին, եւ ոչ երկուսին: Ապրիլի 3ին լսում է, որ Արժուեանը նախորդ օրը տանից դուրս եկել եւ դեռ չէ վերադարձել եւ հարկ է տեսնում անյապաղ յայտնել դաւառապետին: Այլեւ խնդրում է նրան զրկել մի պաշտօնական անձ ներկայ լինելու դպրոցական հաշիւների քննութեան, կարծես վստահ էր, որ Արժուեանի կորուստը անդառնալի է:

Զարմանալի չէ՞ նոր տեսչի այս նոր փութկոտութիւնը եւ այն էլ երեքօրեայ քննածութիւնից յետոյ: Արժուեան կարող էր գիշերած լինել բարեկամի մօտ, դուցէ իր հայրենի գիւղն էր դնացել կամ գործով մնացել մի այլ տեղ: Բնական էր սպասել մինչեւ խնդիրը պարզւէր, արդեօք չքացումը ժամանակաւոր է թէ ընդմիշտ: Նոր տեսչի բռնած գիրքը ինքնին կասկած է յաբուցանում, կարծես նա գիտէր որ վերադարձը անյոյս էր:

Նոր տեսչի երեքօրեայ հանգիստը հասկանալու համար, ենթադրեցինք, որ թերեւս տօնական օրերն են եղել, որ արգելել

են դործը շարունակելու: Մարտի 31 արդարեւ կիւրակի օր էր 1848 թվին, մեծ պատի կիւրակներից մէկը, եւ հետեւապէս հասկանալի է Տուրկեստանովի դադարը միայն այդ օրւան համար: Յաջորդ երկու օրը, ապրիլի 1 եւ 2 տօն չկար եւ ուրեմն անհասկանալի, որ նա չէր շտապել ստանձնելու դպրոցը:

Մի այլ կնճիռ: Տեսանք որ Բախունցի հրատարակած վաւերագրից երեւում է որ Արժուեան մարտի 31ին կազմել է ուսուցիչների ռոճիկացուցակը, որի հիմամբ նոյն Բախունց ասում է, որ մարտի 31ին Արժուեան վերջին անգամ դուրս է դալիս դպրոցից, առանձնանում իր սենեակում եւ անհետ կորչում: Սակայն, մարտի 31ին կիւրակի էր, դպրոցը փակ, եւ Արժուեան չէր կարող ո՛չ դպրոցում լինել, ո՛չ ռոճիկների ցուցակը կազմել ու իր բաժին 9 րուբլին ստանալ: Այսպէս ուրեմն Արժուեանի ստացականը (էջ 51) եթէ վաւերական է, չէ կարող գրւած լինել մարտի 31ին:

Արժուեան ուսուցիչների ռոճիկը պատւիրել էր, բայց մարտ ամսւայ արձանագրութիւնը չէր կազմել եւ որովհետեւ, ըստ Բախունցի, առանց այդ արձանագրութեան չէր կարելի նոր «դրամական գրանցումներ անել մայր մատեանում», ուստի նոր տեսուչը կեղծում է Արժուեանի ստորագրութիւնը եւ ուսուցիչներին ստորագրել տալիս, այսինքն կազմում է արձանագրութիւնը եւ ստորեւ դնում Արժուեանի ձեռքը:

Պէտք է խոստովանեմ, որ ո՛չ այս ձեւակերպութեան իմաստը եւ ոչ էլ կեղծարարութեան անհրաժեշտութիւնը չեմ հասկանում: Նոր տեսուչը, այլ եւ դաւառապետը, որ դպրոցի պատուաւոր տեսուչն էր, իրաւագոր էին ամէն ինչ գործել դպրոցի նկատմամբ, քննել հաշիւներ, բաշխել ռոճիկներ, կազմել արձանագրութիւն, առանց պէտք ունենալու արձակած տեսչին, թող թէ կեղծելու նրա ստորագրութիւնը:

Կեղծարարութիւնն աւելի դատապարտելի է քան արձանագրութեան վերաբերեալ ձեւականութիւնը: Այս եւս մի տխուր վկայական այն դպրոցական մթնոլորտի բարոյագիտութեան, որից հեռացաւ Արժուեան:

Նոր տեսուչը ամսի 3ին խնդրել էր դաւառապետին, որ մի լիազօր նշանակէ դպրոցական դործերը քննելու համար: Գաւառապետը նշանակել էր ոստիկանապետին: Սրա ներկայութեան ստուգել էին դրամարկը, քննել հաշւեմատեանները եւ ոչ մի կեղծում չէին գտել: Այս քննութիւնը կատարւել էր ամսի 6ին: Իսկ սրանից առաջ, հարկ էին տեսել կեղծել Արժուեանի ստորա-

գրութիւնը, երեւի առանց ոստիկանապետի մասնակցութեան: Անհասկանալի վարմունք:

Գաւառապետը ապրիլի 8ին պատւիրում է վերջապէս ոստիկանապետին սկսել Արովեանի գործի քննութիւնը: Ապրիլի 20ին նոյն գաւառապետը հաղորդում է փոխարքային: Պէտք է կարծել, որ 12 օրւայ ապարդիւն որոնումներով գաւառապետը գործը փակած է համարել եւ այս մասին յայտնել բարձրագոյն իշխանութեան: Հաւանօրէն փոխարքայի դիւանէն նոր հրահանգ է գալիս գաւառապետին: Մայիսի 17ին ոստիկանապետը դիմում է դպրոցի տեսչին եւ հարցնում, արդեօք Արովեան դրամական ղեկ-ծումներ չի արել եւ հարկադրւել փախչել: Ոստիկանապետը ինքը անձամբ ներկայ էր եղել դրամարկղի եւ մատենաների քննութեան, զիտէր որ ամէն ինչ իր տեղն էր եւ ուրեմն իր դիմումը միանգամայն աւելորդ էր: Թւում է, որ բարձրագոյն իշխանութեան առաջ արդարանալու համար գաւառապետը եւ ոստիկանապետը փորձ են անում դրամական վատնում գտնել եւ տեսչի անհետացման մի հիմ գտնել, արատաւոր հիմ: Ի՞նչ միջոցներ է ձեռք առնում այնուհետեւ ոստիկանապետը, ի՞նչ խուզումներ կատարում, յայտնի չէ: Հաւաստի է միայն, որ այս անգամ եւս գործը փակած է համարւում յունիսի 24ից առաջ: Նոր տեսչի փոխանորդ Վեքիլովը իր յունիսի 24ի հաղորդագրութեան մէջ, յայտնում է Անդրկովկասի դպրոցների վերատեսչին, որ ոստիկանութիւնը աւարտել է Արովեանի գործի քննութիւնը եւ ներկայացրել ուր հարկն է:

Յունիսի 31ին Երասխի ափին գտնում են մի կմախք: Ոստիկանութիւնը դո՛ւ կը լինէր, եթէ կարելի լինէր ապացուցանել, որ Արովեանի կմախքն է: Սակայն, բժշկական քննութիւնը ցոյց է տալիս, որ մատաղհաս աղջկայ ոսկորներ են: Խոր-Վիրապի մօտերը գտնւած կօշիկը եւս նոյն նպատակին է ծառայում, բայց դարձեալ անյաջող: Վերջին երկու պարագաները իսկապէս կապ չունին Արովեանի գործի հետ, դո՛ւնէ անմիջական կապ, այսինքն, ոստիկանութեան որոնումների արդիւնք չեն, այլ պատահական յայտնութիւններ քրէական բնաւորութեամբ:

Արովեանի գործը երկու շրջան է ունեցել, ապրիլի 6ից մինչեւ ապրիլի 20. եւ մայիսի 17ից մինչեւ նախքան յունիսի 24: Հաւանաբար Ա. Բակունցի հաստատութեան թէ ոստիկանապետը եւ գաւառապետը ամէն ջանք գործ են դրել գտնելու Արովեանին, տեսնում ենք, որ ընդհակառակը, այդ երկու պաշտօնեաները շատ անփոյթ վերաբերում են ունեցել, ոչ մի լուրջ քայլ չեն արել,

ո՛չ մի հարցութիւն, ո՛չ մի հետախուզութիւն տեղի չէ ունեցել. զլացել են անգամ սուրհանդակներ ղրկել Երեւանից դէպի դուրս տանող գլխաւոր ուղիները: Ընտանեկան հարցաքննութիւնն անգամ շատ պակասաւոր է: Ընտանիքին վերադարձ այն յայտարարութիւնը, որ վերջին երեք օրը Արովեան անքուն գիշերներ է ունեցել, նոյնն է, ինչ որ ասել է ծառան եւ այս տեղեկութիւնն եւս չի հաստատւում, եթէ մարտի 31 թւակիր ստացականը գրւած է ապրիլի մէկին, ինչպէս հաւանական է թւում: Քննութիւնը չի աշխատել պարզել թէ ինքն ընդլին յանձնե՞լ է Արովեան իր կնոջը, կամ ի՞նչ վիճակի մէջ է թողել իր գրքերը, ձեռագիրները, ինչպէ՞ս է բաժանւել իր կնոջից եւ դաւանելից, արդեօք նկատելի էր որեւէ նշան հեռագնացութեան: Եթէ Արովեանի անհետանալը նախապէս ծրագրի ծնունդ լինէր, անկարելի է, որ այն զգայուն մարդը որեւէ կերպով չմատնէր իր հոգեկան վիճակը վերջին հրաժեշտին:

Ա. Բակունց երկու նամակ է հրատարակել. երկուսն էլ գրւած են Երեւանից Թիֆլիս Գէորգ Ակիմեանին: Սա Արովեանի աշակերտն էր եւ բարեկամը: Իր ուսուցչի կորստեան լուրը առնելուց յետոյ չէ դադարել նամակներ գրել իր մերձակորներին եւ տեղեկութիւններ խնդրել: Նամակագիրները անգրագէտ մարդիկ են: Առաջին նամակագիրը Արովեանի հեռանալը վերադրում է մի յանցագործութեան: Մի երկու տարի առաջ Արովեան մի գերմանացու հետ պէտք է բարձրանար Մասիսի գագաթը: Նրանց փորձը ձախողել էր. բայց եւ այնպէս, թուղթ էին գրել եւ հաւատացրել իրենց զրկողներին, որպէս թէ յաջող ելք են ունեցել: Վերջը քննութիւնը պարզել էր, որ նրանք իսկապէս չեն կարողացել բարձրանալ: Նամակ գրողն այն գաղափարն ունի, որ Մասիսի կատարը երկու մի յանձնարարութիւն էր, որ եթէ չկատարէին, պէտք է պատժէին: Նամակագիրը կարծում է, որ գերմանացին դրել էր Արովեանին հետեւեալ նախազգուշացումը. «մէկ էլ որ էն նէմէցն մէկ գիր էր գրել Արովեանի վրէժն թէ ես էս գիրն քեզ գրեցի ես տեղ գրաց(?) ես էսպէս(») մեռա դու ինք քոյ գլխի չարէն տես, բայց որ էն գիրը երկար չի քաշեց որ նայ դորա»:

Ընդգծած բառերը սխալ են կարդացւում: Նեմեցը չէր կարող գրել թէ ես մեռայ եւ մեռած տեղը նամակ գրել: Տեղ դրաց(?) ոչինչ չէ նշանակում, պէտք է կարդալ դէպքերայ, օտար բառ է գործածական ժողովրդի բերանում եւ նշանակում է վկայաթուղթ: Գերմանացին գրում է թէ նամակս թող ծառայէ քեզ վկայաթուղթ, որ ասածս ճշմարիտ է: Եւ ի՞նչ է ասում: Փո-

խանակ՝ ես հասցնում եմ, առաջարկում եմ կարգալ՝ ես ես
մեռայ կամ ես հասցնում եմ: Գերմանացու տողերի իմաստն այն
է թէ իրեն արդէն սպառնում է պատիժ եւ Արուսեանին զգուշա-
ցնում է, որ իր գլխի ճարը տեսնի: Հայ նամակագրի կարծիքով
Արուսեան փախել է այս նամակի հետեւանքով, վերահաս պատժի
երկիւղից, որովհետեւ որպէս թէ նամակն ստանալուց քիչ յետոյ
է, որ անհետանում է Արուսեան:

Անտարակոյս է, որ գերմանացին յայտնի երկրաբան Արեխն
է, որ յիրաւի փորձել է բարձրանալ Մասիս՝ ընկերակցութեամբ
Արուսեանի եւ այս առթիւ գծաւորութիւն էր ծագել նրանց մէջ:
Ա. Բակունց երկու սխալ է գործում, երկու անհիմն ենթադրու-
թեամբ: Նախ՝ կարծում է, որ Արուսեանի ենթադրական թղթա-
կիցը Արեխը չէ, այլ մի ուրիշ անյայտ գերմանացի: Յետոյ են-
թադրում է, որ նրա նամակի այն տողերը, որ ինքը, ինչպէս
տեսանք, ուղիղ չէ կարդացել, խուլ ակնարկ են որպէս թէ փե-
տըրւարեան յեղափոխութեան: Երկու կամայական ենթադրու-
թիւնից ծագում է մի երրորդը. գերմանացու խորհրդաւոր ակ-
նարկը, որպէս թէ Արուսեան հասկացել է եւ յափշտակած յեղա-
փոխութեան աւետիսից, թողել է տուն-տեղ եւ հեռացել, ուղ-
ղելով իր քայլերը դէպի կախարդիչ ձայնը:

Գէորգ Ալիմեանի Երեւանի անգրագէտ թղթակիցը գրում է,
ի միջի այլոց, որ Արուսեանի ձայնը Ղարսից է գալիս, «որ շատ
մարդ քոմակ ունի եւ շատ էլ չալիշ եմ գալիս, Գէորգ ջան, դարդ
չի անես նորա մասին աստուած ողորմած է»: Ա. Բակունց կար-
ծում է, որ «չալիշ եկողները» ոստիկանութիւնն է եւ Արուսեանի
ազգականները, այսինքն այն անձինք, որ որոնում էին նրան:
Այն ինչ խօսքը նրանց մասին է, որոնք «քոմակ» են անում Արու-
սեանին: Նամակագիրը յայտնում է չորս լուրերից մէկը, որի
համաձայն Արուսեան անցել է Կարս եւ այնտեղ չորսպատուած
«չատ մարդերով» ինչ-ինչ պատրաստութիւն է տեսնում գաղտնի
նպատակով:

Այս միտքը կրկնում է նաեւ երկրորդ նամակում՝ գրած
մի ուրիշ անձի կողմից, բայց միեւնոյն չորսնից: Զանազան լու-
րեր կային ժողովրդի մէջ Արուսեանի կորուստի առթիւ: Ասում
էին, որ այս տարի եւս պիտի սարը բարձրանար, վախեցաւ թէ
չկարենայ եւ փախաւ, կամ թէ տեսել են Զանգի ափին, ուր հրել
ձգել են գետը, տեսել են՝ Գանձակ հնամաշ շորերով, տեսել են՝
Կարս, տեսել են՝ Ակոռի մէկ քարի վրա նստած լալիս:

Այս լուրերը, մէկը միւսէն անհաւանական, պարապ երե-

ւակայութեան արդիւնք են: Ա. Բակունց ընդունելի է համարել,
որ Արուսեան անցած լինի տաճկական սահմանը, ուրեմն մերձա-
ւորապէս Կարսի լուրը:

Բողենշտեյտի ասելով, Արուսեան իր վերջին նամակում գրած
է եղել թէ՝ վճռել է թողնել ռուսական ծառայութիւնը, դնալ
Հայաստանի ներքին մասը եւ այնտեղ պարապել երկրագործու-
թեամբ, որովհետեւ իր չնչին եկամուտները չեն գոհացնում քա-
ղաքի պահանջներին:

Բակունցի աչքում Արուսեանի յայտարարութիւնը մի ապա-
ցոյց է ի նպաստ իր ենթադրութեան, որ նա կարող էր անցած
լինել Երասխը: Սակայն, թւում է թէ Բողենշտեյտի ուղղած տո-
ղերը այլ բան չեն քան դառնացած սրտի վայրկեանական գեղմունք
եւ սխալ կը լինէր այնտեղ ծրագրային խորհուրդ տեսնել: Արու-
սեան այնքան միամիտ չէր եւ ոչ անտեղեակ հայ գեղջկական
կեանքին, որ լրջօրէն կարծէր թէ հնարաւոր էր աւելի ապահով
ապրուստ գտնել գիւղում:

Հայաստանի ներքին մասը, ըստ Բակունցի, Տաճկահայաս-
տանն է: Արուսեան որպէս թէ հիասթափւած էր ռուսներից եւ նաեւ
հայ մթնոլորտից, սկսած Ներսէս Աշտարակեցուց, ուստի եւ բա-
րոյապէս պատրաստ էր թողնելու Ռուսահայաստանը: Բակունց
Արուսեանին վերագրում է տաճկական համակրանք, որպէս հա-
կադեցութիւն ռուսական յուսախարութեան: Այստեղ թւում է
թէ մեղանչում է ճշմարտութեան դէմ, կամենալով տուրք տալ
իր չընկալուած տիրող տրամադրութեան: Արուսեան հոգեկան
տարտամ գրութեան մէջ էր, երբ հասաւ փետրւարեան յեղափո-
խութեան համբաւը, որ կայծակի նման ճեղքեց խաւարը եւ լու-
սաւոր ուղի բաց արեց նրա առաջ: Այսպէս է մտածում Ա. Բա-
կունց: Բայց չէ պարզում, թէ ի՞նչն է իսկապէս քաշում
Արուսեանին, թրքական լաւատեսութիւնը, թէ Ֆրանսական յե-
ղափոխութիւնը: Թւում է թէ գկայսերն կայսեր տալու ցանկու-
թեամբ աշխատել է լծել խորհրդային արտաքին քաղաքականու-
թեան երկու սրամար նժոյգները՝ յեղափոխութիւն եւ տաճկական
բարեկամութիւն, Արուսեանի, հայ վերածնունդի հօր, կառքին,
այն կառքին, որ պիտի տանէր նրան դէպի խորհրդաւոր անյայ-
տութիւն...

Արուսեանի ընկեր Ս. Նազարեանը այն միտքն էր յայտնել,
որ Արուսեան յուսահատութեան տխուր ժամին թերեւս ինքնա-
սպան է եղել: Արեւմտահայ Ստեփան Ոսկանը հաւանական է
համարում, որ աքսորւած լինի Սիբիր: Կան մարդիկ, որոնց վտիտ

միտքը ուրիշ պատճառ չէ գտել քան այն, որ արատաւոր սիրոյ դոհ է եղել: Կարելի է բնաւին արհամարհել այս ենթադրութիւնը, ինչպէս վարել է պ. Բակունց եւ ուր նրան պատիւ է բերում: Արուսեանի վերջին ժամերը այնքան տաղանդաւոր էր, որ սիրոյ մարմանը տեղ չէր կարող ունենալ նրա յուզումնալից հոգու մէջ: Երեւանի լոթինների վայել ենթադրութիւն է, ինչպէս որ վերջերս գրչի մի ստահակ անվարժ մտրուկի սանձարձակութեամբ փորձեց սմբակահարել նշանաւոր հայի յիշատակը, իր հոգեկան հիւանդութիւնից բաժին հանելով պաշտելի անձին:

Ա. Բակունց իրաւունք ունի, երբ յետ է մղում սիրային արկածի ենթադրութիւնը, բայց սխալում է, կարծելով որ հայ քաղքենութեան դէպի խեղճ թուրքերը ունեցած ատելութիւնից է ծագել այդ վարկածը: Այս պատճառարանութեան համեմը եւս աւելորդ է: Բնականն այն է, որ վատ ենթադրութիւնը բխում է վատ մարդկանցից: Յայտնաբերած բոլոր ենթադրութիւններից այն, որ պատկանում է Ա. Բակունցին, ամենէն աւելի է համապատասխանում Արուսեանի հոգեկան դրութեան: Արուսեան այն անձերիցն էր, որ աշխարհ են գալիս խորհուրդը ճակատին եւ երազները հոգում: Բնութեան այդպիսի ընտրանիների համար իրականութիւնը թանգ է այն չափով, որ չափ նա հնարաւոր դաշտ է ներկայացնում երազների համար: Հակառակ դէպքում, իրականութիւնը կորցնում է իր արժէքը եւ երազներն են դառնում տիրական եւ քաջում դէպի այլ դաշտեր: Ա. Բակունց բանաստեղծ է եւ ըմբռնել է Արուսեանի հոգեբանութիւնը: Եթէ կարողանար հիմնաւորել իր ենթադրութիւնը, մի նոր ծաղիկ ձգած կը լինէր անյայտ շիրիմի վրա: Տաճկահայաստան անցնելը, եթէ հաստատուէր, մի նոր դափնի կը բերէր Արուսեանին, որպէս նախակարգապետի այն դործունէութեան, որին հետագայ սերունդները պէտք է կապէին հայութեան քաղաքական անուրջները:

Սակայն, Ա. Բակունցի ենթադրութիւնը հեռու է իսկութիւնից, բանաստեղծական տեսութիւն է:

Արուսեանի կորուստը որոնելու է Երեւանում, ո՛չ Երեւանից դուրս: Այլիլ ամսին, երբ անհետացաւ Արուսեան, Այրարատեան դաշտը, եթէ ոչ ամբողջ Հայ երկիրը, փայլում է դարձան բոլոր պճրանքով: Գարնանացանի ժամանակ է, դաշտերը լի աշխատաւոր ձեռքերի հոծ բազմութեամբ: Անկարելի է, որ եւրոպական զգեստով մի մարդ անցնէր Երեւանից դէպի Երասխ, առանց ուշադրութիւն գրաւելու: Հայ գիւղացին դիտող եւ զննող է: Մեզնից ամէն ոք գիտէ անձնական փորձով: Երեւանից տանող ճա-

նապարհները անբնակ եւ խոպան վայրերով չեն անցնում: Միթէ՞ հնարաւոր է, որ ոչ մի աչք տեսած չլինէր օտարական ուղեւորին: Երեւանում Արուսեան երկու աշկարայ թշնամի ունէր. այդ դաւառապետն էր եւ ոստիկանապետը, երկրի դոյզ գորաւորները: Երկու տարի առաջ, 1846ին, յաջողել էին Արուսեանին երեքօրեայ բանտարկութեան ենթարկել: Անզուլուծիւն կը լինէր սրանց օձիքը բաց թողնել եւ պէտք է մշտապէս կասկածի տակ պահել մինչեւ խնդրի վերջնական լուծումը: Ստեփան Ոսկանի երկիւղն այնքան էլ անհիմն չէ. հարկաւ ոչ աքսորի լմաստով: Արուսեան վտանգաւոր անձ չէր ճանաչւած բարձրագոյն իշխանութեան աչքում, որպէսզի խօսք լինէր Սիբիրի մասին: Սակայն, այլ է բարձրագոյն իշխանութիւնը եւ ա՛յլ դաւառականը: Կովկասեան դաւառապետութիւնն ու ոստիկանութիւնը երբեք իր բարձրութեան վրա չեն եղել կանգնած: Հայ-թրքական կոտորածների ժամանակ երեւաց նրանց էութիւնը: Ի՞նչ էին ներկայացնում, որպէս մարդ եւ պաշտօնեայ, դաւառապետ Բլաւազիլի եւ մանաւանդ ոստիկանապետ Մորոխովից: Անշուշտ, աւելի վատահալի տիպեր չէին, քան նրանց յաջորդները մեր օրերում: Արուսեան աննշան ոմն չէր. քաղաքի առաջին մտաւորականը, տեղական հասարակութեան աչքը, եւրոպական գիտնական ուղեւորների առաջնորդը, օր ցերեկով անհետանում է եւ ոստիկանութիւնը չէ կարողանում դտնել: Այս ապիկարութիւնը աւելի քան կասկածելի է: Երբ ոստիկանապետը, որ անձամբ ներկայ էր եղել դրամական հաշիւների քննութեան եւ ոչ մի զեղծում չէր գտել, մի ամիս յետոյ դիմում է դպրոցի տեսչին եւ հարցնում, արդեօք դրամական վատնում չէ՞ դործել Արուսեան, սրանով արդէն մատնում է իր դերասանութիւնը: Իսկ դերասանութիւնը գործի մէջ մի վարագոյր է, որ սքօղում է որոնելի իսկութիւնը:

Այսպէս, Արուսեանի դատը մնում է առ այժմ բաց եւ երկու պաշտօնեաները, որպէս միակ մեղադրեալներ, պիտի կրեն պատասխանատուութեան ծանրութիւնը՝ մինչեւ որ նոր փաստեր անպարտ արձակեն կամ դատապարտեն:

Ա. Բակունցի աշխատութիւնը, ամէն պարագային, մի կարեւոր նպատակ է դործին շնորհիւ նոր նիւթերի եւ նոր մեկնաբանութեան: Չենք կարող չնկատել, որ գիրքը աւելի պիտի շահէր, եթէ լեզուն եւ ոճը խնամւած լինէին, ինչ որ սպասելի էր մի վիպագրից:

Բրիւսէլ

ԱՐՇԱԿ ԶԱՄԱԼԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

(Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՄԱՀԻԱՆ ՏԱՄԱՐԱԲԱԿԻ ԱՌԹԻԻ)

Տխրողոսները երբեմն դարձանալի պատմութիւններ ունին:— Զայրոյթի մի վայրկեանին, կիսահեղեղական եղանակով, Յովհ. Թումանեանը իր վրա առաւ ամենայն հայոց բանաստեղծի տխուրոսը*) եւ այլ եւս չկարողացաւ դուրս գալ նրա տակից: Սկզբում նա բարկանում էր, երբ մենք նրան, «Հորիզոն»-ի խմբագրատանը, կատակով ամենայն հայոց բանաստեղծ էինք կանչում. բայց վերջը, երբ ամէն կողմից սկսեցին այդ տխրոսով վրա տալ՝ նա վարժեց, երեւի զգալով, որ «ամենայն հայոց բանաստեղծ» յորջորջման մէջ կատակից աւելի մի բան կար ամենքիս համար:

Եւ, իրօք, մեր համոզմունքով, այդ տխրոսը վայելում էր Թումանեանին ըստ ամենայնի:

Ամենայն հայոց բանաստեղծ էր նա նախ եւ առաջ այն պատճառով, որ մեր բանաստեղծներից ոչ մէկը չէ կարողացել խտացնել իր քերթածների մէջ հայ ժողովրդի լաւ ու վատ բարքերը, տրամադրութիւնները եւ ձգտումները այնպիսի լրութեամբ, ինչպէս այդ տրեւ է Թումանեանը իր բազմալար քնարով:

Ամենայն հայոց բանաստեղծ էր նա իր քերթողական շունչի յայնութեամբ եւ իր արեւատի պարզութեամբ, նրբութեամբ եւ կատարելութեամբ: Մեր քննադատներից ոմանք ժամանակին մատնանշել են եւ այսօր էլ մատնանշում են Թումանեանի երկերի մէջ երեւցած այս կամ այն թերութիւնը: Բայց, նրանք բոլորն էլ, մէջն առնելով եւ խիստ դժուարահաճները, ստիպւած են խոստովանել, որ Թումանեանի ստեղծագործութիւնները, իրենց ամբողջութեամբ, իհարկեւ տեղ են գրաւում մեր բանաստեղծական գրականութեան անդամատանում:

*) Պատմութիւնը հետեւեալն է. 1915ին էջմիածնում մի վէճ է ծագում Վեյրապետ Կաթողիկոսի եւ Յ. Թումանեանի միջեւ՝ տեղական զաղթականների զեհարանի կիսաւարտ նոր շէնքում տեղաւորելու խնդրով: Կաթողիկոսը, որ լսել անգամ չէր ուզում այդ մասին, իր խօսքն արժէքնելու համար, բացաղանջում է. — «Վերջապէս, ես ամենայն հայոց կաթողիկոս եմ»: — «Վերջապէս, ես էլ ամենայն հայոց բանաստեղծ եմ», բորբոքւած վրա է բերում Յ. Թումանեանը, որին կատաղեցրել էր կաթողիկոսի վերաբերմունքը դէպի վանքի բակում եւ վաղարշապատի փողոցներում թափթիւած գաղթականները: Այս վէճը շուտով լայն հասարակութեան սեփականութիւն դարձաւ, եւ «ամենայն հայոց բանաստեղծ» տխրոսը մի տեսակ ժողովրդականացաւ:

Վերջապէս, ամենայն հայոց բանաստեղծ էր Թումանեանը իր աննախընթաց ժողովրդականութեամբ: Մանկական աշխարհում նա մոռացնել տեց Ղաղարոս Աղայեանին եւ ուրիշներին: Կիսապրազէտ ժողովրդական դանդաճների մէջ, ոչ մի հայ բանաստեղծ այնքան կարգացած, հասկացած եւ դնահատուած չէ, ինչքան Թումանեանը: Գրական ճաշակ ունեցող հասարակութեան մէջ եւս նա մեր ժամանակակից ամենամեծ հայ բանաստեղծի հռչակն ունի: Վալերի Բրիւսովը, համաշխարհային պատերազմից առաջ, սընդում էր նոյն իսկ, թէ Ռուսաստանի այն ժամանակակից բանաստեղծներից ո'չ մէկը չէր կարող մրցել Թումանեանի հետ: Մինչեւ անգամ մեր կոմունիստները, որոնք, ինչպէս կը տեսնենք, չափազանց շատ պատճառներ ունեն դուրս նետելու Թումանեանի երկերը իրենց մատենադարաններից եւ մոռացութեան տալու հեղինակին՝ ստիպւած են տեղի տալ նրա տաղանդի մեծութեան եւ ժողովրդականութեան առջեւ...

Սակայն, Թումանեանը ոչ միայն իբրեւ գրող, այլ եւ իբրեւ անձնաւորութիւն խիստ հետաքրքրական մի տիպ է ներկայացնում: Վստահօրէն կարելի է ասել, որ նրան անձնապէս ճանաչողները, եւ նոյն իսկ ոչ միայն լաւ կողմից ճանաչողները, նրա մահւան մէջ ողբացին ոչ միայն առաջնակարգ բանաստեղծի, այլ եւ մի վերին աստիճանի ինքնատիպ մարդու անհետացումը մեր հանրային կեանքի ասպարէզից:

Դրա համար էլ կարելուր ենք նկատում, մեր մեծ բանաստեղծի մահւան տասնամեակի առթիւ, մի քանի ծանօթութիւններ տալ արտասահմանի հայութեանը՝ նրա նկարագրի մասին:

Ասում ենք մի քանի ծանօթութիւններ, որովհետեւ մեր ձեռքի տակ չունենք անհրաժեշտ նիւթերը՝ Թումանեանի դիմագծութիւնը լրիւ կերպով կատարելու համար: Ստիպւած ենք սահմանափակել գլխաւորապէս մեր անձնական յիշողութիւններով եւ ապա՝ մի քանի կցկտուր նիւթերով, որոնք, Պ. Մակինցեանի ստորագրութեամբ, լոյս տեսան, սրանից մի քանի տարի առաջ, «Նոր Ուղի» հանդէսում:*)

Սակայն, կարծում ենք, որ մեր սահմանափակ նիւթն եւս բաւական է ամենայն հայոց բանաստեղծի մասին տարածւած թիւր մտքերը ցրելու եւ նրա դէմքը, իր կարեւոր գծերով, ընթերցող հասարակութեանը ներկայացնելու համար:

Թումանեանը, զսպւած պաճանքի զգացմունքով, ասում էր յաճախ, թէ ինքը Մամիկոնեան իշխանների շառւիղներից է: 1894ին Թիֆլիսում լոյս տեսած «Հորիզոն» գրական հանդէսի մէջ, «Քաջերի կեանքից» յօդւածում, նա գրում է, որ իրենց տոհմը հին աղնական տոհմերից մէկն է: Այդ հին աղնական տոհմը, ըստ Թումանեանի ենթադրութեան, սերում է այն Մամիկոնեաններից, որոնք 10րդ դարում, սրիւկելով Տարօնից՝ եկան հաստատուեցին Լոռու Դսեղ գիւղում:

Մի օր, երբ «Հորիզոն»-ի խմբագրատանը այս մասին նորից խօսք բացւեց՝ ասացի.

*) Տե՛ս «Նոր Ուղի», 1929 № 2-3. էջ 185—206

— Մամիկոնեան իշխանների հաստատուելը Դսեղում փաստ է՝ վկայած զիւղի գերեզմանաքարերով, Մամիկոնեան տոհմի յիշատակին կանգնեցրած գեղեցիկ խաչքարերով եւ Բարձրաքաչ ս. Գրիգոր վանքի աւերակներով։ Բայց ինչի՞ վրա ես հիմնում պնդելու համար, թէ ձեր տոհմը կապ ունի այդ իշխանների հետ։

— Առաջինը, պատասխանեց Թումանեանը, մեր ընտանիքի մէջ մնացած աւանդութիւնների վրա։ Իսկ երկրորդը՝ այս ամառ համեցիր Դսեղ ինձ հիւր եւ ինքդ կը տեսնես։

Նոյն ամառը Ն. Աղբալեանի եւ Վ. Գրմոյեանի հետ մի քանի օրով հիւր էինք Թումանեանի մօտ Դսեղում։ Նա մեզ տարաւ զիւղի պատմական գերեզմանատունը եւ, ի միջի այլոց, ցոյց տւեց մի տապանաքար, որի վրա Մամիկոնեան իշխանը միաժամանակ եւ Տէրանց իշխան էր կոչւում։


— Այս հօ տեսա՞ր — դարձաւ նա ինձ՝ յիշեցնելով մի քանի չաբաթ դրանից առաջ տեղի ունեցած վերոյիշեալ խօսակցութիւնը — դէ, հիմա զնանք զիւղը, եւ հարցրու ում կուզես. ամենքն էլ քեզ կասեն, որ մեր տունը Տէրանց տուն է կոչւում։

Թէ որքա՛ն համոզեցուցիչ էր Թումանեանի պատճառաբանութիւնը իր ազնական ծագման մասին — այդ մի կողմ ենք թողնում։ Կարեւորն այն է, որ նա իրեն Մամիկոնեան պալազատ էր նկատում եւ հպարտ էր դրանով։

Հպարտ էր նա առանձնապէս իր պատերից մէկով — Յովսէփ Մեհարբեան Թումանեանով, որին Պաշատուր Աբովեանը հետեւեալ տողերն է նւիրում «Վէրք Հայաստանի» մէջ.

«Սարերի, ձորերի միջում մեծացած, դադանի ու հարամու արիւնը թափելով էր նրա ոսկորները հաստացել։ Երկու տղամարդ նրա մէջքը չէին կարող խոտել, հինգ մարդ նրա մէկ ձեռքը չէին կարող ոլորել, նրա դուռի մէկ օր չէր ցաւել։ Կերածը՝ մեղր ու կարագ էր, հագածը՝ շալ, կոխածը՝ ծաղիկ ու չիման, աղբիւրների վրա, մէջի միջումն էր նա օրօրոցումը աչքը բաց արել։ Նրան ի՞նչ կը դիմանար։ Աժդահա ու ոչ տղամարդ։

«Վաթսուն ջանից աւելի՝ հողի՝ հարս, փեսայ, թոռը, ծոռը առաւօտը նրանց տանիցը դուրս էին գալիս, բիզունը մթանը նրանց օճորքի տակին քնում, ու նրանց հարիւր տարեկան հէրը դեռ երեկոյեան երեսի պէս՝ բեխերն ոլորում, միւրուքը սանդրում, փափախը կոտրում նրանց հետ՝ պար գալիս — պար գալի, խաղալիս — խաղում, սաղ ածելիս շատ անգամ ինքը սաղը ձեռներից խլում, ածում, խաղում, քսան տարեկանի պէս ձիու վրա նստում, սապարը վցում ու սարերում, ձորերում, չադրի տակին՝ պարզկա գիշերը — որդւոցն իրան արած քաջութիւնները, լուրջունց տղամարդութիւնը, հին-հին բաներից, լազուց, թուրքից հազար բաներ պատմում»։



ՅՈՎՍԵՖ ՄԹՈՒՄԱՆԵԱՆ



Թումանյանի ասելով՝ այս Յովակիմի մօտ ոչինչ մարդ է եղել Աբովեանի հերոսը՝ Աղասին:

Սակայն, այս տոհմական հպարտութիւնը Թումանյանի մօտ չէր արտայայտուում ազնական գոռոզութեամբ, որ յաճախ կարելի էր տեսնել, օրինակ, Ղարաբաղի մէլիքներին նոյն խի կրթւած ժառանգների մօտ: Թումանյանը շատ ժողովրդական կամ ընկերական մարդ էր. մեծի հետ՝ մեծ, փոքրի հետ՝ փոքր եւ ամենքի հետ խոնարհ ու սիրալիր: Նրա տոհմական հպարտութիւնը սնունդ էր տալիս այլ տրամադրութիւնների:

Սրանցից առաջինը հայրենասիրութիւնն էր, որով, ինչպէս յայտնի է, Մամիկոնեան տոհմը այնքա՛ն փայլել է մեր պատմութեան մէջ:

Թումանյանը հայրենասէր էր բառիս լաւագոյն իմաստով: Հայի Հայրենիքը, հայ ժողովուրդը իրրեւ ազգային ուրոյն հաւաքականութիւն, հայկական հանճարի հին արտադրութիւնները, մեր ազգային մշակոյթի ներկան ու ասլադան անխղելիօրէն կապւած էին նրա հոգու հետ: Անկեղծօրէն հրճուում էր, երբ մի լուսաւոր բան էր յայտնադործում մեր անցեալի կամ ներկայի մէջ եւ խորապէս ցաւում մեր հին ու նոր կեանքի յոռի կողմերի վրա:

Այս հայրենասիրութիւնը պղատոնական չէր, այլ խիստ դործօն. որովհետեւ նա խթանում էր շարունակ հանրային դործ կատարելու մի տրամադրութեամբ, որ խիստ տիրական էր Թումանյանի մէջ եւ նրա նկարագրի երկրորդ յատկանշական դիմն էր կազմում: Հակառակ մեր բազմաթիւ գրողների, որոնք, քաշւած հանրային դործերից, սիրում էին անձնատուր լինել դրէին ու թղթին, Թումանյանը ամէն առթիւ նետում էր հասարակական կեանքի եւ ու գեռի մէջ եւ մինչեւ անգամ յաճախ ինքն էր առիթներ ստեղծում հանրային դործերով պարասելու համար: Ինչպէս ամենքը, նոյնպէս եւ ինքը Թումանյանը քաջ դիտէր, որ այս դործերը վնասում են իր դրական աշխատանքներին. բայց հանրային դործէի ջիղը նրա մէջ աւելի գորեղ էր, քան դրողի աւիւնը:

Հայ ազատագրական շարժումները 90ական թւականների վերջերից սկսում են ծաւալել Կովկասում. Թումանյանը նրանց մէջն է: Եկեղեցական կալւածների բռնագրաւման եւ հայ-թաթարական կռիւների ժամանակ, մենք տեսնում ենք նրան խիստ դործօն դերի մէջ: 1912ին Թիֆլիսում կազմուում է Ազգային Բիւրօ թիւրքահայ ժողովրդի քաղաքական պահանջները պաշտպանելու համար՝ Թումանյանը անդամ է Ազգային Բիւրօին: Համաշխարհային պատերազմի սկզբին առաջանում են հայ-կամաւորական շարժումները՝ Թումանյանը նրանց մէջն է յորդորողի եւ խրախուսողի դերում: 1915ին, ռուսական զօրքերի նահանջի հետեանքով, Վասպուրականի եւ Տուրուբերանի աղէտահար ժողովուրդը թափւում է Արարատեան դաշտը՝ Թումանյանը իրրեւ առաջիններից մէկը՝ նետում է քօլերայով ու բժաւոր տիֆով վարակւած այդ գաղթական բազմութիւնների մէջ՝ նրանց ցաւերն ամոքելու համար: Զինադադարից յետոյ, Թիֆլիսում կազմուում է հայկական մի նոր Բիւրօ՝ որոշելու համար, թէ ի՛նչ վնասներ

է կրել անդրկովկասեան հայութիւնը թիւրքական արշաւանքներէն, եւ մենք տեսնում ենք թուամանեանին այդ Բիւրօի նախագահի պաշտօնում: Հայ-վրացական պատերազմի ժամանակ, թուամանեանը ուսման ընկած աշխատում է օր-առաջ վերջ տալ ընդհանրումներին: Թիւրքական երկրորդ արշաւանքի ժամանակ (1920) նա կենդանի աջակցութիւն է ցոյց տալիս այն բոլոր գործիչներին, որոնք վրաստանում հայ կամաւորներ էին ժողովում Հայաստանի բանակին ուժեղացնելու համար: Փետրուարեան ժողովրդական ապստամբութեան ժամանակ, նա շտապում է Հայաստան՝ պայքարող կողմերի կրքերը հանգստացնելու եւ խաղաղութիւնը վերականգնելու համար: Վերջապէս, խորհրդային իշխանութեան օրով, երբ հարկ է տեսնում արտասահմանի հայութեան մէջ օժանդակութիւն կազմակերպել սովահար Հայաստանի օգնութեան համար, թուամանեանը, չնայած իր հիւանդոտ վիճակին, ստանձնում է Հայաստանի Օգնութեան Կոմիտէի նախագահութիւնը եւ համապատասխան առաքելութեամբ դալիս արտասահման:

Բացի այս կարգի գործերից, թուամանեանը կենդանի հետաքրքրութիւն ունէր եւ դէպի մեր ազգային-մշակութային ձեռնարկները — մամուլ, դպրոց, կրթական-բարեսիրական ընկերութիւններ եւն: Յիշատակութեան արժանի են, մասնաւորապէս, նրա թափած ջանքերը՝ Հայ Գրողների Ընկերութիւնը կեանքի կոչելու եւ պահպանելու համար: Նրա նպատակն էր այս ընկերութեան միջոցով ապահովել ապագան հայ գրականութեան, որ նա մեր ազգային մշակոյթի հիմքն ու թաղեւտակն էր համարում միաժամանակ:

Բոլոր այս մատնանշումները դեռ եւս լրիւ պատկերը չեն տալիս այն աշխատանքների, որոնց մէջ արտայայտուել են թուամանեանի հայրենասիրական եւ հանրային գործչի տրամադրութիւնները: Բայց դրանք էլ բաւական են՝ դադարի տալու համար այդ արամադրութիւնների ուժգնութեան մասին:

Սակայն, թուամանեանի հայրենասիրութիւնը ոչ մի առնչութիւն չունէր թիւրք ազգայնականութեան կամ չովինիզմի հետ: Նա բարեացակամ վերաբերմունք ունէր դէպի բոլոր ժողովուրդները եւ խորապէս վրդովւում էր ո՛րեւէ ժողովրդի վերաբերմամբ կատարւած անարդարութեան դէմ:

Մասնաւորապէս բարեացակամ էր նրա վերաբերմունքը դէպի մեր հարեան ժողովուրդները, որոնց ճակատագրին նա սերտօրէն կապւած էր համարում հայ ժողովրդի բախտը: «Տուտուց վրացի կամ տգէտ թաթար ենք ասում ու անցնում, չմտածելով, որ առանց վրացու եւ թաթարի բարեկամութեան ու գործակցութեան մենք ո՛չ հանգիստ օր կարող ենք ունենալ եւ ոչ բարգաւաճում» — ասում էր նա այն օրերին, երբ Թիֆլիսում հայերի ու վրացիների կրքերը շատ բորբոքել էին, անդրկովկասեան պոլիտեխնիկումի վայրի ընտրութեան խնդրով:*)

*) Վրացիք պահանջում էին, որ այդ բարձրագոյն մասնագիտական

Եւ, մեր հարեանների հետ մերձեցում ու բարեկամութիւն հաստատելու համար, թուամանեանն աշխատում էր մեծ անկեղծութեամբ եւ եռանդով:

Վրաց գրողներից եւ մտաւորականներից շատերի հետ նա լավագոյն յարաբերութիւնների մէջ էր եւ աշխատում էր, որ այդ լավ յարաբերութիւնները երկուստեք ընդհանրանան: Հայ-վրացական վէճերի գլխաւոր պատճառը նա տեսնում էր փոխադարձ անհասկացողութեան մէջ եւ սրա մեղքը վերադրում էր, ամենից առաջ, երկու կողմի մտաւորականներին: Հայ-վրացական մերձեցման եւ գործակցութեան ջերմ կողմնակիցներից մէկի՝ պ. Դիասամիճէի՝ տանը 1913ի աշնանը կայացած մի հաւաքոյթի ժամանակ, նա դառնօրէն դանդաղուում էր, որ հայ եւ վրացի մտաւորականները յաճախ եռանդ չեն խնայում ուսումնասիրելու ոչ միայն իրար աջ եւ շա՛տ աւելի հեռաւոր ժողովուրդների մշակութային եւ քաղաքական կեանքը, մինչդեռ անմիջական հարեանի կեանքին ու ձգտումներին մնում են կատարելապէս անհաղորդ:

Այս անպատեհութեան դէմ պայքարելու համար էր, որ թուամանեանը Հայ Գրողների գրական-գեղարեստական երեկոյթներից մի քանիսը յատկացրեց վրացական գրականութեանը եւ երաժշտութեանը: Գլխաւոր դերակատարներն այդ երեկոյթներում վրացիներն էին:

1918ի հայ-վրացական զինւած ընդհարումը չմեղքել էր թուամանեանին բառիս բուն իմաստով: Նա գիտէր, որ մեր գործերը դէնք էին բարձրացրել վրացիների դէմ՝ վերջիններիս կողմից բռնադրււած Լոռին, որի համար ինքը պաշտամունքի զգացմունք ունէր, Հայաստանին վերադարձնելու համար: Նա չէր ժխտում նաեւ, որ վրաց կառավարութիւնը, իր վրդովեցուցիչ ոտընձգութիւններով, համբերութիւնից հանել էր հայ ժողովուրդը: Այնուամենայնիւ, նա չէր ներում Յ. Քաջագնդուն, որ կռւի հրաման էր տւել մի երկրի դէմ, որի հետ Հայաստանը տասնեակ դարերով ապրել է խաղաղութեան եւ բարի հարեանութեան մէջ: Որովհետեւ ես էլ, իբրեւ Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ, նոյն տեսակէտն ունէի հայ-վրացական ընդհարման մասին, ուստի թուամանեանը այդ օրերին գրեթէ ամէն երեկոյ եւ առաւօտ ինձ մօտ էր գալիս գանազան առաջարկներով եւ թելադրութիւններով՝ թշնամական գործողութիւնները ժամ-առաջ կանգնեցնելու մասին: Այս ուղղութեամբ թուամանեանը աշխատանքներ էր կատարում նաեւ վրաց մտաւորականների շրջանում, սակայն, դժբախտաբար, վերջիններն այդ օրերին զգալիօրէն վարակւած լինելով վրաց կառավարութեան ներարկած ազգայնական թոյնով՝ ընդառաջ չէին գնում նրա հաշտարար ձգտումներին:

Կովկասեան թաթարների հանդէպ, թուամանեանի այս բարի-դրացիական տրամադրութիւնը ակնբախօրէն արտայայտուեց

Դպրոցը չինւի Օրթաճալա կոչւած վրացական թաղամասում, իսկ հայերն ուղում էին, որ նրան տեղ յատկացի հայկական Հաւարարում:

հայ-թաթարական ընդհարումների առթիւ: Նա խորապէս դատաւարտում էր այս ընդհարումները եւ բախում բոլոր դռները՝ նրանց առաջն առնելու համար: Տեսնելով, սակայն, որ կռիւներն ու վայրագութիւնները ծաւալում են տարերային թափով, թուամանեանը իր ուշադրութիւնը կենտրոնացրեց Լոռու վրա: Նրա բուն ցանկութիւնն էր, որ իր հայրենի գաւառը դռնէ դերձ մնայ ընդհարումների պատուհասից: Լոռում իր կատարած դերի մասին նա, 1906ի գարնանը, գրում է իր բարեկամներից մէկին.

... «Շատ լաւ գիտէի, որ խառնակութիւններ են պատահելու: Գիտէի, որ մեր գաւառում անխառնութիւն եւ ամէն անկարգութիւն կարող է լինել, եւ ես շատ պէտք էր դամ. — բայց պատահածն իմ սպասածից էլ աւելի՛ եղաւ...

«Ես, ինչպէս ասի, յանկարծ այդքան մեծ պաշտօնի*» մէջ յայտնելով եւ ձեռքիս ունենալով ուժ — ամէն ջանք դորձ եմ դրել մեր գաւառներում խաղաղութիւնը պահելու եւ կոտորածների առաջն առնելու: Եւ այսօր ես այնքան գոհ չեմ, որ գրականութեան մէջ մի որեւէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներեւ կարողացայ իրար դէմ կանգնած ժողովուրդների սրերը պատեան դնել տալ եւ շատ ու շատ անմեղների ազատել այս գաւառական կոտորածից»:**)

Տաքարիւն լուեցիները մէջ այն օրերին այսպիսի մի խաղաբարբ դեր ստանձնելու համար մարդ պէտք է թումանեանի պէս հեռու լինէր ազգայնական ատելութիւններից...

Սակայն, կայ մի ազգ, որի դէմ թումանեանը լցած էր եւ մինչեւ վերջը լցած մնաց ատելութեան թոյնով: Դա թիւրք ազգն էր: Թիւրքին նա մարդ չէր համարում, այլ «մարդակերպ դադան»՝ անընդունակ ո՛րեւէ մարդավայել քաղաքակրթութեան: Այս անընդունակութեան ամենապերճախօս ապացոյցը թումանեանը տեսնում էր այն փաստի մէջ, որ թիւրք ժողովուրդը դարեր շարունակ անընդհատ չլիման մէջ լինելով քաղաքակիրթ ազգերի հետ՝ չկարողացաւ այլ բան իւրացնել նրանից, բայց եթէ թալանելու, աւերելու եւ կոտորելու արհեստը: — Վայրենի հոնը հունդարական տափաստաններում եւ Ֆինլանդական ժայռերի մէջ

*) Այդ անխառնութեան օրերին, թումանեանը Լոռու դարձել էր քաղաքացիական եւ զինուորական դիկտատոր: Ժողովուրդը նրան վերաբերում էր իբրեւ «գեներալ գուբէրնատորի» (ընդհանուր նահանգապետ) եւ մինչեւ իսկ իբրեւ «թագաւորի»:

**) Տես «Նոր Ուղի», 1929 № 2-3. էջ 198-199:

մարդ դարձաւ, իսկ Բոսֆորի գեղածիծաղ ափերին հաստատւած եւ յոյն-հռոմէական կուլտուրայի ամենափայլուն յիշատակարաններով շրջապատւած թիւրքը էլի էն բարբարոս թիւրքը մնաց — ասում էր նա յաճախ:

Բոլոր ատելութեամբ էր արտայայտում թումանեանը թիւրքերի մասին մանաւանդ համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած հայկական կոտորածների առթիւ:

Լաւ յիշում եմ հետեւեալ դէպքը: — 1915ի ամառը, Սասունի մարտիկների կողմից Թիֆլիս դրկւած Մարտիրոս Վարժապետը Ազգային Բիւրօի մէկ նիստին կուռղների վիճակի մասին զեկուցում տալով, ի միջի այլոց, պատմում էր եւ կոտորածների մասին: Այդ ժամանակ մենք արդէն գիտէինք, որ թիւրքահայաստանում տեղահանութիւններ ու ջարդեր են եղել, բայց նրանց ծաւալի եւ ձեւերի մասին որոշ դադափար չունէինք: Մարտիրոս Վարժապետը շատ հանգիստ ձեւով խօսում էր կտրւած կուսական ստինքների, պատուած արգանդների եւ այլ դարհուրելի խժեղութիւնների մասին, որոնց ահանատես էր եղել իր երկարատես թափառումների ընթացքին՝ Սասունից մինչեւ ուսական ուղիով հասնելը: Ամենքս ցնցւած էինք. իսկ թումանեանի դէմքը սպիտակ ծեփի գոյն էր առել: Երբ Մարտիրոս Վարժապետը սկսեց պատմել, թէ ինչպէս մէկ հայ կնոջ ստիպել էին խմել սեփական դաւակի արիւնը սուլթանի կենացը՝ թումանեանը ելաւ տեղից եւ դողդոջ քայլերով մեկնեց նիստից: Մի ամբողջ շաբաթ նա հիւանդ էր: Այս դէպքի ազդեցութեան տակ է գրւած նրա մի ոտանաւորը, որից յիշողութեանս մէջ մնացել են միայն վերջին երկու տողերը.

Եւ մարդն ամաչի շնից ու գէլից,

Որ մարդ է ծնած իրեն մամիկից...

Ոտանաւորի իմաստն այն էր, որ եթէ թիւրքը իր կատարած անլուր դադանութիւններից յետոյ եւս մարդ պիտի համարել, ապա կը նշանակէ, որ մարդը չնից ու դայլից էլ ստոր մի արարած է...

Թիւրքի հանդէպ ունեցած այս ատելութիւնը որոշիչ դեր էր կատարում թումանեանի կուսակցական նախասիրութիւնների եւ քաղաքական հակումների մէջ:

* * *

Թումանեանը մինչեւ Դաշնակցութեան դատի վերջը պաշտօնապէս համարում էր դաշնակցական: Թէ երբ է մտել նա մեր

կուսակցութեան մէջ — ինձ յայտնի չէ: Սակայն, դիտեմ, որ նա 1905ի Կովկասեան առաջին Ռայոնական ժողովին (ապրիլ) մասնակցում էր իբրեւ Թիֆլիսի, կամ «Մեծ Քաղաքի» Կենտրոնական Կոմիտէի անդամ:

Թէեւ այդ ժամանակները ես բոլորովին նորընծայ էի Դաշնակցութեան մէջ, բայց եւ այնպէս տեսնում էի, որ Թումանեանի կուսակցական լինելը միանգամայն թիւրիմացութիւն է: Օրակարգի վրա դրւած ծրագրային եւ կադմակերպական այնքա՞ն լուրջ խնդիրները նրան բնաւ չէին հետաքրքրում: Նա կարծէք չէր էլ հասկանում դրանց իմաստը: Այսպէս, օրինակ, նա ժպտալով «ձայն տւեց», որ Դաշնակցութիւնը Կովկասում սոցիալիստական սկզբունքներով դասակարգային սլայքար սկսի, որովհետեւ Ն. Ալբալեանը, որ Թումանեանի մօտ էր նստած, «զօռով» բարձրացրեց նրա ձեռքը... Սա կատակ չէ, այլ փաստ:

Միակ խնդիրը, որ նրան զբաղեցնում էր այդ ժողովում՝ դա հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան խնդիրն էր: Բայց այստեղ էլ նա այնպիսի մի դիրք էր բռնում, որի հետ մեր այն ժամանակայ ըմբռնողութիւններն ու զգացողութիւնները հաշտւել չէին կարող:

Դաշնակցութիւնը արդէն բացայայտ սրայքարի ճակատ էր սլարգել ցարիզմի դէմ: Եկեղեցական կալւածների բռնադրաման առթիւ տեղի ունեցած խաղաղ եւ զինւած ցոյցերին յաջորդել էին ահաբեկչական լայնածաւալ դործողութիւններ, որոնք սարսափի էին մատնել կովկասեան իշխանաւորներին՝ փոխարքայից սկսած մինչեւ յետին ոստիկանը: Միւս կողմից՝ ռուսական յեղափոխութիւնը օր աւուր ուռճանում էր ահաւոր չափերով: Այս կացութիւնից արամաբանական անհրաժեշտութեամբ բխում էր, որ Դաշնակցութիւնը ամբողջ հոգով փարի ռուսական յեղափոխութեանը եւ իր ուժերի չափով աշխատի արագացնել ցարիզմի անկումը: Ժողովի մեծամասնութիւնը այսպէս էլ տրամադրւած էր:

Սակայն, Թումանեանը վտանգ էր տեսնում սրա մէջ: — Բազէի մայթերի վրայից դեռ չէ ցամաքել հայկական արիւնը, հայ-թաթարական շրջանները չորացած ծղօտի պէս մի կայծի են սպասում բոցավառւելու համար, իսկ դուք ինչի՞ վրա էք — ասում էր նա: Նրա միտքն այն էր, թէ ռուս յեղափոխականների վրա յոյս դնելով կովկասեան իշխանութիւնը թուլացնելը մեզ համար վտանգաւոր է: — Ի՞նչ դիտէք, որ վաղը էլի էդ իշխանութեան փեշից չպէտք է բռնենք, մեր ժողովուրդը թաթարական յարձա-

կումների դէմ պաշտպանելու համար, բացառանշում էր նա բորբուքւած:

Թումանեանի այս ելոյթը վրդովմունք էր պատճառում ժողովականներից շատերին, մանաւանդ այն պատճառով, որ նա, ռուսական յեղափոխութեան հետ կապւած մեր յոյսերը ծաղրելիս, արհամարհական արտայայտութիւններ էր անում ռուս յեղափոխականների հասցէին: Առանձնապէս վրդովւած էր նրա դէմ բժ. Յովսէփ Տէր-Դաւթեանը, որ շարունակ խանգարում էր նրա ճառը՝ իր կցկտուր բայց հատու բացառանշութիւններով, մինչեւ որ Թումանեանը ստիպւած եղաւ ընդհատել իր ճառը եւ ասել Տէր-Դաւթեանին.

— Յովսէփ, էդ չեղաւ. ես էստեղ խօսք եմ խօսում, իսկ դու էդտեղ շարունակ բռնիք*): Ես անում...

Իր այս ըմբռնումներով Թումանեանը չէր կարող մեծ դեր կատարել Դաշնակցութեան մէջ հետագայ տարիների յեղափոխական թոհ ու բոհի ժամանակ: Բայց եւ այնպէս, մինչեւ Դաշնակցութեան դատի վերջը, նա մնաց մեր կուսակցութեան շարքերում:

Այդ դատից յետոյ — չեմ յիշում Կովկասեան Ռայոնական ժողովի թէ «Մեծ Քաղաքի» Կենտրոնական Կոմիտէի որոշումով — Թումանեանը, մի քանի ուրիշ ընկերների հետ միասին, հեռացեց Դաշնակցութիւնից: Պատճառն այն էր, որ նա, դատաւարութեան ժամանակ, ուրացել էր իր դաշնակցական լինելը: Այն ժամանակ, բոլշեւիզմի բերած բարոյական ըմբռնումները դեռ եւս չէին աղտոտել մարդկանց հոգիները, եւ կուսակցական ինքնութիւնը չիտստովանելը ծանր յանցանք էր համարւում յեղափոխականների աչքում...

Սակայն, Դաշնակցութիւնից հեռացւելուց յետոյ եւս Թումանեանը իր բոլոր համակրանքներով մնաց Դաշնակցութեան եւ դաշնակցականների հետ: Նա օրն ի բուն մեզ հետ էր եւ ազգային-քաղաքական բնաւորութեամբ որեւէ հարց ծաղկելու դէպքում անմիջապէս մեր խորհրդին եւ աջակցութեանն էր դիմում:

Ուրիշ կերպ լինել չէր կարող: Որովհետեւ Թումանեանի հայրենասիրութեամբ պայմանաւորւած ազգային մտահոգութիւնները — թիւրքահայ դատ, հայկական ինքնապաշտպանութիւն, ադրբայժան մշակութային արժէքների սատարում եւն — միմիայն Դաշնակցութեան մէջ եւ դաշնակցականների կողմից կարող էին կենդանի արձագանգ գտնել:

*) Խռովութիւն, ըմբոստութիւն:

Թումանեանի մահաանկից յետոյ, հայ կոմունիստները ճշնում են սեփականացնել, իրենցը դարձնել ամենայն հայոց բանաստեղծին, ճիշտ այնպէս, ինչպէս որ նրանք, ակներեւ աճաբարութեամբ, իրենց հաշին են դրում Հայաստանի Հանրապետութեան եւ մինչեւ իսկ ցարական իշխանութեան շրջանից մնացած մշակութային հաստատութիւններն ու արժէքները: Նրանք ուրանալ չեն կարող, ի հարկէ, որ Թումանեանը ապրել եւ ստեղծագործել է Դաշնակցութեան շունչով, բայց լեզենդներ են տարածում, թէ նա, Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, իր համակրանքներով կապւել է բոլշեւիկեան իշխանութեանը:

Այս լեզենդները հիմնաւորւում են երեք հանգամանքով:—

Առաջին՝ որ Թումանեանը Հօկի գործով արտասահման դալուց յետոյ՝ նորից վերադարձաւ Հայաստան, մինչդեռ նա կարող էր մնալ արտասահմանում՝ տարագիր դաշնակցականների հետ:

Երկրորդ՝ որ նա, «Սովից վատքարը» վերնագիրը կրող մի յօդւածով խարանել է Վոլգայի սովի առթիւ չարախնդութիւն ցոյց տուող հակայեղափոխականներին, եւ

Յերրորդ՝ որ նա իր յայտնի «Բաց նամակ»ով բողոքել է «Դաշնակցութեան փետրւարեան աւանտիւրայի» դէմ:

Այս պատճառաբանութիւններից ոչ մէկը տարրական քննութեան իսկ չի կարող դիմանալ:—

Որ Թումանեանը, Հօկի առաքելութիւնն արտասահմանում վերջացնելուց յետոյ, վերադարձաւ Հայաստան՝ դա փաստ է ի հարկէ: Բայց ինչո՞ւ չպէտք է վերադառնար, երբ այնտեղ որեւէ հալածանք չկար իր դէմ: Չէ՞ որ ամենակատաղի եւ ամենահաւակբոլշեւիկ դաշնակցականն էլ մտքից չէր անցնի արտասահման դալ կամ այստեղ մնալ, եթէ չլինէին այն տմարդի հալածանքներն ու բռնութիւնները, որոնց ենթակայ է ամէն մի դաշնակցական իր հայրենի երկրում:

Երկրորդ պատճառաբանութեան մասին խօսելն իսկ աւելորդ է: Զգիտենք՝ ո՞վքեր են այն հրէշները, որոնք չարախնդում են, որ մի վատթար իշխանութեան երեսից ժողովուրդը սովահար է լինում: Դաշնակցականների մէջ դոնէ այդպիսի հրէշներ չկան: Նրանցից ամէն մէկը առանց վարանումի կը ստորագրէր նմանօրինակ անմարդկային արարքների դէմ ուղղւած որեւէ գրութեան տակ՝ բնաւ չմտահոգւելով, որ անխելք կամ նենգ մարդիկ դրա մէջ բոլշեւիկեան համակրութիւններ կարող են տեսնել:

Գալով «Փետրւարեան աւանտիւրայի» դէմ գրւած «Բաց նամակին»՝ հայ բոլշեւիկները մեզնից շատ լաւ գիտեն, որ այդ նա-

մակը թիւրիմացութեան արդիւնք է: Թումանեանը գրել է այդ նամակը Թիֆլիսից, հաւատալով բոլշեւիկների ստերին, թէ Հայաստանի ապստամբութիւնը մի քանի արկածախնդիր դաշնակցականների գործն է: Սակայն, նոյն բոլշեւիկների յորդորով դալով Երեւան եւ տեղեկանալով իրականութեանը՝ ահա թէ ինչ է հեռագրում նա այդ ապստամբութեան՝ մասին անդրկովկասեան այն ժամանակայ սատրապ Օրջոնիկիձէին:

«24 մարտ 1921, Երեւան

Թիֆլիս, Օրջոնիկիձէին

Հինգերորդ օրն է ես Երեւանում եմ: Ծանօթանալով գործերի դրութեան՝ բոլորովին համոզուցի, որ մեզ մօտ՝ Թիֆլիսում կազմւած համագումը Հայաստանի դէպքերի մասին չի համապատասխանում իրականութեան: Շարժումը սկսել է գիւղացիութեան մէջ, գանազան շրջաններում, տարածւել է միջեւ Երեւան եւ իր յետեւից քաշել է մտաւորականութիւնը: Ստեղծւել է հետեւեալ դրութիւնը. գէնքը ձեռքերին միմեանց դէմ են դուրս եկել մի կողմից Հայաստանի բանւորներն ու աշխատուոր գիւղացիները, միւս կողմից՝ կոմունիստների զինւած խմբերը. եւ հոսում է արիւնը առանց ռելէ հիմքի քշմամբեան եւ փոխադարձ բնաջնջման համար: Ռազմաճակատում ընկեր կոմունիստները որոշ կերպով ասում էին, որ ամբողջ յեղափոխութեան ընթացքին կարմիր Բանակն աւելի՛ անմիտ կռիւ չէ վարել: Այդ պատճառով ջերմօրէն խնդրում եմ ձեր հեղինակաւոր միջամտութիւնը, որպէսզի շուտափոյթ կերպով վերջ տրի ոչ ոքի համար պէտք չեղած այս արիւնհեղութեան: Անհրաժեշտ եմ համարում աւելացնել, որ յեղաշրջումից յետոյ ձերբակալւած կոմունիստներից եւ ոչ մէկը եւ ոչ մի ռազմագերի այստեղ գնդակահարւած չէ: Նման հազորագրութիւն անում եմ եւ ռազմաճակատում գտնուող ընկեր կոմունիստներին: Եթէ պահանջեն լրացուցիչ տեղեկութիւններ, խնդրում եմ կանչել ինձ ռադիոյի մօտ:

Յովհաննէս Թումանեան»

1921ին Պոլսում ես առիթ ունեցայ խօսելու Թումանեանի հետ փետրւարեան ապստամբութեան մասին, եւ նա ոչ միայն հաստատեց վերոյիշեալ հեռագիրը*), այլ եւ աւելացրեց.—

*) Այս հեռագիրը՝ թարգմանւած ռուսերէնի Յ. Քաջաղունու ձեռքով եւ ստորագրւած Յ. Թումանեանի ձեռքով, գտնւում է ընկ. Ս. Վրացեանի մօտ:

— Օրջոնիկիձէն Երեւանում տեղեկանալով ապստամբութեան մանրամասնութիւններին, ասաց ինձ. «Ձարմանալի ոչինչ չկայ, որ հայ ժողովուրդը գէնք է բարձրացրել խորհրդային իշխանութեան դէմ, որովհետեւ այդ իշխանութեան ղեկն իրենց ձեռքն առած հայ բոլշեւիկները մարդիկ չէին, այլ վայրենի գաղաններ»...

Թէ որքան էր դարչում Թումանեանը բոլշեւիկների արիւն- ուռչող գործերից, այդ մասին գաղափար կարող է տալ եւ հետեւեալ դէպքը: —

1920ի օգոստոսին, Ռուսաստանի խորհրդային իշխանութեան ներկայացուցիչ Լեզրանի հետ զինադադար կնքելու համար, Թիֆլիս էի եկել: Այդ առթիւ, բժ. Սաղեանի հետ միասին գնացինք այցելութեան Թումանեանին, որ գտնուում էր Կոջոր ամառանոցում: Մեր հանդիպումը, ինչպէս ստորեւ կը տեսնենք, շատ սրտազին էր եւ շատ ուրախ: Բայց երբ խօսակցութեան ընթացքին Թումանեանը տեղեկացաւ, որ բոլշեւիկները Ձանգեղուրում դադանաբար սպանել են Վահան Խորէնուն՝ նա, մուսուլման ինչպէս գիշեր, բացառանչեց.

— Սրիկանե՛ր... Եթէ իրենց սկզբունքների մէջ մի կաթիլ սրբութիւն կար, էդ էլ աղտոտեցին էնպիսի ոճիրներով, որ մարդ միայն զղանք կարող է զգալ բոլշեւիկ խօսքը լսելիս...

Ահա այս մարդուն են ուղում հայ բոլշեւիկները իւրացնել, իրենց գործերին համախոհ դարձնել...

Ի հարկէ, համակերպելով անհրաժեշտութեանը՝ Թումանեանը, շատ ուրիշների պէս, ենթարկւել է խորհրդային իշխանութեանը, բայց թէ ի՞նչ սրտով — այդ կարելի է տեսնել Պ. Մակինցեանի հետեւեալ տողերից.

«Բոլշեւիկների Թիֆլիս մտնելու առաջին օրերին, նորեկներին ի պատիւ տեղի է ունենում բանկէտ: Թումանեանին ընտրում են թամաղա:

— Զօռեցին: Շատ չեմ ու չում արի, տակիցը չկարողացայ դուրս պրծնեմ: Վերցրի առաջին բաժակն ու ասի՝ ձեր կենացը, բայց վրան մի առակ պիտի պատմեմ: Լինում է չի լինում մի թաղաւոր: Շատ վատն է լինում: Ժողովուրդն սկսում է աղօթել, որ աստուած դրա հոգին առնի: Թաղաւորը վեր է ընկնում-մեռնում: Թախտի վրա սրա ժառանգն է նստում, հօրից առաւել չար ու դաժան: Ժողովուրդը դարձեալ սկսում է աղօթել, որ աստուած

սրանից էլ ազատի: Սա՛ էլ է վեր ընկնում-մեռնում: Գահ է բարձրանում սրա ժառանգը եւ չարութեամբ ու խրատութեամբ գերազանցում հօրը, էլ ուր մնաց թէ պապին: Ժողովուրդն այստեղ խելքի է գալիս եւ աղօթում, որ աստուած սրան երկար կեանք տայ, խորհելով, որ սրանից յետոյ եկողը — սրանցից «բէշբէթար» պիտի լինի»...*)

Բանկետին ներկայ եղած բոլշեւիկներն, անկասկած, բթամտօքն կոնծում են Թումանեանի առաջարկած «կենաց բաժակը»: Բայց ընթերցողի համար պարզ է, թէ մեր բանաստեղծը ի՞նչ թոյն էր դրել այդ բաժակի մէջ: Իր չինական առակով, նա բացայտօքն յայտարարում է, որ թէեւ բոլշեւիկեան իշխանութիւնը աւելի՛ ստոր է քան նախորդները, բայց ինքը ստիպւած է համակերպւել նրան, իբրեւ անհրաժեշտ չարիքի, որովհետեւ երկիւղ ունի, թէ նոր քաղաքացիական կռիւները կարող են նոր պատուհասներ բերել ժողովրդի գլխին: Այստեղ եւս Թումանեանը ամբողջովին կանգնած է մնում դաշնակցականների տեսակէտի վրա, որոնք թէ՛ մինչեւ փետրւարեան Ապստամբութիւնը եւ թէ նրանից յետոյ, ամէն ջանք դործ են դրել, որ Հայաստանը — թէկուզ եւ բոլշեւիկեան լուծը թօթափելու համար — նոր քաղաքացիական կռիւների թատերաբեմ չդառնայ:

Դրա համար էլ, միանգամայն իրաւացի է բոլշեւիկեան քննադատ Պօղոս Մակինցեանը, որ, ճիշտ է, տհաճութեամբ եւ վարանումներով, բայց եւ այնպէս, վերջ ի վերջոյ, մէկդի է նետում Թումանեանին «բոլշեւիկացնելու» կամ «խորհրդայնացնելու» ամուլ ճիւղերը՝ ասելով.

«Թումանեանը դուրս է գալիս Դաշնակցութիւնի բայց իր ողջ աշխարհայեցողութեամբ, իր ազգային մտայնութեամբ եւ ներքին զգացողութեամբ մնում է դաշնակցական ընդմիջտ»...*)

Յ. Թումանեանի նկարագրի միւս կարեւոր գծերի մասին կը խօսենք յաջորդ անգամ:

Փարիզ

*) «Նոր Ուշի», 1929թ. № 2—3, էջ 200:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԱԻՐԵԱՆ

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ

I

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՐ ԱՂՔԻՒՐՆԵՐ

Սայեաթ Նովայի անունը հայերին վաղուց էր յայտնի լուրերից եւ աւանդութիւններից: Նրան ծանօթ էին եւ վրացիները, որոնք նրան վրացի աշուղ էին համարում: Սայեաթ Նովայի յիշատակին ձօնաձեւ երգերի մէջ, վրացի բանաստեղծները կոտորներ էին բերում նրա երգերից: Բայց Սայեաթ Նովայի բուն ստեղծագործութիւնները անհետացել էին մարդկանց յիշողութիւնից: Նրան յարուստիւն տւեց բժիշկ Գէորգ Ախվերդեանը, որ անցեալ դարի քառասնական թւականներին յաջողել էր ձեռք բերել Սայեաթ Նովայի հայերէն եւ թուրքերէն երգերի տետրակը — Դաւթարը: Ախվերդեանը ուսումնասիրեց Սայեաթ Նովայի հայերէն երգերը եւ հրատարակեց 1852թ. Մոսկւայում՝ գրքին կցելով մի ընդարձակ յառաջաբան՝ Թիֆլիսի հայոց բարբառի քերականութիւնը եւ մանրամասն բացատրութիւններ*)։ Այս հրատարակութիւնը խթան հանդիսացաւ Սայեաթ Նովայի երգերի բնագրի նորանոր ուսումնասիրութեանց, եւ Սայեաթ Նովան զբաւեց հայոց գրականութեան մէջ առաջնակարգ տեղերից մէկը:

Նոյն Ախվերդեանը տւեց նաեւ Սայեաթ Նովայի առաջին ամփոփ կենսագրութիւնը՝ տեղեկութիւններ քաղելով Սայեաթ Նովայի երգերից, աւանդութիւններից եւ Թիֆլիսցի ծերունիների պատմածներից: Այնուհետեւ, Ախվերդեանի կազմած կենսագրութիւնը, աւելի կամ պակաս զարգարուն, կրկնում էին Սայեաթ Նովայի երգերի յաջորդ բոլոր ուսումնասիրողները: Ըստ Ախվերդեանի, 18րդ դարի սկիզբները, 1710 թւից առաջ, Հալէպից Թիֆլիս էր եկել մահաթեի Կարապետ անունով մի հայ եւ ամուսնացել էր Սառա անունով հաւաքարցի աղջկայ հետ: Այս տե-

*) Սայեաթ-Նովայ լուս գրած աշխատասիրութիւնով Գէորգեայ Ախվերդեան, Մոսկվա, 1852:

ղեկութիւնը Սայեաթ Նովան ինքն է տալիս իր թուրքերէն երգերից մէկում*):

Վաքանքմ Թիֆլիզ դուր, սամքի Գուրչիստան,
Անամ Հաւաքարու, աքամ Հալաբու:

Այսինքն, Ախվերդեանի թարգմանութեամբ —
Հայրենիքս Թիֆլիսն է, կողմն վրաստան,
Մէրս Հաւաքարցի, հէրս Հալաբցի:

Այս ամուսնութիւնից, Թիֆլիսում աշխարհ է դալիս Յարութիւն անունով մի տղայ, որի ծննդեան տարին թէեւ յայտնի չէ, բայց Ախվերդեանը համարում է 1712թ.: Փոքրիկ Յարութիւնը աշակերտութեան է տրւում ջուլհակի մօտ, արագ սովորում է արհեստը եւ ստանում վարպետի (ուստա) տիտղոս: Նրան յաջողում է կատարելագործել ջուլհակի դաղգեահը՝ կրճատելով սրա մեծութիւնը եւ հնարաւոր դարձնելով աշխատել սենեակում եւ ոչ փողոցում, ինչպէս արւում էր մինչեւ այդ: Բայց հակառակ արհեստում երեւան բերած փայլուն յաջողութեան, Յարութիւնը բուռն կերպով յափշտակում է աշուղական երգերով, թողնում է ջուլհականոցը եւ նւիրում սաղին, դառնում է աշուղ ու մէջլան դուրս դալիս:

Իր աշուղական գործունէութիւնը Սայեաթ Նովան սկսեց թուրքերէն երգերով, ապա անցաւ եւ հայերէնի, իսկ յետոյ, ինչպէս ենթադրում է Ախվերդեանը, երգել է եւ վրացերէն: Վրացերէն երգերից միայն հատուածներ կամ առանձին տողեր են ընկել Ախվերդեանի ձեռքը:

Սայեաթ Նովան արտակարգ յաջողութիւն է ունենում աշուղական ասպարէզում. նրան ականջ էին դնում հասարակութեան բոլոր խաւերը՝ մեծ թէ փոքր:

Հետագային Սայեաթ Նովան ամուսնացաւ Մարմառա անունով մի աղջկայ հետ (Ախվերդեանը նոյն իսկ նրա ղեբեղմանաքան է գտել) եւ այդ ամուսնութիւնից ունեցաւ չորս զաւակ: Քարն է գտել) եւ այդ ամուսնութիւնից ունեցաւ չորս զաւակ: Գրեթէ մահից յետոյ, 1768թ. նա վարդապետ ձեռնադրւեց Հալսկնոջ մահից յետոյ, 1768թ. նա վարդապետ ձեռնադրւեց Հալսկնոջ պատի վանքում, ուր եւ մնաց մինչեւ 1795թ., երբ Աղա Մահմեդի արշաւանքի հետեւանքով վերադարձաւ Թիֆլիս, իր ընտանիքը ուղարկեց Մոզդուկ, իսկ ինքը բերդի Սուրբ Գէորգ եկեղեցում սպանեց Աղա Մահմեդի մարդկանց ձեռքով՝ վերջիններիս մահմետականութիւն ընդունելու պահանջին պատասխանելով —

*) Դաւթար, ձեռագիր, Երեւանի Թանգարան, էջ 75:

տողերը յանգաւոր են, բացի վերջինից, որը երբեմն նոյնայանգ է առաջին տունի միւս տողերի հետ եւ միշտ նոյնահանգ ոտանաւորի բոլոր տունների վերջին տողերի հետ*): Իսկ ոտանաւորների չափը վանկային է (սիլաբիկ) եւ ոչ ձայնական (տոնիկ), այսինքն՝ հիմնաւած է վանկերի քանակի եւ ոչ մէջ ընդ մէջ իրար յաջորդող վանկերի երկարութեան եւ կարճութեան վրա, որովհետեւ թուրքերէն, հայերէն եւ վրացերէն լեզուների մէջ երկար ու կարճ վանկեր գոյութիւն չունեն: Շեշտի խնդիրն էլ որոշուած է հատածներով, որոնք մէկ տողի մէջ կարող են լինել մէկ, երկու կամ երեք հատ, եւ այս դէպքում խիստ պահւում է ձայնական ոտանաւորի հիմնական կանոնը — շեշտը բառերի մէջ դնել այնտեղ, ուր պէ՛տք է լինի համաձայն լեզուի օրէնքի:

Բոլորովին այլ բնոյթ ունի աշուղների ստեղծագործութիւնը: Նա անմիջական կերպով կապւած է զարգացման բարձր կատարելութեան հասած պարսկական բանաստեղծութեան հետ: Աշուղները օգտագործեցին պարսիկ քնարերգութեան բոլոր նւաճումները թէ՛ ոտանաւորի ձեւի եւ թէ՛ արտայայտութեան եղանակի տեսակէտից — նրանց բոլոր պատկերներն ու համեմատութիւնները, ինչպէս նաեւ գովաբանական ձեւերը առնւած են պարսկական բանաստեղծութիւնից: Նախապէս աշուղները պարսից գրականութիւնը կարդացած մարդիկ էին, որոնք պարսից գրականութիւնից սնուող սեփական ուրոյն գրական ձեւ էին մշակում: Ժամանակի ընթացքում գրական այս սեռը բոլորովին առանձնացաւ եւ ամփոփւեց աշուղների ձեռքում, որոնք վերջնականապէս կատարելութեան: Բանաստեղծութեան այս ձեւը զարգացաւ պարսիկների մօտ ու պարսկերէն լեզուով, յետոյ տարածւեց Ատրպատականում եւ Անդրկովկասում, ուր պարսկերէն լեզուն հետզհետէ տեղի տւեց թուրքերէնին:

Աշուղական բանաստեղծութիւնը վաղուց, յամենայն դէպս ոչ ուշ քան 16րդ դարի սկիզբը, խիստ տարածւած ու սիրւած էր Կովկասում: Աշուղների նւազն ու երգը հանրապարտադիր էր կեանքի բոլոր դէպքերում եւ մի տեսակ միս ու արիւն էր դարձել երկրի ազգաբնակչութեան համար, որ սիրով լսում էր իրեն իր ազգային երգ ու նւազ:

Չնայած որ աշուղական բանաստեղծութիւնը շատ էր տարածւած Անդրկովկասում եւ թէ աշուղների մեծ մասը վրացիներ

կամ հայեր էին, մանաւանդ հայեր*), աշուղների ստեղծագործութիւնն ամբողջապէս կատարւում էր պարսկերէն եւ Ատրպատականի թուրքերէն լեզուներով, եւ միայն Սայեաթ Նովայի հանձարին է պատկանում աշուղական բանաստեղծութիւնը հայերէնի եւ վրացերէնի վերածելու պատիւը, որով նա ահագին ծառայութիւն մատուցեց ոչ միայն մայրենի, այլ եւ վրացական գրականութեան: Սայեաթ Նովայի այս քայլը ամբողջ մի յեղափոխութիւն առաջ բերեց Անդրկովկասի աշուղական բանաստեղծութեան մէջ:

III

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

Սայեաթ Նովայի կենսագրութեան հիմնական աղբիւր պէտք է նկատել, նախ եւ առաջ, իր հաղորդած տեղեկութիւնները երգերում: Նոյն նշանակութիւնն ունեն եւ այն ծանօթութիւնները, որ Սայեաթ Նովայի կամ ուրիշ մարդկանց կողմից գրւած են Ախալքեանի հետադատած երգերի Դաւթարում: Յետոյ, դաւիթ, եւ այն փաստերը, որ արձանագրւած են Սայեաթ Նովայի երգերը պարունակող ձեռագիրներում: Եւ, վերջապէս, զանազան աւանդութիւններ, որ հաւաքել է Ախալքեանը կամ ուրիշ անձեր:

Հիմնական աղբիւրների շարքին պէտք է դասել եւ Սայեաթ Նովայի հայերէն, վրացերէն եւ թուրքերէն ոտանաւորների տետրակը, որ հետագային Պետերբուրգում, վրացի արքայազն Թէյ-մուրադի խնդրանքով, յիշողութեամբ գրի է առել Սայեաթ Նովայի որդի Իվան Սէիդովը**): Բանաստեղծութիւնների մեծ մասին կցւած են Իվանի բացատրական դիտողութիւնները***):

Հիմնական աղբիւր պէտք է համարել եւ Հր. Աճառեանի նկարագրած ձեռագիրը, որ պահւում էր Թաւրիզում եւ այժմ փորագրւած է Էջմիածին: Այդ ձեռագրում Սայեաթ Նովայի ձեռքով արձանագրւած են Սողոմոնի իմաստութեան Գիրքը, Առաքեալների թղթերը եւ այլ մանր բաներ:

Այստեղ ես կանգ կառնեմ Սայեաթ Նովայի ձեռքով գրւած տետրակների վրա. միւս աղբիւրների մասին խօսք կը լինի իր տեղում:

*) Ըստ Շոպենի, Երեւանի խանութիւնը Ռուսաստանին միացնելիս, այնտեղի արձանագրւած 96 աշուղներից 85ը հայեր էին:

**) Այդ մասին Թէյմուրազը գրում է. «Սայեաթ Նովայի որդի Իոանէն գրեց ինձ համար իր հօր երգերը ինչպէս որ յիշում էր»:

***) Գ. Աստուածատրեան, «Ազգ. Հանդէս», X.

I. Առաջինը Սայեաթ Նովայի ոտանաւորների տետրագին է, այսպէս կոչւած Դաւթարը, որ պահւած էր Սայեաթ Նովայի մեծ որդի Մելիքսէթի ընտանիքում եւ նկարագրւած է ըստ Գ. Ախվերդեանի կողմից: Սայեաթ Նովայի ընտանիքից այդ Դաւթարը անցել է Հայ Գրչի Մշակների Միութեան, որը իր հերթին, 1921 թւին յանձնել է Երեւանի Թանգարանին: Այս ձեռագիրը մեծ մասով գրւած է Սայեաթ Նովայի կողմից, իսկ մի մասը գրել են իր բարեկամները եւ ինքը սրբագրել: Առաջ այս ձեռագիրը Սայեաթ Նովային պատկանելը տեղի էր տալիս որոշ կասկածի, բայց այժմ, Աճառեանի նկարագրած եւ անվիճելիօրէն Սայեաթ Նովայի գրած ձեռագրի հետ համեմատելուց յետոյ, այլեւս ոչ մի կասկած չի կարող լինել Դաւթարի իսկութեան մասին: Այս Դաւթարում կան 115 կամ 117 թուրքերէն երգեր, գրւած հայերէն տառերով, եւ Ախվերդեանի ասելով 46 հայերէն երգեր, որոնցից այժմ մնացել է 39, գրւած վրացերէն տառերով:

Թէ հայերէն եւ թէ թուրքերէն երգերին կցւած է ծանօթութիւն, թէ ի՞նչ եղանակով պէտք է երգել, երգի բնոյթը (մուխամբազ, թէջնիս, բայեաթի եւ այլն), ղիտողութիւններ երգի որակի մասին՝ լաւ, դժւար եւ այլն, այլ եւ ինքնակենսագրական բնոյթ կրող նկատողութիւններ:

Կարծիքներն այս ձեռագրի բովանդակութեան մասին խիստ հակասական են. հետազոտողների մեծ մասը, Ախվերդեանից սկսած մինչեւ Մելիքսէթի, համոզւած է, թէ ձեռագիրը պահաւոր է, թէ սկզբի մի մասը, ուր պէտք է եղած լինէին Սայեաթ Նովայի վրացերէն երգերը, կորած է, եւ թէ մէջտեղում էլ կան կորած թերթեր. այս վերջին հանգամանքը բնորոշում են բոլոր հետազոտողներն անխտիր: Իսկ հետազոտողներից մէկը՝ Գ. Ասատուր, պնդում է, որ ձեռագրի սկիզբն ու վերջը լրիւ է եւ միայն միջին թերթերից շատերը պակաս են՝ ի միասն հայերէն եւ թուրքերէն երգերի: Իր այս կարծիքը Ասատուրը հիմնաւորում է նրանով, որ ձեռագիրը սկսում է թուրքերէն երգերով, որոնցից առաջինը նկարագրուած է, իսկ վերջանում է վրացերէն մակագրութեամբ, որ արել է, ըստ երեւոյթին, Սայեաթ Նովայի բարեկամ Պէտէլէնց Եովանէի կողմից, որ Իրակլի Բ.—ի արքունիքում պալատական գեղագիր էր եւ տոմարակալ: Այս մակագրութեան մէջ ասւած է. «Էս խաղերն դիմ Սայեաթ Նովու ասած են. Ով ուղղահաւատ ու քրիստոսաւերբ, սրա գրողն ու էս խաղերու ասողն շատ օր մըքնացրել է ու գիշեր է լուսացրել

էս խաղերու ասելումն, հիմի սրա կարդողներ, էս աղաչանք եմ ասում որ սրանց ասողին լաւութեամբ ու նորմի տալով յիշատակէք, ու Դուք էլ Գրիստոսի բերնով օրհնելիք: Ես Պէտէլէնց Եովանէն գրեցի էս աղաչանքս մայիսի 1ին քոնիկոնի 453ին — որը է, 1765 փրկչական թիվն» (Թարգ. Ախվերդեանի):

Այս մակագրութիւնն, ի հարկէ, ապացոյց է, որ Սայեաթ Նովան 1765ին վերջացրել է իր ժողովածուն եւ այլեւս միտք չէ ունեցել նրան վերադառնալու: Հնարաւոր է, որ հետագային նոր գրութիւններ են աւելացւել, բայց հաղիւ թէ գրողը Սայեաթ Նովան ինքը լինէր: Ուստի, պէտք է ենթադրել, որ վերջին մասում Դաւթարը մնացել է անաղարտ: Այլ բան է Դաւթարի սկիզբը: Սկզբնական նկարը ցոյց է տալիս, որ գրողը թուրքերէն երգերն սկսելիս ուղեցել է բաժանել տետրակի միւս բաժիններից: Մեզ յայտնի չէ, թէ հայերէն ինչ երգով էր սկսում Դաւթարը եւ արդեօք մեզ հասնո՞ւ է այն երգը, որի վրա կարող էր եւ պէ՛տք է որ լինէր սկզբնական նկարը: Նոյնը պէտք է ասել եւ վրացերէն երգերի մասին:

Ես չեմ կարող համաձայնել պ. Ասատուրի հետ, թէ Սայեաթ Նովան ղիտամբը գրի չի առել իր վրացերէն երգերը՝ գտնելով, որ նրանք անարժան են Դաւթարի մէջ մտնելու, այն սրատճառով, որ նա այդ երգերը երգել է յանպատրաստից, առանց նախօրօք յօրինելու: Ասատուրի այս միտքը ակնյայտի կերպով սխալ է, հէնց թէկուզ այն պատճառով, որ վրացերէն երգերը, նոյն իսկ իրենց ներկայ վիճակում, շատ հեռու են անգոհացուցիչ լինելուց: Բացի այդ, վրաց թագաւոր Իրակլի Բ.—ի արքունիքում ունեցած փայլուն ղիրքը Սայեաթ Նովան ձեռք էր բերել միայն վրացերէն երգերով, որով դժւար է ենթադրել, թէ նա արհամարհանքով է վերաբերւել զէպի այդ երգերը: Նա պէտք է որ վրացերէն երգերը յօրինած լինի, եթէ ոչ աւելի, գէթ նոյն ուշադրութեամբ, ինչ ուշադրութեամբ յօրինել է հայերէն եւ թուրքերէն երգերը: Վերջապէս, այն նշանակութիւնը, որ վրաց գրականութեան մէջ ունեցել են Սայեաթ Նովայի երգերը, պարզ ապացոյց է այն բարձր կատարելութեան, որին հասել էր Սայեաթ Նովան իր վրացերէն երգերով:

Վրաց գրականութեան մէջ Սայեաթ Նովան բանաստեղծական մի ամբողջ դարոցի հիմնադիր է հանդիսանում: Նրան հետեւում էին թէ՛ ժամանակակից առաջնակարգ բանաստեղծները, ինչպէս Բէսիքին — Վիսարիոն Գաբաշիլի, խիստ զարգացած եւ մինչեւ օրս էլ վրաց գրականութեան մէջ լաւ ղիրք պահած մի

բանաստեղծ — եւ թէ՛ բանաստեղծ-սիրողները, թէ՛ արքայազն իշխաններ ու իշխանուհիներ եւ թէ՛ առհասարակ բանաստեղծութեան սիրահար մարդիկ: Վերջապէս, նրան նմանուում էին առանց խտրութեան բոլոր աշուղները: Սայեաթ Նովայի ազդեցութիւնը չի սահմանափակուել միայն ժամանակակիցներով, այլ մնացել է շատ երկար վրաց գրականութեան մէջ: Անգամ եւրոպական, ի մասնաւորի, ռուսական գրականութեան, Պուշկինի ու Լերմոնտովի ազդեցութեան տակ ընկած բանաստեղծները չեն կարողացել ազատագրուել Սայեաթ Նովայի ստեղծագործութեան արտաքին ձեւերից: Վրացի բանաստեղծները՝ սկսած Ալ. Չաւչաւաձէից եւ Գր. Օրբելիանիից եւ վերջացրած մեր ժամանակների առաջնահարգ բանաստեղծներ Ակակի Ծերեթելիով ու Իլիա Չաւչաւաձէով՝ ամենքն էլ ծանօթ էին ու սիրում էին Սայեաթ Նովայի վրացերէն երգերը, կտորներ են բերել նրանցից, ընդօրինակել են, երկեր են ձօնել Սայեաթ Նովայի յիշատակին:

Սայեաթ Նովայի այս յարատեւ ազդեցութիւնը վրաց գրականութեան վրա Գրիշաչվիլին բացատրում է նրանով, որ մինչեւ անցեալ դարի 70-ական թւականները վրաստանում տալած գիրքը շատ քիչ է եղել տարածւած, ուստի եւ այն բանաստեղծները, որոնք ուղում էին իրենց երկերը ժողովրդի մէջ՝ տարածւած տեսնել, պարտաւորւած էին կիրառել երգի ձեւը, իսկ լաւագոյն, ժողովրդի համար ամենամատչելի ձեւը Սայեաթ Նովայի մշակած ձեւն էր:

Վերջապէս, Սայեաթ Նովայի ազդեցութիւնը վրացիների մէջ չի սահմանափակուում միայն գրականութեամբ: Նրա երգերից շատերն արդէն դարձել են ժողովրդական երգեր: Պատահում են շատ երգեր, որոնք պահել են Սայեաթ Նովայի երգերի ընդհանուր եղանակը կամ առանձին տուններ ու վանկեր: Քարթալինիայի հայ եւ վրացի գիւղական հարսանիքներում, երբ հարսին բերում են փեսայի մօտ, սովորաբար երգում են Սայեաթ Նովայի երգերը:

Այս ամենը ցոյց է տալիս, որ Գ. Ասատուրի կարծիքը այնքան էլ ընդունելի չէ եւ հիմք է տալիս ենթադրելու, որ Սայեաթ Նովայի վրացերէն երգերը չպէտք է նրա հայերէն ու թուրքերէն երգերից ցած դրւեն:

II. Սայեաթ Նովայի հայերէն, վրացերէն եւ թուրքերէն երգերի Տեսութիւնը, որ դրել է Սայեաթ Նովայի որդի Իվան Սէլ-դովը: Այս ոտանաւորները գրւած են յիշողութեամբ, ինչպէս ասացինք, թէյմուրազ արքայազնի խնդրանք: Սա վրաց վերջին

թագաւոր Գէորգի ԺԳ-ի որդին էր, որ արքայական ընտանիքի միւս անդամների հետ միասին ապրում էր մերթ Մոսկւայում, մերթ Պետերբուրգում: Այս les rois en exil, տարադրութեան մէջ, երկար ժամանակ չէին կարողանում համակերպուել անազատ կեանքի ծանր պայմաններին եւ ամէն կերպ աշխատում էին իրենց շուրջը պահել հեռւոր, բայց անմոռանալի վրաստանի կեանքի յիշատակները: Նրանք իրենց հետ բերել էին վերջին պալատական սաղանդար Եարալ Շանչիաշվիլուն (Շանչեան). նրանց հրաւերով Մոզդուկից Պետերբուրգ էր եկել Սայեաթ Նովայի որդի Իվանը, որ Հիւսիսային Կովկասում առեւտրական գործերով էր զբաղւած, ըստ երեւոյթին, ոչ առանձին յաջողութեամբ, քանի որ սիրով ընդառաջ էր ցնացել Թէյմուրազի հրաւերին եւ վրաց արքայական ընտանիքին զբաղեցնում էր իր հօր երգերով: Հէնց այդ ժամանակ էլ գրի է առել հօր երգերը:

Այս երգերի վրա առաջին անգամ ուշադրութիւն դարձրեց ակադ. Ն. Մառը, 1888թ., երբ դեռ ուսանող էր եւ արտագրեց վրացերէն երգերը, թւով 15 հատ: Մառի արտագրած այս երգերը Գրիշաչվիլիի համար հիմք ծառայեցին Սայեաթ Նովայի վրացերէն երգերի հրատարակութեան, 1918թ.: Այդ 15 երգերը նա լրացրեց ուրիշ տեղերից դուրս վրացերէն երգերով:

IV

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ԳՐԱԿԱՆ ԾԱԾԿԱՆՈՒՆԸ

Գրական ծածկանունը գործածելու սովորութիւնը վաղուց է վեր դրուելու ունէր պարսից գրականութեան մէջ: Յամենայն դէպս, նշանաւոր բանաստեղծ Հաֆիզի օրերից արդէն սովորական է, որ բանաստեղծներն իրենց քնարական ոտանաւորները վերջացնում էին իրենց անուն, ընդհարապէս, ծածուկ անուն յիշատակութեամբ: Պարսիկ բանաստեղծներից այս սովորութիւնն անցաւ եւ աշուղներին. սրանք էլ իրենց երգերը վերջացնում էին իրենց անուններով կամ ծածկանուններով:

Անդրկովկասում աշուղները յաճախ դուրս էին գալիս արհեստաւոր դասից, այդ պատճառով գործ էին անում անուններ, որոնք ցոյց էին տալիս նրանց արհեստը, կամ ծագումը: Շատ անգամ էլ ընդունում էին իրենց ստեղծագործութիւնը բնորոշող կամ, առհասարակ, որեւէ բանով իրենց հաճելի թւացող անուններ:

Սայեաթ Նովա ծածկանունը տարբեր ձեւով է գրւում հիմ-

նահան Դաւթարում: Հայերէնում կայ վեց ձեւ — Սայխաղ-նովա, Սայեաք-նովա, Սայխաք-նովա, Սաեաք-նովա, Սայեաք-նովա, Սաեաք-նովա: Վրացերէն երգերում, Գրիչաչվիլիի ասելով, ոչ ոք ուղիղ չի գրում Սայեաթ Նովայի անունը: Պատահում են Սավաթնովա, Սաաթլամա, Սաաթնովա եւ մի շարք ուրիշ ձեւեր: Պէտք է ընդունել Սայեաթ Նովա ձեւը, որ գործ է ածում լաւ դեղագիր ու կարգացած մարդ Պէնտէլէնց Եօփանէն:

Արդ՝ ի՞նչ է նշանակում այս ծածկանունը:

Սայեաթ Նովա անունը կազմող երկու բառերն ունեն հետեւեալ նշանակութիւնը. սեխդ, որ գրւում է պարսից այբուբենի 15րդ տառով, անգլիերէն նշանակում է a lord, prince chief — իշխան, պետ. սեյաղ, որ գրւում է պարսից այբուբենի 17րդ տառով՝ «սաղ», նշանակում է a hunter, a ravisher of hearst — որսորդ, սրտեր յախշտակող. նաւ, նալ, նով new, fresh — նոր, թարմ: Այս չորս բառերից են մեկնում Սայեաթ Նովա ծածկանունը բացատրողները: Յովհաննէս Թումանեանն ու Վալ. Բրիւսովը Սայեաթ Նովա անունը հասկանում են, որպէս երգերի տէր, իշխող. Գրիչաչվիլիին՝ նոր տիրապետող, նոր վարպետ: Վերջինիս կարծիքին յարում է եւ Լէոնիձէն: Մելիքսէթեղը աւելի Թումանեանի մեկնութեան է յարում — երգի տէր: Այս խմբի պատկանողներն ի նկատի ունեն Սայեաթ Սովայի որդի Իվանի ազգանունը՝ Սէիդով, թէեւ Գ. Ասատուրի պնդումով*) Սայեաթ Նովայի աւագ որդի Մելիքսէթը իր ազգանունը գրում էր Սայեաթով (այժմ նրանք դարձել են Սայեադեանց):

Գ. Ասատուրն ու Գ. Լեւոնեանը կարծում են, որ Սայեաթ նշանակում է որսորդ, իսկ Նովա — նաւ, երգ, ուստի Սայեաթ Նովա անունը հասկանում են՝ որսորդ նաւդի, երգի: Իր տեսակէտի ճշտութիւնը հաստատելու համար Գ. Լեւոնեանը հատուածներ է բերում Գիւրջի Նավէ եւ Ջահիլ-Օղլան աշուղների երգերից, ուր Սայեաթ բառը հասկացւում է որսորդի իմաստով: Ինձ թւում է, որ աւելի յարմար է Սայեաթ բառը առնել ոչ թէ որսորդի նշանակութեամբ, այլ որպէս սրտեր յախշտակող, հմայող, որով Սայեաթ Նովա կը նշանակէ՝ երգով սիրտ յափքշտակող:

(Շարունակելի)

ՌՈՒՔԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Տպագրութեան յանձնելով մեր ազգային բանաստեղծի նամակները՝ հարկ ենք համարում տալ մի քանի բացատրութիւններ:

Անցեալ դարու եօթանասնական թւականներից սկսած Ռ. Պատկանեանը ամբողջովին նւիրւեց իր սիրած մանկավարժական գործունէութեան: Սա նրա ասորումների այն շրջանն էր, երբ նա դասուած էր «մատաղ սերնդի պատրաստութեան գործով», ինչպէս յաճախ ասում ու գրում էր իր բարեկամներին: Իր հայրենի քաղաքում՝ Նոր-Նախիջևանում իր կնոջ տիկ. Օլգայի հետ միասին նա բացել էր «հայ տղայոց օրինական պանսիոն», գրում էր մանկավարժական դրժոյկներ, որոնց մէջ մեծ տեղ էր տալիս եւ հայ երգին, վառնդի հաւատացած էր, որ «մանկական հասակից հայ երգը պէտք է ամրանայ երեխայի սրտի մէջ»: Բայց մի քանի տարիներից յետոյ, արդէն չէր թաղցնում իր մտերիմներից, որ մանկավարժական գործունէութիւնը Նոր-Նախիջևանում նրան չէր պահանջում: Նախ՝ Հայաստանից հեռու մեկուսացած քաղաքի տապաքէզը նեղ էր թւում. յետոյ՝ տիրող քաղաքի բարոյական միջավայրը իր առօրեայ, փոքրիկ քաղաքին յատուկ միակերպ կենցաղով, մանր բամբասանքներով ու սրանց նման ուրիշ անակոթութիւններով — չէին կարող առողջ եւ մղիչ ազդակ լինել խորթութիւններով — չէին կարող առողջ եւ մղիչ ազդակ լինել բանաստեղծի ասորումների ու երազների համար: Մեծ մտահոգութիւն էր կազմում եւ այն՝ ինչ բանաստեղծը տեսնում էր ամէն օր եւ ինչ շատերի աչքից խուսափում էր:

Նոր-Նախիջևանը չըմպատող ուսման շաւոյթը մեծ նաւահաններ էր ածում եւ անտեսանելի, շատ անգամ եւ անկայտնի կերպով՝ մտնում էր կղզիացած հայ փոքրիկ գաղութի ընտանիքի մէջ եւ կաթիլ կաթիլ ասպղղայնացնում նրան: Բայց եթէ Ռ. Պատկանեանի սուր, զննող աչքերից այդ երեւոյթը չէր խուսա-

*) «Նոր Ուղի», 1930թ. № 4—5, էջ 157:

փում, նա զգում էր, սակայն, որ մեծակ ինքը ոչինչ չի կարող անել: Յաճախ վրդովւած՝ փորձում էր այդ երեւոյթի մասին չմտածել, բայց զգում էր, որ իր խռոված հոգին ու այդ մշտական թունաւորւած տրամադրութիւնը արգելք են լինում նրան եւ իր միւս սիրած գործով՝ գրական ստեղծագործութեամբ զբաղւելու:

Եւ Ռ. Պատկանեանը երազում է տեղափոխւել մի այնպիսի վայր, ուր ունի մշակոյթն ու կենցաղը հայիւ թէ չուտով մուտք գործել կարողանային եւ, որ գլխաւորն է, այդ վայրը լինէր «հայութեան ծոցը»: Այդպիսի վայր բանաստեղծի կարծիքով, կարող էր լինել միայն Էջմիածինը: Արդարեւ Ռ. Պատկանեանը իր բարեկամների միջոցով սկսում է հող պատրաստել, որպէսզի Էջմիածնի գաւրոցի վարչութիւնը հրաւիրէ իրեն իբրեւ ուսուցիչ:

1875թ. գրած նամակում, որ բերում ենք ստորեւ, նա խօսում է թէ՛ իր պայմանների մասին եւ թէ համեստօրէն առաջարկում է նաեւ իր գրական աշխատակցութիւնը «Արարատ» պատգարին: Յայտնի է, որ Ռ. Պատկանեանի Էջմիածին տեղափոխւելու ծրագիրը չիրականացաւ: Մենք լսած ենք բանաստեղծի մտերիմներից, թէ գլխաւոր արգելքը այն էր, որ Էջմիածնում վախենում էին Ռ. Պատկանեանի ներկայութիւնից, նրա չափազանց զննող աչքերից: Զպէտք է մոռանալ նոյնպէս, որ Ռ. Պատկանեանը հրաշակւած էր ոչ միայն որպէս քնարերգակ եւ հայրենասէր բանաստեղծ, այլ եւ իբրեւ երգիծարան: Անշուշտ, Էջմիածինը ընդունում էր «Արաքսի Արտասուք»ի երգչի բարոյական հեղինակութիւնը, բայց վախենում էր Ռ. Պատկանեանի սուր հեգնանքից եւ անողորմ ծաղրից: Գուցէ Էջմիածնի վանականներից շատերը իսկապէս իրաւունք էլ ունէին վախենալու «Սիւլիւկ»ի սուր ու յաճախ անխնայ ոտանաւորներից եւ արձակից: Եւ ո՞վ կարող էր երաշխաւորել, որ հաստատուելով Էջմիածին, «Սիւլիւկ»ը չծաղրէր եւ վանականներին՝ մէկի տգիտութիւնը, միւսի անգործութիւնը, երրորդի «եսը», չորրորդի չարախօսութիւնը, հինգերորդի փողատիրութիւնը եւ այլն: Բանաստեղծի մտերիմները պատմում էին, թէ իբր Ռ. Պատկանեանը յաճախ կրկնել է՝ «վախեցան, որ Էջմիածինի հանգիստ կեանքը քար ու քանդ անեմ. ի՞նչ տրած, բայց եւ այնպէս՝ իմ իղձս է, որ մի օր Էջմիածնում ինձ թաղեն»: Էջմիածինը զանազան պատրւակներով՝ այնպիսի պայմաններ է առաջարկում Ռ. Պատկանեանին, որ նա, ոչ մի դէպքում չէր կարող ընդունել:

Ռ. Պատկանեանի 1875թ. գրած նամակը.

Մտերիմ եղբայր Տէր Խաչատուր.

«Ձեր նամակը ստացայ. դերասպատիւ Վահրամ վարդ. Մանուկուն Նամակն եւս, առ Ձեզ, կարդացի: Իմ պատասխանը նոյնը կը լինի, ինչ որ ես Ձեզ բերանացի եւ քանիցս ասել էի: Իմ ցանկութիւնս դէպի Էջմիածին երթալու՝ ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մօտիկ լինել իմ բնիկ հայրենակցաց եւ գտնել ծոցումն իմ սուրբ տիկ լինել իմ բնիկ հայրենակցաց եւ գտնել ծոցումն իմ սուրբ աշխատութեանց, որն պիտի կլանէ իմ բոլոր անձնը: Ես ինքս ինձի նշանակում եմ այնքան ուժեղ, որքան որ կը բաւէ իմ ընտանիքը, ո՛չ գեղիսութեամբ, ո՛չ ճոխութեամբ եւ ո՛չ փառթամութեամբ, այլ՝ չափաւորութեամբ ապրելու համար, վառնդի՝ չբաւոր մարդը մտաւորապէս աշխատել չի՝ կարող. «աղքատութիւնը յանցանք չէ, այլ ամենայն յանցանք մայրն է», այս՝ փորձած ճշմարտութիւն է: Իմ սիրած առարկաներն (դասախօսութիւնները) են, բնական պատմութիւն, թւաբանութիւն (ստորին եւ միջին. վերնոցն մէջ տակաւին ոյժս փորձած չեմ, ուրեմն, մեծամեծ արգասիք խոստանալ չեմ կարող), այլեւ՝ պատմութիւն (ընդհանուր եւ ուսաց) եւ ուսաց լեզու: Բայց ես չեմ պահանջում, որ այս ամէն յիշած առարկաներն տրւին ինձ, ո՛չ. միայն թէ ինձ այնքան աշխատանք տային, որ կարող լինէի Էջմիածնայ վարդապետանոցէն ստանալ տարեկան 1500—1750 մանէթ: Այժմ դառնանք Արարատ լրագրին: Ապաքէն Ձեզ յայտնի է, որ գրիչն իմ կենաց տարրն է, կեանքիս ամենախաղաղ պահանջումն է. ես առանց գրելու կենալ չեմ կարող:

Ի՞նչ ասել կուզէ, որ Ակադեմիայէն ազատ բոլէներս ամբողջութեամբ նւիրած կը լինին Արարատին, եթէ միայն նա կարժանացնէ ինձ իւր էջերի մէջ հիւրընկալութիւն ցոյց տալ... — Ժանացնէ ինձ իւր էջերի մէջ հիւրընկալութիւն ցոյց տալ... — Ես ա՛յն ժամանակ վեհափառին կը դիմեմ, երբոր ըստ ամենայնի ես ա՛յն ժամանակ վեհափառին կը դիմեմ, երբոր ըստ ամենայնի հաւաստի կը լինեմ, որ խնդրեք ոչինչ կերպիւ չի մերժել: Դրա համար պէտք էր մերձաւոր մեծաւորների կարծիքը եւ մտերիմ, անխաղաղ յօժարութիւնը ստանալ: Բարեհաճեցէք, պատուական հայր եւ եղբայր, այս նամակի իմաստը եւ բովանդակութիւնը հաղորդել դերասպատիւ հայր Վահանին:

Մնամ Ձեր միշտ մտերիմ եղբայր

Ռ. Պատկանեան

1875. 15—VI.

Ինչպէս արդէն վերեւ յիշեցինք, էջմիածնի պայմանները անընդունելի էին, եւ Ռ. Պատկանեանը հրաժարուով է էջմիածին տեղափոխւելու երազից: Դժուար է ասել, արդեօք մեծ բանաստեղծի հետագայ տարիների ստեղծագործութեան տեսակէտից լա՞ւ եղաւ թէ վատ, որ 1875թ. նա չտեղափոխւեց էջմիածին: Յամենայն դէպս, եթէ աչքի առաջ ունենանք Ռ. Պատկանեանի տաք խառնածքը, մի քիչ անհանգիստ բնավորութիւնը, հազիւ թէ էջմիածնի միապաղաղ մթնոլորտը իր յատուկ մտայնութեամբ՝ նպաստաւոր լինէր բանաստեղծական մեծ ներշնչման համար: Իսկ մնալով Նոր-Նախիջևան, ուռւ-տաճկական պատերազմի առաջին օրերից՝ նա կերտում է իր հռչակաւոր «Աղատ Երգերը», հետագայում, ութսունական թւականներին էլ հրատարակում է հինգ արձակ վէպեր, բաղմամբիւ պատմածքներ ու «Նախիջևանի Քնարը» երգիծական հատորը:

Գալով միևս անտիպ նամակներին՝ պարտք ենք համարում՝
բերել հետեւեալ բացատրութիւնները: Թ. Պատկանեանի նամակ-
ները կրում են 1879—80 թւականները եւ ուղղած են Էջմիածին՝
Վահրամ Եպիսկոպոս Մանկունուն*):

Նամակները գրւած են Նոր-Նախիջեւանից եւ դիտաւորապէս տեղային Հոգեւոր Դպրոցի, հոգաբարձութեան ու դպրոցին տնօրէնին հետ հարաբերութեան եւ զրադւած: Իր ժամանակին Ռ. Պատկանեանը պատերազմ էր յայտարարած թէ՛ Հոգեւոր դպրոցի հոգաբարձութեան ու իրաւ. քահանայ Զառիֆեանին (դպրոցի կրօնւոյց), եւ թէ՛ Նոր-Նախիջեւանի եւ Բեսարաբիոյ թեմի տառնորդ Մակար եպիսկոպոսին (հետագայում կաթողիկոս): Նամակներում ակնարկներ կան եւ իր միւս հակառակորդների մասին՝ Աղափիրեան վարդապետի եւ Փիլիպոս վարդանեանի, որոնք կարճ ժամանակով ուսուցիչ կամ տեսուչ եղան Հոգեւոր դպրոցում: Ինքն ըստ ինքեան կռիւը անհաւասար էր. մի կողմից քաղաքի աղա-հոգաբարձուները եւ սրանց ղեկավար Զառիֆեանը, որ վաղեմի էր Մակար եպիսկոպոսի ամբողջ հովանաւորութիւնը, միւս կողմից՝ մի մեկուսացած ուսուցիչ, որ միայն մի դէնք ունէր — իր գրիչը:

Ռ. Գատկանեանը իր նամակներում խօսում է երկարօրէն «գլարոցի տպարանի» մասին: Երբ Ղըրմիի Խալիբեան վարժարանը փակւեց, այնտեղից Նախիջեւան տեղափոխեցին եւ եր-

*) Այս նամակները օդատransպորտով ենք Փաբլիկ նշուարեան Մատենադարանից, որի վերատեսչութեան եւ դրադարանապետ յարգելի Ա. Ասոնեանին, յարգանքով ենք մեր անկեղծ շնորհակալութիւնը: Ռ. Բ.

բեմն «Մասեաց Աղաւնի» ամօռադիրը տպագրող տպարանը, որը յանձնւեց իրբեւ սեփականութիւն Նոր-Նախիջեանի Հոգեւոր դպրոցին (ապագայ թեմական դպրոցը): Այդ տպարանով բացի Ռ. Պատկանեանից, ուրիշ հետաքրքրող չկար: Իր երիտասարդական օրերից սկսած մեր բանաստեղծը սիրահար էր տպարանական դործին: Նրբ դեռ վաթսուոնական թւականներին ապրում էր Պետերբուրգում, Ռ. Պատկանեանը մեծ գոհողութիւններով ձեռք էր բերել սեփական մի տպարան, որտեղ եւ տպեց մի շարք մանկավարժական գրքոյկներ, երգարաններ, թարգմանական եւ այլ գրքեր: Նոյն տպարանումն էր տպւում եւ նրա «Հիւսիս»ը: Բայց երբ վաթսուոնական թւականները վերջերից հաստատուեց իր հայրենի քաղաքում, նա, ինչպէս ինքն էր ասում՝ «որը է գգում իրեն անոանց տպարանի»: Բացի իր մանկավարժական գրադուռնիներից՝ նրա իդէերից մէկն էլ եղել է ունենալ ձեռքի տակ մի Կոպարան, որ կարողանայ շարունակել հրատարակել մանկավարժական եւ ընթերցանութեան համար հայերէն գրքոյկներ: Եօթնասնական թւականների վերջերում նա վճռել էր մի ուրիշ բան էլ, որ միայն իր մտերիմներին էր յայտնել. այն է՝ հրատարակել շարաթաթերթ կամ ամսագիր, որի մի մասը պէտք է լինէր տեղական բարբառով, միւսը՝ գրական աշխարհաբառով: Այն հարցին, թէ ո՞վքեր են լինելու թերթի աշխատակիցները՝ Ռ. Պատկանեանը կէս-լուրջ, կէս-հեղինօրէն պատասխանում էր՝ «թերթի աշխատակիցներն են՝ «Սիւլիւկ»ը, «Ջըճի աղան», «Ճանկով մամուկը», «Պամ չին» — բոլորն էլ Պատկանեանի ծածկանունները:

Բնական էր, որ մի այնպիսի «դիւանագէտ», խելացի եւ խիստ
խորամանկ, բայց ոխերիմ թշնամի, ինչպիսին էր Զառիֆեան քա-
հանան, ամէն ջանք թափէր, որ դպրոցի տպարանը չյանձնուի Ռ-
Պատկանեանին. տալ նրան տպարանը — ասել է տալ թերթ հրա-
տարակելու. նիւթական կարողութիւն: Իսկ թերթը Ռ. Պատկան-
եանի ձեռքում՝ մահացու հարած կը լինէր թէ Զառիֆեանի եւ
թէ սրա համախոհները համար: Ու երբ հոգաբարձական ժողովին
հոգաբարձուներից մէկը այն միտքն է յայտնում, թէ աւելի լաւ
է համեստ վարձով տպարանը տալ Ռ. Պատկանեանին, քան թէ
տառերը փչացնել փողիները տակ, Զառիֆեան քահանան բացա-
ռաւոր է. «Ո՛հ, էիք ի՞նչ է. տեսնած բա՞ն է, որ ածին պոսթմանի
մէջը թողնեն»: Ու տպարանը վարձով են տալիս մի հրեայի...

Ահա՛ Ռ. Պատկանեանի այդ անտիպ նամակները, որոնք մեծ
չափով արտայայտում են այդ հարցերի շուրջ եղած խնդիրները:

Նամակները ուղղւած են Վահրամ եսլ. Մանկունիին, որ Չէորդ
Դ. Կաթողիկոսի աջ բազունին էր :

Ն. Նախիջեւան. 1879. 3. նոյեմբերի.

«Մակար եպ. Ես անձամբ չեմ ճանաչում. բայց նորա վրա pro եւ contra շատ բան լսել եմ: Իմ նորա մասին եզած վարժիքը այս է. Մակար եպ. խորամանկ մարդ է. եթէ ոչ իւր նիւթական շահը, գէթ իւր անձնական սլաութիւնը ու փառքը (սլատասիրութիւն եւ փառասիրութիւն գովունի յատկութիւններ չեն, մանաւանդ կրօնաւոր մարդու համար) գերադասող է ամենայն ինչ զգացմունքի եւ բարիքի, թող թէ լինէր այդ զգացմունքը ազգային եւ այդ բարիքը՝ հայրենեաց: Մեր օրերումը խորամանկութիւնը այն սիրալի գործերը չի ծնիլ, որն որ, թերեւս է՛ր երբեմն աշխարհիս կոյր ժամանակն ծնել է: Մեր դարը լուսաւորութեան, դէպի նպատակը ազատօրէն բաց ճակատով ձգտող դար է. ամենայն մութ եւ ստորերկրեայ ճանապարհ, ամենայն սքօղեալ հնար արհամարհելի են մեր օրերում. մեր դարը եւ ներկայ մարդկութիւնը սիրում է ազնիւ ճակատ, բաց սիրտ եւ պարզած դրօշակ եւ վերջնոյս նշանաբանը որոշ եւ պարզ գործ:

Մակար եպ. խորամանկ է, ուստի նորա ուժին, ընդունա-
կութեան եւ քաջագործութեան ոչ ոք չի հաւատալ. ոչ ոք իր
ինչքը եւ գործունէութիւնը չի աւանդել նորա գողգոթուն ձեռքը
եւ գանդադող խելքին:

Կայ հանդամանք, երբ Գեօղ. Օղլուն առաւել օղլուս կը շերտէ,
քան թէ յաղօթս կանխող մի ճշնաւոր:

Մակարը իր ազգային գործունեութիւնը չառ ձախողակի եղանակաւ սկսեց.....

Զեր վրա սր. պարտականութիւն կայ վեհապառօր ուշադրութիւնը դարձնել հետադայ պարագայի վրա, որ 100 հայ մանկունք երթեւեկում են Ռուսաստանի դպրոցներն եւ 100էն աւելի ուրիշ հայ մանկունք թափառում են Ռուսաստանի այլ քաղաքների վարժատուններուն, որոնք այս օրւայ օրս անշուշտ Ն. Նախիջեւանի Հոգեւոր Դպրոցի աշակերտներն պիտի լինէին, եթէ ինքը թշուռ Հ. դպրոցը ագաւաւած լինէր Զառիֆեանի, Վարդանեանի, Ալաճալեանի եւ վերջնոյս արբանեակների մագիրներէն:

Ազնիւ բարեկամ, մի անգամ առ միշտ իմացած եղէք, որ Նոր Նախիջևեանի ժողովրդի բերանը փակւած է, նորա աշատ կամօքը խլւած է, նորա կարծիքը կաշկանդւած է:

Ասացէք վեհափառին, որ միայն նորա հօր աջը կարող է
յուժանել այդ կախարդական կապերը...»

Նոր-Նախիջեւան . 22 նոյեմբերի 1879 .

Սրբազան Հայր, աղնիւ Էղբայր .

«Զեր ուշադրութիւնը կը դարձնեմ մի ալ առարկայի վրա, որն ոչ պակաս քանց շատ ուրիշները, ազգային գործ է :

Ահա 4 տարի է, որ եկեղեցապատկան տպարանը մնում է անգործադրելի. մամուլների նուրբ պողպատեայ մանր մագունքը ժանդոտում են. ձուլած արձձեայ տառերը գետին գետնափոշիների ախոռների մէջ ձգած օրէ օր ժանդոտում են եւ փոշիանում են իսկ որ գլխաւորն է՝ 25-30 հազար ռուբլի գործարանը եւ նորա տալու տոկոսը կորչում են, չքանում են... ցաւ է ասելն՝ այդ ամենը կատարում է ոչ տգիտութեամբ կամ անհոգութեամբ քանի մի հոգաբարձուների (որոնց անունները արդէն յիշել եմ եւ ստորեւ կը յիշեմ), այլ նոցա չարամիտ գիտակցութեամբը եւ չարախնդութեամբը... Ասել եմ եւ դարձեալ կասեմ՝ քանի որ տ. Ս. Զառիֆեանը, Վարդանեանը եւ Պալիբեանը պիտի մնան հոգաբարձուք հոգեւոր դպրոցին, ամէն ինչ պիտի քայքայւի, կործանւի, ժանդոտի ու հոգ դառնայ: Այն է՝ դարմանալին, որ չարը իր չարութիւնը անում է. դարմանալին այն է, որ Սբ. Աթոռը իւր հովանաւորութեան տակ առել է ազգիս կործանիչներուն: Միթէ վեհապառը պիտի սպասէ այն չարաշուք օրան, երբ «բանը բանէն անցած կը լինի» եւ օգնութեան հնար մնացած չլինի այլ եւս: Սրբազան հայր, ափսոս է 25 հազարեայ ժողովուրդը որոց միակ կապն է Սբ. Էջմիածնայ հետ եկեղեցին եւ դպրոցը... աւագ, այդ կապերը փտել են, շտապեցէք օգնութեան:

Կրկրնում եմ իմ ցանկութիւնը .

Անցեալ տարի ես մտադիր էի յիշեալ տպարանը կասրալու,
առնելու վրած, եւ տեղացի ունեւոր եւ բարեմիտ մարդիկ էի գտել,
որ յօժարակամ պատրաստ էին ինձ օգնել տպարանը ոտքի կանգ-
նեցնելու, տուն վարձելու, գրքեր տպել տալու, մինչեւ անգամ
(ազգէի ներկայ պայմաններին նայելով) լրագիր հրատարակելու
եւայլն։ Այս բանս խմանալով քանի մի չարամիտք, (հաստեական
է առաջին) Այս բանս խմանալով քանի մի չարամիտք, (հաստեական
է առաջին) Այս բանս խմանալով քանի մի չարամիտք, (հաստեական
է առաջին)

բանալու: Այս մասին ես երկարօրէն պէտք է խօսէի վեհափառի հետ. բայց տեսնելով արդար ծերունին քան զիս հազարապատիկ վշտացած, լուեցի. եւ փոխանակ նորանէն օգնութիւն եւ մխիթարութիւն խնդրելու, ինքս ամէն օր մխիթարում էի եւ ցաւակից էի լինում նորա քիւր քիւրոց ցաւերուն... ինչ եւ իցէ ես խնայեցի վեհափառի հանգստութեան օրերը իմ դանդաղանքովը թունաւորել, բայց այժմ տեսնում եմ, որ լուութիւնս եւս մի առաքելութիւն եւ խոհեմութիւն չէ: Եթէ պատեհ միջոց գտնէք, խնդրեմ, ասացէ՛ք նորան յետագայս. թող դէ Օղեսոսայի պատերազմական շրջանային նահանգապետին կոմս Թօթլէպէնին, որ թոյլ տայ ինձ տպագրան բանալու. թող վեհափառը համոզէ եւ երաշխաւոր լինի, որ ես երբեք տէրութեան դէմ ոչ խօսքով եւ ոչ գրչով մի չար բան ձեռնարկած չեմ. եւ եթէ կամենայ իմ վրա արդար կարծիք ունենալ՝ թող հարց ու փորձ անէ Ն. Նախիջեւանի քաղաքապետին կամ դումային (ք. խորհրդի անդամներին), որոնք ինձ ի մօտոյ ճանաչում են, եւ ոչ թէ Եկատերինսուվի նահանգապետ Դուռնալօին, որ հազարէն մի դալիս է մեր քաղաք միայն այս ու այն հայի թշնամի աղաներու տուն, նոցա հետ քաղաքացիի փողով տւած ճաշն է լալում եւ շամփայն է լալում: Երբ Ալաճալեանն էր քաղաքապետը՝ ոչինչ կասկած չի կայ, որ իր համարին տ. Սալատուր Զարիֆեանի եւ Սալիբեանի դրդամբ չարախօսութիւններ արած լինի Դուռնուլոյին իմ մասին, որոյ աղագաւ նա քոյլ չի տւեց ինձ տպարանի բացումը: Ես վստահ եմ, որ խոհեմ Թոթլէպէնը վեհափառի խօսքը հասկնալով եւ ուրախութեամբ կը կատարէ. եւ եկեղեցապատկան տպարանը շատ շուտ կը սկսէ տալու ազգիս նիւթական եւ բարոյական օգուտներ»:

1880 յունւար 5. Նոր Նախիջեւանից գրած նամակի մէջ Ռ. Պատկանեանը նորից վերադառնում է տպարանի հարցին.

«Տպարանը ոչ միայն, ինչպէս անցեալ նամակիս մէջ յիշել էի, անդործ կեցած է խոնաւ շտեմարանների մէջ, այլ եւ դպրոցի հոգաբարձուների յիմարութեամբ եւ խորամանկութեամբ, ասորդիւն եւ անվերջանալի դատի մէջ է, որն չվերջացած՝ ում եւ իցէ վարձու տրւել չի կարող, եթէ այդ կնձիւն վեհափառը՝ ըստ օրինակի Մակեդանուլոյն, թրով չի կտրէ...»

Աւելի քան 300 փուղ տառեր՝ զանազան մեծութեան, դանդաղ լեզուների, միջոցներ, տողեր եւ այլն, ածած, թափած են, քրտն փոշի եկած, ամենից վրայից էլ անձրեւ սրսկած, այս ամենէն կարգւած են քանի-քանի մետաղեայ դէղեր, որն մի փոքր

սարքի կարգի բերելու համար 6 ամիս ժամանակ 3-4 գրաշարք օր ու գիշեր պիտի աշխատեն. նոյն եւ կամ աւելի վատթար վիճակի մէջ են 3 մամուլները, որոցմէ մինը՝ չունի տակի տատմանոր կողը, որն միջակտուր բեկւած է... Սօսքս ինչ երկարցնեմ՝ այստեղ բարեմիտ անձանց կարծիքով այժմւայ անելիքն այս է, որ վեհափառը ինչպէս հ. դպրոցի, այնպէս եւ յիշեալ տպարանի խնդրոյ մէջ ինքնիշխանաբար շարժէ, առանձին կոնդակաւ, յանուն Հոգեւոր կառավարութեան (մի կողմ թողնելով Մակար Ա. եպիսկոպոսի միջամտութիւնը) հրամայէ յանձնել տպարանը որոյ վրա եւ հաւատ ունի: Իմ միջոցներս սոքա են. 1) բարեկամքս ունին տպարանի համար նշանակած 2000 մանէթ առձեռն պատրաստի փող, 2) պ. Պողոս Սաթրանեանն պիտի տայ ինձ տպարանի համար պէգէսթէնի լայնարձակ կրպակներէն մինը, մի տարի ժամանակաւ ձրի, 3) կայ մի քնկերութիւն երիտասարդաց, որ հայերէն շաքաթաթերք պիտի հրատարակէ տպարանին մէջ...»

Ռ. Պատկանեանը իր պայքարը սկսել էր դպրոցի վերատեսչի եւ հոգաբարձուների դէմ ո՛չ միայն իր հայրենի քաղաքում, այլ եւ «Մշակ»ում. այսպէս իր 1880թ. 5 յունւար նամակում նա գրում է. «... Ես բարի համարեցի խօսիլ ո՛չ դադուակ, այլ բացարձակ, ո՛չ մի անձին եւ այն իմ բարեկամին, այլ ամբողջ հայ ազգին, ոչ մի քանի մարդոց ականջներին փսփսալ կամ զրուարտել, այլ հրապարակաւ ամբաստանել, որպէսզի ականջ ունեցողն լսէ եւ աչք ունեցողն տեսնէ. «Մշակ» 225 համարի մէջ ես խօսեցայ վերատեսչի եւ նորան աւանդած դպրոցի մասին: Փոյթ ընդ փոյթ բ. Սրբազնութիւնդ կը կարգայ նոյն լրագրի մէջ մի այլ յօդւած, ուր, հակիրճ, բայց ազդու եղանակաւ խօսել եմ տեղւոյս Հ. դպրոցի հոգաբարձուների մասին, ցուցնելով նոցա բոլոր անպիտանութիւնը ընտրւած օրերէն ցարդ: Թէ քաղաքապետը եւ թէ տեղւոյս ընտիր ժողովրդի կարծիքն ու ցանկութիւնը գլխու եւ թէ տեղւոյս ընտիր ժողովրդի կարծիքն ու ցանկութիւնը գլխու եւ թէ տեղւոյս ընտիր ժողովրդի կարծիքն ու ցանկութիւնը գլխու եւ թէ տեղւոյս ընտիր ժողովրդի կարծիքն ու ցանկութիւնը գլխու...»

հետեւեալ շատ սակաւ: Վախենում եմ, որ վեհափառը իւր զգուշութեամբ եւ խոհեմութեամբ իւր զօրութիւնը կը տեղափոխէ Բիշինեւ, ուր ներգործում են աւելի համարձակ...

Ի սէրն Աստծոյ, ներշնչեցէք վեհափառին մի փոքր քաջութիւն որ իր զօրութիւնը դործադրելի: Էջմիածնայ վարկը օրէ օր ստորանում է շնորհօք նոցա, որոնք վայելում են եւ նրա տւած հացը եւ հովանաւորութիւնը: Ի դէպս՝ Սուրբիաս եպիսկոպոսը այստեղ է եւ, ասում են, վիճակային չէնքի համար փող պիտի ժողովէ: Որքան ես կարողացայ հասկանալ, թէ սա եւ թէ սորա հովանաւորը որոնում են ազգի թոյլ տամարները, քան թէ իսկապէս օգուտը. միամիտները կարծում են թէ մեծամեծներին աղա՛, կան օգուտը. միամիտները կարծում են թէ մեծամեծներին աղա՛, աղա՛ ասելուց, նոցա դրպանները պիտի բացւին: Չգիտեն որ՝ նոցա չըջապատած սուտ աղաները ինքեանք եկեղեցիների եւ քաղաքի արդիւնքները լիքելով են ապրում...

Յայտնեմ Ձեզ, որ այս օրերս կատանաք քանի մի մարդոցմէ խնդիր՝ տպարանը ինձ յանձնելու իմաստուց: Ես ամենախոնարհաբար կը խնդրեմ Սրբազնութիւնդ անյապաղ կատարել. մանաւանդ շտապել Թողլէպէնի թոյլտուութիւնը ստանալու:

Պէտք է դուք այստեղ օրինաւոր դպրանոց կամ սեմինարիայ հիմնէք. փողի պակասութիւն չի լինիլ: Նոր Նախիջեւան այսօր 100 աշակերտէն աւելի օտար քաղաքներ է ուղարկել, որոնց համար աւելի քան տաս հազար մանէթ է մսխում. նախիջեւանցիներ տասնապատիկ աւելի հարուստ է, քան թէ դուք կարծում էք:

Ձերդ Ռ. Պատկանեան

Իր ժամանակին Նոր Նախիջեւանի քաղաքային խորհուրդը քաղաքի հարիւրամեակի առթիւ՝ որոշել էր հիմնել Արհեստաւորաց Դպրոց հայ աշակերտների համար. եւ ահա 1881թ. նոյն խորհուրդը ի յարգանս իր հայրենակից բանաստեղծի մանկավարժական գործունէութեան ընտրում է նրան նոր բացւած Արհեստաւորաց Դպրոցի տեսուչ: Այդ օրից վերջ է տրւում Ռ. Պատկանեանի ու նրա հակառակորդների պայքարին, որ ահա եւս էր մի քանի տարի: Այդ շրջանից Ռ. Պատկանեանը ցերեկները դադարում է իր նոր դպրոցի կեանքով, իսկ երեկոները նւիրում արձակ է վիպագրութեան եւ կարճ ժամանակեայ մէջ հրատարակում է 6-7 վէպ, որոնց մէջ առաջին անգամ հայ դրականութեան մէջ հրապարակ է դալիս հայ քաղաքացի ունեւոր դասի կեանքն ու կենցաղը, ինչպէս եւ քաղաքում ապրող հայ մտաւորականի փարիզ հոգեբանութիւնն ու մտորումները:

ՇԱԽԱՐՀ ՆԱՐԴՈՒՆԻ

ՓՈՐՁ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՒ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Ա.

Աւելի քան մէկ դարէ ի վեր կը կանութեան մէջ (1865), Հ. Արսէն գրի եւ կը խօսի հայ եկեղեցի տաղաչա- Այսընթաց՝ Գննական Քերականութեան փութեան կամ Գողթան երգերու ար- մէջ (1866), Հ. Գարեգին Զարբանալ- լետին մասին, բայց ոչ մէկ յառաջ- եան՝ Պատմ. հայ հին դպրութեան մէջ (1874), Հ. Արամաս Տիրոյեան՝ Հայ- դիմութիւն:

Առաջին փորձն է, որքան գիտեմ, Իտալերէն քերականութեան (1902) եւ Հ. Անքիմոսեանի (Բագրատունի) Քե- Բաղմալէպի մէջ (1912 հոկտ.-նոյն.), րականութիւն զաղղիականը (1821), ո- Հ. Կարապետ Սահակեան՝ Բաղմալէպի բուն մէջ ծանօթութիւններ կան հայ- մէջ (յունիս 1907), Տաք. Սմբատ կական տաղաչափութեան մասին: Յե- Գարեգինեան՝ Թէոդիկի Տարեցոյցին տոյ Հ. Քերթէ Սպեմդարեանն է, որ մէջ (1913), Տաք. Յ. Թիքեմեան՝ Հայկական տաղաչափութեան մէջ: Վեր- կը խօսէ հայկական եկեղեցի տաղաչափու- ջապէս, այս հարցով զբաղած են Մ. քեան մասին իր Գերմաներէն Քերա- կանութեան մէջ, (1844), Հ. Արսէն Արեղեան*), պրոֆ. Արման (Հայրենիք), Բագրատունի՝ Մշակականքի յառաջա- Ն. Արապեան (Յուսարբեր), Միքեան թանին մէջ (1847), Մկրտիչ Իմին Յովհաննէսեան (Գննական պատմութիւն Վէպէ հնոյն Հայաստանին մէջ (1850), ԺԺ. զարու հայ դպրութեան, 1901), Հ. Յովսէփ Գալքընեան՝ Պատմ. մատե- Լէօ: Եւ օտարներ՝ Ֆէքքէր, (Ն. Ար- նադրութեան Հայոցին մէջ (1851), բալեան կը յիշէ մահւ Լուի Գրէյի ա- Ստ. Պալասանեան՝ Պատմ. Հայոց դրա- նունը, ինձի անծանօթ):

*) Մ. Արեղեան ունի բաղմալէպի դրծեր հայ հին ու նոր տաղաչա- փութեան մասին. Ա.— Հայ ժողովրդ. Առաքելները Մ. Խորենացու Հայոց Պատմութեան մէջ (1901), Բ.— Հայ ժողովրդ. Վէպը (1906), Գ.— Հայ ժո- Պատմութեան մէջ (1901), Բ.— Հայ ժողովրդ. Սեպտիմի Հայոց Հին Բանաստեղծու- ղովրդական Խաղեր, Դ.— Հայ ժողովրդ. Սեպտիմի Հայ ժողովրդ. Վէպի եւ Պատմութեան քեան (1917), Ե.— Հայ ժողովրդ. Սեպտիմի Հայ ժողովրդ. Վէպի եւ Պատմութեան (1923), Զ.— Հին Գուսանական ժողովրդ. Երգեր (1931), Է.— Հայոց Լեզուի Տաղաչափութիւն (1933): Ունի նաեւ ուսումնասիրութիւն մը շարականներու մասին:

Եւ ոչ թէ առակի, առեղծածի, խրթնաբանութեան: Մանաւանդ որ ամփոքապէս յետոյ տուն մը, երկու տուն երգ մը կը յիշի, (Զատով Գան այդ երգերը կը քարգմանէ բաժնելով հատուծէն): Ուրիշ օրինակ մը, — կարգ մը սաղմոսներ, որ կը կոչուին մասիլ, գրաբար Աստուածաշունչը քարգմանած է իմաստութիւն, աշխարհաբար՝ երգ: Այս մասքիլը այնպիսի երգ մը կամ բանաստեղծութիւն մըն է, որ բանահիւսած է համաձայն երբայական արւեստին ամենէն մաքուր եւ ամենէն գեղեցկագիտական օրէնքներուն, այսինքն բանաստեղծութիւն մը, որ լաւ տալած է, լաւ կտրած է, լաւ յղւած է, եւ կը մատնէ բանահիւսողին իմաստութիւնը այդ արւեստին մէջ:

Այս սխալ քարգմանութիւններուն պատճառը նախ այն է, որ քարգմանիչները շփոթած են բանաստեղծութեան երբայքին համագործին բառական իմաստէն: Եւ յետոյ այն՝ որ բանաստեղծութեան մասին բոլորովին տարբեր էր ըմբռնումը, ինչպէս երբայքիններուն, նոյնպէս հին Արեւելքի ժողովուրդներուն, որոնք թաթալած էին ասորաբարեկական քաղաքակրթութեան մէջ: Հետեւաբար, պատմութեան մշուշին մէջէն լուռ երգերն ու բանաստեղծութիւնները ուսումնասիրելու ժամանակ, պէտք է մէկդի նետել հելլենական ու հռոմէական փառաբանութեան կշիռներն ու չափերը, եւ, անցնելով առաջ քան Աթենքի եւ Հռոմի աշխարհակալութեան քաղաքները, մտնել այն տարբեր աշխարհը, թէեւ յետոյ պարտած ու կործանած, որ ասորաբարեկական աշխարհակալութեան շրջաններուն, ժողովուրդներու իրերաբախցման նոյն օրէնքներուն տակ, ինչպէս կայսերական փառաբանական կաթսանքուն մէջ մէկ փառաբանութիւնն էլ մէկ քարետ էր շիներ:

Զե՞ որ, ինչպէս կը պնդեն բոլորը, շատ հիմն են հայ Գողթան երգերը,

հնդկական դիցաբանութեան հետ կապ մը պահելու աստիճան:

Եթէ շատ հին են մեր Գողթան երգերու պատմականները, ապա ուրեմն անոնք հիւսած են համաձայն այդ հին աշխարհին արւեստի օրէնքներուն: Ահա թէ ինչո՞ւ էտուար Տ'որմ կը պնդէ թէ ինչ որ յատկանշիչը կը կազմէ երբայական բանաստեղծութեան, չէր կրնար սեփական ըլլալ միայն երբայքի ժողովուրդին, այլ հասարակաց եւ ընդհանրական՝ Բաբելոններուն, Ասորեստաններուն, Արաբներուն: Ասորական մշակոյթին եւ երբայական գրականութեան հետ մեր խնամութեան մասին խօսելէ առաջ, անհրաժեշտ է ուրեմն նշտել երբայական բանաստեղծութեան նկարագիրները, որ յատուկ էին նաեւ Ասիոյ առաջաւոր ժողովուրդներուն:

Երբայքիները բանահիւսութեան առաջին պայման կը համարէին յիշողութեան ապահովումը: Բանաստեղծութիւնը բերնէ բերան էր, որ կաւանդէր, ուստի հարկ էր միջոց մը գտնել բանահիւսութիւնը պահելու դարձ դար: Որպէսզի երգիչը անսխալ եւ առանց տող մը մոռնալու կարենար երգել բանաստեղծութիւնը, օգտագործուեցաւ այբուբենը: Այսպէս քանի մը երբայքէն բանաստեղծութիւններ հիւսած կամ յօրինած են այբուբենական կարգով: Բանաստեղծութեան մէջ ամէն տուն կամ որոշ թիւով տողեր կը սկսէին նոյնատառ բառով: Զե՞մ կրնար այստեղ յիշել երբայքէն բնագիրը, ուստի օրինակը կուտամ հայերէնով: Ենթադրեմք թէ երգիչ մը երգեց.

Երկնէր երկին եւ երկիր:

Երկրորդ տողը կը պարտաւորէր սկսելու ն տառով կամ երկնէր բառով:

Երկնէր եւ ծիրանի ծով:
Կամ թէ երգիչը երգեց.
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր:
Երկրորդ տողը կը պարտաւորէր սկսելու ը տառով կամ Ընդ բառով.
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր:
Անշուշտ, դժուար էր միշտ յարգել այս օրէնքը: Այս պատճառով, երբայական բանաստեղծութեան մէջ, քիչ են նման կտորները: Յիշեմք Սաղմոս ձժԸԸ, որ, գրաբար Աստուածաշունչին մէջ, որ, գրաբար Աստուածաշունչին մէջ, յայտնի է միւսէն հետո: Երբայքէն այբուբենը կը բաղկանայ 22 տուն, այդ սաղմոսն ալ ունի 22 տուն, իւրաքանչիւր տուն՝ 8 տող, ուրեմն ամէն տունի մէջ նոյն տառը կրկնւած է 8 անգամ: Այբուբենական կարգով գրած է նաեւ երեմիայի Ողբերուն Դ. գլուխը, ամէնը 22 տուն: Նոյն Ողբերուն Գ. գլուխը ունի 66 տուն, այստեղ իւրաքանչիւր տուն կը բաղկանայ եռեռանգներ (երեք տողերն ալ նոյնատառ սկսած են), եւ ամէն երեք տուն յաջորդաբար դարձաւ նոյնատառ:
Դիտելով որ դժուար է միշտ յարգել այս օրէնքը՝ դուրս միայն ու միայն յիշողութեան մէջ պահելու համար բանահիւսական գանձը, երբայքի բանաստեղծները փորձեցին կրկնել ոչ թէ միայն տառը որոշ թիւով անգամներու սկիզբը, այլ եւ կրկնել իմաստը որոշ թիւով անգամներու մէջ: Այսպէս, երբ երգիչը երգեց.

Երկնէր երկին եւ երկիր:
Կը պարտաւորէր երկրորդ անգամին մէջ ալ կրկնել նոյն իմաստը:

Երկնէր եւ ծիրանի ծով:
Ուրիշ օրինակ մը.
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր:
Երկրորդ անգամը կուգար կրկնելու նոյն պատկերը, անշուշտ յառաջացնելով գործողութիւնը.
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր:
Անոնք, հիմա, օրինակ մը երբայական բանաստեղծութեան.

Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես
յուժմէ՞ երկեայց,
Տէր ապաւնէ կենաց իմոց, ես
յուժմէ՞ դողացայց:
Այստեղ ամփոքապէս աչքի կը գարնէ զուգահեռականութիւնը: Արդարեւ, երբայական բանաստեղծութեան գլխաւոր յատկանշներէն մէկն է զուգահեռական զարգացումը յուզումին, մտայնութեան: Այդ զուգահեռականութիւնը կը նշմարուի ոչ միայն երկանգամ, այլ եւ երբեմն եռանգամ.
Խաւարեցի օրն այն,
Եւ մի՛ խնդրեցէ՛ զնա Տէր ի վերուստ,
Մի՛ կենցէ՛ ի վերա նորա լոյս:
Ընկացի զնա խաւար եւ սուեր մահու,
Եկեցէ՛ ի վերայ նորա մէջ,
Եւ զարհուրեցուցեն զնա որ
մթացուցանեն զտիւ:
Այս զուգահեռականութեան մէջ յատկանշականն այն է, որ զուգահեռանգները իրարու կը համապատասխանեն ոչ միայն իմաստով, այլ եւ ձայներով: Ահա, օրինակ մը, որ ցոյց կուտայ թէ իւրաքանչիւր անգամի մէջ բառերը դուրս են դէմ դիմաց, կարծես իրար մոտածման արձագանք.
Տեսնենք երկիր լուս իւրով,
Աշխարհ՝ եւ ամենայն բնակէջ նորա:
Նա ինքն ի վերա ծովու հիմունս
արկ նմա,
Ի վերա դետոց պատրաստեաց զնա:
Առաջին անգամին մէջ երկիրը կը համապատասխանէ երկրորդին աշխարհ բառին, երրորդին մէջ ծով՝ չորրորդին զնա բառին:
Ճիշտ ինչպէս մեր Երկնէր երկին բանաստեղծութեան մէջ բառերն ու պատկերները իրարու արձագանք կուտան անդամներուն մէջ.
Երկնէր երկին եւ երկիր,
Երկնէր եւ ծիրանի ծով:
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր:
.....

Ուսկի՞ց կը ծագի այս գուգահեռա-կանութիւնը: Ըսինք քէ ծագում կանոն յիշողութեան անհրաժեշտ մէկ խաղէն: Այս երեսոյքը շատեր կը բացատրեն նաեւ այլ ձեւերով: Այսպէս, *ժողովականութեան*, *պատկերներու զուգահեռականութիւնը*, *խօսքերու կրկնութիւնը*, ըսէք ինչպէս կուզէք, յատուկ է բոլոր նախնական ժողովուրդներուն, ուրոնց իմացականութիւնը կը ակնդատ դափարներու գուգակցութիւնը: Ետուար Տ'որմ ուշադրութեամբ կը բնութեան գիրքին խմբագրութիւնը եւ կը նշմարէ, որ հեղինակը միշտ գուգարդութեամբ կը յիշէ բոյսերը, կենդանիները եւ գաղափարները, — երկինք եւ երկիր, լոյս եւ խաւար, ցերեկ եւ գիշեր, ծով եւ ցամաք, չար եւ բարի: Յազումին եւ մտածման օրօրումը կը բացատրուի նաեւ յիշելով, որ, երբայցիներուն եւ Աստուծոյն հետեւումը մէջ, երգիչները սովորութիւն ունենին զիրենց շրջապատողներուն կրկնել տալ իրենց ստեղծագործութիւնները տող առ տող: Այս ձեւով կը ստեղծուէր կշռոյք մը, որ, արձագանգ տալով երգիչը պաշարողներուն հոգւոյն մէջ, կօրօրէր զանոնք: Երեսակայեցեք, որ հովիւներ էին երգիչները, — անոնք կը կենային ժողովուրդին մէջտեղը, միշտ ինչպէս իրենց ոչխարներու հօտին կեդրոնը, կերպէին ինչպէս տուն կուտար ներշնչումը: Ու ժողովուրդը կը մասնակցէր, կրկնելով փոխասացութեամբ: Նկատեցէք որ վազկատուն կամ խաղաղած ժողովուրդներուն մօտ տարօրինակ վարժութիւն մըն է խմբիկ առաջնորդին շուրջը, պաշարել զայն, կախիկ անոր շրթներէն: Այս վարժութեան հետքը կայ անպայման սաղմոսացութեան աւանդութիւններուն մէջ: Ինչպէս ովասիսին մէջ, առի մը եզրէք, ոչխարի հօտին կեդրոնը կանգնած հովիւ մը, այնպէս ալ տաճարին մէջ, երգիչներուն դասին կեդրոնը կեցած *ժողովուրդ* (երբայցիները կը նշանակէ այն, որ կշռոյք եւ չափ կուտայ ներշնչման, պարզ

խօսքով՝ բանաստեղծ), կերպէ եւ ժողովուրդը կը ձայնակցի փոխին ի փոխ: Երգեցողութեան այս ձեւէն ծագում առաւ դասէ դաս փոխասացութիւնը. — Եւ երկոքին դասք երգեցողացն կացին ի տանն Աստուծոյ (Գիրք Նեեմ. Գլ. ԺԲ, 40):

Արդ, պահ մը դիտեցէք նմանութիւնը, որ գոյութիւն ունի փոխին (սաղմոսներու տունները) եւ գուգահեռ անդամներով բանահիւսութեան միջեւ:

Սկիզբները գրեցինք քէ երբայցիներէն մէջ բանաստեղծութիւն կը նշանակէ *յղկել*, *յօտել* (ինչպէս ծառ մը), *տաշել*: Այս բացատրութիւններն իսկ կը մատնեն, որ երբայցիներուն մօտ գոյութիւն ունէին տաղաչափական մասնաւոր օրէնքներ, որոնց վրա կը ձեւէին ու կը կտրէին, կը կաղապարէին ու կը յղկէին իրենց ստեղծագործութիւնները: Այդ ենթադրութիւնը աւելի եւս կը գործնական, երբ նկատուի առնեմք որ երբայցիները բազմաթիւ բառեր ունին բանաստեղծական զանազան ձեւերով մասին: Ասկից գատ, Սաղմոսներուն մէջ կը յիշուին բազմաթիւ բառեր, որոնք կը հաստատեն քէ շատ որոշ օրէնքներ կային երգելու, հետեւաբար բանահիւսելու համար: Այսպէս, գոյութիւն ունէին հատածներ, որ կը նշուէին *աթնա* (Աստուածաշունչի մէջ քարգմանած է *հանգիստ*) կոչւած շնչով մը: Դարձեալ կային *թէ ամիս* կոչւած նշաններ, որոնք կուգային շնչով ու տանաւորին անդամներուն վերջին բառերը, բաժնելով տողը տողէն: Այս մասին երկար չափիս խօսիմ, որովհետեւ այնքան բարդ հարց մըն է, որ երկու մակարտի բաժնուած են ուսումնասիրողները. մէկ կողմը կընդունի, որ երբայցիները բանաստեղծութեան մէջ գոյութիւն չունին տաղաչափական օրէնքներ, ոչ ալ արտաքին ձեւեր, իսկ միւս կողմը կը պնդէ քէ երբայցիները

բանահիւսութիւնը ունէր իր տաղաչափութիւնը, ինչպէս իր արտաքին ձեւերը: Մենք ցոյց տուինք իր արտաքին ձեւերէն մէկ ֆանին, — այստեղ կուգենք աւելցնել քէ երբայցիները բանաստեղծութիւնը ծանօթ էր նաեւ տուն կազմելու օրէնքներուն: Եւ այս՝ եզրակացութիւնն իսկ է տողերու գուգահեռականութեան օրէնքին: Արդարեւ, ինչպէս տեսնեմք, երբ պատկեր մը կը կրկնուի երկու անգամով, տուն մը կը կազմուի: Երբեմն երեք անգամներու կրկնութիւնով է, որ կը կազմուի տունը, — Եւ հաճախ տեսնուած է եռանկյուն: Այսպէս եռանկյունը գեղեցիկ օրինակ մըն է երեմիայի Ողբերուն Գ. գլուխը: Դառնակները, կարելի է ըսել, անծանօթ էին երբայցիներուն, երբ փառեալք*) եւս չհամարեմք գումար մը երկու երկնակի:

Թէ երբայցիները որքան ծանօթ էին եռանկյուն, տանք քանի մը օրինակներ՝ զարկելով երբայցիներէն *ամենահին* բանաստեղծութիւններէն.

Չարթի'ր, զարթի'ր, Դերով'րա,
Չարթի'ր, զարթի'ր, խօսեալ'
երգով,
Յարո', Բարա'կ, դերեա' զգերիս':

Աստուածաշունչին մէջ տարբեր քարգմանած են այս տողերը, բայց եւ կը հետեւիմ ուղղակի բնադրին վրայէն կատարած Փրանսերէն թարգմանութեան մը: Հետեւեալ հատածին ոտանաւորի ձեւը թէեւ խաթարած է, բայց կը մնան յատկանշական կրկնութիւնները.

Ոչ ապաքէն զտանին, ո՞չ
ապաքէն բաշխեն աւար,
Աղջիկ մի, նա աղջկունս
երկուս առ այլ,
Կապուտ երանգոց նկարակերտ
վասն Սիոնարայ,

*) Մ. Արեղեան (Հայոց Լեզուի Գիտությունների Գործակալության հանձնարարությամբ հրատարակված է 1949 թ. Երևանում) կը կազմեն մէկ պէյք, երկու պէյք՝ մէկ քառեակ:

Կապուտ երանգոց նկարակերտ,
Երանդ երկուստեք նկարէն,
Նարոտ պէսպէս նկարուց,
Պարանոցին նորա կապուտ:
Եւ հիմա կարդացէք հետեւեալը.
Եւ բղխեցէ զաւազան
յարմատոյն Յեսեայ,
Եւ ելցէ շառաւիղ յարմատոյ
անտի,
Եւ հանդիցէ ի վերայ նորա
Հողի Աստուծոյ:
Հողի իմաստութեան Եւ
Հանճարոյ,
Հողի խորհրդոյ եւ զօրութեան,
Հողի զիտութեան Եւ
աստուածապաշտութեան:
Եւ բուրեցէ երկիւղիւ Տեառն,
Ոչ ըստ աչաց դատեցէ,
Ոչ ըստ խօսից յանդիմանեցէ:

Ի՞նչ կը յիշեցնէ ձեզի այս բանաստեղծութիւնը. — Երկնէր երկրէր: Արդարեւ, մեր այս գեղեցիկ պատանիկն ալ կը բաժնուի եռանկյունի, բաժնուի նման ու գուգահեռական պատկերներու տեսիլք մը:

Երկնէր երկրէն Եւ երկրէր,
Երկնէր եւ ծիրանի ծով,
Երկն ի ծովուն ունէր
զկարմրիկ եղեգնիկն:
Ընդ եղեգնի փող՝ ծովս ելանէր,
Ընդ եղեգնի փող՝ բոց ելանէր,
Եւ ի բոցոյն պատանեկիկ վաղէր:
Նա հուր հեր ունէր,
Ապա թէ բոց ունէր մօրուս,
Եւ աշկուռն էին արեգակունք:

Եռանկյունը այնքան լրիւ են եւ գեղեցիկ, որ Տաթ. Սմբատ Գաբրիելեան դիտել կուտայ քէ առաջին տունը կը ներկայացնէ երկունքը, երկրորդը՝ ծնունդը, երրորդը՝ ծնեալը:

Ոչ մէկ կապած քէ եռանկյուն շատ ծանօթ ձեւ մըն էր հայ ժողովրդական

Տաղաչափութիւն, էջ 449) կը գրէ, որ պարսկական Գառեակին մէջ երկու տողը կը կազմեն մէկ պէյք, երկու պէյք՝ մէկ քառեակ:

Արդարեւ, արաբական տաղաչափութեան յատկանիշեր պիտի գտնէք մեր շարականներուն մէջ, որոնք երբեմն գրւած են իբրեւ *միւլէշահ*, երբեմն իբրեւ *մէսնէվի*, *հիմի*, *մէտ*, *զահպէյթ*, եւ այլն: Վերջապէս, շնորհիւ արաբական *ուսուլ*ներու, (յիշեմք *էվսատ*, *Փահտէ*, *Հէնպէր*, *պէրէշահ*, *բէմէլ*, *սէմա* եւ այլն), «լինի երգն երաժշտօրէն երգելի»: Արդ *ուսուլ*ները կը մնային մինչեւ Պապա Համբարձում, որուն աշակերտները, սակայն, լէնցին կարգ մը *ուսուլ*ներ:

Այո՛, մեր եկեղեցական բանաստեղծութիւնը եւս պէտք է գտնէր ազգեցութեանը տակ արաբական *Արուզին* (տաղաչափութեան), ինչպէս մեր նախաբնիկներէն արեւմտեան երգչի *մուսնէլներու* օրէնքներուն: Ի՞նչ հարկ վանկերուն սուղն ու երկարը բացատրել անպայման լատինական ամանակով, չէ՞ որ սեմական արեւմտեան մեղի աւանդած էր *մէտ*ը եւ *մէտ*ը:

Գ.

Այս ամենէն կը հետեւի, որ հանգիստութիւն մը կայ մեր հին բանաստեղծութեան եւ երաժշտական բանաստեղծութեան միջեւ: Այս պարագան կենթադրէ ազգեցութիւն մը:

Փաստեր այդ ազգեցութեան.—

Ա.— Երաժշտական արեստը, ինչպէս հայկականը հարկաւոր էին, կամ ժառանգորդ մեծ քաղաքակրթութեան մը,— ասորաբարբական մշակոյթին: «Ժամանակակից արեստք եւ գիտութիւն մոյն դարուն նման ոգին կը կրեն եւ մոյն դարուն մէջ ապրող ազգաց հասարակաց են. այնպէս որ բանասիրութիւնը կրնայ յայտարարել թէ մեր հին տաղաչափութիւնը հին ազգաց տաղաչափութեան հետ միեւնոյն սկզբանց վրա հիմնւած էր»*):

Բ.— Մեր եկեղեցական երգեցողութիւնը, շարականներու ստեղծագործութեանն առաջ, կը բաղկանար երաժշտական սաղմոսներէ**):

Գ.— Հայկական վանքներուն մէջ կայրէին ասորի վարդապետներ: Ունին նաեւ ասորի պատմիչներ***):

Դ.— Եղիշէ արքեպ. Դուրեան կըսէ, լատին հեղինակի մը վկայութեան վրա հիմնելով, թէ Հայերը մօտիկ յարաբերութիւն ունէին երուսաղէմի հետ****):

Ե.— Վերջապէս, ինչպէս ցոյց տըւինք, մեր հին գրականութիւնը, ինչքան որ *հաստատ* թէ նմանութեան շատ կէտեր ունի երաժշտական հետ:

Փարիզ

*) Միհրան Յովհաննէսեան, — Բնական Պատմ. ԺԺ. դարու Դպրութեան, էջ 81:

**) Բարդէն եպ.— Հայոց եկեղեցին ե. ք. դարուն մէջ. էջ 16-21:

***) Victor Langlois, — Collection des historiens anciens et modernes de l'Arménie.

****) Գ. Մխիթարեանի տեսակցութիւնը եղիշէ արքեպ. Դուրեանի հետ (Յուսաբեր, 4 օգ. 1927):

ԱՐՇԱՄ ԽՈՆԴԱՐԵԱՆ

ՕՊՈԶԻՑԻԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ճշմարտութեան դէմ առանձնապէս մեղանշած չենք լինի, եթէ ասենք, որ այն բոլոր նիւթերը, որոնք մինչեւ այժմ հրատարակել են Հայաստանի Հանրապետութեան մասին, չեն ներկայացնում նրա պատկերը իր ամբողջական դիմագծով:

Եւ հասկանալի է, թէ ինչու: Հայ պատմութեան այդ շրջանը շարունակում է մինչեւ այժմ էլ կրքոտ վէճերի ու սուր պայքարների նիւթ ծառայել մեր քաղաքական կազմակերպութիւնների համար: Այստեղից՝ եւ այն իւրաքանչեւ վերաբերմունքը, որ ցոյց է տրուում մեզանում 1918—1920 թ.թ. անցուղարձերի նկատմամբ: Թող չափազանցութիւն չլինի, եթէ ասենք, որ թէ արտասահմանում եւ թէ՛ մանաւանդ Խորհրդ. Հայաստանում մարդիկ դիմում են Հանրապետութեան շրջանի պատմութեան գերադասեցապէս այն դէպքում միայն, երբ պէտք է լինում կուսակցական ընթացիկ պայքարի համար: Եւ այդ տեսակէտից բնորոշ է այն ակնբախ փաստը, որ այն, ինչ ցարդ դրւել է Հայաստանի Հանրապետութեան մասին, գրւել է բացառապէս ներկայումս միմեանց հետ պայքարող երեք կուսակցութիւնների (կոմունիստական, Դաշնակցութիւն եւ ռամկավար) ներկայացուցիչների կողմից:

Խորհրդ. Հայաստանում լոյս տեսած ամբողջ նիւթը, որ հրապարակել է կամ բողոքական կողմից կամ նրանց հրահանգով, պատմադրական որեւէ արժէք չէ ներկայացնում: Ունենալով իրենց տրամադրութեան տակ Հանրապետութեան շրջանին վերաբերող բոլոր փաստաթղթերն ու պարբերականներում տեղ գտած ընթացիկ նիւթերը, հայ բողոքականները երբեք փորձ չեն արել օգտագործել դրանք՝ մի կապակցւած պատմութիւն տալու:

Մի երկու խօսք էլ իմ այս յօդաճաշարքի բովանդակութեան ու վերնագրի մասին: Հայաստանի Հանրապետութեան շրջանում գործել են քաղաքական չորս կազմակերպութիւններ (ես չանում գործել են քաղաքական չորս կազմակերպութիւններ), նկատի ունեմ օրինական ձեւով գործող կազմակերպութիւնները), որոնցից Դաշնակցութիւնը միշտ եղել է կառավարական կուսակցութիւն, իսկ մնացած երեքը՝ ժողովրդականները, սոցիալ-դեմոկրատները եւ սոխալիստ-յեղափոխականները՝ ընդդիմադիր: Սրանցից առաջինները հանդէս են եկել աջ, իսկ միւս երկուսը ձախ ընդդիմադիրների դերում: Տարբեր են եղել նաեւ այս երեք խմբակների գործելակերպն ու ծրագիրը: Այս ամենի վրա, սակայն, բազմաթիւ գործելակերպն ու ծրագիրը: Այս ամենի վրա, սակայն, ես հանգամանօրէն կանգ առնել չսկսի կարողանամ, եւ սահմանափակելու եմ, գլխաւորապէս, ընդդիմադիր խմբակներից մէկն առնելու եմ, որպէս այդ կուսակցութեան անդամ, աւելի ծանօթ եմ նրա գործունէութեան ու աւելի ատակ խօսելու նրա մասին, կայ նաեւ մէկ ուրիշ արդարացուցիչ հանդամանք այդպէս վարելու համար: Խնդիրն այն է, որ վերոյիշեալ երեք ընդդիմադիր խմբակներից ժողովրդականները, Հանրապետութեան մագիւղ խմբակներից ժողովրդականները, Հանրապետութեան կազմակերպութեանց երկու ամիս յետոյ, մտան կոալիսիոն դաշինքի մէջ եւ այսպիսով դարձան կառավարական կուսակցութիւն: Դրանից յետոյ նրանք այլեւս չվերադարձան իրենց ընդդիմադիր դիրքերը, քանի որ բոյկոտի ենթարկեցին պարլամենտական ընտրութիւնները եւ փաստօրէն հեռացան քաղաքական գործունէութեան ասպարէզից: Նոյնը պատահեց նաեւ սոցիալ-դեմոկրատներին, որոնք չկարողացան արմատ ձգել Հայաստանի պայմաններում եւ, Հայաստանի Խորհրդի լուծումից յետոյ, հրաժարեցին մասնակցել պարլամենտի ընտրութեան ու, որպէս կազմակերպւած ոյժ, այլեւս որեւէ մասնակցութիւն չունեցան պետական կեանքում: Եւ այսպիսով, հրապարակում մնաց միայն սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութիւնը, որ, մասնաւորապէս Հայաստանի Խորհրդի լուծումից յետոյ, դարձաւ միակ կազմակերպատանի Խորհրդի լուծումից յետոյ, եւ թէ տեղական ինքնապետութիւնը, թէ նորընտիր պարլամենտում եւ թէ տեղական ինքնապետութիւնների մէջ, գրաւելով որոշ թւով աթոռներ՝ հանդէս եկաւ ընդդիմադրի դերում ու այդ ուղղութեամբ շարունակեց գործել մինչեւ Հանրապետութեան վերջին օրերը:

Ահա այս ամէնն ի նկատի ունենալով է, որ ես իմ յօդաճաշարքի համար ընտրել եմ «Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում» վերնագիրը, որը թէեւ առաջին հայեացքից մի քիչ

աւելի լայն է թւում, բայց ընդհանուր առմամբ համապատասխանում է ստորեւ տւած նիւթի բովանդակութեան:

ՓՈՒԱՐՔԱՅԻ ՊԱԼԱՏԻՑ — ԱՐԱՄԵԱՆՑԻ ՏՈՒՆԸ

Մինչեւ Հոկտեմբեր

Ցարական ռեժիմի տապալումը տեղի ունեցաւ շնորհիւ այն յաղթանակի, որ յեղափոխական զանգւածները տարին Պետերբուրգում: Բայց եթէ այնուհետեւ փետրւարեան շարժումը կարողացաւ ապրել եւ յարատեւել, գլխաւորապէս այն պատճառով էր, որ լայնածաւալ Ռուսաստանի բոլոր երկրամասերն ու ժողովուրդները անվերապահ կերպով միացան նրան: Այդ չէ նշանակում, անշուշտ, որ ամէն տեղ միակերպ ըմբռնեցին այն խնդիրները, որոնք դրում էին յեղափոխութեան առաջ: Ընդհակառակը, ազգաբնակչութեան այս կամ այն խաւի ու ցեղազգական խմբակցութիւնների տեսակէտներն այն մասին, թէ ո՞րն է լինելու յեղափոխութեան առաջ դրած կենտրոնական հարցը, եղան միշտ տարբեր:

Անդրկովկասում, շատ հասկանալի պատճառով, այդպիսի մի կենտրոնական տեղ դրաւեց ազգային հարցը: Նա էր, որ ստիպեց այս ծայրամասի ժողովուրդներին խանդավառութեամբ յարել Պետերբուրգում սկսած շարժման, որովհետեւ այս շարժման հետագայ «լայնացման ու խորացման» հետ էր, որ հայ, վրացի եւ թուրք զանգւածները կապում էին իրենց ազգային ազատագրման յոյսերը: Բայց այսքանով չսահմանափակեց ազգային հարցի դերը: Նա եղաւ նոյնպէս այն կարեւոր ազդակը, որ ուղղութիւն տւեց յեղափոխական կուսակցութիւնների գործունէութեան Անդրկովկասում, առաջ բերեց նրանց մէջ որոշ բախումներ եւ, ի վերջոյ, որոշեց նրանցից իւրաքանչիւրի դերն ու դերքը յեղափոխական շարժման ղեկավարութեան մէջ:

Թէեւ ազգային ազատագրման հարցը մտել էր ուսումնասիրական եւ դեմոկրատական կուսակցութիւնների ծրագրի մէջ, որպէս նախադրոյն պահանջներից մէկը, եւ, այսպիսով կարծես թէ, քաղաքացիութեան իրաւունք էր ձեռք բերել, որպէս յեղափոխութեան կարգախօսներից մէկը, բայց հակառակ դրան, վերաբերմունքը դէպի նա, մասնաւորապէս, փետրւարեան յեղաշրջման սկզբնական շրջանում, եղաւ շատ վերապահ:

Դրա առաջին եւ գլխաւոր պատճառն այն էր, որ պետութեան ազգաբնակչութեան հիմնական տարրը դժարանում էր մէկ օրից միւսը իւրացնել այդ հարցի յեղափոխական նշանակութիւնը: Այսպէս, օրինակ, յայտնի է, որ կովկասեան ճակատի ուսն քանակը, միանալով հանդերձ փետրւարեան շարժումին եւ ընդունելով նրա բոլոր կարգախօսները, առանձնապէս հաշտ աչքով չէր նայում ազգային հարցերի արծարծման: Այս տրամադրութիւնները հաշիւ չառնել չէր կարելի, քանի որ հարցը վերաբերում էր զորքին, «յեղափոխութեան զարդին ու հպարտութեան», ինչպէս ասում էին այդ օրերին: Եւ ես յիշում եմ մի բնորոշ խօսակցութիւն մեր՝ սոցիալիստ-յեղափոխականների՝ կուսակցութեան Շրջանային Կոմիտէում, որտեղ ընկերներից մի քանիսը առաջարկում էին խուսափել առաջժամ մեր կարգախօսների մէջ դնել Փեղեքացիայի խնդիրը, չնայած որ այդ հարցը մեր ծրագրի նւագագոյն պահանջներից մէկն էր: Նրանց պատճառաբանութիւններն նոյնն էին՝ զորքի մէջ իշխող տրամադրութիւնները:

Վերապահ էր նաեւ Պետերբուրգի դիրքը հանդէպ ազգային հարցի եւ մասնաւորապէս նրա հերթականութեան՝ լուծելիք խնդիրների շարքում: Հակառակ ազգային մի քանի խմբակցութիւնների (ուկրայինցիներ, ֆիններ) ցուցահանած անհամբերութեան, յեղափոխական կենտրոնական մարմինները որոշել էին ազգային հարցի եւ Փեղեքացիայի հետ կապած խնդիրների լուծումը յետաձգել Սահմանդիր Ժողովին: Այս որոշման մէջ, անշուշտ, դեր էին կատարել այն դժարութիւնները, որոնք կապած էին այդ կնճռոտ հարցերի լուծման հետ, ինչպէս նաեւ այն երկիւղը, որ դրանց վաղաժամ արծարծումը կարող է տեսակէտների բխում առաջացնել յեղափոխութեանը յարած գանադան խմբակցութիւնների մէջ եւ այսպիսով քայքայել փետրւարին ստեղծւած միասնական ճակատը:

Մասնաւորելով մեր խօսքը Անդրկովկասով՝ պէտք է ասել, որ յիշեալ ժամանակաշրջանում այնտեղ տիրող մտայնութիւնն այն էր, որ յեղափոխութիւնը պէտք է զարգանայ համապետական ուղիով, որ նրա ծրագրի մէջ ամենուրեք տեղ պէտք է դնեն միայն այն կարգախօսները, որ բաց է թողել «յեղափոխական դեմոկրատիան» կենտրոնում, եւ որ տեղական զանազան հարցերի անժամանակեայ յարուցումով ու, մասնաւոր, անջատ ելոյթներով չպէտք է դժարացնել այդ դեմոկրատիայի, առանց այն էլ, դժարին դործը: Բնորոշ է, որ մինչդեռ Ռուսաստանի մի

քանի ազգութիւններ (ուկրայնացիք) փորձեցին դէմ կենալ այս մտայնութեան եւ նոյն իսկ բռնեցին անջատ ելոյթների ճամբան, Անդրկովկասը մնաց հաւատարիմ կենտրոնի թելադրած ուղեգծին եւ որեւէ ձեւով չուղեց «դաւաճանել յեղափոխութեան»:

Այս այսպէս եղաւ ոչ թէ այն պատճառով, որ անդրկովկասեան բոլոր կուսակցութիւններն էլ համակած էին համապետական դադափարներով եւ հեռու էին ազգային եւ ազգայնական տրամադրութիւններից, այլ որովհետեւ այնտեղ դործող երեք գլխաւոր կուսակցութիւններից մէկը (սոց.-յեղափ.) իսկապէս որդեգրեց համապետական դործելակերպ, իսկ երկրորդը (սոց.-դեմ.) յարեց դրան մի շարք պատճառներով եւ, ի միջի այլոց, նաեւ այն բանից յետոյ, երբ տեսաւ, որ այդ դործելակերպը կարելի է միջոց ծառայեցնել երրորդին (Դաշնակցութիւն) չեղող քայքայելու ու իր ազգային շահերը հետապնդելու համար:

Ի՞նչպէս կատարեց այս ամենը:

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնը Անդրկովկասում ուսական կուսակցութեան անբաժան մի մասն էր կազմում: Սակայն, նրա անդամների ճնշող մեծամասնութիւնը վրացիներ էին: Այս վերջիններիս ձեռքին էին դնում նաեւ կուսակցութեան շրջանային ղեկավար մարմինները: Այսպիսով այդ կազմակերպութիւնը ըստ ձեւի համառուական ու միջազգայնական, ըստ էութեան՝ ազգային վրացական էր: Հաշիւ առնելով վերը մատնանշած մտայնութիւնը, որ գալիս էր Պետերբուրգից, անդրկովկասեան սոցիալ-դեմոկրատիան, յանձին վրացական դերակրող տարրի, ամէն կերպ ջանաց ֆոդայիկ իր ազգային էութիւնը եւ միշտ հանդէս եկաւ, որպէս համառուական կազմակերպութեան մի հատւած: Իր «խնտերնացիոնալիզմը» (միջազգայնականութիւնը) չեղտելու համար նա լայն չափով օգտագործեց այն հանգամանքը, որ անդրկովկասեան սոց.-դեմ. կազմակերպութեան մէջ մտնում էին նաեւ սակաւթիւ ուսաներ, հայեր եւ նոյն իսկ թուրքեր: Սրանց նա առաջ քաշեց ամէն կերպ, դնելով այս կամ այն դործչին կուսակցական աւելի բարձր դերերը վրա, քան որ նրանք արժանի էին ըստ իրենց անհատական կարողութիւնների: Այս բոլոր ջանքերը պոսակեցին կատարեալ յաջողութեամբ: Անդրկովկասեան սոցիալ-դեմոկրատիայի անունի հետ կապեց այն համբաւը, որ նա իսկական սոցիալիստական, յեղափոխական եւ միջազգայնական մի կազմակերպութիւն է, որ նա կանգնած է համապետական տեսակետի վրա, հետապնդում է բո-

լոր ազգերին պատկանող բանությունների դասակարգային շահերը, չունի ազգային որևէ հանգամանք եւ բացարձակապէս գերծ է ազգայնական տրամադրութիւններից: Թէ որպիսի բժականդրութեամբ էին վերաբերում վրաց սոցիալ-դեմոկրատները իրենց կուսակցութեան վայելած այս համբաւին, երեւում է նրանից, որ ամէն մի մատնանշում այն մասին, թէ անդրկովկասեան սոց-դեմոկրատիան վրացական դոյն ունի, նրանք համարում էին պարզապէս հայհոյանք իրենց հասցէին: Ոչ միայն մեր՝ սոցիալիստ-յեղափոխականների, այլ նաեւ Թիֆլիսի ռուսական մամուլի միւս թերթերում ոչ ոք կարող էր այդ շրջանին «անդրկովկասեան սոցիալ-դեմոկրատիայի» փոխարէն գրել, օրինակ, «վրացական սոցիալ-դեմոկրատիա» (Համեմատի՛ր Հայ Յեղ. Դաշնակցութիւն): Իսկ աւելի խիստ որակումներ չէին համարձակում հրապարակօրէն անել նոյն իսկ սոց-դեմոկրատիայի ճանաչած հակառակորդները: Երբ մէկ անգամ Թիֆլիսի քաղաքային խորհրդի նիստում հանդուցեալ Կարճիկեանը անւանեց նրանց «վրացական ազգայնականներ», այդ յայտարարութիւնը պայթող ռումբի տըպաւորութիւն թողեց: Մինչդեռ Դաշնակցութեան հասցէին նոյն կարգի, բայց աւելի խիստ, որակումներ արւում էին համարեա ամէն օր, եւ ոչ ոք էր փորձում բողոքել, այնքան նրանք բնական ու բանական էին համարւում:

Ռուսական սոց-դեմոկրատական կուսակցութեան հետ ունեցած կապը եւ «համապետական», «սոցիալիստական» եւ այլ յորձորջումները միայն նրա համար չէին, որ շոյէին վրացիների կուսակցական ինքնասիրութիւնը: Ո՛չ, նրանք անհրաժեշտ պայմաններ էին, որոնց միջոցով անդրկովկասեան սոց-դեմոկրատները հնարաւորութիւն էին ստանում գրաւել արտօնեալ դիրքեր յեղափոխական մարմինների եւ տեղական իշխանութեան մէջ: Եւ ահա թէ ինչպէս:

Ռուսական յեղափոխութեան հէնց առաջին օրերից Պետերբուրգում ժամանակաւոր Կառավարութեան կողքին կազմակերպին նաեւ բանւ. եւ գինւ. խորհուրդներ, որտեղ գերակշռող դեր էին խաղում սոցիալիստական զոյգ կուսակցութիւնները (սոց-յեղափոխ. եւ սոց-դեմոկրատ.): Յիշեալ խորհուրդները հանդիսանալով, այսպէս կոչւած, յեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցչութիւնը, շատ շուտով հսկայական ազդեցութիւն ձեռք բերին եւ փաստօրէն դարձան մրցորդ ժամ. Կառավարութեան: Նոյն ձեւով եւ նման իրաւասութիւններով խորհուրդներ կազմե-

ցին նաեւ տեղերում: Անդրկովկասում, բնականաբար, նոյնպէս դուրեց այդօրինակ մարմիններ կազմելու հարցը: Եւ ահա այստեղ է, որ վրացի տարրը մեծապէս օգտուեց իր ամենախոշոր կուսակցութեան՝ սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպական ձեւից ու տիրացած համբաւից: Այն հարցը, թէ անդրկովկասեան կուսակցութիւնները որո՞նք պէտք է դեկավարեն տեղական խորհուրդների գործունէութիւնը, փաստօրէն լուծւեց այն մտքով, որ այդպիսի մի պատւաւոր դերում կարող են հանդէս գալ միայն այն կուսակցութիւնները, որոնց սոցիալիստական եւ համապետական բնոյթը վեր է որեւէ կասկածից: Բնական է, որ այդ կարգի տակ ընկան տեղական կազմակերպութիւնները ռուսական այն զոյգ սոցիալիստական կուսակցութիւնների, որոնք գլխաւորում էին կենտրոնական (Պետերբուրգի) խորհուրդների աշխատանքները, այսինքն՝ սոցիալիստ-յեղափոխականները եւ սոցիալ-դեմոկրատները: Մնացած կուսակցութիւնները, որոնց կազմակերպական ձեւը ազգային էր, համարւեցին «նացիոնալիստական», ոչ-սոցիալիստական եւ նոյն իսկ հակալեղափոխական եւ այդ պատճառով էլ դուրս մնացին յեղափոխական մարմինների (խորհուրդների) դեկավարութիւնից: Դրանց թւում էր նաեւ Դաշնակցութիւնը, հայ ժողովրդի մեծամասնութեան կուսակցութիւնը:

Այսպիսով, շնորհիւ վրացի սոցիալ-դեմոկրատների որդեգրած կազմակերպական ձեւին եւ ստեղծւած պայմաններին ու մտայնութեան համապատասխանող գործելակերպին, վրացական տարրը, յանձինս իր ամենամեծ կուսակցութեան, կարողացաւ լիովին ապահովել իր մասնակցութիւնը յեղափոխական մարմինների մէջ եւ, ընդհակառակը, հայ ժողովրդի կազմակերպւած մեծամասնութիւնը, յանձին Դաշնակցութեան, դուրս մնաց այդ մարմիններից:

Առաւելութիւնները, որ ձեռք էր բերում սոցիալ-դեմոկրատիան, միայն բարոյական նշանակութիւն չունէին: Խնդիրն այն է, որ Պետերբուրգի խորհուրդների ու ժամանակաւոր Կառավարութեան միջեւ տարւող վէճը այն մասին, թէ ո՞րին պէտք է զրաւանդի գերադաս իշխանութիւնը, Թիֆլիսում լուծւեց յօգուտ խորհուրդների: Ժամանակաւոր Կառավարութեան նշանակած Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէն (Օղակոմբ) շատ շուտով զրկւեց հեղինակութիւնից ու յեղափոխութիւնը դեկավարելու (կարգա՝ Անդրկովկասը կառավարելու) իրաւունքներից. այդ

Խորհուրդները նկատմամբ ցոյց տաւ այս անտարբեր վերաբերմունքը պայմանաւորուած էր նաեւ այն սխալ տեսակէտներով, որ ունէին դաշնակցականները ազգային հարցի լուծման ուղիներին մասին: Նրանք կարծում էին, որ այդ հարցի յաջող լուծումը կապահովւի, եթէ ապացուցւի նախ՝ նրա արդարացիութիւնը եւ երկրորդ՝ եթէ նա ներկայացւի որպէս հայ ազգի միահամուռ բազմանքը:

Եւ այդ պատճառով էլ նրանք անհունօրէն հրճուած էին, երբ Հայոց Ազգային Համագումարում միաձայնութեամբ անցաւ Անդրկովկասի վարչական սահմանների վերափոխման իրենց նախադիմք, որ համարւում էր այն ժամանակ ազգային հարցի լուծման նախապայմաններից մէկը:

Միւս կողմից, անտեսելով յեղափոխութիւնից յետոյ առաջ եկած փաստական ապակենտրոնացումը եւ տեղական մարմինների իրաւասութեանց ընդլայնումը, դաշնակցականները շարունակում էին հաւատալ, որ ազգային հարցի հետ կապւած խնդիրների բարեյաջող լուծման ամենաիրական ճանապարհն է՝ դիմել Պետերբուրգ՝ դանց անելով Թիֆլիսը: Խորախուսած «թիկունքային այս քաղաքականութեան» մի երկու յաջող արդիւնքներից (որոնցից մէկը մէջ մասնակցութիւն է ունեցել նաեւ այս տողերի դրողը), նրանք էլ աւելի ամրապնդւեցին այն սխալ կարծիքի մէջ, թէ Անդրկովկասի յեղափոխական մարմիններում մասնակցութիւն չունենալը առանձին կորուստ չէ ազգային այն շահերի տեսակէտից, որ իրենք հետապնդում էին:

Փոխարքայի պալատից յեղափոխութեան այդ շրջանում հետու մնալու համար կային նաեւ մի շարք մանր պատճառներ, որոնց թւում, օրինակ, ուսներէն լեզուի հարցը: Խնդիրն այն է, որ դաշնակցական գործիչներից նրանք, ովքեր կարող էին պատուով ներկայացնել կուսակցութիւնը խորհուրդների մէջ, ճառեր արտասանել (որ շատ ընդունւած էր այն ժամանակ) ու տեսակէտներ քաղցնել, սակաւ բացառութեամբ, չէին տիրապետում ռուսերէնին, իսկ նրանք, ովքեր վարժ խօսում էին այդ լեզուով, չունէին պահանջող պատրաստութիւնը՝ այդպիսի մի պատասխանատու ասպարէզում գործելու համար: Որոշ դեր էր կատարում, թերեւս, նաեւ այն դիտակցութիւնը, որ ընդունելութիւնը պալատում արդէն տեղաւորւած կուսակցութիւնների կողմից այնքան էլ փառաւոր չէր լինելու:

Յեղափոխութեան զարգացման յաջորդ փուլերում, երբ

սկսեցին կազմակերպւել տեղական ինքնավարութեան մարմիններ, սոցիալ-դեմոկրատները փորձեցին նաեւ սրանց նկատմամբ անցկացնել այն սկզբունքը, ինչ որ գոյութիւն ունէր խորհուրդներում, այսինքն՝ չեզոքացնել Դաշնակցութիւնը եւ այդ մարմինների դեկը յանձնել բացառապէս գոյգ սոցիալիստական կուսակցութիւններին: Այս ծրագրի իրագործումը էլ աւելի էր զգաւ դարձնում Դաշնակցութեան մեկուսացումը: Ստեղծւում էր մի անհեթեթ կացութիւն, երբ հսկայական ազդեցութիւն ունեցող մի մեծ կազմակերպութիւն, որ յեղափոխութեան ասպարէզն էր մտել՝ իր ուժերը ի սպաս դնելու ժողովրդի ծառայութեան, զրկւում էր այդ անելու հնարաւորութիւններից եւ անգործութեան դատաւարւում: Այդ անօրինակ կացութիւնը աւելի ծառայեց դաշնակցական որոշ շրջանների համար հիմնական վերաքննութեան ենթարկելու իրենց կուսակցութեան գործելակերպը եւ նոր ուղիներ փնտռելու՝ վերոյիշեալ անելից դուրս դալու համար: Ահա՛ այդ ժամանակաշրջանին են վերաբերում նաեւ այն մի քանի՝ մասնաւոր կարգով՝ կատարւած բանակցութիւնները, որ տեղի ունեցան դաշնակցական մի քանի գործիչների եւ սոցիալիստ-յեղափոխական հայ ընկերների միջեւ: Բանակցութիւնների նիւթն էր Դաշնակցութեան անդրկովկասեան հատւածի կազմակերպական ձեւի փոփոխման հարցը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հ. Յ. Դաշնակցութեան համար ստեղծւած կացութեան դիւրաւոր պատճառը նրա կազմակերպական ազգային ձեւն էր, մեր ընկերները առաջարկում էին լքել այդ ձեւը եւ միանալ, անշուշտ որոշ պայմաններով, սոցիալիստ-յեղափոխականներին: Յիշում եմ, որ դաշնակցականներից միայն մէկը՝ Ս. Մանասեան, անվերապահօրէն թեր արտայայտեց այս առաջարկին: Դէմ չէր, անվերապահօրէն թեր արտայայտեց այս առաջարկին, թէ խօսեց Խ. Կարճիկեանը, առաջ քաշելով այն առարկութիւնը, թէ նման հարցեր լուծւել կարող են միայն Դաշնակցութեան Ընդհ. ժողովում, որ ներկայ պայմաններում գումարել հնարաւոր չէ:

Դաշնակցականների մեծամասնութիւնը միացաւ Կարճիկեանին, եւ պատմական այս փոքրիկ «միջադէպը» այսպիսով էլ փակեց առանց որեւէ արդիւնքի:

Դաշնակցութիւնը շարունակեց նաեւ այնուհետեւ գործել ազգային շրջանակում, որտեղ առանձին եռանդով աշխատեց ոչ միայն պահել իր շարքերում դրաւած զանգւածները, այլ նաեւ նորերը աւելացրեց նրանց վրա: Գրաւելով, այսպիսով, հայ իրանկանութեան մէջ նոյն դիրքը, ինչ որ սոցիալ-դեմոկրատիան

Վրաստանում, Հ. Յ. Դաշնակցութիւնը, շնորհիւ վերը մատնա-
նշած պատճառների, չկարողացաւ խաղալ Անդրկովկասի քաղա-
քական կեանքում վրաց սոցիալ-դեմոկրատիային հաւասար դեր
եւ նոյն իսկ ազգային շահերի պաշտպանութեան գործում շատ
ու շատ յետ մնաց այս վերջինից*) :

Այժմ անցնենք սոց. - յեղափոխականների դերքին ու դերին
յեղափոխական շարժման մէջ: Մեր կուսակցութեան անդրկով-
կասեան կազմակերպութիւնը երբեք էլ տեղական խոշոր գանդ-
ւաճներ չունեցաւ իր հետ: Դրա պատճառն այն էր, որ Անդր-
կովկասում, հէնց սկզբից, իշխող հանդիսացաւ «մէկ ազգ — մէկ
կուսակցութիւն» սկզբունքը: Սրա հետեւանքով Վրաստանում
Ժողովրդի 90 տոկոսը «կազմակերպւեց» սոցիալ-դեմոկրատիայի
մէջ, Հայաստանում՝ Դաշնակցութեան եւ Ազրբէյջանում՝ Մուսա-
ւաթի: Եթէ մեզանում եւս քաղաքական կեանքի դարգացումը
ընթանար Վրաստանի օրինակով, կասկած չկայ, որ հայ իրակա-
նութեան մէջ արմատ կը ձգէր Ռուսաստանի երկրորդ ընկերվա-
րական կուսակցութիւնը՝ էսէռականը: Բայց այդ տեղի չունե-
ցաւ, եւ այդ պատճառով էլ մեր կուսակցութիւնը չդարձաւ մէկ
ազգի գանդւածային կազմակերպութիւն: Ըստ իր անձնական
կազմի, նրա մէջ տեղ դտան ուսաներ, հայեր, վրացիներ եւ փոք-
րաքանակ թուրքեր: Եւ որ դիւսաւորն է, այդ տարրերը, բացա-
ռութեամբ թուրքերի, ներկայացւեցան հաւասար համեմատու-
թեամբ: Փետրւարեան յեղափոխութիւնից սկսած մինչեւ բոլշե-
ւիկների կատարած յեղաշրջումը, վերը յիշած համեմատութիւնը
մասամբ խախտւեց շնորհիւ այն հանգամանքի, որ կովկասեան
միլիոնի հասնող բանակը, իր հսկայական մեծամասնութեամբ,
յարեց մեր կուսակցութեան: Բայց այն էլ պէտք է ասել, որ բանա-
կի կազմակերպութիւնը մնաց միշտ մեկուսի եւ նկատելի փոփո-
խութիւն չմտցրեց մեր անդրկովկասեան կազմակերպութեան եւ
նրա ղեկավար մարմինների անձնական կազմի մէջ: Նրանք պա-
հին վերը մատնանշած համեմատութիւնը:

Հետագայում, երբ Անդրկովկասում բոլոր կուսակցութիւն-
ներն էլ ինքնորոշւեցին ըստ ազգութիւնների, փորձեր եղան — մեծ

*) Մի շարք ուրիշ կարեւոր պատճառներից դատ, Ա. Խոնդկարեանը ան-
տես է արել մի շատ ծանրակաշիւ հանգամանք — թիւրքահայ դատը, որով
կլանւած էր Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ դրաւել էր նրա գործն ուժերի մեծ
մասը եւ որ հոգեբանօրէն հայ Ժողովրդին կապել էր սահմանի միւս կողմի
հետ եւ ոչ կովկասին: — ԽՄԲ.

մասամբ բանակիւնների ժամանակ — անւանել էսէռներին ու-
սական կազմակերպութիւն, սակայն, այդ մեղադրանքը դուրկ
էր լուրջ հիմքից: Եթէ կուսակցութեան ղեկավար մարմինների
մէջ առաջնակարգ տեղ դրաւեցին ուսաները (ոչ բացարձակ մըտ-
մէջ, ապա միայն այն պատճառով, որ նրանք աւելի կարող
քով), ապա միայն այն պարագան որեւէ ձեւով չանդադարձաւ
մարդիկ էին: Բայց այս պարագան որեւէ ձեւով չանդադարձաւ
կուսակցութեան ազգային դիմագծի վրա, քանի որ այդ ղեկա-
վար ընկերները բոլորն էլ տողորւած էին իսկական միջազգայ-
նականութեան դադափարներով, եւ ուսական ազգային շահեր
երբեք չհետապնդեցին: Կար նաեւ այն կարեւոր փաստը, որ
ուսների կողքին, ինչպէս ասացինք, նստած էին վրացիներ եւ
հայեր, որոնց ներկայութիւնը անհնարին էր դարձնում, որ կու-
սակցութեան քաղաքականութիւնը ուսական գոյն ստանար:
Ճիշտն այն է, որ սոցիալիստ-յեղափոխականների գործունէու-
թիւնը Անդրկովկասում կրում էր ոչ թէ ուսական, այլ համա-
պետական բնոյթ, ընդ որում այդ պետութիւնը նրանց գիտակ-
ցութեան մէջ նոյնանում էր յեղափոխութեան հետ: Իսկ յեղափո-
խութիւնից ծնւած նոր պետութիւնը նրանով էր տարբերում ցա-
րականութիւնից, որ ճանաչում էր բոլոր ազգերի իրաւահաւա-
րականութիւնից, որ ճանաչում էր բաւարարելու նրանց բոլորի շահերը:
Եթէ անդրկովկասեան էսէռները կողմնակից էին Պետերբուրգին,
եթէ նրանք համընթաց էին գնում նրա հետ, այդ ոչ թէ
աւելին՝ եթէ նրանք համընթաց էին գնում նրա հետ, այլ որովհե-
այն պատճառով, որ այնտեղ նստած էին ուսաներ, այլ որովհե-
տեւ այնտեղ նստած էին յեղափոխականներ, եթէ կուզէք՝ էսէռ-
ներ:

Այսպիսի մտայնութեամբ ու գաղափարներով առաջնորդող
կուսակցութիւնը մեծ դեր ունէր կատարելիք Անդրկովկասում,
որտեղ յեղափոխութեան սպառնացող ամենամեծ վտանգը ազգայ-
նական տարերքն էր, որը եթէ ափերից դուրս գար, կարող էր իր
ալիքների մէջ խեղդել յեղափոխութեան բոլոր նւաճումները:

Կարողացա՞նք արդեօք էսէռները լրիւ կերպով կատարել իրենց
դերը: Գուցէ ընթերցողը ենթադրում է, որ այդ հարցին ես պէտք
է անվերապահօրէն պատասխանեմ՝ «այո՛»: Նա սխալւում է:
է անվերապահօրէն պատասխանեմ՝ «այո՛»: Նա սխալւում է:
Տասնեւհինգ տարին բաւական մեծ ժամանակամիջոց է, որպէսզի
դէթ պատմութեան սեփականութիւնը դարձած դէպքերի վերա-
դնահատութիւնը կատարելի ոչ-կուսակցական նկատումներով: Ես
այսպէս էլ կը մօտենամ հարցի պատասխանին: Սոցիալիստ-Յե-
ղափոխականները որոշ դեր կատարեցին յեղափոխութեան ըն-

շուրջ կը ջանար խմբել տարբեր ազգութիւններու հեղինակաւոր եւ զօրեղ կազմակերպութիւնները՝ նշանաբան ունենալով պահպանել Սահմանադրութիւնը, թոյլ չտալ հին ռեժիմին վերադարձը:

Այս կոչին առաջին եւ անվարան արձագանգ տուողներէն մէկը եղաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ սկզբի օրէն միակ նպատակ ունէր՝ Սահմանադրութիւնը պահել անաղարտ, ընդլայնել ժողովրդական ոգով եւ ասպնդով եւ հարթել հայ ժողովրդի ազգային զարգացման ու քաղաքական ձգտումներու ուղին: Ասով միայն պէտք է բացատրել, որ Դաշնակցութիւնը իրեն յատուկ մոլեռանդութեամբ ու թափով նետեցաւ գործօն դերի մէջ: Եւ չեմ սխալիր, եթէ ըսեմ թէ այս դրդումը նա ստացաւ բուն ժողովրդէն: Վկայ այն օրերու ժողովրդի հաւատը դէպի Դաշնակցութիւնը, աննախընթաց ժողովրդականութիւնը, վայելած յարգանքն ու հեղինակութիւնը, մանաւանդ հայաբնակ նահանգներուն մէջ:

Նմանապէս եւ հայ մտաւորականութիւնն ու հայ ազգային-քաղաքական բոլոր խաւերն անխտիր նոյն հոգեբանութեամբ վարակած եւ նոյնպիսի խանդավառութեամբ՝ լծւած էին երկրի վերաշինական կեանքին: Այս է իրականութիւնը:

Թիւրքիոյ վերածնունդը ստեղծողն Իթթիհատն էր եւ բնական էր, որ սահմանադրական բոլոր տարրերը անոր շուրջը խմբուէին: Հայ իրականութեան մէջ միայն հնչակեաններն էին, որ քիչ մը վերջ յարեցան «Հուրրիէթ վէ Իթթիլաֆ» ընդդիմադիր հոսանքին՝ չկրնալով համաձայնութեան գետին գտնել Իթթիհատի հետ: Իթթիլաֆը նոյնպէս բազմերանգ եւ անվստահելի տարրերէ կազմած էր՝ անձնական եւ աթոռի կուռով բաժնւած Իթթիհատէն: Որակի հիմնական ոչ մէկ տարրերութիւն (թերեւս վատթար՝ իր մոլեռանդութեամբ), բացի փոքրամասնութիւնները իրենց դրական ծրագրային քանի մը խաբուսիկ խայծերէ:

Յիշածս միակ նպատակին հասնելու դիտումով էր, որ Դաշնակցութիւնը կնքեց Իթթիհատի հետ յայտնի համաձայնագրերը, նախ Պոլսոյ մէջ 1909ին, ապա Սելանիկ՝ 1911ին: Ըստ այդ, (մանաւանդ վերջին) համաձայնագրի, Դաշնակցութիւնը իր շրջափակներու մարմիններովը անուղղակի հսկողի իրաւունք կը ստանար երկրի վարչական մեքենային վրա: Դաշնակցութիւնը իր դիտողութիւնները, պահանջները կամ բողոքները կրնար ուղղակի հաղորդել տեղական վարչութեան կամ կեդրոնին, որոնք պարտաւոր էին ի նկատի առնել եւ փոխադարձ համաձայնութեամբ լու-

ծել: Կարճ միջոց մը Իթթիհատը կը ջանար երեւոյթները փրկել եւ «մէջէն ելլալ»՝ այդքանը իսկ հնարաւորութիւն ստեղծեց հայութեան տնտեսական եւ մշակութային կեանքի զարգացման:

1909ին Պոլսոյ մէջ կայացած Հ. Յ. Դ. Տրդ. Ընդհանուր Ժողովին համար ամենէն հրատապ հարցը վերաբերմունքի խնդիրն էր դէպի Օսմ. Սահմանադրութիւնը — որ մէկ տարւան ընթացքին քիչ-չատ պարզած էր իր դէմքը — եւ մանաւանդ դէպի երիտասարդ Թիւրքերը (Իթթիհատը): Ժողովը բազմակողմանի քննութեան ենթարկեց ստեղծւած դոյալիճակը, Աղանայի ջարդերու բնոյթը, փոխարարութիւններն ու ասպնդայ սպասելիքները նոր ռեժիմէն եւ գծեց իր հետագայ քաղաքական ուղին: Աւելորդ չեմ համարեր հոս բերել ամփոփումները եզրակացութիւններու, որոնք խիստ բնորոշ են այդ տեսակէտէն եւ թերեւս մէկ անգամ ընդմիջտ վերջ տան թիւր մեկնութիւններուն:

«Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր սկզբունքին եւ գործելակերպին, պիտի շարունակէ նոյն թափով եւ աւելի լայն ծաւալով համագործակցել թիւրք երիտասարդ կուսակցութեան եւ մտաւորականութեան հետ՝ ի պաշտպանութիւն Սահմանադրութեան եւ համախմբել այդ գործակցութեան շուրջը այն բոլոր դիմադիր տարրերը, հայ եւ օտար, որոնք դիտակցութիւն եւ նպատակ ունին պաշտպանելու նոր կարգերը, ինչպէս նաեւ ժողովրդի կեղեքած դասին շահերը»:

«Դաշնակցութիւնը պիտի շարունակէ, պաշտպանելով հանդերձ սահմանադրական կարգերը, խիստ կռիւ եւ պայքար մղել կառավարութեան դէմ այն պարագային, երբ անիկա դաւաճանելով իր պարտաւորութեան, թոյլ տայ չեղումներ՝ սահմանադրական շաւղէն, ի վնաս երկրի բովանդակ շահերուն եւ պետութիւնը կազմող բոլոր ազգերու հաւասարութեան եւ հետեւաբար՝ անոնց մերձեցման»:

«Դաշնակցութիւնը անվերապահ կողմնակից արդարութեան եւ արդարադատութեան, պիտի մնայ պահանջողի դերին մէջ աղանայական քաղաքական եղանին դիմաց, որ է եւ պիտի ճանչցւի համապետական աղէտ եւ անարդանք, մինչեւ որ լւացւի այդ անարդանքը՝ արդարութեան դեր-յաղթանակով, գոհերու իրաւունքներուն ասպնդումովը ու պատասխանատուներուն խիստ պատիժովը — միակ միջոցը ամբողջ պետութեան մէջ ասպնդութիւնը եւ խախտւած կարգը հիմնաւորելու»:

«Ամբապնդումն Սահմանադրութեան եւ կռիւ բէաքսիոնի

Ազգ. Կեդր. Վարչութիւնը նախաձեռնութիւնը առաւ հրաւիրելու գաղտնի լայն խորհրդակցութիւն մը ազգային կարեւոր երեսփոխաններէ, Օսմ. Խորհրդարանի անդամներէ եւ քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներէ:

Տիրող կարծիքն ու տրամադրութիւնները շատ մոռացէին թրքահայութեան ապագայի նկատմամբ. ակներեւ էին «երիտասարդ» թիւրքերու դիտումները: Մեր ներքին ուժերը անբաւական էին դիմադրաւելու վտանգը. պէտք էր որոնել այլ ուժեր. պէտք էր ծանր ու վտանգաւոր այս կացութիւնը պարզել մեծ պետութիւններուն եւ միեւնոյն ժամանակ չխցել պաշտօնական կապը երկրի տէրերուն հետ:

Այսպէս էր տիրող տրամադրութիւնը:

Ամենէն աւելի մտահոգեալ էր Դաշնակցութիւնը, որ կը զգար թէ՝ ժողովրդի իրաւունքներու եւ դոյութեան պաշտպանութեան կարեւորագոյն մասը իր ուսերու վրա կը ծանրանար, ինչպէս նաեւ պատասխանատուութեան կարեւոր բաժին մը: Պէտք էր վերձուական քայլեր ընել նախ՝ ներքին միութիւն ստեղծելու՝ որոշ նպատակի եւ միջոցներու կիրառման շուրջ: Իբր հայ ժողովրդի պաշտօնական ներկայացուցիչներ ճանչեցան Ազգ. Պատրիարքարանը եւ հայ երեսփոխանները: Դաշնակցութիւնը — կեդրոնի մէջ թէ՛ գաւառներու — աստիճանական դադոնիացման կը դիմէր անարդէլ դործել կարողանալու համար: Փորձեցաւ քաղաքական միւս կուսակցութիւններու հետ լեզու դռնել եւ ջանքերը միացնել՝ ի հարկին հայ ժողովրդի ֆիզիքական դոյութեան պաշտպանութեան համար, որ մասամբ մը միայն յաջողեցաւ: Հայերու զինուորագրութեան օրէնքի քննարկումը (թէ՛ եւ ներքին դժգոհութիւններու տեղի տաւ) յաջողութիւն մը կը համարէր՝ օրինական ինքնապաշտպանութեան հնարաւորութիւններու տեսակէտէն (խաղաղ ատենին իրենց վայրերուն մէջ ծառայելու պայմանով): Պատրիարքարանը եւ երեսփոխանները չէին զադրեցներ իրենց պահանջները դպրոցական սլիւսձէլի, հողային վէճերու, վարչական մեքենայի մէջ հայերու մասնակցութեան եւ նման խնդիրներու առթիւ եւ բողոքներ՝ հարստահարութիւններու եւ հալածանքներու դէմ:

Իթթիհատը չէր կրնար չնկատել հայ բոլոր տարրերու այս վերապահ եւ զգուշաւոր ընթացքը: Զէր կրնար չզգալ, որ Դաշնակցութիւնը իր գերբը փոխած է, կը փոխէ նաեւ իր կերպարանը եւ գործելակերպը: Թիւրքերը փորձեցին վերանորոգել յա-

բարեկրթիւնները, «մոռցնել տալ անցեալը», ինչպէս կըսէին իրենք: Ներքին դործոց նախարար Թալաթը քանիցս հրաւիրեց Դաշնակցութեան ակնաւոր անդամները (նաեւ Զոհրապը), մաս-նաւոր «բարեկամական» հանդիպումներու ձեւ տալով եւ աջակցել, իրեն յատուկ կեղծիքով ու հաճոյախօսութեամբ, կը խոստանար ընդառաջ երթալ հայերու պահանջներուն՝ բաւարարելու անոնց բողոքները, պատժելու աւարառուները, կարգադրելու հողային վէճերը, կիրառելու 1880թ. նահանգային օրէնքը՝ վիլայէթներու միաստանացումը, նոր սահմաններ դնել եւ այլն: Եւ ազգադրական միաստանացումը նոր սահմաններ դնել եւ այլն: Եւ ամենէն վերջը կատակով կըսէր. «Դուք շատ առաջ դացած էք, ճանը՛մ, քիչ մը պէտք է որ կանգ առնէք, մինչեւ որ թիւրքերն ալ հասնին ձեզի, այն ատեն միասին կրնանք քայլել, ապա թէ ոչ, մենք պիտի կախինք ձեր փէշերէն եւ թոյլ չպիտի տանք, որ աւելի առաջ երթաւ...» Խիստ արիւն կը հոտէր այս խօսքերէն՝ կատակ ըլլալու համար: Ամենքս կը զգայինք այդ խօսքերու բուն իմաստը: Անոնք եւս կը զգային, որ մենք ալ մեր դիմումն ճարը փնտռելով ենք զբաղած...

Վրա հասաւ թիւրք-պալքանեան պատերազմը (1912ին), որ մէկ անգամէն մթնոլորտը պարզեց, մեր բռնելիք դիրքը ճշտելու հնարաւորութիւններ ստեղծեց եւ հրամայական դարձուց համազգային միահամուռ, դռնէ քաղաքական, աշխատանքի պահանջը:

III

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ

Թիւրքիան պալքանեան պատերազմի դաշտը նետեց իր մեծագոյն ուժը. ռազմունակ եւ ընտիր զօրամասերը: Ներքին նահանգներէն պալքանեան ճակատը ուղղեցան կանոնաւոր զօրաբաժինները եւ երկիրը մնաց անկանոն ուժերու եւ ժանտարմըրիի անբաւարար հսկողութեան տակ: Անխիճանութիւնը սկսած էր ծայր տալ. քիւրտ աւատները աւելի սանձարձակ՝ հողային նոր դրաւումներ եւ աւարառութիւններ կը կատարէին եւ սպառնալիքի տակ կը պահէին հայերը: Իթթիհատական «քլիւպ»ները մէկ-մէկ որջ էին դարձած ոճիրներու եւ հարստահարութիւններու:

Ամենէն ծանր վտանգը պալքանեան կռիւներու վայրերէն Պօշնաք մուհաճիրներու հազարաւոր կարաւաններն էին, որ խուճապահար, բայց քրիստոնեաներու դէմ կատաղի ատելութեամբ լեցած՝ անկասկած բարրարոս հորդաններու պէս պիտի հեղեղէին

մեր երկիրը սրի ու աւերածութեան տալով: Կառավարութիւնը որոշած էր բնակեցնել հայկական նահանգներուն մէջ եւ ուսական սահմանի երկայնքին...

Այս ճշմարտամային կացութեան եւ ահաւոր վտանգին հանդէպ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը 1912ի աշնան սկիզբը, երկրորդ լայն խորհրդակցութեան հրաւիրեց ազգային կարեւոր երեսփոխանները, Օսմանեան Խորհրդարանի հայ պատգամաւորները եւ քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչները, որոնք ծանր մտահոգութեամբ լսեցին Ազգային Վարչութեան ղեկուցումը թրքահայութեան սպառնացող վտանգի, երկրի անիշխանութեան, մուհաճիքներու տեղաւորման ծրագրի եւ իրենց ձեռք առած միջոցներու մասին: Արագ եւ արմատական միջոցներ ձեռք առնելու հրամայական անհրաժեշտութիւնը շեշտեցին բոլոր մասնակցողները առանձնապէս կը պահանջէին օգտագործել ներկայ վայրկեանը եւ քաղաքական բոլոր հնարաւորութիւնները հայկական հարցը միջազգային սեղանի վրա դնելու համար: Ամենքը պատրաստակամութիւն յայտնեցին այս ճիգերու մէջ բոլորիւն Ազգ. Կեդր. Վարչութեան շուրջ եւ հնարաւորը ընել ղեւրացնելու անոր աշխատանքը:

1912 զեկտ. 21ին տեղի ունեցաւ Ազգ. Ժողովի պատմական դռնփակ նիստը, որու մէջ Վարչութեան ատենապետը*) պարզեց Ժողովին տիրող ծանր կացութիւնը եւ քողարկեաւ առաջադրեց նախագիծը հայ Ժողովրդի հետեւելիք քաղաքականութեան: Ազգ. Ժողովը յուզիչ ոգեւորութեամբ, միաձայն ու միակամ, իր վրատահութիւնը յայտնեց Կեդր. Վարչութեան՝ յանձնարարելով ղեկմել առաջադրեալ միջոցներուն՝ տալով անոր լայն իրաւասութիւններ: Մասնակցող կուսակցութիւններու ներկայացուցիչները յայտարարեցին թէ ըստ ամենայնի կը բաժնեն Ժողովի բաղձանքները եւ իրենց բովանդակ ուժերը կը դնեն Ազգ. Կեդր. Վարչութեան տրամադրութեան տակ:

Ազգ. Կեդր. Վարչութիւնը այսպէս ուժովցած եւ լիազօրեալ, անմիջապէս իրմէ առանձնացուց հինգ հոգիէ բաղկացած ենթամարմին մը՝ «Ապահովութեան Յանձնաժողով» անունով, որուն կը յանձնարարէր թրքահայ քաղաքական դատի հետապնդումը —

*) Ստեփան Գարայեան, որ նորերս մեռաւ Փարիզի մէջ: Ազգ. Կեդր. Վարչութեան մէջ կային, ի միջի այլոց, Ոսկան Մարտիկեան, Լեւոն Տէմիրճի-պաշեան, Մուրատ Պոյաճեան, դր. Կ. Փաշայեան, Վահ. Փափազեան, դր. Տ. Երկանեան, Եղիշէ արքեպ. Դուրեան, Գր. վարդ. Պալաքեան եւ ուրիշներ:

պահանջ վեց վիլայէթներու ինքնավարութեան՝ եւրոպական պետութիւններու իրական երաշխիքներով (թէեւ սկիզբէն լուեւայն կընդունէինք, որ իրական երաշխիքը միայն Ռուսաստանը կրնայ տալ): Այս հիման վրա Ազգ. Կեդր. Վարչութիւնը իր Յանձնաժողովին կուտար լայն իրաւասութիւններ եւ մանաւանդ կը սահմանափակէր իր իրաւունքը՝ ժամանակէն առաջ համարատուութիւն պահանջելու անկէ:

Յանձնաժողովին անդամներ ընտրեցան. Կրօնական Ժողովէն՝ Եղիշէ արք. Դուրեան եւ Գր. վ. Պալաքեան, Քաղաքական Ժողովէն՝ Լ. Տէմիրճիպաշեան, Ոսկ. Մարտիկեան եւ Վահան Փափազեան: Ապահովութեան Յանձնաժողովը իրեն աջակիցներ ունէր Մուրատ Պոյաճեանը, Յ. Շահրիկեանը եւ մանաւանդ Գր. Զօհրապը, որ այնուհետեւ ղեկեր-ցերեկ նւիրեցաւ այդ գործին:

«Ապահով. Յանձնաժողով»-ին առջեւ հէնց սկիզբէն ծագեցաւ խիստ փափուկ խնդիր մը — գտնել թիւրքիոյ մայրաքաղաքին մէջ, հպատակ թիւրք պետութեան, ամենօրեայ պաշտօնական կապ պահել Բարձր Դրան հետ եւ միեւնոյն ժամանակ գործել անոր դէմ, քաղաքական գաղտնի բանակցութիւններ վարել օտար պետութիւններու հետ... Սկիզբէն իսկ կրնար ձախողել ձեռնարկը եւ մանաւանդ պրոլիկասիոն ստեղծել հայ Ժողովրդին դէմ:

Այս դժուարին եւ փափուկ կացութեան գուրս գալու համար, վճռեցաւ Պատրիարքարանը շուրջ մէջ պահել, իսկ գործին պաշտօնական տէրը դարձնել Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իբր հոգեւոր պետը համայն հայութեան, մանաւանդ, գտնելով ամենէն չահագրգռեալ պետութեան մէջ՝ ամէն օրինական եւ իրական հանգամանքներն ունէր խօսելու իր անունէն:

Մինչ այդ սակայն Կաթողիկոսը, կովկասեան հեղինակաւոր հասարակական եւ քաղաքական շրջանակներու դրդումով, կովկասեան փոխարքայի խողովակով յիշատակագիր մը ղրկած էր Ռուսաց կայսրին՝ խնդրելով անոր միջամտութիւնը հայկական դատի լուծման ի նպաստ: Կաթողիկոսը կը շեշտէր, որ իրական երաշխիքը բարենորոգումներու իրականացման եւ տեւական երաշխիքը իրաւաստանի հովանաւորութիւնն էր, իսկ անհնար եղած թեան՝ Ռուսաստանի հովանաւորութիւնն էր, իսկ անհնար եղած պարագային՝ վեց մեծ պետութիւններու մօտ աշխատելու հանոյն ատեն, եւրոպական պետութիւններու մօտ աշխատելու համար, իր լիազօր. ներկայացուցիչը կը կարգէր Պօղոս Նուպար փաշան:

Հետաքրքիրն այն էր, որ Կաթողիկոսը իր ըրած այդ քայլ-

սէինք այդ վայրկեանին օգտագործել բոլոր ուժերը՝ միայն թիւրքիայէն մեր անիծեալ ճակատագիրը անջատելու համար:

Թրքահայ եւ կովկասեան հայ քաղաքական եւ ազգային դեկաւար դասը կողեւորէր նաեւ այն հեռանկարով, որ Թրքահայաստանի ինքնավարութեամբ կովկասեան հայութեան եւ թրքահայութեան միացման մեր պատմական ձգտումը (երկու ու կէս միլիոն հայութիւն) կիրառործէր եւ ազգային ու քաղաքական զօրաւոր ոյժ մը կը դառնար հայութիւնը:

Մեր քաղաքական գիծը եւ հակումները այսպէս լինելով հանդերձ, յաճախ ուսաներու խորհրդով, Ազգ. Կեդր. Վարչութիւնը, յանձին Ապահովութեան Յանձնաժողովի, սերտ յարաբերութիւն կը պահէր անդլիական, Փրանսական եւ գերմանական դեսպանատուներու հետ՝ զանոնք եւս գիտակ պահելու մեր վիճակին, ձգտումներուն եւ պահանջներուն եւ ապահովելու անոնց համաձայնութիւնն ու աջակցութիւնը: Այս գործին համար կօդտագործէին գլխաւորապէս Խորհրդարանի Երեսփոխանները եւ հանրային քանի մը աչքառու գործիչներ: Ասոնց մէջէն ամենէն անվերապահ, եռանդուն եւ ներշնչուած ուժը Գ. Զոհրապէն էր, որ մեծ հեղինակութիւն եւ յարգանք կը վայելէր միջազգային քաղաքական-դիւանագիտական շրջաններուն մէջ. բոլոր դուռները դիւրին կը բացէին անոր առջեւ: Անոր գրչէն կելլէր յուշագրերու եւ յիշատակագիրներու մեծ մասը. քաղաքական քարոզչութեան համար ստեղծուած սքանչելի ոյժ մըն էր, որ իրեն յատուկ մոլեռանդութեամբ եւ հաւատով նետուած էր գործին մէջ, սկզբնական շրջանէն անբաժան ըլլալով նաեւ հայկական հարցին նոյնքան ներշնչուած, իրեն պէս մոլեռանդ ու հաւատաւոր տոբթ. Զաւրեանին:

Պօղոս փաշան հաճոյքով ստանձնած էր լիազօր քաղաքական ներկայացուցչի եւ «Ազգային Պատերազմութեան» նախագահի պաշտօնը՝ ընտրելով պատերազմութեան անդամները եւ ներկայացնելով Կաթողիկոսի վաւերացման: Պատերազմութեան անդամներն էին Մ. Զերապ, Յ. Մօստիչեան, Գ. Եպիսկ. Իւթուճեան, Եագուպ Արթին փաշա: Պատրիարքարանը գոհ լինելով հանդերձ Ազգային Պատերազմութեան կազմութենէն, մտահոգ էր, որ Պօղոս Նուպար փաշան մինչ այդ ինքզինքը համարելով միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչը, ոչ միայն յարաբերութիւն չէր պահէր, գոնէ տեղեկութիւն իսկ չէր տար իր կատարած քայլերու եւ ընելիքներու մասին՝ հաւանաբար Պատրիարքարանի փափուկ դրութիւնը նկատի առնելով: Ապահովութեան Յանձնա-



ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

Ժողովը Ազգ. Կեդր. Վարչութեան ուշադրութեանը յանձնեց այս պարագան, որ յանձնարարեց պատշաճ ձևով մը հարթել խնդիրը՝ պահելով Պատրիարքարանի իրաւասութիւնները:

Պատրիարքը, Ապահովութեան Յանձնաժողովի միջոցով, շատ փափկութեամբ այս անբնական վիճակին եւ յարաբերութեան անբաղձալի հետեւանքները պարզեց Պօղոս փաշային՝ կրկին չեղտելով, որ Թրքահայկական դատի պաշտպանութեան մէջ Ազգ. Ժողովի, Պատրիարքի եւ Ազգ. Վարչութեան դերը երկրորդական չէ. Կաթողիկոսը առերեւոյթ, յաշտ արտաքին աշխարհի եւ Թիւրքիոյ պէտք է որ ճանչցւի բերանը հայ ժողովրդի, բայց դատին իրական տէրը կը մնար Ազգային Ժողովը: Պատրիարքարանը մեծ դոհունակութեամբ հաստատելով փաշայի քաղաքական առաքելութիւնը՝ կը խնդրէ որ ինքն եւս այսուհետեւ գիտակ պահէի Ազգ. Պատրիարկութեան դործունէութեան եւ մանաւանդ նախապէս տեղեակ ըլլայ կատարելիք քայլերուն: Ի պատիւ Պօղոս փաշային պէտք է ըսել, որ իր առողջ տրամաբանութեամբ, անմիջապէս ըմբռնելով պահանջի արդարացի ըլլալը, համաձայնութիւն յայտնեց եւ այսպիսով դործը ստացաւ բնականոն վիճակ:

Ապահովութեան Յանձնաժողովը իր ըրած քայլերու մասին պարբերական գեկուցումներ կը ղրկէր Կաթողիկոսին՝ խնդրելով որ նա եւս գիտակ պահէ Պատրիարքարանը, միւս կողմէ թելադրութիւններ կընէր պէտք եղած ձեռնարկները ընելու ոռւսական արքունիքի եւ արտաքին դործոց նախարարութեան մօտ: Պետերբուրգի, Մոսկւայի եւ Թիֆլիզի ազգային-հասարակական կարեւոր ուժերը ներւաւ ին եռուն եւ ոգեւորած աշխատանքի: Լծւած էին եռանդուն քաղաքական-քարոզչական եւ դիւանագիտական աշխատանքի նաեւ Լոնդոնի, Բերլինի եւ Հռոմի մեր ազգային հեղինակաւոր հանրային դէմքերը:

Պատրիարքարանը թղթակցութեան ցանց մը ստեղծեց բոլոր վայրերու հետ եւ կարճ ժամանակի մէջ, բնական ընթացքով, իր ձեռքը կեդրոնացուց Հայկական դատի պաշտպանութեան գերազոյն գեկավարութիւնը:

Կաթողիկոսի ձեռնարկը, Պատրիարքարանի, Ազգ. Ժողովի եւ այլ խորհրդակցութիւնները, գեսպաններու հետ տեղի ունեցող տեսակցութիւնները, մանաւանդ, Պօղոս փաշայի պատերազմութեան կազմութիւնը աննշմար չանցաւ. Թիւրք կառավարութեան համար, մանաւանդ որ գերման գեսպանատունը կը փութար

թելադրել թիւրքերուն, որ ժամ առաջ երկիրը խաղաղ պահեն եւ բարեկարգեն:

Մեծ իրարանցման մէջ ինկան թիւրքերը, առանձնապէս, երբ ռուս կառավարութեան գործօն միջամտութիւնը զգացին:

1912 ղեկամբերի սկիզբն էր, որ Բարձր Դուռը երկիւղ կրելով թէ հայկական հարցի յարուցման նախօրեակին կը գտնուի, իր կողմէ «բարենորոգումներու» ծրագիր մը պատրաստեց՝ նախապէս թերթերու մէջ փող փչելով, որ չուտով Արեւելեան Նահանգները պիտի բարեկարգուեն, որ «Անատոլուն նոր հիմերով պիտի կազմակերպուի», եւ այլն:

Այս ծրագրին, հայերու կողմէ վաւերականութիւն տալու համար, եւ միեւնոյն ժամանակ քաջ դիտնալով, որ Պատրիարքարանը երբեք չպիտի համաձայնի նման «բարենորոգումներու», կառավարութիւնը հրաւիրեց հայ «երեւելիներու ժողով» մը, որուն մէջ կը յիշեմ նախկին պատրիարք Օրմանեանը, Տ. Քէլէկեանը, ծերակուտական Ագարեանը, Երամեանը եւ այլն:

Այս լուրը անօրինակ փոթորիկ փրցուց Պոլսէն մինչեւ յետին դաւառը: Ընդհանուր գայրոյթ պողոթկաց այդ հայ «երեւելիներու» ղէմ, որ առանց Պատրիարքարանի դիտութեան եւ պաշտօնական ոեւէ հանգամանքի յանդգնած էին խորհրդակցութեան երթալ եւ կարծիք յայտնել:

Ազգ. Կեդր. Վարչութիւնը ժողովի անդամներէն մէկէն լուր առնելով՝ անմիջապէս Վարչութեան կը բերէ խնդիրը եւ Պատրիարքը բացատրութիւն կուզէ վերեւ յիշեալ «երեւելիներէն»՝ հասկցնելով միանգամայն, որ անոնք ոչ մէկ իրաւասութիւն ունին խօսելու հայութեան անունէն, որ Ազգ. ժողովը իրենց յանձնած է հայկական դատի ղեկավարութիւնը եւ անհրաժեշտ է որ անոնք այլ եւս չմասնակցին: Հասկցեցաւ նոյնպէս, որ «երեւելիները» ծանօթանալով թրքական «բարենորոգումներու» նախադիմին՝ բացասական կարծիք են յայտնած, իսկ երկրորդ հրաւերին պատասխանած են, թէ իրենք ոչ մէկ հանգամանք ունին խորհրդակցութիւնը շարունակելու եւ թէ պէտք է որ դիմել Պատրիարքարանին:

Ատիկէ վերջը միայն, Բարձր Դուռը Պատրիարքարանին հաղորդեց պատճէնը թրքական «բարենորոգումներու»: Պատրիարքարանը թագրելով մը պատասխանեց՝ ցաւ յայտնելով, որ նման խնդրի մը մասին դիմած է մասնաւոր անձերու, իսկ ինքը ամենէն

վերջը տեղեկութիւն կ'առնէ, եւ ապա անբաւարար նկատեց առաջադրած բարեկարգութիւնը:


Թրքական «բարենորոգումներու» Պատրիարքարան ղրկած պատճէնէն կը տեսնէր, որ ընդհանուր քննիչը պիտի ունենար խորհուրդ մը՝ 3 թիւրք, 2 հայ եւ 1 ասորաքաղտէացի. խորհրդական օտար, բայց օսմանեան պաշտօնեայ: Ընդհանուր քննիչը 6 տարւան համար կը նշանակուի կառավարութեան կողմէ: Ընդհանուր քննիչը կրնայ փոխել բոլոր պաշտօնեաները բացի անոնցմէ, որոնք առանձին իրատէրով կամ Շէյխ-իւլ-Իսլամէն են նշանակուած:

Այս շրջանին է ահա (ղեկամբերի վերջերին), որ ռուսական դեսպանը կը դիմէր Պատրիարքարան յայտնելով թէ՝ կայսրը ընդառաջ դացած է թրքահայ ժողովրդի խնդրանքին: Դեսպանը կը յանձնարարէր փութով պատրաստել թրքահայ ժողովրդի դրաւոր բաղձանքները իրենց քաղաքական ճակատագրի նկատմամբ եւ ներկայացնել նախ ռուսական կառավարութեան իր միջոցով:

Ըստ երեւոյթին, միեւնոյն ատեն, նոյն առաջարկը կատարուած էր եւ Փարիզի դեսպան Իզվոլսկիի կողմէ Պօղոս փաշային եւ ռուս արտաքին գործոց նախարար Սագոնովի կողմէ՝ Կաթուղիկոսին, որովհետեւ միեւնոյն ատեն հայկական բարենորոգումներու չորս նախագիծեր մէջտեղ եկան՝ Պատրիարքարանի, Պօղոս փաշայի, Կաթուղիկոսի եւ չորրորդը՝ Պետերբուրգի եւ Մոսկուայի հայ քաղաքական ղէմերու խորհրդակցութեան արդիւնքը...

Դժւարին եւ ծանր խնդիր էր դրած մեր առջեւ — այս բոլոր ծրագիրները համադրելու, մէկ յայտարարի բերելու աշխատանքը: Այս մասին սակայն կը խօսինք յաջորդ անգամ:

Փարիզ



ՎԱՀԱՆ ՄԻՆԱԿՈՐԵԱՆ

ԱՆՋԱՏԱԿԱՆ ՆԵՐԸ

I

ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐ

Տարիներ յետոյ զրել անջատականների մասին, առանց վերլիշելու ընդհանուր դրութիւնը, ժամանակներն ու տրամադրութիւնները՝ հնարաւոր է:

Կովկասահայութիւնը դիմաւորեց մեր դարը երկունքով: Արդէն նախորդ դարի վերջին տասնամեակում ուսւ կառավարութեան հալածանքները զգալի էին դարձել: Ծխական դպրոցների փակումը, մշակութային հաստատութիւնների դէմ յարուցւած հալածանքը, ծանր դրաքննութիւնը, եւ այլն ակներեւ էին դարձնում ուսնացման քաղաքականութեան տրամադրութիւններ էին ստեղծում:

Մե մեր յիշողութիւններին մէջ դեռ թաքն է, թէ ինչպէս եկեղեցիում աղօթողներին «խրտչեցնող» քարոզներ էր ասում Գանձակի առաջնորդ թաւաքայեան վարդապետը, ինչպէս ասում «մայրենի լեզու» ուսուցանելու խմբեր էին կազմում, խմորաւորի թերթեր էին լոյս տեսնում եւ այլն: Կրաւորական դիմաւորութեան այս տրամադրութիւնը ընդհանուր էր կովկասահայութեան մէջ ամէն տեղ: Մինչեւ որ հասան եկեղեցական կալածութեան դրաման դէպքերը, երբ հայ ժողովուրդը իր կրաւորական դիմադրութեան գերքերից դուրս ելաւ ու իրեն նետաւ ձեռնոցը ընդունեց: Այս դէպքերով ահա սկսւում է ներուժ տրամադրութիւնների մի շրջան, երբ կովկասահայութիւնը, կարճ ժամանակէ լայ ընթացքում, հսկայական քայլերով յառաջադիմում է կեանքի բոլոր առարկաներում:

Հայապաշտպանութեան շարժումը դառնում է տիրական, ինքնուրոյն, թարգմանական գրականութիւնը, հակառակ բոլոր հալածանքների, սկսում է աճել. այստեղ ու աշխտեղ նորից նոր բռնանում են մշակութային-կրթական միութիւններ, ինչպէս Հայոց Դրամատիքական Ընկերութիւնը, Թիֆլիսի Հայուհեաց Ընկերութիւնը, Կրօնա-Պատմական Թանգարանը, Հայուհեաց Որրարնամ Ընկերութիւնը, Բազմի Հայոց Կուլտուրական Միութիւնը, չքաւոր երեխաներին օգնող «Լոյս» ընկերութիւնը, Կովկասեան Հայ Աշակերտական Միութիւնը, Հայոց

Դպրոցների Ուսուցիչների, Վարժուհիների Միութիւնը, Ազգադրական Ընկերութիւնը, Բարեգործական Ընկերութիւնը եւ այլն:

Միաժամանակ մի շարք, իրար յետեւից տեղի ունեցող համադրային դէմքերի կորուստները լարում ու պրկում են տրամադրութիւնները — Ալիշան, Երիցեան, Աբգար Յովհաննիսեան, Բր. Միքայէլեան, Խրիմեան, Պոստեան, Շահապեղ եւ այլն...

Բայց անհամեմատ աւելի մեծ էին կովկասահայութեան նւաճումները յատկապէս անտեսական բնագոտում: 1901թ. Թիֆլիսի 7929 տանտէրերից 4026ը հայեր էին: Հայերի չէնքերը իրենց արժէքով մի քանի անգամ գերազանցում էին բոլոր մնացած չէնքերը: Բազում 5000 բուրլիից բարձր եկամուտ ունեցող բոլոր չէնքերից 19ը պատկանում էր ուսանելին, 117ը՝ թուրքերին եւ 126ը՝ հայերին: Անդրկովկասի առեւտրական բոլոր ճիւղերում եւ ամէն տեղ գերազանցութիւնը հայերի կողմն էր: Եւ որքան բարձր էին ձեռնարկութիւնների գրամադրութիւնները, այնքան հզօր էր հայերի գերազանցութիւնը: Բազմի բոլոր խոշոր առեւտրական ձեռնարկութիւնների կէսը պատկանում էր հայերին: Անգամ Բաթումի խոշոր առեւտրական ձեռնարկութիւնների մէջ առաջնութիւնը հայերինն էր*):

«Հայերի մասնակցութիւնը Բազմի նաւթարդիւնաբերութեան մէջ գերակշիռ էր սկզբից»: Իսկ 1902թ. նաւթարդիւնաբերական բոլոր խոշոր ձեռնարկութիւնները միասին արտադրել էին 521 միլիոն փութ նաւթ, որից 203 միլ. փութը՝ հայերը: Սեւ Քաղաքի նաւթամշակ 33 առաջնակարգ գործարաններից 9ը հայկական էր, արտադրութիւնը՝ ամբողջի մէկ քառորդից աւելին: 1873 թւին Բազմի մէջ կար ընդամենը 747 հայ բնակիչ, դարաւ վերջին՝ 51,340: 1902 թւին Բաթումից արտահանւած նաւթամթերքի 24 տոկոսը պատկանում էր հայերին: Անգամ Կովկասի սահմաններից դուրս նաւթի արդիւնաբերութեամբ, վաճառւում էր եւ փոխադրութեամբ գրադրող 129 բաժնետիրական ընկերութիւններէ 28ը հայկական էր՝ 76 միլիոն բուրլի գրամադրութիւն (թրքական 3, վրացական 1, գրամադրութիւնները՝ 5 միլ. եւ կէս միլիոն բուրլի):

Հայ բուրժուազիան այլեւ խիստ պատկանելի ոյժ եւ մեծութիւն էր Կովկասում: Անհերքելի մեծութիւն էր նաեւ հայ բանւորութիւնը: 1904թ. տեւալներով, Բազմի նահանգում կային 35,835 արհեստաւոր, որից 9273ը հայեր էին: Նաւթարդիւնաբերութեան մէջ զբաղմունք ունէին 11,217 հայ բանւոր եւ ծառայող-ութեան մէջ զբաղմունք գումարի 24,4 տոկոսը: Թիֆլիս, որ կազմում էր ընդհանուր գումարի 24,4 տոկոսը: Թիֆլիսի արհեստաւորութեան եւ ծխախոտագործարանների բանուրութեան կէսից աւելին հայեր էին: Ղարաբաղի մետաքսագործարանների մէջ աշխատող հայ բանւորների գումարը 2735 էր՝ Դարասկզբի առաջին իսկ երեք-չորս տարւայ ընթացքում հայ բանւորութեան թիւը 20-25 հազարից պակաս էր:

*) Դ. Անանուն, «Ռուսահայերի Հասար. Զարգացումը», հատ Գ. էջ 420-23:

մասին նրանց մէջ ճշմարտութեան հետք չկայ: Բայց «յարմար-
ւելու» ոչ այնքան «քաղաքականութիւնը», որքան ձգտումը ըն-
դունում եւ հաստատում ենք, իբրեւ մերկայարանոց մի փաստ:
Կարող ենք ասել մինչեւ անգամ աւելին. Դաշնակցութիւնը ոչ
միայն «յետին թուով» յարմարուած էր Անդրկովկասի յեղափոխա-
կան ղեպներին, այլ եւ խուսափում էր ոռւս միապետութեան
հետ գործ ունենալուց: Միայն պէտք է ասել, որ այդ վայրը ոչ
դաշնակցականի անձի համար էր եւ ոչ էլ Հ. Յ. Դաշնակցու-
թեան համար, իբրեւ կուսակցութեան: Եթէ ընդունենք, որ
Դաշնակցութիւնը «բուրժուական է», պէտք է ընդունենք նաեւ,
որ այդ վայրը բուրժուադիւայի շահերը վտանգելու համար չէր.
Եթէ ընդունենք, որ իբրեւ կուսակցութիւն նա «իմպերիալիստա-
կան» է, ապա ուրեմն՝ այդ վայրը իմպերիալիստների համար
չէր: Առհասարակ, ինչ որակում էլ տալու լինենք Դաշնակցական
կուսակցութեան՝ դրանով խնդիրը չի փոխւի, որովհետեւ հարցը
«որակման» մէջ չէ, այլ էութեան: Իսկ այդ կուսակցութեան
էութիւնը այն է, որ նա՝ թէ՛ անձնական կազմով, թէ՛ կուսակ-
ցականօրէն անվախ է, հայերէն՝ «աւանտիւրիստ» է...

1904 թւի ամբան սկիզբներին, «Կովկասեան Հայ Աշակեր-
տական Միութեան» գործերով Բազւից եկել էինք Ալեքսանդրոս-
պոլ: Երկիր մեկնելու վրա էր թումանի խումբը, որ բազկացած
էր 60-65 հոգուց: Խումբը իր կազմի մէջ ունէր ընտիր ու փոք-
ձառու կուռղներ. սարք ու կարգի տեսակէտով առաջին կատա-
րեալ խումբն էր. հետը ունէր մինչեւ անգամ մի քանի լրատար
աղանդներ: Յուլիսի 2ին, Օլթիի սահմանադիրում խումբը
նկատուեց ոռւս կողակների կողմից: Մանրամասնութիւնները
յայտնի են...

Ինչ անցած տխուր պատահութիւն ունեցանք լսելու աշուղ
Փարհատի «նոր երգը».

Քաջ թումանը
Չլսեց հերոսին՝
Դէմ դնել ըռքսին.
Չոհեցա՛ն միասին...

Ինչո՞ւ: — Որովհետեւ Դաշնակցութեան գործերակերպը
այդպէս էր... Երկու կրակի մէջ բռնւած թումանը, դիմադրելով
թիւրք սահմանապահներին, մի՛ գնդակ անգամ չարձակեց թի-
կունքից խումբը բնաջնջող ոռւս կողակների վրա: Որսորդ Գէորգն
էր «գոհւեց միասին», որովհետեւ ուրիշ կերպ վարւել չէր կա-
րող, քանի որ ենթակայ էր թումանին...

Ուրեմն, եթէ կամք լինի «քննադատութիւնը» քննադատու-
թիւնից բաժանել եւ ամէն մէկը կիրառել իր տեղում, մերկ ճշ-
մարտութեան համար դժւար չի լինի դալ այն եղրակացութեան,
որ միապետութեան դէմ չկուսելու հարցը բոլորովին կապ չունի
դաշնակցականի ո՛չ անձի, ո՛չ կուսակցութեան հետ, կրկնում
ենք, այդ կուսակցութեան մինչեւ օրս տրւած բոլոր որակումների
հետ մէկտեղ — եւ այն էլ թէ՛ բոլորը միասին, թէ՛ զատ-զատ:

Սակայն, հարցը բոլորովին տարբերում է երբ կուսը ան-
հրաժեշտ է «հայութեան» համար, իր՝ Դաշնակցութեան կարծի-
քով: Օ՜, այդ ղեպերում այլեւս մտածելու, թէութիւնների հարց
չկայ. — «վառի՛ր»...

Ահաւասիկ եկեղեցական կալածքների գրաման ղեպերն:
«Ամէն բան, ամէն բան մէկ կողմը դրէք. բոլոր թափով ելէք
միապետութեան դէմ» — ասում էր Արամը, ղեպերից առաջ
Բազւում:

Ահաւասիկ հայ-թրքական ընդհանրամենի պատուհասը:
«Ձէնքով թուրք ա — խփեցէ՛ք, դիմադրող ոստիկան ա — խփե-
ցէ՛ք, ո՛վ էլ ըլի — խփեցէ՛ք» — այսպէս էր Նիկոլի մեր ականջ-
ներով լսած հրամանը, որ նա տալիս էր առաջին անգամ բայ
ղէնքով փողոց իջնող մի խումբ փորձառու անարեկիչների:

Ահաւասիկ նաեւ միապետութեան մեծ ու փոքր՝ գործակա-
ների շանթահարումը: Մի տեղ ապանւում է ոստիկան Դարդի-ժա-
նովը, մի ուրիշ տեղ՝ պրիստաւ Ալտշուլը. մի տեղ վիրաւորւում
է գաւառապետ Շմբրլինդը, մի ուրիշ տեղ շունչն է փչում փոխ-
գնդապետ Անդրէեւը. մի տեղ ընկնում է Ժանդարմ Դրոզդովը,
միւս տեղը՝ գնդապետ Բըկովը. մի տեղ ուժահար է լինում գե-
ներալ-նահանգապետ Նախաշիճէն, միւս տեղը՝ գեներալ-նահան-
գապետ Ալիխանով-Աւարսկին... Ու մեծ թէ փոքր, գաւառապետ-
ներ՝ Բոգուսլաւսկի, Պաւլով, Աւարեանի. ոստիկանապետներ՝
Սախարով, Նաչչանսկի, Ջաւախով, Շումակեւիչ. լրտեսներ՝ Ու-
րալով, Կապտուշով, Գնուտով, Պասիւս, Բարդիւս. թաղապետ-
ներ՝ Սաւանիւի, Ֆէդոտով, Պոտշիւալով եւ այլն, եւ այլն...

Անդին գաւառներում խումբ-խումբ, արագ-արագ, ոտքով,
ձորերով, սարերով, քաղաքներից ղեպի գիւղ, «տունը» պաշտպա-
նելու համար...

Ի՞նչ է սա՛՝ վախ, թէ՞ յեղափոխութիւն...

Հայապաշտպանութեան հղօր թափն է այդ: Իսկ երբ հարցի
պատասխանը այդպէս է դրւում, մարդիկ հմտանում են այնպէս
դասաւորել ղեպերն ու նրանց մեկնութիւնները, որից դուրս է
դալիս, թէ՛

«Բոլոր լաւ գործերը, որ կատարել է Դաշնակցութիւնը հայ
ժողովրդի գործն է, իսկ բոլոր վատ գործերը, որ կատարել է
հայ ժողովուրդը՝ Դաշնակցութեան գործն է»:

Ցան այն է, որ սրա դէմ ոչինչ չի կարելի առարկել, առա-
ւել եւս, որ Դաշնակցութեան մէջ շատ մարդիկ կատարել են վատ
գործեր եւ յետոյ հեռանալով Դաշնակցութիւնից՝ քննադատել են
իրենց այդ գործերը: Միաժամանակ՝ եթէ բազմաթիւ փաստերով
կարելի է հաստատել այս կարգի մտայնութեան ու վերաբերմուն-
քի գոյութիւնը, բնաւ հնարաւոր չէ պնդել, թէ մի ժողովրդի
մէջ վատ գործեր չեն լինում, կամ մի կուսակցութեան մէջ լաւ
գործեր չեն պատահում:

Այսպիսով մնում է հարց դնել, թէ ի՞նչ է, վերջապէս, Դաշ-
նակցութիւնը կամ հայ ժողովուրդը, եւ խնդիրը փակել:
Հարցման մէջ արդէն որոշ պատասխան կայ, բայց՝ հրա-

Այսօր, երբ հնարաւորութիւն կայ նոր ու փաստալից ուսումնասիրութեան միջոցով (Ա. Գիւլիսանդանեան «Հայրենիք» ամսագ. 1933թ.) փրագեկ դառնալու դէպքերի շարժառիթներին, պատճառներին, այստեղ աւելորդ է դրանց վրա երկար կանգ առնել: Միապետութեան յաջողեց հայ յեղափոխական ժողովուրդը դէպքերի յորձանքից յետ քաշել՝ իր դործերի կադաւորումը դիւրացնելու համար: Բանիմաց հաշիւ էր: Բայց դէպքերի հետեւանքները դրանով չսահմանափակեցին: Նրանք նոր, սեւ «դարագլուխ» բացին հայ ժողովրդի համար, որի ասելիքները յետոյ պիտի իմացէին... Այդ նեղ օրերին, որտեղից որտեղ, «անկոչ հիւրի» պէս, յանկարծ, դուրս պրծաւ «Կովկասեան դործունէութեան Նախագիծը»: Այժմ հաճելի է կարդալ այդ վաւերագիրը, իսկ այն ժամանակ ում ասում էին՝ կարդացե՛ք, ես, յասումով դոչում էր՝ «դէ՛», էսա, դործում ենք էլի՛, ի՛նչ նախագիծ—մախազիծ»: Եթէ ասէիր, թէ այդ դործը տարբեր է, պիտի բարկանար, թէ՛ հիմա էլ «տարբե՞ր» դուրս եկաւ...

Դէպքերի ընթացքում Դաշնակցութիւնը դարձաւ աղդ եւ պետութիւն. հող (հայկական թաղեր, գիւղեր), իշխանութիւն, ժողովուրդ՝ աղգային—դաշնակցական էր: Հին ու յիսկիս հակառակորդները «պառաւոր քաղաքացու» վիճակ ունէին — «հայ» էին. վերջապէս: Իսկ նաւթարդիւնարներ հայ բուրժուազիայի ընթացքը դէպի Դաշնակցութիւնը այն էր, թէ՛ «դու ես, որ կաս»: Հասկանալի է, ահաբեկած էր: Միւս կողմից թուրքը հարուստ—աղքատ էր հարցնում եւ աշխատում էր, առաջին հերթին, դանակը հարուստի փորը կոխել: Բայց մտնելով Դաշնակցութեան հովանուտակ, նա քիչ-քիչ յարմարւում էր «նոր միջավայրին» եւ մոռացած «աղգն» ու «եկեղեցին» արժէք էին ստանում: Գնալով աճում էր յանդգնութիւնը եւ յարմարումը դառնում էր բացայայտ «Դաշնակցականութիւն»: Այս էլ հասկանալի է — վտանգը տեւական բնոյթ էր ստանում: Միաժամանակ ինքնապաշտպանութեան ծանր ու տեւական դործը որոշ կախման մէջ էր դնում Դաշնակցութիւնը այդ բուրժուազիայից ու կատարում էր այն, ինչ որ անցեալի բովանդակ պատմութեան անյարիր էր: Հայրենամերժ հայ բուրժուազիան փող էր տալիս, գէնք էր դնում, զինուոր էր պահում, բացառապէս հայ բանուոր էր բանեցնում ու ինքզինքը ամէն կերպ ապահովելով՝ «տանկաեայակական դատ»ի համար կուրծք էր ծեծում: Իսկ այս հողի վրա առաջ էր դալիս նաեւ զաղափարների ներդաշնակութիւն...


Ուժերի, հոսանքների այս փոխադրեցութեան շրջանում, հայ յեղափոխական մտաւորականութեան համար ստեղծւում էր մի խիստ ծանր վիճակ. Դաշնակցութեան մէջ քանակը դառնում էր սրան... Կուսակցութեան մէջ այդ հասկանում էր նրա փայլուն դէմքերից մէկը՝ Սաթաղի ու «դոման» ու «կուսակցութեան բիւրեղացման» ընդարձակ յօդաւորաւորութիւնը («Երկիր», 1907, հոկտեմբեր) աշխատում էր ելք գտնել: Երիտասարդ շարքերում այժմ քաղաքացիութիւն էր ստանում, դէպքերի ընթացքում մոռացած, «նախագիծը»: Ներկայացնելով այդ մուրհակը Դաշնակցութեան

պատասխանատու մարմիններին՝ երիտարդներ հատուցում էին պահանջում: Միւս կողմից «նախագիծը» դեռ նախագիծ է, որ «առաջարկած է դաշնակցական մարմիններին եւ ընկերներին իրենց դիտողութիւնները յայտնելու՝ Ընդհանուր ժողովին ներկայացնելու համար»: Եւ միաժամանակ աճում է «հակառակադէմական» կամ Միհրանական շարժումը, որ նախապէս ջինջ, դադարական շարժում էր: Անդործ է նաեւ Դաշնակցութեան մէջ ըսյն դրած բուրժուազիան: Հողիւ—հող աղատած թուրք—թաթար միապետական բլոկի սարսափներից՝ այժմ նա կանգնել էր մի նոր վտանգի առջեւ՝ ընկերվարութիւնը: «Եղբայրը եղբօ՞ր դէմ» եւ այն էլ ա՛յսպիսի պայմաններո՞ւմ, Դաշնակցութեան միջոցով, այդ ո՞ր օրից սկսած եւ ի՞նչ հիմքերով, իսկ «հին ծրագի՞րը», «աղգային հա՞րցը», «տաճկահայկական դա՞տը»... Եւ նա նոր պատւանդան, նոր բոյն, նոր ոյժ է փնտրում Դաշնակցութեան շարքերում. միհրանական շարժումը դառնում է բուրժուա—աղատական ձգտումների յենարան, իսկ «Մշակ» թերթը պարզում, մէկ—նարանում է «պլատֆորման» — «ինքնապաշտպանութիւն Կովկասում, յեղափոխութիւն միայն Տաճկահայաստանում»...

«Դարերից ի վեր հայկական համազգային անդորր լճի մէջ նեխած ջրերը այսօր իրար են անցել եւ տարբեր հոսանքները իրար են զարնւում չտեսնած, դոնէ բրխտոնեայ մարդու համար չտեսնած ուժգնութեամբ», գրում էր Մուսեանը: Եթէ «դարերից ի վերը» դուրս հանենք, մնացածը իրողութիւն է: Եւ այն հարցը, թէ ինչպէ՞ս պէտք է դուրս ելնել այդ «նեխած ջրերի» միջից Մուսեանը պարզաբանում է իր առաջին գրքոյի մէջ, որի կրում է «Ժամանակ է սքալիւն» վերտառութիւնը:

Պրագա

(Վերջը յաջորդ անգամ)



ՈՒԹՍՈՒՆԱԿԱՆ ԵՒ ԻՆՍՆԱԿԱՆ ԹԻԱԿԱՆՆԵՐԸ ՄՈՍԿԻԱՅՈՒՄ

Ստորեւ տալիս ենք մի փոքրիկ յուշ, որի հեղինակը՝ չժիշկ Միքայել Զալեան՝ մէկն է ուրսունական քականների այն երկ-տասարդներից, որոնք պատրաստեցին Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Մինչ սակայն, իր ընկերակիցների մի մասը շարունակեց գործօն յեղա-փոխական աշխատանքը, Զալեանը, համալսարանն աւարտելուց յետոյ, իբրեւ բժիշկ հաստատուեց նաւթաշխարհ Բագուում՝ նւիր-ւելով իր մասնագիտութեան, մնալով միաժամանակ Հ. Յ. Դաշ-նակցութեան շարքերում։ Այս, տարիներ յետոյ, Բագուից տե-ղափոխեց իր ծննդավայրը՝ Գանձակ, ուր գտնուում էր հայ-քրիս-տոնական ընդհարումների միջոցին։ 1907թ., երբ Հ. Յ. Դաշնակցութեան ծոցում ծնունդ առաւ, այսպէս կոչւած, անջատական շարժումը, Զալեան լոյս ընծայեց մի գրքոյի, որի մէջ փորձում է վերա-գնահատութեան ենթարկել Հ. Յ. Դաշնակցութեան անցեալը եւ նոր ուղիներ ցոյց տալ։

Այդ գրքոյում բժ. Զալեանը գտնում է, որ Պետական Դու-մայի հաստատումով այլեւս պէտք է վերջ տալ Հ. Յ. Դաշնակցու-թեան գործունէութեան Ռուսաստանում։ Քանի որ «Դաշնակցու-թիւնը հիմնւած է միմիայն տանկահայկական հարցը պաշտպանե-լու համար», իր դերը Ռուսաստանում աւարտելուց յետոյ, նա նորից պարտաւոր է վերադառնալ դէպի սկզբնական նպատակը. «հասել է բոլորին, երբ Դաշնակցութիւնն, գոհ իր գործունէութեան հետեւանքից ռուսահայերի վերաբերմամբ եւ հպարտ այն մաս-նակցութեամբ, որ նա ունեցաւ կողմնակի կերպով ամբողջ ռու-սական շարժման գործում, պարտաւոր է կենտրոնացնել իր ուժերը եւ նոր, աւելի ուժեղ քափով նւիրել իր սկզբնական նպատակին՝ Տանկա-Հայաստանի դատին»։

Տանկահայաստանում էլ, ըստ Զալեանի, Դաշնակցութիւնը պէտք է հիմնովին փոխէ գործունէութեան ձեւը. նկատելով որ գուտ հայկական, ազգային սահմաններում կատարւած աշխատան-քը օգուտից աւելի վնաս է քերել հայ ժողովրդին՝ «Դաշնակցու-թեան մնում է առանց տատանելու, առանց հին սխալը նորից կրկնելու, իսկոյն եւ եթ մինչեւ այժմ իր պաշտպանած լոկ «հայ-կական» դատը դարձնել «Տանկահայաստանի, կամ, աւելի լաւ, ընդհանուր տանկական դատ, այսինքն՝ դատ այն բոլոր ազգերի, որոնք տառապում են տանկական բարբարոս ռեժիմի տակ»։

Բժ. Զալեանը հարցնում է. «Դաշնակցութեան մօտ 20 տար-ւայ կրակոտ գործունէութեան հետեւանքներն բոլորովին ուրիշ չէին լինի, եթէ սկզբից եւ եթ նա ամենալայն եւ համարձակ կեր-

պով ըմբռնել խնդիրն ու տանկահայերի ինքնավարութեան հարց բարձրացնելու տեղ, ուղղակի գլուխ կանգնել *ամբողջ Առաջաւոր Ասիայի ազատարար շարժման*»։ Զալեանն ինքը համոզւած է, որ լաւ կը լինէր։ Եւ ո՛չ միայն Առաջաւոր Ասիայում, Ռուսաստա-նում էլ, ամէն տեղ պէտք է որդեգրել միջազգային փաղափա-նութիւն. «Դաշնակցութեան մնում է այժմ մի ֆայլ եւս անել առաջադիմութեան նախապահի վերա եւ դառնալ *միջազգային* իր գործունէութեան բոլոր տեղերում»։ Պէտք է «համերաշխ, միացած ուժերով ձգտենք մեր շուրջը ցրած բոլոր ստրուկ ազգութիւն-ների ազատութեան, *ընդհանուր բարօրութեան*, իսկ ինչ վերա-ջերում է *մեր ազգային* շահերին, նախօրօք չյուզենք նորանց ապագայ վիճակով, որովհետեւ ընդհանուր նպատակին հասնելով՝ մենք բաւականութիւն տւած կը լինենք եւ բոլոր մասնաւոր ազ-գայնական-անհատական պահանջներին, որովհետեւ մեր օրերում չկայ պետական ազատութիւն առանց այդ պետութիւնը կազմող բոլոր ազգութիւնների օրինաւոր պահանջների իրագործման»։

Իբրեւ եզրափակութիւն, Զալեանը Հ. Յ. Դաշնակցութեան վերապահում է «վերին աստիճանի պատուար», «պատմական» դեր — «մի դեր, որ աւելի բարձր է քան միայն սեփական ազգի շահերին ծառայելը, այն է՝ *լինել առաջնորդող եւ ղեկավարող* Առաջաւոր Ասիայում ապրող բոլոր բշտու եւ բռնակալական լուծի տակ տառապող ազգերի ազատարար շարժման գործում»։

Համաշխարհային պատերազմի տարիներին բժ. Զալեանը գտնում էր արտասահմանում եւ 1919թ. Զիցերիայում գրել է այս համառօտ յուշերը։ Նրանք որոշ չափով լրացնում են Քրիս-տափորի յուշերը («Հայրենիք» ամս. 1924թ. օգոստոս) եւ ար-ժէքաւոր են մեր պատմութեան նախադաշնակցական շրջանի յու-սաբանութեան համար։

1920թ. բժ. Զալեանը, ոգեւորւած Հանրապետութեան ստեղ-ծումով, անցաւ Հայաստան եւ իբրեւ չժիշկ, ստանձնեց հիւան-դանոցի ղեկավարութիւնը Զալալ-Օղլում, ուր եւ վախճանեց նոյն տարին։

ԽՄԲ.

„ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻԻՆԸ“

ԲԺ. ՄԻՔ. ԶԱԼԵԱՆ

«1882 թւի դարնանային մի առաւօտ, Մոսկւայում, ռուս-նորական մի փոքրիկ սենեակում, ժողովել էին հետեւեալ ան-ձինք.

Աբէլեան Ներսէս, Տերնիկական Ուսումնարանի վերջին տարւայ ռուսնոյ, չամախեցի։

Արտեմեան Մարգար, բժշկական ուսանող, չուշեցի:
 Զալեան Միքայէլ, բժշկական ուսանող, գանձակեցի:
 Ներսէսեան Դաւիթ, Պետրովսկայա Երկրագործական ճեմարանի ուսանող, չամախեցի:

Վէլիլեան Մարտին, նոյն ճեմարանի ազատ ունկնդիր, արեւմտահայոց: Շուտով խմբին աւելցաւ եւ բժշկական ուսանող Կարապետ Տէր-Պաշտոնեանը, Երեւանցի:

Ժողովի նպատակն էր, ըստ բաղկանեան աղբերի օրինակի, հիմնել մի գաղտնի ընկերութիւն մեր տաճկահայ ազգակիցների վիճակի մասին հոգալու համար, յեղափոխական միջոցներով, քանի որ օրինաւոր համարած ճանապարհներն թէ փակ էին եւ թէ, որ գլխաւորն է, մեզ թուում էին չափազանց դանդաղ եւ տաղտկալի:

Երկար վիճարանութիւններից յետոյ ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան. —

1) Համարել յիշեալ ընկերութեան կենտրոնը կազմած ներկայ անձինքներից՝ «Հայրենասէրների Միութիւն» անւան տակ:

2) Կոչ անել թուրքիկների միջոցով ամէն տեղի հայերին եւ ամենից առաջ Կովկասի հայ երիտասարդութեան՝ բաժանուհիներ հիմնել ամէն տեղ թէ Ընկերութեան գաղափարները տարածելու եւ թէ նրա խանութի միջոցներ ձեռք բերելու համար: —

Անմիջապէս, այսինքն՝ շատ չանցած, կազմուեալ է առաջին թուրքիկ խմբաւորութիւնը՝ տալապուր, այն ժամանակաւ ուսւարժարանական յեղափոխականների ծրագրով, յարմարեցրած, ի հարկէ, Ընկերութեան մասնաւոր նպատակներին:

Այս կոչը եւ Ընկերութեան անդամ Դ. Ներսիսեանի նոյն տարւայ ամառը արած ճանապարհորդութիւնը Կովկասում, մանաւանդ, Թիֆլիսում մեծ ընդունելութիւն էին գտել եւ կենդանութիւն առաջ բերել հայկական խաւերում: Այդ իսկ միջոցին, Թիֆլիսի երիտասարդութիւնը (միջնակարգ ուսումնարանների աշակերտներ) շատ բուռն շարժման մէջ էր նոյն վերեւ յիշեալ ուսւարժարանական (Земля и Воля) ծրագրի շուրջը, առանց աղբերի խորութեան. ուսւ, հայ, վրացի խառն շրջաններ կազմած, ընդհանուր ուսւ յեղափոխական գործին ծառայելու նպատակով:

«Հայրենասէրների Միութեան» կոչը ծառայում է, կարելի է ասել, իրեւ սկզբնապատճառ այդ շրջանների (Кружокъ) հայ մասի տաճկահայկական հարցով զբաղւելու համար, որպիսի ուղղութիւնը գնալով պատկուտ է 1889 թւականին նոյն Թիֆլիսում «Դաշնակցութեան» հիմնադրութեամբ*):

Նոյն 1882 թւի աշնանը Թիֆլիսից գալով Մոսկւա՝ իրենց ուսումն շարունակելու՝ միանում են «Հայրենասէրների Միութեան» խմբին երկու եղբայր՝ Սիմէոն եւ Սրապիոն Տէր-Գրիգորեաններն, վաղարշապատցի, եւ օր. Թամարա Աղամեանը՝ Թիֆլիսցի (հետագայում՝ տիկին Դ. Ներսէսեան):

«Հայրենասէրների Միութիւնը» հրատարակել է պարբերա-

*) Բժ. Զալեանը սխալում է թւականի վերաբերմամբ. Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնը եղել է 1890թ. ամառը:

բար, թէպէտ եւ անկանոն կերպով, մօտաւորապէս հինգ համար իր թուրքիկների, մինչեւ 1885-86 ուսումնական տարւայ վերջը, երբ հիմնադիրների Մոսկւայից հեռանալու եւ դանդաղ կողմեր ցրելու պատճառով, հայկական ազգասիրական-յեղափոխական գործունէութեան կենտրոնը անցնում է Թիֆլիս, ուր, քիչ յետոյ, հիմնում է, ինչպէս վերեւ ասացինք, Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Բացի իր պարբերական հրատարակութիւններից, «Հայրենասէրների Միութեան» յաջողւել էր ձեռք բերել Մոսկւայում առաջին գաղտնի հայկական տպարան, որ նա ուղարկեց Թիֆլիս, որտեղ մի ժամանակ տեղական գաղտնի շրջանների նպատակներին ծառայելուց յետոյ, վերջ ի վերջոյ, անցաւ Դաշնակցութեան տրամադրութեան տակ*):

«Հայրենասիրական Միութեան» հիմնադիր անդամներից երկուսը (Ն. Աբէլեան եւ Մ. Զալեան) բախտի բերմամբ պատահելով իրար Բազում՝ հիմնում են այնտեղ, նոր բարեկամների աջակցութեամբ, «Դաշնակցութեան» Բազայ ճիւղը, որ մանաւանդ նրա խանութեան տեսակէտից նշանաւոր դեր է խաղացել Դաշնակցութեան գործունէութեան շրջանում 90ական թւականներին: Յիշեալ անձնաւորութիւններից կենդանի են այժմ (1919թ.) միայն Ն. Աբելեանը՝ ինժինեը, Մ. Զալեանը՝ բժիշկ, Սիմէոն Տէր-Գրիգորեանը՝ ուսուցիչ եւ բժ. Կ. Տէր-Պաշտոնեանը: Մ. Վէլիլեանի վիճակը անյայտ է ինձ:

II

„ՍԱՍՈՒՆ“ ԿՈՄԻՏԵՆ

Մոսկւայի ուսանողութիւնը առանձնապէս աչքի ընկնող դեր է կատարել հայ յեղափոխական շարժման մէջ, մանաւանդ սկզբի շրջաններում: Արդէն 82 թւականից սկսած Մոսկւայում գործում էր «Միութիւն Հայրենասէրների» յեղափոխական կազմակերպութիւնը, որ կապ էր պահում Թիֆլիսի հետ եւ հրատարակեց առաջին հայ յեղափոխական թերթը՝ «Ազատութեան Աւետարներ», ինչպէս եւ մի շարք թուրքիկներ: Մոսկւայի ուսանողութեան կողմից 1889ին երկիրն ուսումնասիրելու նպատակով Թիւրքահայաստան ուղարկւեց Լեւոն Սարգսեանը, որի «Այդ Թիւրքաց Հայաստանի» գիրքը լոյս տեսաւ Մոսկւայի ուսանողների նրա խանութի միջոցներով:

*) «Հայրենասէրների Միութեան» կազմութիւնը Քր. Միքայէլեանի յուշերում փի քիչ տարբեր ձեւով է ներկայացւած. անունն էլ այնտեղ ուրիշ է — «Միութիւն Հայրենեաց»: Իրապէս կազմակերպութիւնը կոչւում էր «Միութիւն Հայրենասէրների», ունէր կնիք՝ դաշնի եւ ատրճանակ խորհրդանշանով, եւ հրատարակեց մի քանի համար «Ազատութեան Աւետարներ» թերթը, որ Քրիստափորը համարում է հայերէն առաջին յեղափոխական թերթը: Այս մասին տե՛ս եւ Մ. Վարանդեանի «Հ. Յ. Դ. Պատմութիւն» գիրքը, էջ 16—17: ԽՄԲ.

Ութսունական թվականներին Մոսկւայի ուսանողութիւնը բաժանուած էր երկու հոսանքի՝ այսպէս կոչւած «ազգայնամոլութիւն»-ը, որոնք մերժում էին որեւէ մասնակցութիւն ուսանական ընդհանուր շարժումներին եւ անհրաժեշտ էին համարում զբաղել միայն հայկական ազգային խնդիրներով, եւ «կոսմոպոլիտները», որոնք կողմնակից էին համապետական շարժումների մասնակցութեան: Քրիստափոր, Ս. Չաւարեան, Աւ. Սահակեան, Ստ. Զօրեան (Ռոստոմ) եւ ուրիշներ՝ Պետրովսկայա ձեմարանի գերթէ ամբողջ խումբը՝ պատկանում էին այս վերջին հոսանքին:

90ական թվականների սկզբից Մոսկւայում տեսնում ենք կէսբուրժուական, կէս-մտաւորական մի կազմակերպութիւն, որին մասնակցում էր եւ պրոֆ. Ղամբարեանը: Այս կազմակերպութիւնը Գր. Արծրունու յորեկանի առիթով հանգանակեց 2000 ռուբլի, որից 1000ր. յանձնեց Թիֆլիսի դաշնակցականներին, իսկ միւս 1000ր. տրեց Արփիար Արփիարեանին:

1890ին, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ, Կենտրոնի յանձնարարութեամբ, իբրեւ ներկայացուցիչ, Մոսկւա գնաց ուսանող Տիգրան Յովհաննիսեանը եւ հիմք դրեց դաշնակցական կազմակերպութեան: Միաժամանակ առանձին գոյութիւն ունէր, այսպէս կոչւած, բուրժուազիայի կազմակերպութիւնը: 1891ին ութը ուսանողներ պատրաստակամութիւն յայտնեցին Երկիր անցնելու յեղափոխական գործունէութեան համար, բայց Թիֆլիսից յետ կեցրին: Այդ ուսանողները գնեցին զինադորձական արհեստանոցի համար գործիքներ եւ յանձնեցին Գալուստ Աւոյեանին Երկիր տանելու համար:

1892-93ին առաջ են դալիս ներքին սուր անհամաձայնութիւններ, որի հետեւանքով բուրժուազիայի կազմակերպութիւնը լուծւում է եւ, առհասարակ, գործունէութիւնը կանգ է առնում: 1894ին, Սասնոյ կոտորածների անմիջական տպաւորութեան տակ, Տիգրան Յովհաննիսեանի ջանքերով, ստեղծւում է մի նոր կոմիտէ, որի մէջ մտնում են երեքական հոգի ուսանողներից եւ երկուսարդ վաճառականներից: Կոմիտէի անունը դրւում է «Մասուն», որ ընդունում է Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը եւ կապւելով Թիֆլիսի հետ՝ անցնում է գործի:

«Մասուն»ը բաւական երկար կեանք եւ արդիւնաւոր գործունէութիւն ունեցաւ: Նրա նպատակն էր՝ դրամ հաւաքել, դէնք մատակարարել կազմակերպութեան եւ պրոպագանդ անել յօգուտ հայկական դատի:

Դրամը ստացւում էր անդամավճարներից, նւէրներից եւ, գլխաւորապէս, տարեկան երեկոյթներից: Դրամի մեծ մասը ծախսւում էր դէնքի վրա:

Պրոպագանդը կատարւում էր գրաւոր եւ բանաւոր ո՛չ միայն հայերի մէջ, այլ եւ օտար շրջաններում: Հրատարակւում էին Ժողովրդական հանրամատչելի գրքոյկներ ազգային-ազատասիրական բովանդակութեամբ: Ռուսերէն լեզուով հրատարակեց «Положение Армянъ въ Турціи». (Հայերի դրութիւնը Թիւրքիայում) յայտնի գիրքը: Քարոզչական աշխատանք էր կատարւում նաեւ ուսն հասարակութեան եւ, մանաւանդ, ուսանողութեան շարքերում:

1897թ. երկուսարդ վաճառականները դժգոհ ուսանողներից մէկից, բաժանեցին «Մասուն» կոմիտէից եւ կազմակերպւեցին առանձին, որով երկուութիւնը ուսանողների եւ վաճառականների միջեւ շարունակեց եւ բաւական վնաս պատճառեց:

«Մասուն» կոմիտէի ջանքերով էր, որ 1898ին Մոսկւայի, Պետերբուրգի եւ Պարկովի հայ ուսանողները միացան եւ մասնակցեցին Հ. Յ. Դ. երկրորդ Ընդհանուր Ժողովին՝ պատգամաւոր ուղարկելով համալսարանի ուսանող Յովսէփ Թադէոսեանին:

III

ԲԵԿՈՐՆԵՐ ԱՆՑԵԱԼԻՑ

ՅՈՎՍ. ԹԱԴԵՈՍԵԱՆ

1887թ. օգոստ. 1ին, 13 տարեկան հասակում, ես Ագուլիսից մեկնեցի Մոսկւա եւ մտայ Լադարեան ձեմարանի առաջին դասարանը: Մինչեւ 1892թ., հինգ տարի անընդհատ, գիշերօթիկ փակ կեանք եմ վարել եւ այդ ժամանակաշրջանի Մոսկւայի հայ ուսանողական կեանքի մասին շատ բան չգիտեմ:

Յիշում եմ՝ իմ աշակերտութեան առաջին տարին մի կիրակի օր մօտս եկաւ Սիմոն Չաւարեանը եւ տարաւ ինձ Պետրովսկայա ձեմարանը, ուր ես ծանօթացայ մի քանի ուսանողների հետ: Քրիստափորն այդ ժամանակ մեկնել էր Թիֆլիս: Մի քանի անգամ այցելել եմ նաեւ ուսանող Տիգրան Յովհաննիսեանին եւ նրա մօտ ծանօթացել, ի միջի այլոց, Երւանդ Թադիանոսեանի հետ, որ աչքի ընկնող դեր էր կատարում ուսանողութեան մէջ:

1895 թւին աւարտելով Լադարեան ձեմարանը, ես մտայ Մոսկւայի համալսարանը եւ հէնց ուսանողութեան առաջին օրերից սկսեցի գործած մասնակցութիւն ունենալ հասարակական կեանքում: Ընտրեցի հայկական սեկցիայի ներկայացուցիչ ուսանողական ընդհանուր ներկայացուցչական Ժողովում եւ վարում էի վերջինիս քարտուղարութիւնը: Իսկ ուսանողութեան երկրորդ տարւանից մտայ նաեւ Հ. Յ. Դ. «Մասուն» կոմիտէի մէջ:

«Մասուն» կոմիտէի անդամներն էին այդ ժամանակ՝ ուսանողութեան կողմից բժ. Մինաս Մուրադեանը, Լիպարիտ Նադարեանը եւ ես. երկուսարդ վաճառականների կողմից յիշում եմ Թումեանին (զոկ): Կոմիտէի ամբողջ գործունէութիւնը կենտրոնացած էր դէնք գնելու եւ պրոպագանդի վրա: Զէնքը գնւում էր մի ուսն պաշտօնեայի միջոցով եւ մաս-մաս փոխադրւում Կովկաս:

«Մասուն» կոմիտէի երեկոյթները շատ լաւ համբաւ էին վայելում եւ խոշոր նիւթական արդիւնք էին տալիս: Նրանց ներ-

կայ էր լինում ոչ միայն Մոսկւայի համարեա ամբողջ հայ դա-
ղութը, այլևս ուսումնականները, պրոֆեսորները եւ ուրիշները:

Ռուս ուսանողութեան հետ մեր յարաբերութիւնը ջերմ-
բարեկամական էր: Իմ ժամանակ Մոսկւայի ուսանողական միու-
թեան մէջ հայկական հատաժի ներկայացուցիչն էր Համօ Օհան-
ջանեանը, իսկ դատական մարմնի մէջ՝ տաղանդաւոր մաթեմա-
տիկոս Տէր-Ստեփանեանը, որ հետագային ուսուցչութիւն էր
անում Պետերբուրգում եւ մաթեմատիկայի մի շարք դասադրքեր
հրատարակեց:

1896թ. նոյեմբերին Մոսկւայում տեղի ունեցաւ մի բոլոր
ուսանողական շարժում, իրրեւ բողոք մայիսին, Նիկոլայ Բ-ի
թաղադրութեան ժամանակ, խռովակալում պատահած աղէտի
դէմ, որին զոհ գնացին հարիւրաւոր անմեղ մարդիկ: Նախ քան
շարժում սկսելը Ուսանողական ընդհանուր Միութեան խորհուրդը
հարցը քննութեան էր դրել բոլոր ուսանողական հատաժներում:
Շատ լաւ յիշում եմ, որ հայ Ուսանողական Միութեան մէջ շար-
ժման ու բողոքի կողմնակիցների թիւը անհամեմատ աւելի մեծ
էր, քան միւս հատաժներում: Առհասարակ, պէտք է ասել, որ
այդ ժամանակ հայ ուսանողութեան մէջ շատ բարձր յեղափո-
խական տրամադրութիւն էր տիրում:

Շարժումը տեղի ունեցաւ: Ձերբակալեցին եւ Բոլտիբիկի
բանտը նետեցին 700ից աւելի ուսանողներ: Ձերբակալւած հայե-
րիս թիւը խիստ մեծ էր: Բանտում մնացին միայն 7 օր եւ հա-
փաղանց ուրախ ժամանակ անցկացրին:

Մի քանի տարի յետոյ պատահեց մի դէպք, որ բնորոշ
է այն ժամանակաւ հայ ուսանողների աղագային տրամադրու-
թիւնների տեսակէտից:

1898թ. Թիֆլիսում տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. երրորդ ընդ-
հանուր ժողովը, որին եւ էլ պատգամաւոր էի Մոսկւայի, Սար-
կովի եւ Պետերբուրգի ուսանողների կողմից: Երբ վերադարձայ
Մոսկւա, մանրամասն ղեկուցում տւի ուսանողական ներկայա-
ցուցչական ժողովում: Ձեկուցումս գրել էի մի տետրակի մէջ,
որ առաւ այդ ժամանակաւ կոմիտէի քարտուղար Բժշկական ու-
սանող Յովնան Գարրիէլեանը: Ժողովը որոշեց 1899թ. փետրեա-
րին հրաւիրել ընդհանուր ժողով եւ ղեկուցումը լսել աւելի լայն
չըջանում՝ քննելով նաեւ ընդհանուր ժողովի հետ կապւած հար-
ցերը:

Նշանակւած ժամանակին հաւաքեցինք Արամելիք-Լադար-
եանի մի յարկանի դատարիկ տունը, Հայկական փողոցում: Դեռ
ժողովը չբացւած, յանկարծ, ամբողջ շէնքը շրջապատեց ոստի-
կանութեամբ եւ սկսեց ընդհանուր խուզարկութիւն. հերթով,
մէկ-մէկ խուզարկեցին բոլոր ժողովականներին: Առաջինը մօտե-
ցայ եւ, եւ այդ հանգամանքը ինձ փրկեց. մօտս ոչինչ չգտան եւ
ազատ թողին, մինչդեռ շատ շատերին, բոլորովին անմեղ մարդ-
կանց ձերբակալեցին, գնացին տներն էլ խուզարկեցին: Յովնանին
էլ ձերբակալեցին եւ մօտից առին իմ ղեկուցման տետրակը:

Ես վերադարձայ տուն: Տանը եղած թղթերը մասամբ ոչին-

չացրի, մասամբ պահ տւի մի ընկերով՝ լուսանկարների եւ նա-
մակների հետ, որ յետոյ ընկերս այրել էր վախից: Ես կասկած
չունէի, որ ինձ էլ պիտի ձերբակալեն եւ ամէն գիշեր սպասում
էի այցելութեան: Եւ, իսկապէս, հինգ օր յետոյ եկան ինձ եւս
ձերբակալեցին: Նախ տարան Արքատեան թաղամասը, ուր նրա-
տած էր բժ. Մուրադեանը: Այդտեղ մենք իրար հետ պայմանա-
ւորեցինք խոստովանութիւն չանել եւ ամէն ինչ ուրանալ: Շու-
տով սակայն, ինձ տեղափոխեցին Տիբուկայա թաղամասը:

Առաջին հարցաքննութեան ժամանակ ես բաց էի բաց մեր-
ժեցի որեւէ մասնակցութիւն «Սասուն» կոմիտէին, եւ առհա-
սարակ՝ ուսանողական միութեան գործերին:

Դրանից յետոյ շա՛տ երկար, գրեթէ երկու ամիս ինձ հար-
ցաքննութեան չկանչեցին, թէեւ ես անընդհատ պահանջում էի
ազատ արձակել: Ու մի օր առաջնորդեցին պահնորդական բա-
ժինը, ուր ժանդարմական քննիչ սպան դիմեց ինձ այսպիսի խօս-
քերով.

— Հիմա լսեցէք, ես ձեզ կը կարգամ ամէն բան, տեսնե՞ք
այժմս է՞լ պիտի ուրանա՞ք ձեր մասնակցութիւնը:

Եւ, յերաւի, սկսեց թերթել իր առջեւ դրած մեծ թղթա-
ծրարը եւ իրար յետեւից կարդալ կարմիր մատիտով ընդգծւած
բաղմաթիւ կտորներ: Երբ ընթերցումը վերջացրեց, հարցական
նայեց երեսին. ինձ համար այլեւս պարզ էր, որ ամէն ինչ ամե-
նամանրամասն կերպով բացւել էր: Յամառելը անմոռութիւն էր.
ինձ ոչինչ չէր մնում, բայց եթէ հաստատել ինձ վերաբերող
տեղեկութիւնները:

Շուտով իմ գործը փոխանցեց ժանդարմական վարչութեան:
Բաղմաթիւ ձերբակալւած ընկերներից մնացել էինք միայն 5
հոգի՝ բժ. Մ. Մուրադեանը, Լիպարիտ Նազարեանը, եւ, կար-
ծեմ նաեւ Գէորգ խառնեանը եւ Յովսէփ Դորդանեանը: Երբ ինձ
կանչեցին քննութեան, ժանդարմական վարչութեան քննիչ սպան՝
ռոտմիստր Սամոյլենիօն կտրուկ կերպով պահանջեց.

— Պարզեցէ՛ք, խնդրեմ, ի՞նչ նպատակներ էիք հետապն-
դում:

Ես յիշեցի Քրիստափորի պատմածները Բագրի բանտի հար-
ցաքննութիւններից եւ որոշեցի հետեւել նրա օրինակին: Նա էլ
սկզբում մերժել էր իր պատկանելիութիւնը յեղափոխական կադ-
մակերպութեան, բայց երբ խնդրեցին պարզել էր, աշխատել
էր ներկայացնել հայկական հարցի էութիւնը եւ ուսւ կառավա-
րութեան հետապնդած քաղաքականութեան տիմարութիւնը*):

Ես ասացի, որ մեր միակ նպատակն է օգնութեան հասնել
թիւրքական լծի տակ տառապող մեր դժբախտ եղբայրներին,
նպաստել նրանց ինքնապաշտպանութեան: Մեր գործը զուտ մար-
դասիրական է, յեղափոխական բնոյթ չունի եւ բնա՛ւ ուղղւած
չէ ուսական շահերի դէմ: Մենք դրամ ենք հաւաքում եւ ուղար-
կում մեր կարօտ հայրենակիցներին: Մեր մեղքը չէ, որ նոյն իսկ
այդքան տարրական իրաւունքներ զլացւում են մեզ:

*) Տե՛ս «Հայրենիք» ամս. 1925թ. նոյեմբեր:

Գննիչը արձանագրեց իմ բոլոր ասածները, եւ երբ ստորագրեցի, դարձաւ ինձ հետեւեալ նկատողութեամբ. —

— Զարմանալի մարդիկ էք դուք հայերդ. մի հասարակ բանի համար ստեղծում էք բարդ կազմակերպութիւններ՝ կոմիտէներ, ենթակոմիտէներ, ժողովներ, հազար ու մի բարձրագոյն անուններ։ Զեր գործը վերջացած է. դուք ազատ էք, բայց պէտք է անմիջապէս վերադառնաք հայրենիք. այստեղ ապրելու իրաւունք չունիք։

Ես ստիպւած եղայ մեկնել Կովկաս եւ մի տարի կորցրի։ Անշանք թոյլ տւին զնալ Մոսկւա եւ շարունակել ուսումս համալսարանում։

Մի բնորոշ գիծ եւս այդ ժամանակների ուսանողական կեանքից։

Երբ Քրիստափորը Մոսկւա էր, ուսանողութիւնը բաժանւում էր երկու հակամարտ հոսանքների՝ ազգայնամոլ եւ կոսմոպոլիտ։ Այդ հոսանքներն աւանդաբար անցել էին եւ մեզ, թէեւ տարբերութիւնն այլեւս այնքան յստակ ու խորը չէր։ Մեր մէջ էլ կային ազգայնամոլներ, որոնք հայկական կեանքից ու մշակոյթից դուրս ոչինչ չէին ուզում ընդունել եւ ատում էին նոյն իսկ ուսաց լեզուն ու ուսանելին։ Այդ հոսանքին էր պատկանում, ի միջի այլոց, Լիպարիտ Նազարեանը։

Սրանց դէմ բողոքում էինք ես ու իմ ընկերները՝ համարելով ազգային նեղսրտութիւնը վնասակար նոյն իսկ մեր շահերի համար։ Մենք պաշտպանում էինք մեր ազգային դատն ու մշակոյթը, բայց ոչ միայն ատելութիւն չունէինք դէպի օտար մշակոյթը, այլ եւ անհրաժեշտ էինք համարում նրանից օգտուել։ Երբ մի անգամ խնդիր ծագեց հրատարակել խմորատիպ ուսանողական մի թերթ, մենք պահանջում էինք խմբագրել երկու լեզուով՝ հայերէն եւ ռուսերէն, որպէսզի բաւական թւով ռուսախօս հայ ուսանողներն էլ կարդան եւ հետզհետէ համակեն հայկական զգացմունքով։ Լաւ չեմ յիշում՝ կարծեմ այդ թերթը լոյս չտեսաւ։

Նման վէճեր յաճախ էին պատահում ազգային հողի վրա։ «Կոսմոպոլիտ»ների շարքում էր եւ Ստեփ. Քախանակեանը, հետագային ուսուցիչ Ներսիսեան դպրոցում եւ Թիֆլիսի հայ թատրոնի լաւագոյն գործիչներից մէկը, ինչպէս նաեւ Աղեքս. Ներսիսեանը, որ յետոյ եղաւ Մոսկւայի համալսարանի պրիւատ-դոցենտ, եւ Լադարեան Ճեմարանի հսկայ գրադարանի վարիչ բոլշեիկների օրով։ «Ազգայնամոլ»ներից էին Գէորգ Սատիսեանն ու Լեւոն Մուշեղեանը։

Նոյն 1898թ., ծննդեան տօներին, Պետերբուրգում տեղի ունեցաւ դաշնակցական ուսանողական կոմիտէների ներկայացուցիչների խորհրդակցութիւն, Հ. Յ. Դ. Երկրորդ Ընդհանուր Ժողովի առթիւ։ Ներկայներից յիշում եմ Նզիշէ Թովիզեանին, Արշակ Զոհրաբեանին եւ Գնունիին, որ արդէն տարւել էր սոցիալ-դէմոկրատական հովերով, թէեւ դեռ Դաշնակցութեան շարքերումն էր։ Ուրիշ ովքե՞ր կային, ի՞նչ որոշեց այդ ժողովում — ոչինչ չի մնացել յիշողութեանս մէջ։


Մի փոքրիկ յիշողութիւն էլ՝ կապւած Քրիստափորի եւ Զաւարեանի հետ։

Ամառները, սովորաբար, դաշնակցական ուսանողներս հաւաքւում էինք Թիֆլիս եւ նախ քան մեր տեղերը ցրելը՝ ժողով էինք անում եւ Քրիստափորին կամ Զաւարեանին խնդրում, որ ներկայ լինեն եւ մեզ տեղեկութիւններ ու գործի յանձնարարութիւններ տան։ Զաւարեանի ներկայութիւնը միշտ ճշւած տրամադրութեամբ էր վերջանում. նա մեզ, առհասարակ, մտրակում, սաստիկ հարւածում էր, թէ ոչինչ չենք անում, անպէտք ենք, կուսակցութեան յոյսերը չենք արդարացնում եւ այլն։ Յանդիմանում եւ թողնում հեռանում էր։

Այդպիսի դէպքերում ես գնում-խնդրում էի Քրիստափորին, որ դայ եւ անախորժ վիճակից դուրս բերէ մեզ։ Նրա մեղմ ու համոզեցուցիչ խօսքերը բարեբար տպաւորութիւն էին թողնում, եւ ամենքը ամբարայնւած ու, ոգեւորւած՝ ցրւում էին իրենց շրջանները։ Երբեմն Քրիստափորը տալիս էր յատուկ յանձնարարութիւններ, մէկին կամ միւսին գործի էր դնում։ Ամենքը սիրով կատարում էին նրա պատւէրները։

1899թ. վերջերը Մոսկւա եկաւ Մ. Վարանդեանը դրամական ժողովարարութեան համար։ Նա խնդրեց ինձ տանել իրեն իրաւաբան Ստեփան Մամիկոնեանի մօտ, որ այդ ժամանակ նիւթական բարեկեցիկ վիճակ ունէր. տարեկան աշխատում էր մօտ 40,000 ռուբլի։ Նրանց խօսակցութեան ես ներկայ չեղայ, բայց գիտեմ, որ Վարանդեանը հեռացաւ դժգոհ։ Մամիկոնեանը հետըզհետէ մեծ աղբեցութիւն ձեռք բերեց Մոսկւայի հայ գաղութում եւ դարձաւ աչքի ընկնող հասարակական գործիչ։ 1917-19 թւականներին եղաւ Հայաստանի Հանրապետութեան ականաւոր դէմքերից մէկը եւ մեռաւ Թիֆլիսում, խորհրդային իշխանութեան օրով։

Թեհրան



ԱՆՑԵԱԼՔ

I.

ԱՐՄԷՆ ԳԱՐՕ

(1873 — 1923)

Ս. ՎՐԱՅԵԱՆ

Այս տարի մարտին լրացաւ Արմէն Գարօի մահւան տասնամեակը:

Գեռ երէկ էր կարծես՝ նա մեզ հետ էր իր աղնական ու սիրելի հոգիով: Նրա շունչը դեռ կենդանի է մեր մէջ ու մեր շուրջը — այնքան մեծ էր նրա ազդեցութիւնն ու հմայքը ամենքի վրա: Տասը տարի է անցել, բայց մարդ չի կարողանում հաշտել նրա մահւան հետ: Եւս առաւել դժուար է գրել նրա մասին, քրքրեւ մեռածի. չ'որ նա դեռ մեր մէջ է, մեզ հետ...

Արմէն Գարօն, իսկական անունով Գարեգին Փաստրմաճեան, ծագում էր Կարնոյ մեծահամբաւ Փաստրմաճոնց տոհմից: Նա թոռն էր նշանաւոր Խաչատուր աղա Փաստրմաճեանի, որ սպանւեց 1872թ. թիւրք կառավարութեան հրահանգով, միայն ա՛յն պատճառով, որ մեծ ազդեցութիւն եւ հմայք էր վայելում հայկական շրջաններում: Արմէն Գարօն ծնւել էր 1873 թ. ինքնապաշտօնական ու միջնակարգ կրթութիւնը ստացել Սանասարեան վարժարանում, որի առաջին ընթացաւարտներից էր, 1891թ.:

Թէ ընտանիքում, թէ դպրոցում մանուկ Գարեգինը դաստիարակւում էր ազգային ոգով: Փաստրմաճոնց տունը յայտնի ազգային օջախ էր եւ ազգին տւել էր նշանաւոր դէմքեր: Գարեգինը մանկութիւնից շնչում էր ազգային մթնոլորտ: Սանասարեան դպրոցն աւելի եւս հրահրեց ու զարգացրեց այդ ոգին: Եւ երբ 1894թ. նա մեկնեց Եւրոպա ուսանելու, նրա մէջ այնքան ուժեղ չէին անհատական ձգտումները, որքան հայրենիքին օգտակար լինելու տենչը: Նա մտածում էր սովորել երկրագործական գիտութիւններ եւ հողագործութեան նորագոյն ձեւեր մտցնել հայրենի երկիրը, նպաստել հայ գիւղացիութեան տնտեսական վերածնութեան:

Եւրոպայում նա մտաւ Նանսիի գիւղատնտեսական վարժարանը, որ այն ժամանակ ուսանում էին քսանից աւելի հայեր: Նանսին ինստիտուտի թւականների սկզբին Եւրոպայում մօտաւորապէս նոյն դերն էր կատարում, ինչ որ Մոսկւայի Պետրովկան: Այստեղից էին դուրս եկել Հնչակեան կուսակցութեան հիմնադիրները: Այստեղից դուրս եկան եւ Բանդ Օթոմանի հերոսները:

Գարեգինը եռանդով նւիրեց դպրոցական աշխատանքին, բայց չուտով վրա հասան 1895 թ. կոտորածները, որոնք ցնցեցին

ամբողջ հայութիւնը: Նրանք վերջ տւին եւ Գարեգինի ու իր ընկերների ուսանողութեան: Պատասխանելով Հ.Յ.Դաշնակցութեան որոշման, երեք ընկերների հետ — Հայկ Թիրաքեան, Սարգիս Սրենց, Մ. Նեւրուզ — Գարեգին Փաստրմաճեանը, այժմ արդէն Արմէն Գարօ, դիմեց դէպի վրէժի սրբազան մարտադաշտ: Այդ նա էր՝ որ Հրաչի, Բարկէն Սիւնիի եւ ուրիշ դաշնակցական երիտասարդների հետ գրաւեց Բանկ Օթոմանը եւ մեծ պետութեանց ներկայացուցիչներին թելադրեց հայկական պահանջները:

Մենք կանգ չենք առնի պատմական այս դէպքի մանրամասնութիւնների եւ հետեւանքների, ոչ էլ Բանկի հերոսների հետագայ դեպքերումների վրա: Արմէն Գարօն համեմատաբար բախտաւոր դուրս եկաւ: Թէեւ Հանոտի թրքաւէր կառավարութիւնը թոյլ չտւեց նրան շարունակելու ուսումը Նանսիում, նա յաջողեց մտնել Ժընեւի համալսարանը սովորելու համար հանքաբանութիւն եւ 1900թ. աւարտեց գիտութեան դոկտորի տիտղոսով: Այնտեղից անցաւ Կովկաս, ուր 1901 թ. ին Թիֆլիսում հիմնեց քիմիական լաբորատորիա հանքային հետազոտութիւնների համար:

Բանկի դէպքից յետոյ Արմէն Գարօն այլեւս Հ. Յ. Դաշնակցութեան դործօն անդամներից էր: Ժընեւում նա մասնակցում էր Արեւմտեան Բիւրօի եւ «Իրօչակ» խմբագրութեան աշխատանքներին: Կուսակցութեան ղեկավար դերքերում մնաց եւ Կովկասում, ուր չուտով վրա հասան եկեղեցական կալաւածների գրաւման դէպքերը, ապա հայ-թրքական ընդհարումները: Արմէն Գարօն ինքնապաշտօնական Կոմիտէի անդամ էր, իսկ երբ 1905թ. նոյեմբերին հայ-թրքական կռիւները հասան եւ Թիֆլիս, նա կանգնեց 500 դաշնակցական մարտիկների գլուխը եւ մի շարքի անընդհատ վարեց յաղթական ճակատամարտներ թուրք հազարաւոր զինւած խուժանի դէմ:

Հայ-թրքական կռիւներից յետոյ Արմէն Գարօն նւիրեց հանքային աշխատանքների. նա ձեռնարկեց պղնձագործական մի մեծ ընկերութեան կազմակերպութեան եւ արդէն կանգնած էր նիւթական փայլուն յաջողութիւնների շեմին, երբ պայթեց Օսմանեան յեղափոխութիւնը, եւ Կարնոյ ժողովուրդը հեռադուր հրաւիրեց նրան՝ ղնելու իր թեկնածութիւնը Սորհրդարանի անդամութեան համար: Նա թողեց ամէն բան եւ շտապեց հայրենիք: 14 տարւայ տարազիւր եւ աստանդական կեանքից յետոյ, նա վերադարձաւ յաղթական եւ ըստ արժանւոյն գրաւեց երեսփոխանական թոռը Օսմանեան կայսրութեան Սորհրդարանում, որ պահեց չորս տարի:

Իբրեւ Սորհրդարանի անդամ եւ պետական գործիչ, Արմէն Գարօն նւիրեց գերազանցապէս երկրի ներքին գործերին: Նրան մասնաւորապէս զբաղեցնում էր երկաթուղիների խնդիրը Հայաստանի մասերում: Այդ նրա կազմած ծրագրին էր Չեսթերի յայտնի ծրագիրը, որ կառավարական շրջաններում էլ ջերմ համակրանք գտաւ, բայց իրագործումը ձգձգւեց եւ, ի վերջոյ, անկարելի

բաղադրող հայրենիք եւ նւիրել պետական աշխատանքին, կամ, ինչպէս յաճախ սիրում էր կատակել, Վանայ լճի եզերքին հաստատել օրինակելի մի ագարակ:

Աւաղ, նրան չվիճակեց տեսնելու այդ օրերը. չուտով վրա հասան աղէտի եւ հիասթափութեան նոր փորձութիւններ. անյաջող պատերազմ, անկախութեան փլուզում, բոլշեւիզմ, Կիլիկիա, Պոլիս, Իզմիր, նոր դաղթ եւ աւեր — խորտակեց եւ Արմէն Գարօի հոգին: 1923թ. դարնան նա թողեց Ամերիկան եւ հիւժւած ու մաշած, կէս-ողջ, կէս-մեռած անցաւ Փարիզ, ապա Ժընև իր ընտանիքի մօտ: Ով տեսել է այդ օրերին Արմէն Գարօին, կարող է վկայել, որ նրա սուերն էր միայն մնացել. այնքան սաստիկ էր ստացած հարւածը: Թէեւ հաւատը, քամու դէմ մաքառող ճրագի պէս, դեռ պլպլում էր նրա հոգում. նա երազում էր չուտով մեկնել Հայաստան եւ կեանքի վերջին մասը ապրել Մասիս հովանու ներքեւ, բայց բախտը մինչեւ վերջ մնաց անողորմ նրա վերաբերմամբ: Լողանի դարհուրանքն էլ ճաշակելուց յետոյ, 1923թ. մարտ 27ին, նա փչեց իր վերջին շունչը: Եւ այժմ հանդուրդ է ժընևի դերեզմանատանը՝ մեր ժողովրդի պէս տարագիր ու հայրենաբաղձ:

II.

ԱԻԵՏԻՔ ԵԱՀԵԱԹՈՒՆԵԱՆ

1918թ. հոկտ. 19ին, Թիֆլիսում, թոքատապից վախճանեց Աւետիք Ծահլաթունեանը, հայ մտաւորականութեան ընտիր ներկայացուցիչներից մէկը, որ հետզհետէ սկսում էր աչքի ընկնել ոչ միայն հայ, այլ եւ համակրական իրականութեան մէջ: Ծահլաթունեանի անդերադանցելի բնութագիրը գծւած է Նիկ. Աղբալեանի տաղանդաւոր գրչով, «Հորիզոն»ում, մահանից անմիջապէս յետոյ: Կարծում ենք, որ երիտասարդ գիտնական-հրապարակագրի մահւան 15 ամեակը յիշելու լաւագոյն ձեւը կը լինի Աղբալեանի այդ գրւածքի արտատպութիւնը՝ կցելով նրան կենսագրական հետեւեալ հակիրճ տեղեկութիւնները:

Աւետիք Ծահլաթունեանը ծնւել էր 1883թ. Իզմիրում, ուր նրա հայրը՝ Տիգրան Ծահլաթունեանը դաւաճապետի պաշտօն էր վարում: Հինգ տարեկան հասակում թոքատապից բռնւելով՝ Աւետիքը ամբողջ կեանքում մնաց կուղ եւ առողջութեամբ տկար:

Շէն, ամէն բարիքով լի տուն էր Ծահլաթունեանների տունը, ուր տիրողը հայկական ոգին էր: Մանուկ Աւետիքը չըջապատւած էր ծնողական գուրգուրանքով: Նա ստացաւ նախնական լաւ կրթութիւն: 1904թ. մրցանակով աւարտեց Երեւանի գիմնազիան, ապա Մոսկւայի համալսարանի իրաւաբանական բաժինը, որից յետոյ, նւիրեց կրթական-հանրային գործունէութեան:

Արդէն գիմնազիայում ու համալսարանում Ծահլաթունեան-

նը ջերմ հետաքրքրութիւն ու հակում էր ցոյց տալիս դէպի հասարակական գործերը: Մասնակցում էր աշակերտական եւ ուսանողական խմբերին, որոնց մէջ ղեկավար դեր էր կատարում, աշխատակցում էր Թիֆլիսի մամուլին: Վաղ պատանեկութիւնից անդամագրւել էր Հ. Յ. Դահնակցութեան եւ որպէս գործօն յեղափոխական, 1910ին ձերբակալեց Հ. Յ. Դահնակցութեան մեծ գործով եւ մի քանի ամիս յետոյ ազատ արձակւելով՝ անցաւ արտասահման, ուր մնաց երկու տարի: Արտասահմանից վերադարձաւ Երեւան եւ կարճ ժամանակ փաստաբանութիւն անելուց յետոյ, ստանձնեց Երեւանի Թեմական եւ Գայիանեան դպրոցներում դասատուի պաշտօն:

Պատերազմի սկզբին, 1914ին, Ծահլաթունեանը փոխադրեց Թիֆլիս, ուր շատ շուտով առաջնակարգ տեղ գրաւեց հայկական եւ անդրկովկասեան գործերում. անդամ Հ. Յ. Դ. Բիւրօի, խմբագիր «Հորիզոն» եւ ուսուցիչ «Մուրտ» թերթերի, Թիֆլիսի քաղաքային խորհրդի անդամ, Սահմ. Ժողովի ու Կովկասեան Սէյմի պատգամաւոր, երկրագործական կոմիտարի օգնական, գործօն անդամ կուսակցական, ազգային, անդրկովկասեան համագումարների, խորհրդաժողովների ու յանձնաժողովների, դասախօս, աշխատակից հայերէն եւ ուսուցիչ թերթերի:

Բայց Ա. Ծահլաթունեանի բուն կոչումը գիտնական հրապարակագրութիւնն էր: Նա գերազանցապէս տեսական միտք էր: Անդրկովկասի եւ հայ տնտեսական ազգագրական ու վարչական գործերի ծանօթութեան տեսակէտից նա գրեթէ մրցակից չունէր: Նրա դրչի տակից դուրս են եկել մի շարք, մինչեւ այսօր էլ իրենց այժմէութիւնը չկորցրած, յօդւածներ: Նրան է պատկանում ուսուցիչ «Անդրկովկասի վարչական Բաժանումը» թանգարտէք աշխատութիւնը: Վերջապէս, նա է հեղինակն ու հիմնաւորողը Անդրկովկասի ղեմստեղական, ապա ազգային-քաղաքական սահմանագծման ծրագիրների:

Ա. Ծահլաթունեանը մեռաւ, կարելի է ասել, իր գիտնական-հասարակական գործունէութեան սկզբին, առանց իրեն փոխարինող թողնելու: Նրա տեղը մինչեւ այսօր էլ մնում է րաց:

ՆԻԿ. ԱՂԲԱԼԵԱՆ

Մի խոշոր գլուխ, որ հանդիման էր նեղ ու վտիտ ուսերի վրա, շէկախառն չափանակ մազեր՝ դուրս ու հիւթեղ, որ հազիւ ամփոփւում էին գլխարկի տակ. ներահայեաց ու կայուն աչքեր ուսկրուտ ճակատի տակ, որոնց սքողում էր ոսկեպատ ակնոցը. սառն ու չոր դիմագիծ, որ խստանում էր սեղմ շրթունքից. բարուն ու մանր քայլ, լրագիրների մի կոյտ ձեռքին ու գրպանում, մի կարճ ձեռնափայտ թեւիցը կախ, — նա անցնում էր ինքնամփոփ, փողո-

ցի ժխտելն անհաղորդ եւ թւում էր ողեկան ուժերի շարժուն խտացում՝ պատկանում ազդելով դիմացի մարդուն։

Բարոյական ու մտաւոր խռոտ ուժ կար ամբարւած այդ փոքրիկ մարմնի մէջ։ Լրջմիտ էր, խոհուն ու խելօք՝ մտերիմների շրջանակից դուրս՝ անհաղորդ ու զուսպ, մինչեւ իսկ անհրապոյր ու խիստ։ Նոյնն էր նաեւ մտերիմների հետ «սլաշտօնական» ժամերին — ժողովներում — միշտ մտահոգ դրած խնդրի յաջող քննութեամբ, նեարդօրէն հոգածու իր մտքերի յաղթանակին եւ վիճարանութեան արդիւնաւէտ կարգի հետամուտ։

Աշխատանքը վերջացաւ՝ նա դառնում էր հաճելի զրոյցընկեր, լուրջին խառնելով բանդէտ ու փորձ հայ մարդու գաւառարոյր սրամտութիւն եւ մի հայացի հեղնանք՝ բարեացակամ եւ անդիտաւոր։

Իր միտքը դադափարների հետ դործ ունէր միայն, ինչպէս եւ իր զգացումը։ Իր գայրոյթը միշտ պորթկում էր մտքերի, երբեք անձի դէմ, եւ մինչդեռ հակառակորդի դադափարները հերքում էր ջղուտ ու հատուկ՝ հոգին մնում էր իր մրցորդին մտերիմ։ Թշնամիներ չունէր եւ չէր կարող վաստակել։ Իր տարամտութիւնը չէր իջնում կրքերի եւ դործի աշխարհը, որ դարձնում է անհաշտ ոսոխներ։ Գործնականի հակում նա չունէր։ Մտքերի եւ զգացումների ուղին շտկելով՝ կարծում էր գործնականի արատները դարմանել։

Թանձրացեալը, ընթացիկը նկատելու անկարող՝ կեանքը նրան պատկերանում էր իբր հանրային ուժերի մրցարան, ուր կանգնած են իրար դէմ տարրեր դադափարներ ու միտումներ։ Պարզելով մրցորդ դադափարների եւ միտումների բնոյթն ու արժէքը՝ նա կարծում էր, որ պարզել է կեանքի ընթացքը։ Տրամաբանականը թւում էր նրան իրաւացի եւ անհետեւողականը՝ դատապարտելի եւ ժխտելի։ Գրամարտի ընթացքում նա ջանում էր հակառակորդի դիրքին տիրանալ, սեղմելով նրան քայլ առ քայլ կուռ դատողութեանց աքցանով։ Մտքին տիրելով, դադափարները հերքելով՝ նա համարում էր իր դատը շահած եւ թշնամուն յաղթահարած։ Կեանքի անբանաւոր (փոացիոնալ) ընթացքը անմատչելի եւ անհանդուրժելի էր նրան։ Նրա մտքի միջից դատողութիւններն անցնում էին խիտ շարքով, գինւորների պէս, տեղ չտալով ոչ մի պատկերի, ուստի վր ոճը անդարդ էր, մտալից ու ծանրընթաց եւ հազիւ ուրեք ջերմանում էր գայրոյթից կամ մեղմանում հեղնանքից։

Նրա միտքը գործում էր ընթացիկ կեանքի ժխտից վեր, թէեւ այդ կեանքից դրդւած։ Ապրելով դադափարների եւ ոչ գործի աշխարհում, մտքերի եւ ոչ կրքերի մրցարանում՝ նրա սիրտը մնացել էր մանկական եւ բնաւորութիւնը անաղարտ։ Ունկնդիրների, ընկերների եւ ընթերցողների մտքերը պարզելուն հետամուտ՝ նա միշտ մնաց ուսուցանող, բնաւ առաջնորդ։ Ուր պէտք էր ձեւակերպել մի խնդիր, պարզաբանել մի դադափար, սահմանել մի կացութիւն, բանաձեւել մի վերաբերում — նա դառնում



(Նկարած 1917թ. Ամերիկայում՝ գաղափարակից ընկերների հետ)
ԱՐՄԷՆ ԳԱՐՍ

էր անհրաժեշտ: Դրանով նա հանդիսանում էր իր կուսակցութեան մտածումի թարգմանիչը, նրա ծրագրի մեկնիչը, նրա ընթացքը գծողը: Այս տեսակէտով, իբրեւ հանրային գործիչ, նրա արժէքը զուգահեռ էր իր կուսակցութեան արժէքին, և որքան Դաշնակցութիւնը հայ ճակատագրի վարիչն է եղած, այնքան խառն է այդ գործում Ա. Շահխաթունեանի մատը:

Իր հետաքրքրութիւնը սահմանափակ էր, բայց լուրջ ու խոր: Իր Административный передѣл Закавказья — «Անդըր-կովկասի Վարչական Վերաբաժանումը» գիրքը հմտալից մի աշխատանք է, շատ արժէքաւոր մեզ ու Կովկասի համար եւ անուշադիր չէր մնայ նաեւ ուրիշ հասարակութեան կողմից: Գիրքը մասնանշում է մի հասուն խելք, որ կարող է խօսել շատ աւելի կիրթ եւ պատրաստի հասարակութեան, քան մեր Կովկասի մտաւորական դասը:

Նա արդէն հեղինակութիւն էր կուսակցութեան մէջ տեսական խնդիրների ոլորտում եւ դառնում էր հեղինակութիւն նաեւ լայն հասարակութեան համար իբր Կովկասի հանդամանքներին հմուտ մի գիտուն: Նոր միայն պիտի կարողանար խօսել տիրաբար ոչ միայն իր կուսակցութեան, այլ եւ իր ազգին, երբ մահը վերջ տաւ իր կեանքին: Չարքաշ պայմանները թոյլ չտւին նրան չահեցնել այն գիտութիւնը, փորձն ու հմտութիւնը, որ ձեռք էր բերել ինքնուրոյն աշխատանքով, եւ Դաշնակցութիւնը զրկւեց առաջնակարգ մի ուժից, իսկ հայութիւնը՝ մի սրտացաւ ու հմուտ դաւակից:

Հայաստանի եւ հայ ժողովրդի ապագան — այս էր նրա կենտրոնական մտահոգութիւնը. ներկան քննում ու դատում էր այդ ապագայի նկատմամբ եւ այդ չափանիշով: Մեր քաղաքական եւ հանրային շարժման իմաստը բանաձեւողներից մէկն էր նա, մեր հանրային կեանքի շաւղին մի ճրագ, որ հազիւ սկսել էր լոյս արձակել, երբ մահւան հողմը հանգրեց նրան: Նրա մահից մի քանի օր առաջ գրախօսելով իր գիրքը՝ մենք ասում էինք. «Մեր քաղաքական ինքնագիտակցութիւնը շարունակում է աճել. Ա. Շահխաթունեանի գիրքը այդ գիտակցութեան զարգացման մի որոշ աստիճանն է ձեւակերպում եւ միաժամանակ ազդակ է դառնում նրա հետագայ զարգացման»: Սրանով որոշւում է նրա տեղը մեր քաղաքական մտքի զարգացման պատմութեան մէջ: Նա մի ալիքն էր այն հոսանքի, որ Մ. Նալբանդեանի օրերից Գ. Արծրունու եւ Բաֆֆու վրայով Դաշնակցութեան միջով հասնում է մեզ: Ու թէեւ Ա. Շահխաթունեանը չէ պատկանում դրականութեան, բայց մեր քաղաքական մտքի պատմութեան մէջ նա իր շատ որոշ ու պատուաւոր տեղն ունի: Մահը չթողեց որ նա գրաւոր ձեւակերպում տայ տաճկապատկան Հայաստանի մասին, ինչպէս արել էր Վր գրքով ուսապատկան Հայաստանի վերաբերմամբ, բայց նրա մտքերը որոշ էին եւ իր կուսակցութեան միջոցով չըջանալու ժամանակ մէջ են մեր կեանքում եւ ազդում են մեր ճակատագրի վրա: Նրա հիմնական դադափարները մարմին կառնեն մեր աշ-

խարհում եւ կը դառնան հայի քաղաքական մտածութեան տարեր-
քը, որով եւ կանմահանայ նրա անունը: Մեր քաղաքական կեան-
քի զարգացման շաւիղն անցնում է Աւ. Շահխաթունեանի գերեզ-
մանի մօտով, եւ հետագայ ոչ մի պատմագիր չի կարող անտես
առնել այդ գերեզմանը եւ նրա մէջ հանգչողին:

«Հորիզոն», 27 հոկտ. 1918թ.

III

Ն Ա Ր - Դ Ո Ս

Յուլիս 13ի առաւօտեան, վիրաբուժական ծանր գործողու-
թիւնի յետոյ, սրտի կաթւածի հետեւանքով, Թիֆլիսում, վախ-
ճանեց ժամանակակից ականաւոր հայ գրողներից մէկը՝ Նար-
Դոսը: Նա վաղուց է տառապում էր թոքերի բորբոքումից: Վեց
ամիս առաջ բռնել էր նաեւ պլեւրիտով, եւ թոքերի ցաւը աւելի
էր սրել: Մարմնի ջերմութիւնը շարունակ մնում էր բարձր,
սիրտը թուլանում էր. հիւանդը աստիճանաբար հիւժւում, քայ-
քայում էր: Վերջերս աւելացաւ եւ թարախոտ պլեւրիտը: Պէտք
եղաւ դիմել գործողութեան: Յուլիս 12ին նա պարկեց դանակի
տակ եւ այլեւս ոտքի չելաւ:

Նար-Դոսի իսկական անունը Միքայէլ Յովհաննիսեան էր:
Նա ծնւել էր 1867թ. մարտ 7ին Թիֆլիսի հայաբնակ Հաւլարար
թաղում: Մանր առեւտրականի զաւակ էր, կրտսեր որդին ընտա-
նիքում: Նախնական կրթութիւնը ստացել էր իրենց թաղի ծխա-
կան դպրոցում, ապա աւարտել էր երկդասեան քաղաքային ու-
սումնարանը եւ որոշ ժամանակ սովորել Քութայիսի նահանգի
Խոնիի ուսուցչական սեմինարիայում: 1884թ. մտնում է Թիֆլիսի
արհեստաւորաց դպրոցը, ուր մօտ երկու տարի սովորում է հե-
տագային բանաստեղծ Ալեքսանդր Մատուրեանի հետ, եւ դուրս
է գալիս առանց աւարտելու: Երկու պատանիները մտերմանում
են իրար: Երկուսն էլ արհեստից աւելի հետեւում են դրականու-
թեան, կարդում ու գրում են: Նար-Դոսի այս շրջանի գրական
փորձերից մէկը (թարգմանութիւն Լեւոնտովից) տպւում է
«Աղբիւր» մանկական հանդէսում 1886 թւին. երկու ինքնուրոյն
ոտանաւորներ լոյս են տեսնում Պետերբուրգի «Արաքս»ում, 1889
թւին: Դրանից առաջ, 1886թ., տպւում է նրա առաջին արձակը՝
«Ճշմարիտ Բարեկամ» պատմաւածքը եւ այնուհետեւ Նար-Դոսը բո-
լորովին հրաժարւում է ոտանաւորից:

90ական թւականների սկզբից Նար-Դոսը նւիրում է լրա-
գրութեան՝ կապւելով Սպ. Սպանդարեանի «Նոր Դար» պահա-
նողական թերթի հետ: Յայտնի գրող Ստ. Զօրեանը հետեւեալ
ձեւով է ներկայացնում Նար-Դոսի «Նոր Դար»ի մէջ մտնելը. —

«Նար-Դոսն ինքը պատմում էր, որ դեռ պատանի՝ յափըչ-

տակած է եղել Գրիգոր Արծրունու, այսինքն, «Մշակ»ի գաղա-
փարներով ու տակաւին 17 տարեկան իր «Ճշմարիտ Բարեկամ»
պատմաւածքը տարել է Արծրունուն: Սակայն, չարաթներ անցնե-
լուց յետոյ, ոչ միայն չեն տպել այդ գրաւածքը, այլ եւ վերա-
դարձրել են առանց կարգալու... Նար-Դոսն այդ պատմաւածքը
տանում է հայկական երկրորդ օրաթերթին՝ «Նոր Դար»ին: Այս-
տեղ երկու օրից յետոյ տպագրում են պատմաւածքը եւ պատանի
հեղինակին խրախուսում ամենաջերմ խօսքերով, որի հետեւանքը
լինում է այն, որ նա շարունակում է աշխատակցել այդ թերթին
եւ կապւել նրա հետ, սկզբում իրեւ սրբագրել, յետոյ արդէն
ոճաբան-քարտուղար:*) «Նոր Դար»ում էլ ստանում է Նար-Դոս
ծածկանունը:

«Նոր Դար»ում Նար-Դոսը մնաց տասը տարուց աւելի եւ
այս տարիներին նա գրեց իր լաւագոյն վէպիկները՝ «Աննա Սա-
րոյեան», «Տանտիրոջս Աղջիկը», «Սպանաւած Աղաւնին» եւ մի
շարք պատմաւածքներ, որոնք բոլորն էլ լոյս տեսան «Նոր Դար»ում:

Ապա նա երկու-երեք տարի պաշտօնավարեց Աստ. Երեցեա-
նի «Սուրհանդակ»ի խմբագրատանը, 1907-8ին քարտուղար եղաւ
Նոր-Նախիջևանի «Մեր Զայնը» թերթում, ի վերջոյ, անցաւ
ղաշնակցական թերթերին՝ «Հորիզոն», «Աշխատաւոր» եւ այլն
եւ երկար տարիներ պաշտօնավարեց նրանց մէջ իրեւ ոճաբան-
թարգմանիչ: Այս շրջանում նա արտադրեց իր «Պայքար» եւ
«Մահը» մեծ վէպերը:

Խորհրդայնացումից յետոյ, Նար-Դոսը պահւեց որպէս լրա-
գրական սրբագրիչ եւ թէեւ «Ժողովրդական գրող»ի տիտղոսը
ստացաւ, բայց նիւթապէս մնաց խիստ աննախանձելի վիճակում:
Օրւայ հացի խնդիրը նրան ժամանակ ու տրամադրութիւն չէր
թողնում լրջօրէն զբաղւելու գրական ստեղծագործութեամբ: «Թեր-
թի ամենօրեայ սրբագրութիւնն անչափ յոգնեցնում է ինձ եւ
ազատ ու հանգիստ ժամանակ չեմ գտնում», գանդատւում էր նա
1928թ. սեպտ. 15ին Ստ. Զօրեանին գրած նամակում: Նոյն վի-
ճակում էլ մնաց մինչեւ մահ: Նա շատ դժւարութեամբ համա-
կերպեց խորհրդային պայմաններին:


Խորհրդային շրջանում Նար-Դոսը աչքաուռ բաներ չուեց.
Երեսնում լոյս տեսաւ նրա «Մեր Թաղը»՝ հին, բայց վերա-
մշակած պատմաւածքների հատորը: Թիֆլիսի «Լուսաբաց» ժողո-
վածքում տպւեցին հատաւծներ նրա ծրագրած մեծ վէպից: Այս
վէպը նրան շատ էր զբաղեցնում: «Նոր վէպիս ծրագիրը ընդար-
ձակ է — գրում է նա Ստ. Զօրեանին 1928ին — պատերազմի
շրջանը, փետրւարը, հոկտեմբերը եւ այդ ամբողջ կատակիլովի
հետեւանքները — վախնում եմ տակից չկարողանամ դուրս
գալ»:

Եւ, իսկապէս, դուրս չեկաւ: Անշուշտ, պատճառը միայն
յոգնութիւնը կամ հիւանդութիւնը չէր. Նար-Դոսը իր ամբողջ

*) «Գր. Թերթ», 31 յուլ., 1933:

հոգեկան կառուցվածքով հին չըջանի մարդ էր, ազատ նախաձեռնութեան սովոր՝ շեշտած անհատականութիւն, ինչպէ՞ս կարող էր ստեղծագործել բանտային պայմաններում:

Բնաւորութեամբ Նար-Դոսը լուսկեաց, վերին աստիճանի համեստ, հասարակական ժխոր, իր անձի շուրջը խօսք ու զրոյց չսիրող մարդ էր: Նկարագրել այս գիծն էր պատճառ, որոշ չափով, որ նա միշտ էլ մնաց սուերի տակ: Մինչ նրանից չատ անտաղանդ գրողներ իրենց շուրջ աղմուկ էին հանում, Նար-Դոսը, կարծես ամաչում, ներողութիւն էր խնդրում իր գրւածքների համար, այն ինչ գրական-գեղարւեստական տեսակէտից նրա հետ քչերը կարող էին մրցել: Նար-Դոսը մեր առաջնակարգ արձակագիրներից մէկն է, հայ իրապաշտ, մարդկային գրականութեան ամենափայլուն ներկայացուցիչը: Նրա գրւածքների նիւթ է կաղմում հայ հասարակ դասերի և մտաւորականութեան կեանքը: Իր հակումներով ու համակրանքներով նա խոնարհների, ճնշւածների, անիրաւածների կողմն է: Բայց եւ այնպէս միտումը չէ նրա երկերում իշխողը, այլ արւեստի մտահոգութիւնը: Նա կամօքն Աստծոյ արւեստագէտ էր. քաղաքական-ընկերային խնդիրներին անմասնակից էր կեանքում, իսկ իր ստեղծագործութիւնների մէջ առնում էր սոսկ որպէս միջավայր: Նրա ուշադրութեան հիմնական առարկան մարդն էր, մարդկային ապրումները: Եւ որպէս այդպիսին, նա կապրի մեր գրականութեան ընծայած մնայուն արժէքներով:



ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

1

ՀԱՅՐԻԿԻ ՆԱՄԱԿԸ ԽՈՐԷՆ ԽՐԻՄԵԱՆԻՆ*)

Սիրելի Սորէն.

Ձեր երկու նամակէն ի դատ դեռ այլեւս ուրիշ նամակ չստացայ ձեզմէ. անշուշտ գրած էք, եւ նամակներդ կը թափառին ի ճանապարհ: Ո՛հ, որչափ հեռացանք իրարմէ, Լոնտոնից ի Վան եւ Վանից ի Լոնտոն ո՛րչափ դժւարին է խօսել իրարու հետ: Մենք մեր պաշտօնը որչափ կարելի էր աւարտեցինք Անգլիոյ մէջ. վախճունէն աւելի, լորտ, մարքիզ, դուքս եւ բարլամենթի նշանաւոր անդամներէն մարդիկ տեսանք. Հայոց խնդիրը ներկայացուցինք իրենց. մեծ մասն զմեզ յոյսերով եւ խոստումներով քաջալերեց: Բայց մեր խնդիրը պսակող գոնֆերանսն է, որ պիտի լինի այս օրերս եւ չգիտենք թէ ո՞ւր պիտի լինի:

Այս որոշումն երբ յայտնի լինի, Արծալ պէս պիտի հասնինք հոն. «գլի ուր իցէ գէշն անգր ժողովեացին արծալի»: Տեսցուք այդ մեծ, հզօր գիշակերները Հայոց արծալն համար կտոր մի մսիկ պիտի թողո՞ւն: Անցեալ օրը Լոնտոնի կենդանաբանական պարտէզը գնացինք եւ պատահեցանք այն ժամուն, երբ առիւծներու եւ վագերու կերակուրի ժամանակն էր: Գաղանաց մատակարար՝ ձեռքի կանգով միս բարձած բերաւ վանդակներու առաջը. հոն մարդ կը դարհուրէր դադանաց մոնչիւնէն:

Մի վանդակի մէջ երկու վագր կային, յորոց մին առաւել մեծ եւ կատաղի էր. երբ մատակարար երկաթի շիշով սորա բաժինը տւաւ երեք օխանոց կտոր մի միսը, դադանն այս միսն կատաղաբար ժանիքներով առաւ, եւ նստաւ վանդակի դիմաց, սկսեց մոմաւով միսն ուտել. երբ միւս ընկերին եւս բաժին պիտի տրւէր, սոսկալի կերպով կը կատաղէր մեծ դադան, այնպէս որ մատակարարն չի կրցաւ միւսին բաժին տալը. եւ այդ խեղճ տկար դադանն քաշւեցաւ մի քունջը, կարօտ աչքերով կը դիտէր միւսին վրա. գրկեալ ընկերին այս խեղճուկ կերպը մարդուն գու-

*) «Հին Թուրքեր» ընդհանուր վերնագրի տակ «Վէմ»ը պիտի ունենայ յատուկ բաժին, ուր, առանց ժամանակազրկան կարգի, պիտի ամփոփւին հին վաւերագրեր, նամակներ, գրական կտորներ, զանազան անցքերի վերաբերւող տեղեկագրեր, դիւանական թղթեր եւ այլն, որոնց հրապարակումը որեւէ չափով կարող է նպաստել հայ անցեալի պատմական եւ մշակութային երեւոյթների լուսաբանութեան:

զկարծիս իւրեանց յարտաքուստ, հնարէին զկերպ կերպ միջոցս դադարար՝ առ ի վրդովել եւ դաւաճանել զԺողովուրդն՝ բայց մինչ սա՝ տեղեկացաւ ամենից, եկն բարկութիւն Աստուածային ի վերայ անօրինաց՝ որոց զթիւ մեղաց արդէն լցեալ էր. ուստի յարեաւ հանդէս ընտանի պատերազմաց, վրէժառութեանց, կոտորուածոց եւ սպանութեանց:

Ի սակի այսպիսի մահուամբ պատուհասելոց դտաւ եւ Թադաւորն Գաղղիոյ. Ժողովուրդն ապա բարձրացեալ գոլով ի մէջ այնչափ անտանելի վրդովմանց, եւ գփորձն բերիական դիւրափոխ լինելոյ միապետական կառավարութեան իւրոյ յարդարութեմէ յանիրաւութիւն առեալ ունելով, ի գործ ետ գամեմայն զօրութիւն իւր եւ զհանձնարքս), յաղթեաց ամենայն ներքին եւ արտաքին խռնդոտաց, եւ հաստատեաց զՀասարակապետական տէրութիւն, ենթարկելով օրինաց եւ պարականգեալ՝ առ կառավարել ըստ նոցունց պատգամաց: Եւ արդէն ութն ամբ են՝ յորմէ հետէ ի ձեռն սոյն տեսակ կառավարութեան վարի Գաղղիական լայնածաւալ տէրութիւն, որ ունի աւելի քան զերեք հազար եւ զերկու հարիւր բիւր բնակիչս: Իսկ Լուտետիա կամ Փարիզ քաղաքն արքունական ունի աւելի քան զհարիւր բիւրս բնակչաց:

Ի բաց թողեալ իմ առ այժմս գայս ամենայն բան վերաբերեալ ի քաղաքական իրս՝ դառնամ առ նպատակ թղթոյս:

Եկեղեցականք Գաղղիոյ՝ այսինքն այնքիկ՝ որք սիրէին եւ ցանկային բարեկարգութեանց, զկնի հաստատութեան Հասարակապետութեան ի Ժողով գումարեցան ի քաղաքն Լուդետիա, ի Մայր եկեղեցին Աստուածածնայ: Սոյն Ժողով սկսեալ յամի Տեառն 1797ին, եւ ի 15էն Օգոստոսի աւուր վերափոխման կուսին՝ տեւեաց մինչ ի 12 Նոյեմբերի այնր տարւոյ, որ եւ բաղկացեալ ի բազում եպիսկոպոսաց եւ քահանայից: Ժողովս այս՝ զրեաց յայնժամ զգանազան նամակս առ Պապն առ ի ծանուցանել եւ խնդրել զհաւանութիւն նորուն եւս. որովհետեւ նպատակ Ժողովոյն էր շինութիւն եկեղեցւոյ եւ օգուտն հաւատացելոց. բայց այս ամենայն բանք ոչ գոլով նպաստաւորք առ տարածումն ինքնահնար եւ իւրապահանջ հեղինակութեան Հոռոմայ, եւ ոչ առ շահ եւ օգուտ իւր եւ համակցաց իւրոց, վասն որոյ սկսան սոքա բաց յայլ ազգի ազգի զրպարտանաց, հերձուածողս կոչել զեկեղեցին Գաղղիոյ՝ ըստ օրինակի զոր արարին անիրաւապէս Ազգին մերոյ լուսաւորչադաւանի եւ եւս: Եւ այս ինչ լուր անհիմն եւ անստոյգ տարածեալ եղեւ մինչեւ առ ազգս օտարս եւ հեռաւորս. բայց որ սիրէ զճշմարտութիւն եւ դատէ աննախանձ սրտիւ, չկարէ զայսպիսի ստորագրութիւնս առադրել եկեղեցւոյն Գաղղիոյ, որոյ դաւանութիւն հիմնեալ է ի վերայ Աւետարանական եւ Առաքելական բանից, եւ համաձայն վարդապետութեանց նախնի սուրբ Ժողովոց եւ Հարց:

*) Այսպէս է այս ստորագրուած նախադասութիւնը բնաղբին մէջ:

Ժողովս այս՝ յետ կարգելոյ զբարեկարգութիւնս ի ձեռն բազում կանոնաց առ կառավարումն եկեղեցւոյն իւրոյ, գրեալ առ դանազան ազգս եւ եկեղեցիս առ ի առնել զեղբայրական միութիւնս, եւ ցանկայ զի ամենայն ազգք՝ ի ծագաց արեւու մինչեւ ի մուսս, միոյն Քրիստոսի երկրպագուք, միաբանութիւն կայցին ընդ միմեանս. եւ ամենայն Հովուապետք անկախք ի միմեանց եւ միարան ընդ իրեարս՝ հովուեացին ըստ տարազու նախնի եկեղեցեացն Ասիոյ, Ափրիկոյ եւ Եւրոպիոյ, զսեպհական հօտս յանձնեալս ինքեանց հաւասար իշխանութեամբ՝ ի միեւնոյն ծայրագոյն Հովուապետէն Քրիստոսէ:

Ուստի եւ մին յեպիսկոպոսաց Ժողովոյն՝ այն է Հէնրիկոս Կրէկուար եպիսկոպոս Պլուա քաղաքին Գաղղիոյ*), ծանօթացեալ ընդ իս՝ յայտնեաց զցանկացեալն նպատակ Ժողովոյն, եւ խնդրեաց յինէն՝ գրել ի զիմաց նորուն առ Հոգեւոր Տէրութիւնդ, առ ի առաջարկել Բարձրութեանդ զգլխաւորութիւն զեղբայրական հաղորդակցութիւնն ունելոյ, եւ առ ի գիտել զտրամադրութիւն Հոգեւոր Հօրդ:

Ի դանազան նուազս՝ զերկար խօսակցութիւնս կալայ ընդ սոյն եպիսկոպոսի ի վերայ այսց իրաց, յորս զարժանիսն յիշատակաց՝ ամենայն գովութեամբ խօսեցայ զԱրժանաժառանգ Յաջորդաց Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի. նոյնպէս եւ զաղնիւ Ազգէն մերմէ Հայկազնեայցս ըստ պարտին եւ ըստ պատշաճին. եւ ցուցանելով եւս թէ՛ սեպհական բարք է ազգին մերում ունել զսէր, զխաղաղութիւն եւ զմիաբանութիւն ընդ ամենայն ազգինս, մանաւանդ ընդ Գաղղիացիս, ընդ որս ի սկզբանէ Մետասաներորդ դարուն մինչ ի վախճան Չորեքտասաներորդին՝ կալաք զազգի ազգի առնչութիւնս, որպէս եւ պատմութիւնք վկայեն, որպէս եւ տապան վերջին Թադաւորին մերոյ Լեւոնի վեցերորդին՝ փախչելոյ ի ծոց Գաղղիոյ, հանգուցելոյ ի Լուտետիա, եւ Թաղելոյ յեկեղեցին Կելեստինեանց յամի Տեառն 1393ին, մինչեւ ցայսօր ժամանակի կենդանի վկայութեամբ ցուցանէ թէ մեծ էր առնչութիւն մեր՝ զոր ունէաք ընդ Գաղղիոյ առ այնոսիկ ժամանակս:

Հուսկ յետոյ պատուհասք ի պատիժ մեղաց ի վերայ մեր գալով, եւ լինելով ենթարկեալ լծոց անհաւատից, գոլով աշխարհ մեր Հայաստան կարի հեռացեալ ի Գաղղիոյ, եւ չունենալով մեր եւս զերթեկեկութիւն սեպհական նաւարկութեանց, եւ յայնչապէս զանազան տեսակ արդելմանց սակս՝ չեղեւ կարելի յարատեւել զերթեկեկութիւն միաբանական հաստատեալ ի մէջ մեր:

Բայց այսու ամենայնիւ՝ արժանաժառանգ Յաջորդք Սրբոյ

*) Ամբի Կրէկուար Պլուայի եպիսկոպոս (1750—1830) Փրանսական մեծ յեղափոխութեան շրջանի ականաւոր հոգեւորականներէն մէկը, որ անցնելով Ժողովրդի եւ յեղափոխութեան կողմը՝ ընդդէմ արքայի եւ արքայականներու՝ աչքի զարնող գեր կատարեց իրեն բարձրագոյն Ժողովներու եւ գլխական կաճառներու անդամ: ԽՄԲ.

լական օրհնութիւն Սրբոյ Աթոռոյն Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի:

Մնամ Ամենաերջանիկ Տեառնդ Հոգեւորի
խոնարհազոյն ծառայ


ՅԱԿՈՎԲ ԶՐՊԵՏԵԱՆ Ի ՏԱՆԷ ՇԱՀԱՆԵԱՆՑ:

Գրեցաւ ի Լուտետիա

Յամի Տեառն 1800 եւ Յունվարի 28ին:

Ուղեւորութիւն նամակաց առ իս՝ է ըստ այսմ օրինակի.—
ի Փարէզ, ի Գրքարանն Ազգին Գաղղիոյ, եւ ի ձեռս Յակովբայ
Զրպետեան, վարժապետ Հայկազեան լեզուի: Իսկ Գաղղիայի
լեզուաւ աշակէս... (կը սլակի Քրանսերէն Հասցէն):

Նամակը այսպիսի վերագրաւ, հանդերձ երկատեսակ բար-
բառօք գրեալը եւ յանձնեալ առ՝ ղեկսպանն Պրուսիոյ եւ կամ Դա-
նիոյ որ ի Կոստանտնուպօլիս, ամենայն ապահովութեամբ հա-
սանել ունին աստ առ իս:



ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ ԵՒ
ԶԻՆԱԿԱՆ ՆԿԱՐԶՈՒԹԻՒՆՆԸ

ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Զինական նկարչութեան ցուցահան-
դէսին առիւ, որ տեղի ունեցաւ անցեալ
մայիս եւ յունիս ամիսներուն Փարիզի
մէջ, պ. Բօլ վայրի կը գրէ. «Նրկար
ատեն, եւրոպա չինական արեստը նը-
կատեց իբր լոկ հետաքրքրական բան
մը, տարօրինակ յղացմանց արդիւնք
մը, հրէշութիւն մը, առաւել կամ
նուազ հնարամիտ եւ բազմաթիւ:
Հետագային, անոր մէջ գտաւ մեծագոյն
ռեի յատկութիւններ: Մեր օրերուն,
այս արեստը կը գնահատուի իբր հա-
ւասար ամենէն բարձր արեստներուն
եւ ընդհանրապէս կընդունուի թէ նորա-
գոյն եւ ամենայնպէս բանաստեղ-
ծութիւնը կը միացնէ ամենէն գիտնա-
կան թեքնիքին տրամադրած միջոցնե-
րուն»:

Զինական արեստին եւրոպական
գնահատութեան յաջորդական փոփոխումն
այս քուտը, իր առաջին մասին մէջ,
բոլորովին համապատասխան չէ սա-
կայն իրականութեան:

Միջին դարուն, չինական մետաքսայ
հիւսուածեղէնները, յախնապակիները եւ
անօրները մեծաքանակ կը ներածուէին
իսլամական աշխարհին մայրաքաղաք-
ներուն մէջ, եւ իսլամական արեստի
միջոցով, ազդեցին եւրոպայի վրա:
Բիզանդիոնի բարձր դասակարգերը եւս
կը գնահատէին եւ կը գործածէին չինա-
կան արեստին գանգաւ արտադրու-
թիւնները: Բ. եւ Ժ. դարերուն, Զի-
նացոց արեստը եւ մասնաւորապէս

չինական նկարչութիւնը ծանօթ էին ա-
րար վաճառականներուն եւ անոնց գնա-
հատման առարկայ: 916ին Ապու Չայի
Հասան կը գրէ թէ՝ «Զինացիները ուրիշ
ոեւէ ազգէ աւելի ճարտար են արեստ-
ներու եւ գլխաւորաբար նկարչութեան
մէջ»: Մարթո Բոլօ (Ժ. Դար) կը հի-
ւանար չինական նկարներուն վրա եւ Ժ. Դարուն,
չինական արեստին ազդեցու-
թիւնը կը տեսնուի Haincelin de
Haguenaui ի մանրանկարներուն եւ
Pisanello ի նկարներուն վրա: Այս
ազդեցութիւնը նոյնքան զգալի է ստե-
նական նկարչութեան մէջ:

Ինչ որ մասնաւորապէս հետաքրքրա-
կան է մեզի համար, հայ արքայական
իշխանի մը՝ Հեքում պատմիչի գնահա-
տութիւնն է չինական արեստին մասին:
Հեքում՝ իշխան Կոնիկոսի (Ժ. Դ. Ժ. Դար),
որ մինչեւ Զինաստան ճամբոր-
դութիւն մը կատարեց Ժ. Դարու վեր-
ջերը եւ յետոյ կրօնաւոր ձեռնադրե-
ցաւ, կընկէս Ե. պապին հրամանով,
1307ին, Բուարիէի մէջ (Ֆրանսա) գրի
առնել տաւ Արեւելի գանգաւ երկիր-
ներու եւ ժողովուրդներու մասին իր
ծանօթութիւնները:

Խօսելով Զինացոց մասին, Հեքում
կ'ըսէ. «Այս երկրին մարդիկը շատ հնա-
րամիտ են եւ օծուած մեծ սրամտու-
թեամբ, եւ ամէն արեստի եւ ամէն
գիտութեան մէջ կարիամարիեն միւս
բոլոր ազգերը: Կրսեն թէ միայն իրենք
է որ երկու աշխով կը տեսնեն, ոմանք
(բնագիրներէն ոմանց մէջ՝ լատիները)
մէկ՝ աշխով կը տեսնեն, իսկ միւս
բոլոր ազգերը կոյր են, եւ այս պատ-
ճառաւ տիմար կը նկատեն գանգաւ: Եւ
արդարեւ, այնքան աշխատեալ եւ հրա-
շագեղ բաներ կան այս երկրին մէջ եւ

այնքան նրբաբան որ թերեւս ոչ ոք հասկում նա անցաւ Մոսկւա, ապա կրնայ անոնց հետ բաղդատուել այս տեսակ բաներու մէջ»։*)

Հեքումի և Մարֆո Բոլոյի վկայութիւնները չինական արւեստի մասին քիւնենքը չինական արւեստը իբր ամենա-բարձր եւ ամենամուրը կը գնահատուէր անեւ Ներոպայի մէջ, որ արդէն անոր ծանօթացած էր մասամբ իսլամական աշխարհին միջոցաւ։

Պետերբուրգ, ուր տարիներ շարունակ ուսեց նկարչութիւն եւ ֆանդակագործութիւն։ Սակայն, չգոհանալով ուսական դպրոցներով՝ մեկնեց Փարիզ եւ մտաւ Գեղարւեստից վարժարանը՝ աշակերտելով Ֆալգիէրին։ Եւ ինսնական քաղաքներէ վերջերից նա արդէն ըստ կըսեց երեւալ ցուցահանդէսներում՝ իր վրա հրաւիրելով արւեստաւէր հասարակութեան ուշադրութիւնը։ Այնուհետեւ նա արտադրեց մի շարք արւեստի տեսակետից արժէքաւոր գործեր։

ԽԱՅԱՏԱՆԻ ԱՐՈՎԵԱՆԻ ԱՐՁԱՆԸ

Յուլիս Յին, տեղի է ունեցել բացումը Խաչատուր Արովեանի արձանի, որ կանգնեցած է Երեւանի Արովեան նոր հրապարակի վրա։ Հինգերորդ արձանն է այս Հայաստանի մայրաքաղաքում։ Միւս չորսը պատկանում են կոմունիստ գործիչներին — Սպանդարեան, Ս. Շահումեան, Զափարիւհէ, Ազիզբեգով։

Խ. Արովեանի այս արձանը ֆանդակագործ Ա. Տէր-Մարութեանի գործն է։

Անդրէաս Տէր-Մարութեանը հայ սակաւաբիւ ֆանդակագործների շարքում աչքի ընկնող տեղ է գրաւում։ Նա ծնել էր Երեւանում 1875 թւին։ Նախնական կրթութիւնը ստանալով տեղական գիմնազիայում, եւ իր մէջ զգալով արւեստագէտի ձիրքը՝ 19 տարեկան արւեստի նախարարութեան որոշման՝

*) Հէթումի գիրքը քանիցս հրատարակւած է զանազան լեզուներով։ Հայերէն զբաւր թարգմանութիւն մը հրատարակւած է 1842ին, Վենետիկ, Հ. Մկրտիչ Աւգերեան։ Վերելի հատւածը թարգմանւած է Omont ի հրատարակած Փրանսերէն բնագրին հետեւողութեամբ։ Արւեստի պատմութեան տեսակէտով, Հէթումի վկայութեան արժէքին մասին տեսնել՝

Vermeylier. — «Le livre de la Fleur des Hystoires de la Terre de Orient» et «Le Problème des influences orientales au Moyen Age»։

G. Soulier. — «Le Moine Arménien Héthoum et les Apports de l'Extrême Orient (R. F. E. IX. 1)»։

Արովեանի արձանը պիտի կանգնեցուէր Երեւանի կենտրոնական հրապարակում, Արովեան փողոցի գլխին։ Դժբախտաբար, 1920թ. աշնան եւ ձմեռայ դեպքերը այս ծրագրի իրականացման էլ արգելի եղան։ Արովեանի արձանը մնաց Փարիզում, մինչեւ որ Հայաստանի Հանրապետութեան Պատկերասրահները հնարաւորութիւն ստեղծեց. ուղարկելու Երեւան։ Եւ այնուհետեւ տարիներ շարունակ Արովեանի գաղաքական արձանը մնաց փակւած Երեւանի պահեստներում։ Ըստ երեւոյթի, խորհրդային իշխանութիւնը տատանում էր Արովեանի պէս «հակաշակութային» գործչի արձանը կանգնեցնելու Զափարիւհէների եւ Ազիզբեգովների կողմէն։

Ահա, ուրեմն, Խ. Արովեանի ա՛յս ֆանդակագործ Ա. Տէր-Մարութեանի պատրաստած եւ Հ. Հ. Պատկերասրահներում ներառւած արձանն է կանգնեցած Երեւանում, յուլիս Յին։ Սրտանց ուրախ եմք, որ երկար դեգերումներից յետոյ Տէր-Մարութեանի գործը գտել է իր տեղը, որ Երեւանը, վերջապէս, զարդարւել է Արովեանի արձանով — առաջին մնայուն յուշարձանը կանգնեցւած Հայաստանի մայրաքաղաքում։

ՌՈՒՍԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ 75ԱՄԵԱԿԸ

Երեւանի «Գրական Թերթ»ը հաղորդում է, որ 1934թ. յուն. 27ին Հայաստանում տօնելու է ռուսահայ բատրոնի 75ամեայ յորելեանը։

Մինչեւ այժմ ռուսահայ բատրոնի երկու յորելեանական տօնակատարութիւն է տեղի ունեցել՝ 35 ամեակը 1893 թւին եւ 50 ամեակը՝ 1908ին։ Այդ ժեշտ է արտասահմանում եւս վայելուչ երկու յորելեանների ծամանակ էլ արծարծւել եւ վէճի առարկայ է եղել այն կանգնեցնելու արտադրութեամբ տօնել այդ բաժարը, թէ ե՞րբ է ռուսահայ բատրոնի կանգնեցնելու արտադրութեամբ տօնել այդ բաժարը, թէ ե՞րբ է ռուսահայ բատրոնի կանգնեցնելու արտադրութեամբ տօնել այդ բաժարը, թէ ե՞րբ է ռուսահայ բատրոնի կանգնեցնելու արտադրութեամբ տօնել այդ բաժարը։

Վ. Վարդանեանը Գրական Թերթում (№ 10) պնդում է, թէ ռուսահայ բատրոնի սկիզբը պէտք է համարել վերջին բաժարը, այսինքն 27 յուն. 1859 թւին, երբ սիրողների մի խումբ խաղաց «Արիստակէս» ողբերգութիւնը եւ «Վո՛յ իմ կորած յիսուն ոսկին» գաւէշը։ Նա վկայութեան է բերում Մ. Նալբանդեանի եւ Զ. Մսերեանի գրածները «Հիսկիսա-փայլ»ում եւ «Ճոռֆաղ»ում, որով ծամանակից այդ հեղինակները «Արիստակէս»ի ներկայացումը համարում են առաջին ներկայացում եւ որակում են որպէս արտասովոր մի դէպք Մոսկւայի հայ գաղութի կեանքում։

«Արիստակէս»ի ներկայացումից յետոյ, նոյն 1859 թւին, արդէն Թիֆլիսում տեղի ունեցան մի շարք ուրիշ ներկայացումներ, նոյնպէս սիրողների կողմից, որոնք մեծապէս նպաստեցին ռուսահայ բատրոնի զարգացման։

Վարդանեանը, դժբախտաբար, ուրիշ փաստ չի բերում, իսկ միայն Նալբանդեանի եւ Մսերեանի գրութիւնները բաւական չեն կարող նկատուել։ Զե՛ որ մի ուրիշ տեղեկութեան համաձայն հայկական առաջին ներկայացումը եղել է 1858 թւին, երբ խաղացել է «Հաջի Սուլէյման» բատերախաղը։ Անհրաժեշտ է աւելի լուրջ եւ փաստական փնտրել, ցոյց տալու համար ռուսահայ բատրոնի սկզբնաւորութիւնը։ Պէտք է յուսալ, որ յորելեանի առթիւ Հայաստանի մտաւորականութիւնը հնարաւորութիւն կունենայ պարզելու այդ խրե-դիրը։

Ռուսահայ բատրոնի 75ամեակը այնքան նշանակալից երեւոյթ է հայ մշակութիւնի եւ տեղի ունեցել՝ 35 ամեակը 1893 թւին եւ 50 ամեակը՝ 1908ին։ Այդ ժեշտ է արտասահմանում եւս վայելուչ երկու յորելեանների ծամանակ էլ արծարծւել եւ վէճի առարկայ է եղել այն կանգնեցնելու արտադրութեամբ տօնել այդ բաժարը, թէ ե՞րբ է ռուսահայ բատրոնի կանգնեցնելու արտադրութեամբ տօնել այդ բաժարը, թէ ե՞րբ է ռուսահայ բատրոնի կանգնեցնելու արտադրութեամբ տօնել այդ բաժարը։

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՍՈՒԼ

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ

Հայ մամուլը, ինչպես եւ բովանդակ հայ կեանքը, բաժանում է երկու հատածի — Հայաստանի եւ արտասահմանի: Հայաստանի մամուլը բոլորովին կտրւած է արտասահմանից. արտասահմանի մամուլը արգելւած է Հայաստանում: Ի՞նչ պատկեր է ներկայացնում հայ մամուլը այնտեղ եւ այստեղ:

ՀԱՅՔԱՍՏԱՆՈՒՄ. — Ըստ «Խորհրդ. Հայաստան» (5 մայիս) հաղորդած պաշտօնական քերի, 1932թ. վերջը Հայաստանում հրատարակում էին —

- ա) *Կենտրոնական թերթեր*
 - 3 օրաթերթ,
 - 3 երկօրեայ թերթ,
 - 2 վեցօրեայ թերթ,
 - 2 տասնօրեայ թերթ,

Ընդամենը 10 ամուսն քերթ, որից մէկը բուրքերէն եւ մէկը քրդերէն: Միջին տիրածը՝ 89,700:

բ) *Շրջանային թերթեր*

- 2 հնգօրեայ թերթ՝ անասնապահական շրջաններում,
- 3 հնգօրեայ թերթ՝ արդիւնաբերական շրջաններում,
- 5 հնգօրեայ թերթ՝ բամբակացան շրջաններում,
- 3 հնգօրեայ թերթ՝ հացահատիկային, այգեգործական եւ այլ շրջաններում:

Ընդամենը 13 ամուսն շրջանային թերթ, որից երկուսը բուրքերէն, մէկը ռուսերէն-հայերէն: Միջին տիրածը՝ 29,200:

Այսպիսով, 1932թ. Հայաստանում

լոյս է տեսել 29 ամուսն *թերթ*, որից հինգը օտար լեզուներով:

Բացի այդ, 1932թ. Հայաստանում հրատարակւել է 16 ամուսն *պարբերականներ*, որոնցից 12 ամսագիր եւ 4 երկշաբաթաբերթ՝ 32,099 միջին տիրածով: «Խորհրդ. Հայաստան» (5 մայիս) ասելով՝ «ամենից բարձր տիրածը 2000-2200ից աւելի չի եղել... Տարւայ ընթացքում համարեա բոլոր ժողովուրդները (պարբերականները) լոյս են տեսնել անկանոն, մեծ ուշացումներով եւ միացեալ համարներով: Եղել են դէպքեր, երբ 4-5 ամիս ընդհատումից յետոյ ժուրնալը լոյս է տեսել միացեալ համարով, շատ անգամ այժմէութիւն կորցրած բովանդակութեամբ: Առժողովուստի օրգան «Առողջապահական ֆրոնտում» *Երկշաբաթաթերթը* 1932թ. ընթացքում 24 համարի փոխարէն լոյս է տեսել միայն *Երկու անգամ* հինգ միացեալ համարով, կամ տարեկան 60 մամուլի փոխարէն՝ միայն 9 մամուլ»:

1933 քականից Հայաստանի մամուլը մտել է «երկրորդ հնգամեակ»ի շրջանը: Կազմւած որակական ու քանակական ծրագրով «նախատեսւում է 8 տիպի թերթ — կենտրոնական, համապետական, քաղաքային, շրջանային, գործարանային, կոլտնտեսային, խորհրդային, տրամսպորտի եւ ՄԿ (Մեքենա-Տրակտորային) կայանի»: Ըստ տարիների Հայաստանում 1933թ. պիտի լոյս տեսնէ 83 ամուսն թերթ, 1934ին՝ 126 ամուսն, 1935ին՝ 166 ամուսն, 1936ին՝ 212 ամուսն: Միջին տիրածը նոյն տարիներին պէտք է լինի՝ 263,5 հազար, 403 հազ., 565 հազ., 765 հազ. եւ 904 հազար:



ՆԱՐ-ԳՈՍ

Փաստորեն, սակայն, 1933թ. առաջին եռամսեակում Հայաստանում հրատարակում էին.—

- ա) *Կենտրոնական թերթեր*
 5 օրաթերթ,
 2 հնգօրեայ թերթ,
 1 եռօրեայ թերթ,
 3 տասնօրեայ թերթ:
 Ընդամենը 11 կենտրոնական թերթ:
 բ) *Քաղաքային թերթեր*.
 2 օրաթերթ, որից մեկը Լենինականում:
 գ) *Շրջանային թերթեր*.
 2 երկօրեայ թերթ,
 16 հնգօրեայ թերթ
 Ընդամենը 18 շրջանային թերթ:
 դ) *Գործարանային թերթեր*՝ 2 հատ:
 ե) *ՄՏԿ-ի թերթեր*՝ 8 հատ:

Ընդամենը, ուրեմն, 1933թ. առաջին եռամսեակում Հայաստանի սահմաններում լոյս էր տեսնում 41 *անուն թերթ* 155,850 *միլիոն տիրաժույ*:

Այլև, ամենամ փոփոխություններով, շարունակում էին հրատարակել 1932ի հանդէսներն ու պարբերականները, որով ուրեմն ընդհանուր գումարը կը լինի 57 *անուն մաս* 190,000 տիրաժույ:

Ինչպէ՞ս են տարածում այս թերթերը: Նոյն «հորհրդ. Հայաստան»ը հաստատում է, որ «թերթերի տարածման գործը շատ վատ հիմքերի վրա է դրած: «Մայիսյան շաբաթ»-ի ապարատը մամուլի տարածման գործը բողբ է ինքնահոսի, կազմակերպած պլանային աշխատանքի աչք ուղղութեամբ չի կատարում: Շատ վատ է առաջնացրել թէ քաղաքներում եւ թէ շրջաններում: Չափազանցություն չի լինի, եթէ ասենք, որ մեր հեռուոր գիւղերը երբեմն շաբաթներով թերթի երես չեն տեսնում: Թերթը հասնում է շրջանային կենտրոն, իսկ դրանից էն կողմը... մտածող չկայ»:

Կարեւորութեան տեսակէտից, Հայաստանի թերթերի շարքում, առաջին տեղն է զբաղում «հորհրդային Հայաստան» օրաթերթը, որ Հայկական կենտրոնի, երկուսի եւ Հայկական կոմի պաշտօնաթերթն է: Գաւառական թերթերից կարեւոր է Լենինականի «Բանուր»ը: Մեծ մնայուն ամսագիր չկայ: 10 տարւայ ընթացքում, մեծ ընդհատումներով, իրար յաջորդեցին «Նորք», «Նոր Ուղի», «Նոյեմբեր», «Վերելք»: Այսօր հաշիւ առնելիք լուրջ ամսագիր գոյութիւն չունի:

Առհասարակ, ընդհանուր ձգտումն է մասնագիտացումը. թէ՛ թերթերը եւ թէ պարբերականները բաժանում են ըստ մասնագիտությունների, որոնց հրատարակությունը նոյնպէս խիստ անկանոն է:

Զարեհ է մտածալ, որ Հայաստանում ամէն ինչ պետական է եւ զբաղում է կոմունիստական կուսակցության եւ կառավարության ձեռքին: Մամուլի ազատութիւն չկայ. լրագրողն ու գրողը կատարում են իշխանութեան կամքը: Իշխանութեան կազմը եւ քաղաքականութիւնը շուտ-շուտ փոխում են, որով փոխում է եւ մամուլի ուղղութիւնն ու դեկլարութիւնը: Ազատ հրապարակագրութիւն գոյութիւն չունի. այդ պատճառով Հայաստանում միևնույն աշխարհի ստեղծել մեկ հատիկ աչքի ընկնող հրապարակագիր կամ խմբագիր:

Հայաստանից դուրս, հորհրդային Միութեան ուրիշ մասերում հրատարակող հայ մամուլը թէ՛ քաղաքում եւ թէ գրական առանձին արժէք չի ներկայացնում: Թիֆլիսում լոյս է տեսնում մի օրաթերթ՝ «Պրոլետար», «Գրական Արշալ» յաւելածով: Բագում՝ «Կոմունիստ», Նոր Նախիջեւանում՝ «Մուրն եւ Մանգաղ» (եռօրեայ), Թիֆլիսում՝ «Արշալ» պարբերականը: Այս թերթերը ընդհանուր հայ կենտրոն չեն զբաղում:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ. — Արտասահմանի հայ մամուլի վիճակագրությունը գոյություն ունի, որով շատ դժուար է նրա մասին ամբողջական գաղափար տալ: Ստորև բերված բերը մտաւոր են:

Աւստրալիայի բացառութեամբ մնացեալ բոլոր մայրցամաքներում այսօր գոյութիւն ունի հայ մամուլ: Հայերէն թերթեր ու պարբերականներ լոյս են տեսնում Ամերիկայի Միացեալ Նահանգներում, Արժանոքներում, Ֆրանսայում, Իտալիայում, Աւստրիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Յունաստանում, Թիւրքիայում, Եգիպտոսում, Միւրիայում, Պաղեստինում, Պարսկաստանում եւ Հնդկաստանում: Այդ թերթերն ու պարբերականները, բնական տեսակէտից, ներկայացնում են հետեւեալ պատկերը.

13 օրաթերթ՝ շուրջ 25,000 սպառումով	
3 երկօրեայ՝ ,, 3,000 ,,	
3 եօրեայ՝ ,, 2,000 ,,	
18 շաբաթաթ. ,, 16,000 ,,	
5 երկշաբաթ. ,, 3,000 ,,	
24 ամսագիր ,, 20,000 ,,	
2 երկամսեայ ,, 1,000 ,,	

Ընդամենը, ուրեմն, 68 անուն թերթ ու պարբերական համագումար շուրջ 70,000 սպառումով:

Այս բերի մէջ չեն մտնում ասույի պէս երեւոյող եւ անհետացող կամ գոտ տեղական մանր-մունր թերթերը, ոչ էլ Հայրենակցական Միութիւնների պատահական հրատարակութիւնները, ինչպէս «Արգէտս», «Կիւրիին Յուշ», «Գեղմանիկ», «Նոր Արարիկ», «Նոր Թոմարգա», «Համբն» եւ այլն: Հաշւի չեն առնւած նաեւ անգլիերէն, ֆրանսերէն, լեհերէն, թիւրքերէն եւ ուրիշ լեզուներով հրատարակող հայերէն թերթերը: Այս կարգի հրատարակութիւններն էլ եթէ աւելացնենք, արտասահմանի հայ մամուլի տարածումը կարող է հաշուել ոչ պակաս քան 75 հազար, ինչ որ պատկառելի թիւ է, եթէ աչքի առաջ ունենանք հայկական

գանգաձների քանակը, նրանց ցան ու ցիր վիճակը, շատերի հայ իրականութիւնից կտրւած լինելը, նոր սերնդի աստիճանական ուժացումը, տնտեսական անպաստ պայմանները եւ այլն:

Հետաքրքրական է մի փոքրիկ համեմատութիւն Հայաստանի եւ արտասահմանի մամուլի:

Եթէ Հայաստանի մամուլի վրա աւելացնենք նաեւ հորերդ. Միութեան միւս մասերում հրատարակող հայ թերթերն ու պարբերականները, կը տեսնենք, որ ամբողջ Խորհրդ. Միութեան սահմաններում այսօր հրատարակւում է 62 անուն թերթ մօտ 190,000 միջին սպառումով: Այսինքն, եթէ դեկտեմբերին խորհրդային վիճակագրութեամբ եւ ի. Միութեան հայերի թիւը ընդունենք 1,700,000 հոգի, ապա կունենանք մօտ 27,500 հոգուն մէկ ահուհ հրատարակութիւն եւ մօտ 9 հոգուն 1 համար թերթ:

Միւս կողմից, եթէ ընդունենք, որ արտասահմանի հայերի թիւը 700,000 է, եւ դրանց վրա բաժանենք 68 անուն հրատարակութիւնները՝ 75,000 սպառումով, շուրջ 10,300 հոգուն կընկնի մէկ անուն հրատարակութիւն եւ մօտ 9 հոգուն 1 համար թերթ:


Իրական վիճակը աւելի պարզ դարձնելու համար, անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ, որ Խորհրդ. Միութեան սահմաններում մամուլը պետական է եւ թերթերի ստացումը պարտադիր է պետական, հանրային եւ տնտեսական բոլոր կազմակերպութիւնների, բոլոր կոմունիստների ու կոմբիւտների եւ համարեա բոլոր պաշտօնեաների համար: Որով՝ սպառում դեռ չի նշանակում ընթերցանութիւն. էջմիածնի «Արարատ» պաշտօնաթերթն էլ սպառում էր հազարներով, բայց քանի՞ կարդացող ունէր:

Միւս կողմից, խորհրդային վիճակագրութիւնը առնում է ախրաժը, այսինքն՝ տպագրութեան քանակը, մինչ-

դեռ արտասահմանի հրատարակութիւն-մասնաւոր կազմակերպութիւնների նա-ների համար մենք ցոյց տւինք սպառ-խաճեղճութեամբ եւ նիւթական օժանման թիւը: Տիրաժ դեռ չի նշանակում դակութեամբ:

Չպէտք է անտեսել եւ մի ուրիշ խարեւոր հանգամանք. Հայաստանում կարդացու մեն միայն հայերէն եւ շատ աննշան քանակութեամբ ռուսերէն թերթեր, մինչդեռ արտասահմանի հայը հայերէնից ոչ պակաս քանակութեամբ կարդում է եւ օտար լեզուով հրատարակութիւններ:

Վերջապէս, ի նկատի պէտք է ունենալ եւ այն փաստը, որ Խորհրդ. Միութեան մէջ մամուլը պահւում է պետական միջոցներով. կառավարութիւնն է հոգում նրա ծախսը: Արտասահմանում, բացի Հօկի հրատարակութիւններից, որոնք սնւում են խորհրդային իշխանութեան գանձարանից, հայ մամուլը ապ-սպառում է եւ օտար լեզուով հրատարակութիւնները, որոնք սնւում են խորհրդային վիճակի մասին է: Որակի հար-ցը այս տեսութեան սահմաններից դուրս է:



ԳՐԱՆՈՍԱԿԱՆ

ԼՈՒԹԵՐ, «ՈՒՐՓԱՅԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ», Հրատ. Սիւրիոյ Ուրֆայի Հայր. Միութեան, 1933, Պէյրութ:

Մեծ եղեռնին նւիրած նկարագրական կամ դեղարւեստական գրականութիւնը խիստ աղքատ է: Սակաւաթիւ նման երկերէն, աւելի կամ պակաս արժէք ունին Գաբրիէանի, Օտեանի, Անտոնեանի եւ Պալագեանի յուշերը, որոնք սարսուռացող մանրամասնութիւններով կը պատկերացնեն դէպի մարդկային սպանդանոց քշող հազար-հազարաւոր մեր հարազատներու կրած տառապանքը:

Հրապարակ ելած գրականութիւնը խոշոր բաց մը թողած է թրքահայ ժողովրդի անցուցած զարհուրելի այդ շրջանի նկատմամբ: Մեր ժողովուրդը ամէն տեղ անբան ու երկչոտ հօտերու նման անմոռն է չէ դացած մեռնելու, այլ դիտցած է նաեւ կատաղի ու յամառ դիմադրութիւն ցուցնել, հերոսներ հրապարակ հանել, որոնք առասպելական յանդիմութեամբ եւ տոկունութեամբ բոլորէին հորդաններ սարսափին մէջ պահած են ի բազմութիւնները յուսահատ վճռականութեամբ, կեանքի եւ մահուան կուրի առաջնորդած:

Այս տեսակէտէն ուշադրութեան արժանի են Շապին-Գարահիսարի եւ Վանի հերոսամարտներին նւիրած առանձին եւ «Հայրենիք» ամսագրի մէջ երեւցած նկարագրութիւնները: Շատ թերի են Սուէտիոյ, Մուշ-Սասունի, Զէյթունի, Սերաստիոյ եւ այլ վայրերու մէջ տեղի ունեցած — մեծ կամ փոքր կռիւներու պատկերները:

Եւ որքա՞ն կրթիչ են նման երկերը. որքա՞ն կենսական են անոնք նոր սերունդներուն ներշնչելու սէր ու յարգանք դէպի իրենց նորադոյն պատմութիւնը, հպարտութիւն ու կորով՝ պայքարելու իրենց ցեղային արժէքներու եւ գոյութեան պահպանութեան համար:

Լութերի «Ուրֆայի Հերոսամարտը» խիստ արժէքաւոր տեղ պիտի գրաւէ այս կարգի գրականութեան մէջ:

Լութեր իր առաջադրութեան կը մօտենայ հետեւեալ յառաջարանով. —

« Բաւական չէ խօսիլ ու պատմել հայ ցեղի անցեալ առաքինութիւններէն, վերջիշել հայրենի յիշատակներն ու մեր կատարած ստեղծագործական նիւթերը, քանզի ամենեւեմ պատկերը պտտեցնել երկրէ երկիր: Անհրաժեշտ է իրաւագրկած ու աստանդական հայ մարդու նկարել կենդանի խօսք, բայց խօսող անոր հոգիին ու ցեղային ամենամուրաբան զգացական լարերուն, կարեւոր է հնչեցնել ցեղի արժանապատուութիւնը շոյող լարը, ցոյց տալ մեր հայրերու կորովն ու քաջութիւնը, սրտերը կապել հայրենի մեր աշխարհը ալեկոծող հոգիներու ռազմերգին ու պատուով մոռացութեան ֆողը՝ որ կը պատանփէ ցեղի հերոսական դէմքերը, հրաւիրել մեր ու գալիք սերունդներու երկիւղած համբոյրը անոնց պայծառ նախատներուն... »

Հեղինակը այսպէս կորոչէ իր նպատակը. «Յարգանքի յուշարձան մը Ուրֆայի նահատակներուն: Ներշնչման աղբիւր մը՝ հասնող սերունդին: Գրական մը հայ ցեղի մարտական ընդունակութիւններուն»:

Եւ Լութեր իրապէս իր նպատակին հասած պիտի ըլլայ, եթէ մեր նոր սերունդը ծանօթանայ այդ գրքին:

«Ուրֆայի Հերոսամարտը» 266 էջով, մաքուր թղթով եւ տպագրութեամբ, բաղմամբ հազադիւտ նկարներով զարդարած է: Գրքի երեսն, առաջին իսկ հայեացքէն ընթերցողը կը փոխադրէ հերոսական պայքարի այդ օրերը: Երիտասարդ եւ շատ շնորհալի դժադրիչ Տիրան Աճէմեանը դրած է անոր մէջ պարզ բայց խոր իմաստ մը — պարունակութիւնը ամբողջ երկին. յաղթական, բայց սեւ կամարի մը տակէն հայ հերոսներու անվերջ շարքերն են, որոնք ուրուականօրէն կը յառաջանան հրացանները ուսերնուն՝ դէպի յաղթական կամ հերոսական մահը...

Գիրքը բաժնւած է հետեւեալ հինգ գլուխներու. ա. — Ուրֆան 1915էն (տարագրութենէն) առաջ. բ. — Դէպքերը նախքան կռիւը. գ. — Հերոսամարտը. դ. — Դրաւորներ Մկրտիչ Եօթնեղբէրանի կեանքէն. ե. — Վերապրող ուրֆացիներ եւ 1920ի կռիւը: Այսպիսով Լութերի աշխատութիւնը ընդգրկած է ոչ միայն եղեռնի թաւանը, այլ պատմութիւնն է Ուրֆայի — քաղաքի (30

հազարնոց) եւ շրջակայքի — հայութեան, անոր ազգային-հասարակական եւ մշակութային բովանդակ կեանքի, որ շատ պերճախօս է ու հրահանգիչ: Այդ կեանքը եղած է եռուն, զօրեղ ազգային նկարագրով, աւանդապաշտ եւ ըմբոստ ու կորովի, մանաւանդ օսմ. սահմանադրութեան շրջանին: Ուրֆան եղած է նաեւ կարեւոր կեդրոն՝ իր հասարակական-ազգային հիմնարկութիւններով — դրաղարաններ, միութիւններ, լրասարաններ, երիտասարդական խանդավառ շրջանակներ: Դաւանական ոչ մէկ խտրութիւն ազգային-քաղաքական դործունէութեան մէջ. բոլոր յարանաւանդութիւնները ձուլւած են այդ մարդին մէջ: Բաֆֆին ու Ահարոնեանը եղած են սիրւած դրողներ: Քաղաքական կարեւոր դործիչներու շարք մը եկած անցած է այդտեղէն՝ թողնելով խոր հետքեր երիտասարդութեան մէջ: Մեծ է եղած Դաշնակցութեան դաստիարակչական դերը եւ ազդեցութիւնը սերունդին վրա:

Եւ ահա կը պայթի համաշխարհային պատերազմը ու քիչ ատենէն թիւրքիան եւս կը թաթախուի անոր մէջ: Կը սկսին հայկական տարադրութիւնները: «Ուրֆան տեսակ մը կայան էր — կը պատմէ Լուիս — դաղթականներու կարաւաններուն, եւ Ուրֆայի հայութիւնը մինչեւ վերջը իր կարելին ըրաւ հասնելու համար անոնց կարիքներուն: Ուտելիք, անկողին, հաւուստ եւ նիւթական օգնութիւն, հարադատ եղբայրական արցունքով մեղմելով վիշտը հալածականներու, գիտակցելով որ իրենք եւս, օրերէ վերջ, բախտակից պիտի ըլլան այդ դժբախտներուն: Եւ կը հասնի այդ օրը. մայիս 27էն յունիս 25, ղիւային դաւադրութեամբ, կը ձերբակալին հրապարակի վրա եղած մտաւորականները եւ հասարակական ղեկավարները: Բարեբախտաբար, շատեր պահւած են: Անոնք գաղտնի խորհրդակցութիւն կունենան՝ դիմադրելու կամ կրաւորական դերի մէջ մնալու որոշումը տալու համար: Վարանման մէջ էին, երբ ներս կուգայ Ուրֆայի հրաշք-մարդը՝ Մկրտիչ Յօթնեղբէրեանը, որ վճռապէս կը յայտարարէ, թէ չպիտի թոյլ տայ, որ տարադրուի Ուրֆայի հայութիւնը: Երկար տատանումներ, նոյն իսկ Դաշնակցութեան շարքերում, եւ, վերջի ի վերջոյ, ամբողջ հայութիւնը հարկադրւած կըլլայ պատնէշներ ելլել: Սեպտեմբեր 29ին եկեղեցու գանգերը կը զօղանջեն եւ դիրքերու ետեւէն կը փայլեն մարտիկներու հրացաններու փողերը... Կը սկսի Ուրֆայի սքանչելի հերոսամարտը՝ առասպելական հերոս Մ. Յօթնեղբէրեանի գլխաւոր հրա-

մանատարութեամբ, շրջապատւած իր ամենի ղինակիցներ՝ Յարութիւն Ռասթիէլեան, Սարգիս Եօթնեղբէրեան, Գէորգ Ալահայտեան, Մովսէս Սաճեան, Յար. Սիմեան եւ այլք:

Գերմաքդային եւ հերոսական ճիգերով մի բուն քաջերը, գլուխ անցած ժողովրդի, կազմակերպւած պատերազմական դըլխաւոր ճիւղերով — թէեւ նախնական — առողջապահական, ղինական, ամրաշէն, մատակարարման եւն) երկր-երկար կը դիմադրեն հետզհետէ նոր ղինւորական ուժերով զօրացող թրքական բանակին եւ, վերջ ի վերջոյ, կորցնելով հետզհետէ իրենց ղեկավարները՝ կը պարտւին եւ կենթարկւին միւս վայրերու հայութեան ճակատագրին... Կուռղներու եւ մանաւանդ անոնց ղեկավարներու մահն իսկ հերոսական է. գիտցած են մեռնիլ. ղինադործ նազար թիւֆէնիճեանը ձերբակալւած, իր դրպանի գմելին իր փորը կը խոթէ՝ գաղտնիքներ չփախցնելու համար. Կարմուճ գիւղի ղիւղապետ Կիրակոս Դերձակեանի եղունգները եւ ակռաները աքցանով կը փշրեն ու չեն յաջողիր դադարիք մը որսալ: Իսկ Գէորգ Եօթնեղբէրեանի եւ Ուստիէլեանի մահերը: Վերջապէս, Մկրտչի մահը — հէքեաթական ու սքանչելի...

Լուիսը կուտայ նաեւ դժբախտ նահատակներ Զոհրապի եւ Վարդգէսի փախուստի ծրագրի մասին եղած դրւագրը: Մկրտչին է դարձեալ, որ ծալուած արարական հաղուստին մէջ, կը յաջողի գիշերանց մօտենալ անոնց սենեակին, կը յայտնէ փախցնելու իր որոշումը, որ, դժբախտաբար, կը մերժուի Զոհրապի կողմէ՝ հետեւեալ օր «Շէյթան տէրէսի» մէջ խոչտանդահար սպանւելու համար:

Հերոսական ու յուսահատական այդ մարտին մէջ շատ աչքառու դեր են ունեցած հայ կանայք, իբր ղէնք փոխադրող, լրտեսող, մանաւանդ, անոնցմէ մէկ քանիսը, որոնք մարտական խումբեր են ղեկավարած: Յուղիչ է նաեւ պատանիներու դերը. գնդակներու տարափին տակ անոնք կը սուրան կապ պահելու ղիրքերու մէջ: Ո՛ր մէկը ըսել, որ մէկը պատմել այդ դրւագրներէն:

Այս գիրքն է, որ պիտի կարդայ Ամերիկա եւ Եւրոպա մեծ-ցող հայ տղան, որպէսզի չամչնայ այլ եւս իր հայ ըլլալէն:

Վ. Փ.

ԱՐԱՋ ՏԱՐԵԳԻՐՔ, Ա. ՏԱՐԻ. 1933, ՊՈՒՔՐԵՇ

«Տարեգիրք»ի գրականութիւնը, որ դեռ մի քանի տարի առաջ այնքան ծաղկած էր մեր մէջ, վերջերս բաւական թուրացել է. իրար յետեւից անհետացան Թէոփիլի, Յ. Խաչմանեանի, Յունահայ եւ այլ տարեգրքերը: Հրապարակի վրա, իբրեւ նկատելի գործ, մնացել էր, կարելի է ասել, միայն Պարսամեան եղբայրների «Կեանք եւ Արեւատ»ը: Այս տարւանից նրան միացաւ եւ Բուքրէշի «Արագ»ը:

«Արագ»ը բոլորովին առանձնայատուկ տեղ է գրաւում մեր տարեգրքերի շարքում. նա ամբողջապէս նւիրւած է մէկ երկրի՝ Ռումանիայի հայ դաղութիւն, եւ սրա մէջ է նրա մասնաւոր արժէքը: Մի շարք ուսումնասիրութիւններով, լուրերով եւ տարեկան տեսութիւններով շօշափւած են ուսմանահայ կեանքի այլազան կողմերը: Այդ նիւթի խտացումից պարզւում է ուսմանահայ դաղութիւն անցեալ եւ ներկայ դէմքը: Պարզւում է եւ մի ուրիշ հանգամանք. «Շատ քիչ ժողովուրդներ այնքան դուրգուրանքով իրենց գիրկն են բացած մեզ որքան Ռումէնը», գրում է տարեգրքի խմբագիր Յ. ձ. Սիրունին: Եւ, յիշաւի, Ռումանիայում հայը գգում է իրեն իր տանը: Նա շատ բան է ստանում Ռումանիայից եւ իր հերթին շատ բան էլ տալիս է: «Այսօրւան բովանդակ Մեռ Ռումանիան ծծած է մեր քրտինքը. Մոլտովան ու Պուրովինան ու թրանսիլւանիան, եւ նաեւ Մունթէնիան ու Տոպրոնեան կը կրեն մեր տքնութեանց հետքերը»:

Մեզ համար առանձնապէս հետաքրքրական է տարեգրքի «Սերմեր Օտար Հողի վրա» բաժինը, ուր ներկայացւած են մի շարք հայեր, որոնք մեծ դեր են կատարել կամ այսօր էլ կատարում են համառումական կեանքում: Առաջինը դրանց մէջ Դրիգոր Պըլզգլիումն է՝ ծնւած 1840թ. Եաշում, մեռած 1912թ.: Յայտնի փաստարան ու պետական գործիչ, որ 1888թ. ընտրեց խորհրդարանի երեսփոխան, 1892ին՝ ծերակուտական եւ 1894ին՝ անդամ երկրի բարձրագոյն դատական մարմնի՝ վճռաբեկ ատեանի: Այս վերջին պաշտօնը նա վարեց 14 տարի եւ թանկագին ծառայութիւններ մատուցեց ուսմէն օրէնսդրութեան: Միաժամանակ Պըլզգլիուն քաջ հայագէտ էր եւ գրաղւում էր հայ բանասիրութեամբ: Նրա ջանքերով էր, որ Պետերբուրգում հրատարակեց Մինաս դպիր Թոխաթեցիի պատմական քերթածը մոլտովահայոց շարձարանների մասին Սթէֆան Վոտա իշխանի

ձեռքով 1551ին: Պըլզգլիուն ուսմաներէն էլ թարգմանեց ու հրատարակեց այդ ողբը: Նաեւ մեծ ջանք թափեց ապացուցանելու հայերի դերը ուսմանական հռչակաւոր Սրճէշ վանքի կառուցման գործում: Տարեգրքի մէջ տրւած է եւ Պըլզգլուի յառաջարանը Մինաս դպիր Թոխաթեցիի ուսմաներէն հրատարակութեան — ջերմ ոգիով եւ ասողջ հայրենասիրութեամբ գրւած մի ուսումնասիրութիւն, որ պատիւ է բերում հեղինակին:

Յաջորդ «սերմը օտար հողի վրա» կարապետ Խաչայիլեանուն է, որ «մեծ քննադատ»ի համբաւ է վայելում ուսմէն գրականութեան մէջ: Ծնւել է 1871թ. Մոլտովայի Թէքուշ նահանգում: 1906ից աշխատակից ու ղեկավար է «Վիացա Ռումէնասքը» կարենորագոյն գրական ամսագրի: 1912ից մինչեւ այժմ վարում է Եաշի համալսարանի նորագոյն գրականութեան դասախօսի պաշտօնը: Ունի մի շարք գրական-քննադատական հատորներ՝ «Քննադատական Ոգին» (1908), «Դէմքեր ու Հոսանքներ» (1909), «Նշմարներ ու Տպաւորութիւններ» (1920), «Ռումէն եւ Օտար Գրագէտներ» (1926), «Գրական Ուսումնասիրութիւններ» (1930), «Կեանքը Դիտելէն» (1930):

Հայ «սերմ» է եւ ուսմէն միակ փիլիսոփան՝ Վաքիլ Գոնթաւն (1845—1882), որ միաժամանակ եղել է եւ խոշոր պետական գործիչ — խորհրդարանի անդամ, նախարար: Իբրեւ փիլիսոփա, Գոնթաւն գտնւել է Օգիւստ Կոնտի, Սպենսէրի, Բիւխների եւ, առհասարակ, գրական-նիւթապաշտ փիլիսոփայութեան ազդեցութեան տակ, սակայն, աշխատել է ստեղծել ինքնուրոյն փիլիսոփայական ուսմունք: Իր տիեզերական ալիքների դրութեան մէջ Գոնթաւն փորձում է համադրել տիեզերական երեւոյթները՝ հաստատելով բարձրացման եւ անկման շարժումների դոյութիւնը: Ունի գիտական-փիլիսոփայական եւ՝ քաղաքական-իրաւաբանական հատորներ, որոնց մէջ ամենակարեւորներն են «Տիեզերական թրթռացման տեսութիւնը», «Տեսականների ծագումը», «Բնագանցութեան հիմքերը» եւ այլն:

Որոշ վերապահութեամբ, հայածին ուսմէնների շարքն է դասուում եւ Ռումանիայի մեծ բանաստեղծ Միխայիլ Էմիլեսուլու (1850—1889): Ռումանացիներն իրենք, ինչպէս Եորդան, պնդում են, որ Էմիլեսուլուն ծագումով ուսմէն էր: Սիրունին փորձում է ապացուցանել Էմիլեսուլուի հայկական ծագումը: Տարեգրքում առաջ են բերւած Էմիլեսուլուի 15 կտոր քերթածներ՝ Յ. ձ. Սիրունի թարգմանութեամբ:

«Հայ սերմ» է եւ համեմատաբար լայն հայ շրջաններին ծանօթ Գրիգոր Թրանֆու Նաշը (ծն. 1873թ.) — փաստաբան, ուսուցչապետ, լրագրող, քաղաքական ու պետական գործիչ, խորհրդարանի երեսփոխան, նախարար: Եւ նաեւ գործօն անդամ ուսմանահայ գաղութի, որ մեծապէս նպաստեց Ռումանիայի հայ թեմի կազմակերպութեան գործին:

Վերջապէս, տարեգրքի վերջին «հայ սերմը»՝ Իոն Փէքրէս-ֆու (1851—1932) — ուսմէն բեմի մեծագոյն դերասաններից մէկը, «ուսմէն թատրոնի իշխանը», թատերադիր Պաուլ Պրոդայի բնորոշմամբ՝ «Բուքրէշի ազգային թատրոնի սիւններից մէկը»:

Մասնաւոր հետաքրքրութիւն է ներկայացնում եւ «Արագ»-ի «Հայ հետքերը Ռումէն երկրի մէջ», ուր ներկայացւած են Նի-ֆուլա Նոռկա, Պոկտան Հաթդէու եւ Կէորկէ հայոց պատմութեամբ եւ մշակոյթով զբաղող ուսմէն գիտնականները եւ իրենց գործերը: Առաջ է բերւած նաեւ Հաթդէուի մէկ յօդւածը Արճէշի վանքի մասին: Հետաքրքրական է եւ «հայ արեւստի պրպտիչ» Կ. Պալ-շի «Հայ եւ վրացական աղղեցութիւններ ուսմէն ճարտարապե-տութեան վրա» պատկերազարդ ընդարձակ ուսումնասիրութիւ-նը, որ գետեղւած է տարեգրքում:

Այնուհետեւ «Ռումանիայի ֆրոնիկոն» բաժնում առաջ է բերւած ուսմանահայ անցեալի ժամանակագրութիւնը 897—1600 թւականը, ուր ուսմանահայ գաղութի պատմութեան վերաբեր-ող կարեւոր տեղեկութիւններ են հաւաքւած:

Տարեգրքի մնացած մասը — 173—272 էջ — նւիրւած է ընդհանուր եւ ուսմանահայ կեանքի առօրեային — մանրամասն պատմութիւնը, թէ ինչպէս հիմնեցաւ ուսմանահայ թեմը, առաջ են բերւած բոլոր պաշտօնական վաւերագրերը, հայ մշակոյթի տօնը, տարեդարձներ, տարւայ մահեր, թեմն եւ իր համայնք-ները — մի խօսքով, ուսմանահայ կեանքը իր պէսպէս կողմնորոշ:

Այսքան ինքնին արդէն բաւական է ցոյց տալու համար, որ օգտակար եւ քաջալերանքի արժանի գործ է «Արագ»-ի կատա-րածը: Պէտք է մաղթել, որ նաեւ յաջորդ տարիներ «Արագ»ը ընթանայ նոյն ուղիով՝ աւելի եւ աւելի լայն ընդգիծով ուսմա-նահայ կեանքը: Մասնաւորապէս փափաքելի է, որ ուշագրու-թիւն դարձել եւ ուսմանահայ գաղութի անտեսական վիճակին:

Պէտք է մաղթել նոյնպէս, որ «Արագ»-ի օրինակը վարակիչ դառնայ եւ մեր միւս գաղութների համար: Այդ ձեւով կարելի է լինի առատ նիւթ համախմբել արտասահմանի հայութեան պատմութեան եւ մշակոյթի մասին:

Ս. Վ.

Շ. Նարդունի, «ՄԵՂԵԴԻՆԵՐ, ՄԵՂԵԴԻՆԵՐ...» (Հէֆես-բու Բանաստեղծութիւն, Մատենաշար «Յառաջ», № 1)

Այս տարւան գրքերով հրատարակւած գրական բերքին մէջ ուշագրաւ տեղ մը կը գրաւէ Շ. Նարդունիի «Մեղեդիներ»-ու հա-տորը: Թէեւ քանի մը տարի առաջ լոյս տեսաւ նոյն հեղինակի «Հէֆեսիներու Ալբոմը», փորձիկ գրքոյի մը, թէեւ Նարդունին տարիներ է վեր դանդաղ պարբերականներու մէջ հրատարակւած է իր արձակ բանաստեղծութիւնները, սակայն, Մեղեդիներու հատորին մէջ ամփոփւած՝ հեղինակը մեզի կը ներկայանայ իր գրական ամբողջ գիմազով, յայտնութեան մը պէս թարմ:

Գիրքը կը պարունակէ 8 հէքեաթներ, 5 աւանդութիւններ եւ 24 արձակ բանաստեղծութիւններ: Բայց էապէս բոլոր գրւածք-ներն ալ բանաստեղծական արձակներ են: Ու շարք մը նիւթեր, որոնք «Հէֆես» կամ «աւանդութիւն» բացատրականը չունին, իրենց կազմութեամբ հէքեաթունակ են:

Այսպէս, առանց աւելորդ մանրամասնութեան, երբ կուգենք Նարդունիի ամբողջ գիմազիւնը ընդգրկել, ան իր բոլոր գրւածք-ներով մեզի կը ներկայանայ առաւելապէս իբրեւ բանաստեղծ: Ու այս դեմքին վրա, թէեւ արձակ արշաւով մը, սակայն, հե-ղինակին պատկերները, յուզական դրւագները, իրենն ու մարդիկ, գիւղն ու բնութիւնը, նոյն իսկ իմաստասիրական մտածումները երգի կը վերածւին, երաժշտական կշռոյթով կը թեւածեն, աւելի շիտակ՝ կը վազեն, միշտ յստակ ու զուլալ ձայնով, գու-նազեղ նաբօտներով: Այս սահուն երգերը կընթանան առանց կրկնութեան, առանց յոգնեցուցիչ տարրերու, աչքի ու մտքի առ-ջեւ միշտ նոր հորիզոն մը բանալով, շեշտով նոր, ապրումով նոր, ու գոյներով նոր:

Երկու մասի կարելի է բաժնել Նարդունիի բանաստեղծու-թիւնները՝ հաղորդականութեան տեսակէտէն մօտենալով խնդրին: Բանաստեղծին շարք մը գրւածքները, որոնք հաղորդական են աչքին ու ականջին, կը մնան գոյնի եւ ձայնի սահմաններու մէջ, յուզական չեն անհրաժեշտ չափով: Ակնյայտնի է որ այս նիւթերը կառուցւած են առանց ենթակայական ներքին մղումներու, ու զուտ արեւստն է որ իր դերը կատարած է: Եթէ քննադատը սահ-մանափակի այդ նիւթերով, կընայ սխալ եզրակացութեան յան-գել, բնորոշելով Նարդունիի ստեղծագործութիւնները բանաստեղ-ծական հիմնական տարրէ՝ յուզականէն զուրկ: Բայց, բարեբախ-

տաբար, հեղինակը հարուստ է այլադանութեամբ, եւ իր հատորին մէջ գետեղած են շարք մը արձակներ, որոնք մօտաւոր ազդեցութիւն մը ունեցած են իր ներաշխարհին վրա, ինչպէս, 40 աստիճան տափուքիւն, Ալֆրես խուփ, Ուլ Կադանդ, Մեղեդիներ, Մեղեդիներ, Գիւղիս սուգը, Ամէն բանէ վեր, Կարօտ հայ լեզւին, եւ այլն, որոնք հարուստ են խորունկ ու նուրբ յուզականութեամբ: Արդարեւ, Նարդունին առանց պոռթկալու, ենթակայական նիւթերը մշակած ժամանակ, մեզ կը վարակէ ընդհանրական եւ խորունկ յուզումով մը: Այս յատկութեան յայտնաբերումը մեծագոյն գրականաներէն մէկը կը նկատեմ նոր ու լաւագոյն ստեղծագործութիւններու, որոնք ըլլային անձնական, ապրւած եւ խորունկէն ու թռիչքով ըսած Նարդունիի կողմէ:

Նարդունիի աչքի ու ականջի զգայարաններով եղած արձանացումները գեղեցիկ են, ու ակներախ, բայց տպաւորութիւնը երկար չի տեւեր: Իսկ սրտի արիւններէն բարձրացած ազադակներն ու մրմունջները, մշտական երգի մը պէս կարճադանգեն մեր մէջ:

Նարդունիի հէքեաթներն ու աւանդութիւններն առանձին յատկանիշ մը ունին, առաւելապէս բանաստեղծական երգեր են՝ աւանդութեան մը վրա խարսխւած: Անշուշտ, աւանդութեան ընձեռած երեւակայութիւնը կայ: Բայց հէքեաթը հետաքրքրականութենէ զուրկ կը մնայ միշտ, ու բանաստեղծն է որ քովընտի երգերով աւանդութիւնը կը լրացնէ, շատ անգամ կը բացատրէ: Այսպիսով, հէքեաթներու էական գիծը կը մնայ բանաստեղծութիւնը: Գեղեցիկ, բայց ոչ յուզական: Այս պատճառով հեղինակը իր հէքեաթները չընդարձակեր մինչեւ պատմածքը, երեւակայական դրագները հետաքրքրութեան շաղկապ չեն կազմեր, ու երկը կը մնայ իր կարճ կառուցւածքին մէջ, ուշադրաւ միայն իր գեղեցիկ գոյներով, առանց հոգեբանական բարդութեան:

Նարդունիի այս հատորի գլխաւոր եւ մեծարժէք յատկանիշը, ուրեմն, բանաստեղծական գունագեղ շունչն է: Իսկ երկրորդ եւ նոյնքան արժէքաւոր յատկանիշը, որ անմիջապէս կը տպաւորէ, հեղինակի լեզուն է: Նարդունին օժտւած է գեղեցիկ, գունեղ, թարմ ու սահուն հայերէնով մը, նոյնքան յստակ, որքան հարուստ, ճկուն եւ փնքնահոս գործիք մը, որ հեղինակի նկարագրը պիտի կազմէ ասկէ յետոյ:

Շունչի եւ լեզուի միախառնումով Նարդունին, այս հատորով, իր հաստատուն տեղը կը գրաւէ մեր գրականութեան մէջ: Եւ իր

ապրումներով ու մտածելակերպով հարազատ շառաւիղը հայկական գրականութեան:

Երբ խօսք կընենք ապրումներու եւ մտածելակերպի մասին, կարժէ յիշատակել այստեղ, որ մեր արդի գրականութեան էութիւնը կը կազմէ վերադարձը դէպի հայրենի հողը, դէպի հայուն ներքին էութիւնը: Համաստեղ, Զարեան, Նարդունի, տարբեր ստեղծագործութեամբ եւ տարբեր երաժշտականութեամբ, Հայաստանը կերգեն, հայ գիւղը կապրին, հայկական ժայռին տակը կը վերադառնան՝ հայրենի կարօտը ապրելու համար: Եւ որքան յուրիչ է Նարդունիի կարօտը, վերադարձը, վերացումը, գիւղն իր աղջիկներով:

Սակայն, անցեալի վերապրումներուն հետ, հեղինակը, որպէս գաւազն թափառյալ ցեղին, մարգարէական շունչով մը մեր յարութիւնը կողեկոյնէ հօր երգով մը: Վաղը կը պլպլայ մեր բանաստեղծի հորիզոնին վրա...

Կ. ՍԱՍՈՒՆԻ

«Վէմ»ը լոյս է տեսնելու ամէն երկամսեակի առաջին ամսի վերջը, իւրաքանչիւր համարը շուրջ 7—10 մամուլ: Ներկայ համարը սովորականից մեծ է. հակառակ դրան, տեղի սղութեան պատճառով, պէտք եղաւ յաջորդ անգամայ յետաձգել Ա. Գիւլիսանդանի «Օգոստոս 5ը», Ա. Արեղեանի «Հայազիտութիւնը յետպատերազմեան Գերմանիայում», Ա. Արշակունիի «Վրաստանի Անկախութիւնը» (ըստ Աւալովի) եւ այլն: Յաջորդ համարում կը տրուի եւ Իրագեկի «Առաջին Հայ Թատերգութիւնը» ուսումնասիրութիւնը:

1934 տարւայ ընթացքին «Վէմ»ում լոյս կը տեսնեն նաեւ Դրօի յուշերը:

1934 թւի առաջին համարից սկսած, ենթադրւում է դնել Հայաստանի Խորհրդի արձանագրութիւնները:

Վէմ անունը հանդէսի կողքին նկարել է երիտասարդ գրող եւ նկարիչ ԵՂԻԱ ԳԱՍՊԱՐԵԱՆԸ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	5 դոլար
Վեցամսեայ	3 ,,

ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ՕՐԱԹԵՐԹ ՄԻԱՍԻՆ

Տարեկան	10 դոլար
Վեցամսեայ	5 ,,
Հասցէ՝	

13, Shawmut st, Boston, Mass (U.S.A.)

Ս Ի Ո Ն

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 6 անգլ. շիլին կամ 1.50 դլ.
Հասցէ՝

Patriarcat Arménien, Jérusalem.
(Palestine).

Ե Ր Կ Ո Ւ Ն Ք

ԱՄՍԱԳԻՐ

Պաշտօնաբերք 2. Ռ. Միուքեան
Ֆրանսա և Սիրիա՝ տարեկան 15 ֆր.
Արտասահման՝ 1 տլ.

Հասցէ՝

A. Kapikian. 17, Av. Philippe-Auguste,
Paris II.

Ա Ր Փ Ի

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Հայ բնտանիքի պարբերաբերք
Տարեկան 2 դոլար
Հասցէ՝

„Arpi“ P. O. Box 77, Allston, Mass
(U. S. A.)

Բ Ա Զ Մ Ա Վ Է Պ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	3.50 դոլար
Հասցէ՝	

„Pazmaveb“, St-Lazare. Venise (Italie)

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	5 դոլար
Հասցէ՝	
„Handes Amsorya“, 4, Mechitharisten- gasse, Vienne (Autriche) VII.	

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԻ

ԱՄՍԱԳԻՐ

Սիրիա եւ Լիբանան՝ տարեկան 2 ս.ռ.	
Ամերիկա	2 դոլ.
Արտասահման	50 ֆր.
Հասցէ՝	

Mme Siran Seza, B. P. 722,
Beyrouth (Liban)

Ն Ա Յ Ի Ր Ի Ա Շ Խ Ա Ր Հ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ֆրանսա՝ տարեկան	40 ֆր.
,, Վեցամսեայ	20 ֆր.
Արտասահման՝ տարեկան	50 ֆր.
Հասցէ՝	

50, Fbg du Temple, Paris, II.

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

ՕՐԱԹԵՐԹ

Տարեկան	6 դոլար
Վեցամսեայ	3 ,,
Եռամսեայ	2 ,,
Հասցէ՝	

Haïrenik Press, 13-15 Shawmut st.
Boston-Mass (U.S.A)

Ն Ո Ր - Օ Ր

ՕՐԱԹԵՐԹ

Յունաստան՝ տարեկան	420 տր.
,, Վեցամսեայ	210 ,,
Եւրոպա՝ տարեկան	135 ֆր.
,, Վեցամսեայ	80 ,,
Ամերիկա՝ տարեկան	8 դոլար
,, Վեցամսեայ	4,50 ,,
Հասցէ՝	

„Nor - Or“, 20-A, rue Vouli,
Athènes (Grece).

Ա Զ Ա Տ Խ Օ Ս Ք

ՕՐԱԹԵՐԹ

Բուլգարիա՝ տարեկան	550 լեւ
,, Վեցամսեայ	300 ,,
Ամերիկա՝ տարեկան	6 դոլար
Ուրիշ երկրներ՝ տարեկան	150 ֆր.
Հասցէ՝	

45, Bld Dondoukoff, Sofia (Bougarie).

Ա Ր Ա Զ

ԵՌՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Տարեկան	500 լեյ
Հասցէ՝	

„Araz“ 14 Str. Pictar Luchian
Bucarest (Boumanie)

Ա Լ Ի Ք

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Տարեկան՝	48 ռիալ
Վեցամսեայ	24 ,,
Արտասահման	80 ֆրանք
„Alik“, 22, Ala-ed-Dovleh. Teheran (Persè).	

Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

ՕՐԱԹԵՐԹ

Եգիպտոս՝ տարեկան	150 եգ. դահ.
,, Վեցամսեայ	80 ,, ,,
Արտասահման՝ տարեկան	40 շիլին
,, Վեցամսեայ	20 ,,
Հասցէ՝	

„Houssaper“, B. P. 868,
Le Caire (Egypte)

Ա Զ Դ Ա Կ

ՕՐԱԹԵՐԹ

Սիրիա՝ տարեկան	550 ս. դ.
,, Վեցամսեայ	300 ,,
Արտասահման՝ տարեկան	7 դոլար
,, Վեցամսեայ	4 ,,
Հասցէ՝	

„Aztag“, B. P. 587 Beyrouth (Liban)

Հ Ո Ր Ի Զ Ո Ն

ՕՐԱԹԵՐԹ

Ներքին՝ տարեկան	300 տր.
,, Վեցամսեայ	150 ,,
,, Եռամսեայ	80 ,,
Արտասահման՝ տարեկան	150 ֆր.
,, Վեցամսեայ	80 ,,
Հասցէ՝	

2, rue Franguini. Salonique (Grece).

Ա Ս Պ Ա Ր Է Զ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Ամերիկա՝ տարեկան	1,50 դոլար
Արտասահման	2 ,,
Հասցէ՝	

„Asbarez“ P. O. Box 865
Fresno, Cal (U. S. A.)

Ա Ր Մ Ե Ն Ի Ա

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Արտասահման՝ տարեկան	3 դոլար
Արժանքին՝ տարեկան	6 փեսո
,, Վեցամսեայ	3,50 ,,
Հասցէ՝	

„Armenia“, Canning 1087. Buenas-
Aires (Argentine).

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

«ՎԷՄ» (Խմբ.)	1
ՊՐՈՖ. Ն. ԱԴՈՆՅԱՆ. — Խաչատուր Աբովեանի վախճանը	5
Ա. ԶԱՄԱԼԵԱՆ. — Ամենայն Հայոց Բանաստեղծը	14
Յ. ԶԱԽԻՐԵԱՆ. — Սայեաք Նովա	28
Ռ. ԲԵՐԲԵՐԵԱՆ. — Ռ. Պատկանեանի անտիպ նամակները	39
Շ. ՆԱՐԴՈՒՆԻ. — Փորձ Համեմատութեան Երբբայական Բանաստեղծութեան եւ Գողթան Երգերու միջեւ	53
Ա. ԽՈՆԴԱՐԵԱՆ. — Օպագիցիան Հանրապ. Հայաստանում	63
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ. — Հայկական Բարենորոգումները	83
Վ. ՄԻՆԱՍՈՐԵԱՆ. — Անջատականները	100
ԲԺ. Մ. ԶԱԼԵԱՆ. — 80ական եւ 90ական բւականները	121
Յ. ԹԱԴԵՈՍԵԱՆ. — Մոսկւայում	
ԱՆՅԵԱԼՔ. — Ա. Շախիսարունեան (Ն. Աղբալեան). — Արմէն Գարօ. — Նար-Դոս	122
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ. — Հայրիկի նամակը. — Շահան Զրպետի նամակը Ղուկաս կաթ.ին	133
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ. — Հեքում Պատմիչ եւ չինական նկարչութիւնը. — Խ. Աբովեանի արձանը. — Ռուսահայ Թատրոնի 75ամեակը	141
ԳԻՐԲ ԵՒ ՄԱՄՈՒԼ. — «Հայ Մամուլը»	144
ԳՐԱՆՕՍԱԿԱՆ. —	148
ՅԱԻԵԼԻԱՄ. — Վախճան եւ Մանկունի, «Գէորգ Դ. եւ իր ժամանակը»	1-16

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս,	
Իտալիա՝	տարեկան 65 ֆրանք
Ֆրանսա եւ այլ երկրներ	50 ֆրանք
Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան, Սիրիա,	
Պարսկաստան	40 ֆրանք
Հասցէ՝ նամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամէն տեսակ առաքումների համար —	

S. VRATZIAN,

4, Sq. Léon de Bertalot, Courbevoie-Bécon (S).

Vem-Pierre.

Gérant: V. Hampartzoumian.

Typographie Franco-Caucasienne, 50, Faubourg du Temple.

ԳԵՈՐԳ Դ. ԵՒ ԻԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

(1812-1882)

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Գէորգ Դ. կաթողիկոսը ժԹ դարի ամենաականաւոր հայ դէմքերէն մէկն է, որի կեանքն ու գործը սակայն, դեռ ըստ արժանւոյն լուսաբանած եւ գնահատւած չեն: Ներկայ աշխատութիւնը կուգայ չափով մը լրացնելու այդ բերին:

Աշխատութեան հեղինակն է Վահրամ Կայ. Մանկունի՝ Գէորգ Դ.ի մտերիմ գործակիցը, կարելի է ըսել, անոր աջ բազուկը, ինքն եւս հետաքրքրական դէմք մը, որ իր ժամանակին կարեւոր դեր կատարած է Պոլսոյ եւ Լեւոնիաի ազգային-եկեղեցական գործերու մէջ:

Ինչպէս հեղինակի յառաջաբանէն ալ կը տեսնուի, Մանկունին ինքն ալ մեծ կարեւորութիւն տւած է այս գրածքին եւ դեռ իր կենդանութեանը ուզած է հրատարակութեան տալ. անուպատ պայմանները, սակայն, արգելի եղած են այդ բաղձանքի իրականացման: Այնուհետեւ, Մանկունիի մահանէն յետոյ, իր անձնական դիւանի բոլոր բուղքերու հետ միասին, այս աշխատութիւնն ալ մատնած է պատահական դէպքերու քմահաճոյքին եւ փրկւած է միայն հրաշքով՝ շնորհիւ Նուպարեան Մատենադարանի վերատեսչութեան քափած ջանքերուն: Այս վերջինի բարեացակամութեանը կը պարտինք նաեւ, որ ձեռագիրը լոյս կը տեսնէ «Վէմ»ին մէջ, որու առիթով կը յայտնենք մեր շնորհակալութիւնը Նուպարեան Մատենադարանի վերատեսչութեան:

Մանկունիի աշխատութիւնը գրած է գրաբար լեզուով, որ, սակայն, այնքան պարզ եւ դիւրահասկանալի է ամենքին, որ աւելորդ համարեցինք քարգմանել աշխարհաբանի: Մենք համոզւած ենք, որ այս պարագան արգելի չի լինիր, որ անկէ օգտուին ոչ միայն մասնագէտներ, այլ եւ ընթերցող հասարակութեան լայն զանգւածները:

Մանկունիի այս գործը պիտի հրատարակուի պրակ-պրակ, որպէս «Վէմ»ի յաւելած, հետագային առանձին հատորի վերածելու յարմարութեամբ:

ԽՄԲ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ձկնի 1893 թուականի փրկչական ձեռնարկեցաք գրել զսոյն զայս կենսագրութիւն երջանկայիշատակ Տ. Գէորգ Դ. Հայրապետի Ազգիս՝ Հոգեւոր ծնողի մերոյ՝ ընդհատարար, ստիպեալ յանձնական տկարութեանց, երբեմն յարտաքին դառն անցից զգուշացեալ յառուս վեհ. սուլթան Համիտի վերջնոյ, եւ յաճախ զբաղեալ յԱզգ. վարչութեան աստ ի Կ. Պոլիս եւ պատուիրակութեան ի Ս. Երուսաղէմ, եւ ալսպէս՝ տակաւ առ տակաւ շարունակեցաք մինչեւ ցներկայ ամ Տեառն (1916)։ Եւ ի վերջ կոյս 1914ի եւ յանցելում ամի գրեալ յաւելաք եւ զՅաւելումն յաշխարհաբար՝ առ երկիւղի եւ զգուշութեան յապաղեալ։ Ապացուցանեն զայսոսիկ նաեւ ակնարկութիւնք ինչ ըստ ժամանակակից անցից ի կարգի կենսագրութեան եւ ի ծանօթարանութիւնս։

Ի գրելն զսոյն զայս կենսագրութիւն եղեւ նպատակ մեր թողուլ ապագայից ի գիտութիւն, ի խրատ եւ յօրինակ միանդամայն՝ զկարեւորագոյն եւ զգլխաւորագոյն խնդիրս կրօնականս, ազգայինս, հայրապետականս, վարչականս, կրթականս, իրաւականս հանդերձ սարօքն։

Կամէաք զասաւորել զխնդիրս ըստ կարգի ամացն եւ առանձին զուղեւորութիւնս ի միում շարի, մանաւանդ թէ եւ առաւելապէս՝ մի զկնի միոյ կարգել զիրաւասական խնդիրս եւ զնուիրականս, ալ ընտրեցաք առաւել միջոցն տալ թանձրացեալ եւ ընդարձակապատում խնդրոց, միջանկեալ գրելով զթեթեւագոյնս եւ զպատմականս, զի մի ձանձրացին ուրք ընթեռնուն կամ զրազին ի սմին։

Թեթեւ պակասութիւնք են ի սմա՝ կորուսեալ գոլով զպատմէնս ինչ եւ զարձանագրութիւնս, թէ եւ հետեւեցաք ի ձեռս բերել ի Ս. Էջմիածնէ, մատնացոյց լեալ որոց հարկ էր եւ ուր սլարտ էր որոնել եւ գտանել։ Այլ ոչ բոլորովին յաջողեցաք բերել ի ձեռս ի հոռուստ աստուստ գրելով եւ ստիպելով։ Գուցէ անհարադատ եւ անհաւատարիմ անձինք զողացեալ էին, որպէս յաճախագոյնս պատահի ի Մայր Աթոռում եւ ալլուր։

Նաեւ տուաք զանցառութեանց զմանրամասնութիւնս կարեւորս ոմանց անցից եւ խնդրոց, մանաւանդ զի անձնական տկարութիւնք մեռ գլխաւոր իմն արդելս դնէին եւ ոչ բաւէաք։ Միանգաման ոչ բաւեաք տալ գրել ալլոց՝ վճարեալ զվարձս, թէ եւ զարձեալ եղեն ծախք ոչ սակաւք։

Պարտիմ յայտարարել յյաւիտեան՝ զի քննադատութիւնք իմ եւ սմին կենսագրութեանս յայսմիկ վերաբերին ցարական եւ

Կաթնով-Տօլստոյեան, իսկ նպաստաւոր ակնարկութիւնք իմ ոչ վերաբերին համիտական եւ իբք-իստական կառավարութեանց։

Խնդիր եւ առարկութիւն ոմանց եղեւ ընդդէմ գրաբար լեզուի, ալլ սակայն առաւել դիւրին էր մեզ գրել ի գրաբար, թէ եւ ոմանց ոչ ախորժելի։ Բացառութեան տուաք զՅաւելումն իբր նմոյշ։ Մանաւանդ զի գաւառական աշխարհաբար լեզուք խառնիճաղանձք են ի մեզ, եւ յամենայն կողմանս աշխարհի գտանին գրաբարադէտք։

Եթէ գրէաք զսոյն զայս կենսագրութիւն յերիտասարդական հասակի եւ ի Մայր Աթոռում, առաւել ճոխագոյնս եւ կրկնապատիկ լինէր, միանգամայն հարուստ ալլեալ լուսանկարօք։ Ծանրածանր զբաղմունք մեր հանդերձ հիւանդութեամբք արդելին յաւետ եւ հանապաղ։

Արդ ոչ ունիմք պէտս գովեստից։ Բաւական լիցի մեզ եթէ Մ. Հայրապետք եւ բարձրաստիճան անձինք քաղեսցեն զկարեւոր փորձառութիւնս եւ զօգուտս։

Ճեմարանական սան Արդոյ Մ. Արեղեան հրատարակեալ զհամառօտագոյն եւ զհակիրճ կենսագրութիւն ինդ անուամբ «Գէորգ Դ. Մեծագործ Կաթնովիկոս ամենայն Հայոց» ի տալարանէ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի ի 1899 ամի, առթիւ քսանեւ հինգամեայ տարեդարձի Գէորգեան Ճեմարանի Մայր Աթոռոյ ամփոփեալ ի 20 (Ի.) գլուխս։

Ոչ սակաւ քննադատելի տեղեկութիւնք են ի նմին, ոկսեալ ի ծննդենէ եւ յուսումնառութենէ Գրիգորի-Գէորգայ եւ յանձն քարոզչութեանն Խաղեղջ, հանդերձ ալլովք, զորոց զոմանք համառօտիւ իմն պարզեաց կենսագիրս այս ի «Սուրհանդակ» օրաթերթի, յամի Տեառն 1899 (սկսեալ ի 24է Յունվարի ց2 Փետր. վարի)։

Պ. Արեղեան սակս տեղեկութեանցն որ ի ծննդենէ Գրիգորի-Գէորգայ մինչեւ յընտրութիւնն կաթնովիկոսական հետեւէ է ձեռագիր կենսագրութեանն պատրաստելոյ ի կաղ Սարգիս վարժապետէ Գնունոյ վանեցոյ։ Պ. Գնունի հաստատեալ զընակութիւն իւր ընդ ընտանիսն ի վաղարշապատի՝ վայելէր զպաշտպանութիւն եւ զկարեկցութիւն Տ. Գէորգ Դ. Հայրապետի Ազգիս, վանեցիական իմն կեղծաւորութեամբ գրաւեալ զմասնաւոր համարումն Նորին Սրբութեան։ Եւ ջանայր հնարել զառիթս առ ի ներկայանալ Հոգեւոր Տեառն՝ գրեալ զուղերձս, զնախանձախնդրական յօղուածս եւ զգրական երկս ինչ։ Եւ յամսն 1876—80 խնդրեաց գրել զկենսագրութիւն Նորին Սրբութեան, եւ գիմեալ առ կենսագիրս, խնդրէր զտեղեկութիւնս։ Եւ կենսագիրս, ըստ հրամանի Ս. Հայրապետի, ետ Գնունոյն Սարգսի զհակիրճ ցանկաձեւ տեղեկութիւնս ինչ, զիտացեալ քաջ զկենսագրական տկարութիւն նորա եւ զվանեցիական տրամադրութիւնսն, մանաւանդ ոչ էր կենսագիրս ժամ պարապոյ առ ի զբաղել ընդ նմա։

Գրէր Սարգիս վարժապետ զկենսագրութիւնն եւ տետրակ առ

տետրակ տանէր ցուցանել Հոգեւոր Տեառն առ ի տալ սրբադրել: Բերէր եւ առ կենսադիրս առ ի ուղղել, եւ վրիպէր յաճախ յակնկալութեանց իւրոց: Երկուստայ Հոգեւոր Տեառն զկենսադրական տետրակս առ ի ուղղել՝ տառարկեալ միշտ զի կորուսեալ է զառաջին սրբադրեալն: Եւ այսպէս ունէր զերկուս օրինակս կենսադրութեան լի աւելորդարանութեամբք եւ սխալանօք: Եւ զի հայր Սարգսի լեալ է խոհարարապետ յապարան Մաքսուտեանց ի Միջագեղջ Կ. Պօլսոյ, ի թարգմանչաց վարժարանի տեղւոյն առեալ է Սարգիս զուսումն իւր եւ զկրթութիւն ի հայադիտութեան եւ ի կրօնադիտութեան (1855—61թ. փրկ.), լուեալ է անդ զժամանակակից զանցս ինչ, միանգամայն աշխատակցեալ «Վարդ» անուն հանդէսի: Որով ինքնին յաւելեալ է նաեւ զտեղեկութիւնս ինչ անուղիղս սակս ազգային շարժմանց եւ ճեմարանական (Իւսկիւտարու) անցից եւ այլոց եւ այլոց: Յորպիսիսն մոլորեալ է ահամայն եւ Պ. Արեղեան:

Յետ վախճանի կենաց Հոգեւոր Տեառն, ի 1883 թուականի, բաղմիցս թախանձեաց եւ խնդրեաց Պ. Գնունի ի կենսադրէս զնոյ առնուլ զկենսադրութիւնդ, զմի օրինակն եւեթ, առ ի տալ տպել: Կենսադիրս առաջարկեաց զհամայն օրինակս, յորս ի տեղիս տեղիս ձեռնադրեալ էր Հոգեւոր Տէր, զնոյ առնուլ, վճարեալ զմի հարիւր ուրբի եւեթ (10—12 ոսկի օսմանեան), ըստ որում կենսադրութիւնն այն պակասաւոր էր բաղմօք եւ տկար ըստ ամենայնի, եւ նպատակ կենսադրիս էր ազատել զձեռագիր Հոգեւոր Ծնողիս ի շահագործութեանց եւ ի խաչադրութեանց Գնունեոյ: Ոչ կամեցաւ նա տալ զհամայն օրինակս, եւ այսպէս մնաց սակարկութիւնն:

Յետ ամաց ինչ դիմեցին Սարգիս եւ ժառանգք իւր քանիցս ի Ս. Էջմիածնէ առ կենսադիրս աստ ի Կ. Պօլիս առ ի տալ տպագրել կամ նպատակ տպագրութեան կենսադրութեանն յիշելոյ, եւ ընկալան դրացասական պատասխանիս: Ջան կալեալ են նոքա զբաժանորդագրութիւնս սնապարծ եւ բառակոյտ ծանուցմամբք կամ յայտարարութեամբք: Ոչ յուսալի էր յաջողութիւնն:

Գնահատելի է կենսադրական ձեռնհասութիւն Պ. Արեղեանի, այլ պակասեալ են նմա ճոխ եւ հաւատարիմ աղբիւրք, որպէս եւ ժամանակ ընդարձակ, ի գրելն իւրում զմատենիկն «Գէորգ Դ. Մեծագործ Կաթողիկոս ամենայն Հայոց» առթիւ քսանեւհինգամեակի, թէպէտ խնդրեցին ճեմարանականք ոմանք ի կենսադրէս զրել զպատմութիւն հիմնարկութեան Գէորգեան ձեմարանի նովին առթիւ: Տառապէր կենսադիրս ի յողացուս յորժամ գրեաց զպատմութիւն շինութեան եւ բացման յիշեալ ձեմարանի ամփոփեալ ի Ժ. գլուխս, եւ առաքեաց առ ճեմարանականս ի սլէտս հրատարակութեան, ըստ խնդրանաց նոցա, պատուիրեալ եւ պայման եղեալ տպագրել նոյնութեամբ, որում ոչ յաջողեցան նոքա: Էին ի պատմութիւնն յայնմիկ թեթեւ պակասութիւնք ոմանց յիշա-

տակարանաց եւ զրութեանց, զորս յանձնարարեալ էր կենսադիրս ընուլ զիւրութեամբ ի Ս. Էջմիածին, մատնացոյց լեալ յորոց պարտ էին օրինակել:

ՎԱՀՐԱՄ ԵՊԻՍԿ. ՄԱՆԿՈՒՆԻ

ի Սեպտեմբերի 1916
ի Միջագեղջ Կ. Պօլսոյ.

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՂԱԳՍ ԾՆՆԴԵԱՆ, ԾՆՈՂԱՅ, ՔԵՐՑ ԵՒ ԵՂԲԱՐՑ ԳՐԻԳՈՐԻ

Յամի Տեառն 1812 (ըստ Մհմտ. 1228) յառաջին քառորդի ներկայ ԺԹ. ռդ դարու, ի հինգերորդ աւուր ամսեանն Յուլիսի ծնանի Տ. Գէորգ Դ. Կաթողիկոս ի Սամաթիա արուարձանի Կ. Պօլսոյ, եւ առնուլ զմկրտութիւն Ս. աւագանի ԴՏն Յուլիսի ի հրոջակաւոր Ս. Գէորգ եկեղեցւոյ Հայոց, որ երբեմն լեալ է աթոռանիստ Պատրիարք-Առաջնորդաց Կ. Պօլսոյ, եւ այրեցաւ ի 186... թուականի: Կնքեն զանուն նմա Գրիգոր*):

Անուանք հօր Գրիգորի են Պետրոս Քէրէսթէճեան Հագրքմիմիւնքանմի Եժմածա թաղէ Պալատու, եւ մօրն՝ Սրբուհի, իւշպէ-

*) ԾԱՆՈԹ. Վ. եպ. Մ. — Իսկական թուական ծննդեան Գրիգորի (Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսի մնայ քննադատելի: Ի մեծի եւ յաղէտալի հրկիզութեան Սամաթիոյ, յամի Տեառն ... [թուականը կը պահէր բնագրին մէջ] այրացուեր լեալ Ս. Գէորգ եկեղեցւոյ եւ յատուկ պահպանողանքան անհետ կորչեն «Արձանագրական Մատեան Մկրտութեան» եւ գրեանք կարեւորք եւ յիշատակարանք: Ուստի անհնար լեալ է ստուգել եւ ճշտել զթուականն: Իսկ երկուց ամաց լեալ է Գրիգոր յորժամ ծնողքն անդառնալ են զնա յուրս եւ յերկրպագութիւն ի Ս. Երուսաղէմ, ուր եւ տուեալ են գրել յաջ րազէն զՄահաճեանական թուական 1230—31, որպէս կենսադիրս քանիցս ետես եւ ընթերցաւ ուշադրութեամբ: Հաշուեալ եւ զյաւելումն մի մի տարւոյ ըստ լուսնականի եւ ըստ Մահաճեանականն թուականի իրր յիւրաքանչիւր երեսուն ամս, դառնեմք եւ գնեմք զծնունդ Գրիգորի ի 1812—13 ամի փրկչական: Կենսադիրս այն քանիցս հարցուիմք եղեւ, թէպէտ ետես զհակասութիւն ինչ թեթեւորոյն: Տառն յորում ծնեալ է Գրիգոր, լեալ է ի թաղն Մուսթաֆա փաշայ, յուրանա Օվա փողոցի ի Սամաթիա: Յետ մահուան անատեան «Հագրքմիմ» — «Միւնհանք Պետրոսի Քէրէսթէճեան, որդի նորա Գրիգոր-Գէորգ վարդապետ (ապա Կաթողիկոս) նախ գնայ առնուլ զհամայն ժառանգական բաժինս եղբարց եւ քերց իւրոց, եւ սոյտ ի Մհմտ. 1263 թուականի ի 17ն սէֆերի վաճառէ Գրիգորի Ռափայէլեան եւ կողակցի նորին Սաթուրիկի (Պօղոսեան ըստ հօրն): Մտնեն եւ նոքա Յովհաննէս քահանայի Նիքոթեան ի 1268 Մհմտ. թուականի: Ըստ տեղւոյ Յովհաննէս ա. քահանայի Ծաղուգեան, Միարանի Ս. Գէորգ եկեղեցւոյ, հրկիզեալ է տունն այլ ի միջի: Հրկիզութեանն («Էնֆիլէճիկի կրակ» անուանեալ) ի 1852 Փրկչ. թուականի, եւ յետ վերաշինութեանն կրէ զարդիս տունն այն զ14 թ.: Վերջին տեղեկութիւնքս այստեղիկ քաղեալ են յԱղբիւրի 1898 թուականի փրկչական, միջոցաւ Աւագ քահանային վերսլիշելոյ:

պիճի-Քեօչէսի թաղէ Սամաթիոյ, որք յերկրորդ ամի ծննդեան Գրիգորի երթան յուխտ եւ յերկրպագութիւն ի Ս. Երուսաղէմ՝ վտանգաւոր իմն ուղեւորութեամբ։ Անդ տան արձանագրել ըստ դարաւոր սովորութեանց ուխտաւորաց զնկար ինչ փոքրիկ եւ զմահմետական թուական տարւոյն յաջ բազկի Դրբորի՝ 1230:

Էին Պետրոսի յառաջին ամուսնութենէ զստերք Սրբուհի եւ Տիրուհի անուամբք, նոյնպէս Սրբուհոյ էին դստերք Նունէ եւ Անթառամ անուամբք։ Իսկ յերկրորդ ամուսնութենէ ծնան նոքա զԳրիգոր, զՕհան, զԱւետիս, զԵւդինէ (Եֆտիկ) եւ զՓեփրոնէ։

Պապք Գրիգորի, իմա՝ հայր Սրբուհի մօր իւրոյ, լեալ է ի Սեբաստիոյ, եւ հայր Պետրոս հօր իւրոյ ի շրջակայից Կեսարիոյ գաղթեալ եւ հաստատեալ ի Կ. Պօլիս։

Արհեստիւ էր Պետրոս դերձակ, անուամբ Մինք-աննի (բաճկոնակակար) եւ ջաղջերակար (ջաշկար), միանգամայն պատրաստաւոր, յԱլի փաշա խանն ի Կ. Պօլիս։ Ունէր ընդ ձեռամբ իւրով գաշակերտս եւ զգործաւորս ոչ սակաւս, ի Պօլսեցոց եւ ի Ռօստօթոցոց։ Սիրելի էր յաշս ոմանց Եփեսոսեաց գլխաւորաց, մանաւանդ բնակելոցն յէյուսլ, որոց էր դերձակ։

Տիկին Սրբուհի ոչ գիտէր զարուեստ ինչ, այլ սակայն էր տանտիկին կատարեալ, տնտես, որդեսէր, ժրաջան, արթուն, համեստ, հեղ եւ բարեհամբոյր։

Երկրքին լծակիցք էին բարեպաշտք, եկեղեցասէրք, քաղցունք ի բարս եւ ի վարս, նախանձախնդիրք յառաքինութիւնս եւ յանձնիւր պարտսն։ Գիտէին նոքա զհասարակ ընթերցանութիւն ըստ ժամանակին ուսեալ ի տնավարժոցս առ ոտս մարապետաց, որպէս անուանէին յայնժամ զՎարպետ տուտուս։

Որպէս յաճախ տեսանեմք զբաղում օրինակս ի Կ. Պօլիս, ծնողք Գրիգորի առթիւ հրկիղութեանց տեղափոխեալ են զբնակութիւնս իւրեանց ի Սամաթիոյ ի Գումգարու, ապա ի Պասդիւղ ի քարոզչութեանն Գէորգայ, եւ հուսկ ուրեմն ի Միջագիւղ Կ. Պօլսոյ, ուր եւ կնքեն զկեանս իւրեանց եւ ննջեն ի Տէր, մայրն Սրբուհի ի 17 Օգոստոսի 1840 թուականի, հայրն Պետրոս ի 26ն Սեպտեմբերի 1842ի, եղբարքն Օհան յ2ն Ապրիլի 1843, Աւետիս ի 5 Յունվարի 1846, կրտսեր քոյրն Փեփրոնիկ ի 11 Յունիսի 1844ի (յօգափոխութեան ի Սարը-եար, յորմէ փոխադրեն զդին ի Միջագիւղ)։

Լսէ զմահ մօր իւրոյ մինչ գտանէր ի ս. եկեղեցւոյ յաւուր չաբաթու ի նաւակատիսն Վերափոխման Ս. Աստուածածնի, եւ ի յաջորդ աւուր մատուցանէ (Տ. Գէորգ վրդ.) զտաղաւարական ս. պատարագ, յետ որոյ թաղէ հանդիսիւ զմայր իւր, արտայայտեալ զգեղեցիկ օրինակ բարեպաշտութեան եւ ջերմեռանդ հաւատոյ, առանց թուլանալոյ ըստ մարդկային բնութեան։

Տարածամ վախճանք եղբարց եւ քեռ սորա պարզեն զսերնդական-ժառանգական ինչ տկարութիւն, յորմէ մագապուրծ գերծաւ Գրիգոր (Գէորգ վրդայ), որպէս ունիմք պատմել այլուր, մանաւանդ մահ ուսումնասէրն Փեփրոնիկի առաւել ազդեալ էր

ամա, ըստ որում առաւել սիրէր զնա, եւ վատեաց զբաղում զբամս առ ի աղատել զնա ի հիւանդութենէ եւ ի ճիրանաց մահուան։ Գեղեցիկ յոյժ լեալ Փեփրոնեայ, ընթերցասէր եւ արթուն, բազումք խնդրեալ են զնա ի կենակցութիւն, եւ ծնողքն՝ մանաւանդ Տ. Գէորգ վրդ. զժուարանս խանդարել զկարգն ըստ սովորութեան ժամանակին, եւ նախ քան զԵւդիմէ պսակել զՓեփրոն։ Որոյ վասն խղճահարէր յորժամ առիթ լինէր խօսակցութեան։

Ի կենդանութեան ծնողաց ամուսնացեալ էին քորքն խորթք եւ ընդարձակեալ զսերունդ իւրեանց եւ զառաւելոս։ Իսկ Եւդիմէ ամուսնացաւ ի Սեպտեմբերի 1843 ամի*):

Գրիգոր հանեալ էր զծաղիկ եւ կրէր ի կերպարանս զնշանս, որք սակաւուք խանդարէին զգեղեցիկութիւն դիմացն։ Անձնեայ եւ թիկնաւէտ, գեղեցկահասակ, լայնաճակատ, քաղցրատեսիլ եւ համեղաբան էր Գրիգոր, եւ ի մանկութեանն յաւատ սիրելի կացուցանէր զանձն ծնողաց եւ համայն պարագայից իւրոց եւ որոց հանդիպէր։ Օր աւուր յաճախէր ի շնորհս, եւ զարգանայր իմաստութեամբ։ Որում յարմարէին արդեօք բանք կամբոնացւոյն եթէ «Նշեալ աղայ» եւ զտղայական ախտին մարտն վանեաց, տղայական կրիւքն ամաչեցուցեալ զթշնամին. մանուկ՝ եւ ի վարժումն հնազանդութեան ծնողացն ոչ կարաց յողորդել զնա»։

Սիրէ գիտալս եկեղեցականս, եւ կազմէ ի տան զսեղան, պատրաստէ զգեստս, զթագ, եւ ձեւացուցանէ զպատարագ, այսու կանխէ արտափայլել զներքին յօժարութիւն եւ զփափաք իւր։

Ատէ շրջել ի փողոցս եւ խաղալ ընդ մանկանց, որոց յորդոր կարգայ գալ ի տուն եւ կազմել զսեղան, ձեւացուցանել զպատարագ, զժամերգութիւնս, զքարոզս, զթափօրս։ Սիրէ զընկերակցութիւնս զայսպիսիս։

Ի մանկութեան անդ ապացուցանէ զխանդ եւ զընդունակութիւն յերգեցողութիւնս, որպէս եւ յաճախ երգէ ի տան։ Ջանայ ընթերցումը զգիրս, եւ զբօսնու մատինիւք։ Որպիտի ընթացք սորա պարգէին զձգտումն եւ զընդունակութիւն իւր։

*) ՄԱՆՈԹ. Վ. եպ. Մ. — Դնեմք աստ ի ծանօթութեան իրբեւ նմոյշ ինչ ժամանակակից սովորութեանց զպատճէն հարսանեկան հրաւիրաթղթի, զոր յանձնեաց կենսադրիս Վրթանէս քահանայ Պալեան Օրթաքէօյցի ի 1891 թուականի ի Միջագիւղ, թէպէտ պակասէր հասցէ թղթոյն, պատառեալ հատեալ եւ կորուսեալ գոյով կէս մասն թղթոյն այնօրիկ։

« Գերայարգ աղա ազնուամեծար նազեկոյդ ողջոյն եւ օրհնութիւն « Յիսուսականք։

« Յայսմ շարաթու ունիմք Տէրամբ առնել զհարսանիս քեռն մերոյ, « վասնորոյ խնդամիտ մատուցանեմք զայս երկուող զեր ազնուամեծար յարգութեան ձերում, որով խնդրեմք հրաւիրանօք, զի շնորհ արարեալ հրա- « մայիսջիք յեկեցի յառաջիկայ շարթու աւուրն։

« Մնամ սպասեալ բերկրաւիթ՝ գալտեան Ձերոյ

« (Ինքնաձեռագիր) Նու. ԳԵՈՐԳ ՎՐԴ. ՄԻՋԱԳԻԻՂԻ։ »

« 1843 Սեպտ. 21, ի Միջագիւղ »։

Ձգային ծնողը իւր, զի հարկ էր այլեւս տալ ուսման զԳրիգոր, եւ գտին զյարմար տնավարժոց: Մանաւանդ սոյն այս մանուկ ինքնին խնդրէր ուսանիլ զընթերցումն եւ զգիր, յաճախել ի Ս. եկեղեցի, որպէս տանէին յաճախ ծնողը իւր: Եւ տեսանէին բացայայտ, զի ախորժէր յոյժ յեկեղեցւոյ եւ երգեցողութեանց: Որով ուրախ լինէին հանապազ եւ ինքեանք:

Յերկիւղէ Ենիշէրեայ, որպէս ծնողը ամենայն, նոյնպէս ծնողքն Գրիգորի ոչ երբեք թոյլատրէին նմա միայնակ ելանել արտաքս ի տանէ, երթալ յեկեղեցի, ի վարժոց, եւայլն: Յաճախ հայրն կայեալ զձեռնէ մանկան տանէր ուր եւ կամէր, որպէս եւ ի տնավարժոց, յառաւօտու եւ յերեկոյի, որպէս զի մի՛ վրտանդ ինչ հասցէ:

Այսպէս լրացուց Գրիգոր զվեցերորդ ամ հասակի իւրոյ:

ԳԼՈՒԽ Բ.

ՅԱՂԱԳՍ ԿՐԹՈՒԹԵԱՆ, ՈՒՍՄԱՆ ԵՒ ԱՐՀԵՍՏԻ ԳՐԻԳՈՐԻ

Էր Լօթն ամաց յորժամ ետուն ծնողքն զկայտառն Գրիգոր ի տնավարժոց Սրբուհի Մարապետի ի Սամաթիա, որ աջակցութեամբ եղբոր իւրոյ Յովսէփայ, պահէր զծաղկոց:

Եղբայր Մարապետ Սրբուհւոյ էր տիրացու-լուսարար Ս. Գէորգ եկեղեցւոյ Սամաթիոյ, եւ օգնէր լիապէս քեռ իւրում ի դասս կրօնականս եւ երաժշտականս: Յետ ամաց ինչ քահանայացեալ է Յովսէփի ի վերայ Ս. Գէորգ եկեղեցւոյ յիշելոյ, վարելով ի ժամանակի եւ զպաշտօնս Աւագ քահանայութեան եւ լուսարարապետութեան երկնց եկեղեցեաց Սամաթիոյ, Նարլը Գարուլի եւ Նէնի Մահալլէի, ըստ բացառիկ պայմանաց եւ զրութեան արուարձանին այնորիկ, նման երբեմն միացեալ եւ զարդիս բաժանեալ եկեղեցեաց Գում Գարուլի, Նէնի Գարուլի, Կէտիք փաշայի, եւ ցարդ շարունակեալ Բերա արուարձանին Ս. Երրորդութիւն, Ս. Յարութիւն եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցեաց:

Յայնմ ժամանակի կոչէին Մարապետ ո՛չ միայն զկանայս որք առանձնանային ի կուսանոցս ի Ս. Երուսաղէմ եւ յայլուր, զօրիորդս որ ուխտէին ի կուսութիւն եւ հրաժարէին յամուսնութենէ, այլ եւ զկանայս որ պահէին զտնավարժոցս, յորս երթեակէին մանկունք յերկուց սեռից, եւ յաւէտ իգականք ուսանէին զձեռարուեստս եւ զկարս, իսկ արականք զհասարակ ընթերցանութիւն եւեթ: Պահէին եւ քահանայք զտնավարժոցս ի բազում տեղիս, եւ երէցակիւնք կատարէին զմեծ մասն զորս Մարապետք վարէին:

Համաձայն ուղղութեանց եւ պարագայից ժամանակին, զսվելի եւ արդիւնաւոր էին տնավարժոցք այսպիսիք առաւել քան զդպրոցս աղգայինս, մանաւանդ առաւել քան զդաստառութիւնս ոմանց ի խանութս, սակաւուցն բացառութեամբ:

Զարդիս կարծեն եւ կարեն անուանել «խամրոց» զտնավարժոցսդ, ցորչափ յառաջադիմէ մանկավարժութիւն ի կատարելագործութիւն եւ ի դիւրութեանց եղանակս, յաւելուն օր աւուր զկրթական բարեփոխութիւնս եւ զպայմանս առողջապահականս, արծարծեն ի մանկունս զսէր ուսման եւ կրթութեան փոխանակ տաղտկութեան եւ զգուանաց, արդիւնալ եւ զգանահարութիւնս, միանգամայն արծարծեն զմիջոցս առ ի բանալ զսրամտութիւնս, առ ի զօրացուցանել զջիղս եւ առ ի կազդուրել զառողջութիւնս մանկանց: Անշուշտ նաեւ ապագայն ոչ զոհացուցիչ համարեսցէ եւ զներկայ կրթարանս եւ զկրթական ուղղութիւնս, ցորչափ յառաջադիմէ եւ զարդանայ կրթական եւ մանկավարժական խնդիր: Այլ սակայն, արդարութիւնն պահանջէ զնահապետել ըստ ժամանակին եւ ըստ յարակից պարագայից եւ զտնավարժոցսդ Մարապետականս եւ զարդիւնս նոցա յօգուտ երկուց սեռից:

Ուղղութիւն տնավարժոցացդ էր արդարեւ անձուկ յոյժ, եւ հաղիւ յաջողէին յընթացս երկուց եւ աւելի ամառ ուսուցանել մանկանց զհասարակ ընթերցանութիւն: Այլ սակայն, ըստ ձեռարուեստից բարեբարէին օրիորդաց ըստ բաւականին:

Բազումք տնավարժոցաց ուսուցանէին մանկանց զայլ-քեմ գրեալ ձեռագիր ի միւս տախտակի, նախ զհասարակ տառս եւ ապա զգլխագիրս, որ եւ տեղին առաւել քան զվեց ամիսս, երբեմն անցեալ առաւել քան զմի ամ: Ապա տալին մանկանց զհեգերէնս, եւ Սաղմոսն պսակէր զուսմունս եւ զկրթութիւն աշակերտաց: Ուսանէին մանկունք եւ զերգս ինչ աղգային եւ եկեղեցական:

Ըստ այսմ ապա ոչ կամէր Գրիգոր մնալ ընդ երկար ի Մարապետական տնավարժոցի, եւ սէր ուսման՝ ընդունակութիւն եւ սրամտութիւն Գրիգորի ստիպեաց զծնողսն փոխադրել զնա յաղգապրոց, թէեւ ուսաւ ի Յովսէփի դպրէ զկրօնական գիտելիս եւ զերաժշտութիւն ըստ մասնեայ:

Յուցանէր Գրիգոր զընդունակութիւն մեծ եւ զյաջողակութիւն նաեւ յերաժշտութեան, որպէս եւ եղբայրն իւր Օհան, ունելով եւ զձայնս քաղցունս, որով դարձաւ սիրելի յայս ոչ միայն ուսուցչաց իւրոց, այլ եւ քահանայից եւ ժողովրդեան, որ խուռն բաղմութեամբ ընտրին զՍ. եկեղեցի յերգելն Գրիգորի, մինչ Սամաթիա յաջողակ եւ ձոխ էր, որպէս եւ ըստ մասնեայ է ցայսօր, քաղցրաձայն դպրօք եւ ներգաշնակ երաժշտութեամբ, ունելով եւ զհնադոյն Ընկերութիւն դպրաց, նման Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Պալատու եւ Աւագ-եկեղեցւոյ Գում-Գարուլի, հանդերձ յատուկ եկամտիւք եւ կտակեալ կալուածովք: Գրիգոր իւրովն ընդունակութեամբ եւ յաջողակութեամբ ցուցանէր զկարօտու-

թիւն եւ զպէտս յաճախելոյ աւելի բարձր դպրոցի եւ զանդուստ
սէր եռանդուն յուսմունս :

Իսկ հայրն Պետրոս*), ստիպեալ ի դրութենէ իւրմէ եւ ի
կարօտութեանց, կամէր կանխել եւ քաղել զօգուտս յանդրանիկ
որդւոյն ի Գրիգորէ, որպէս սովորութիւնք էին եւ են բազում
ծնողաց, առեալ յօգնական եւ յաջակից յարուեստի իւրում եւ
ի դործասենեկի որ յԱլի-Փաշայ խանն ի Պիթ-բաղար, հակառակ
բազմանաց եւ խնդրանաց որդւոյ իւրոյ, եւ պահել անվթար զար-
ուեստ իւր եւ զդործասենեակ ընդ յաճախորդսն : Եւ Գրիգոր հնա-
զանդեալ հօր իւրում, ախմայ կատարէ զփափաք հօր իւրոյ եւ
երթայ ի դործասենեակ, եւ զամս ինչ աջակցի հօր իւրում մինչեւ
հասանէ ի կարեւոր չափ հասակի եղբայր իւր Օհան, որ յաւէտ
հակամէտ էր արուեստի հօր իւրոյ, որպէս եւ կրտսեր եղբայր
իւր Աւետիս, յետ ամաց ինչ աջակցին եւ հետեւին արուեստի եւ
դործոյ ծնողաց իւրեանց, այնպէս զի երկուքին եղբարք յաջողա-
կութեամբք իմն կառավարեն զարուեստ եւ զդործս հօր իւրեանց :

Այլեւս առիթ բարեպատեհ եւ ժամանակ յարմար համարէր
Գրիգոր առ ի հասանել բուռն բաղձանաց իւրոց, շարունակեալ
զուսումնառութիւն իւր եւ մտեալ յեկեղեցական պաշտօնէութիւն :

Քարեյիշատակ Յարութիւն ամիրայ Գաղէղ, հաստատեալ
զկարեւոր եկամուտս, բացեալ էր ի ձեռն Կարապետ Արքեպիսկո-
պոս-Պատրիարքի սիրելոյ իւրոյ զվարժարան Ուսումնարան
անուամբ, ի պէտս պատրաստելոյ զքահանայացուս, ընդ հովան-
եաւ եւ ընդ պարսպաւ Ս. Աստուածածին աւագ-եկեղեցւոյ ի
Գում-Գարու, հանդէպ եւ ընդ հսկողութեամբ Պատրիարքարանի,
յորում դասախօսէր մեծահոգակ Գրիգոր հայկարան եւ աստուա-
ծարան պատուելի Փէշտիմալձեան զկրօնագիտութիւն ընդարձակ,
զհայկարանութիւն, զճարտասանութիւն եւ զտրամաբանութիւն
հասակաւոր աշակերտաց եւ քահանայացուաց :

Կրթական ծրագիր Ուսումնարանին քահանայացուաց ոչ
պարունակէր զբաղմամբիւ «ութիւն»ս եւ զօտար լեզուս, այլ սա-
կայն յաջողութեամբ իմն եւ արդիւնաւորապէս մատակարարէր
զուսմունս կրօնականս, հայկականս, երաժշտականս եւ եկեղեցա-
կանս, զոյգ ընդ քերականական, ճարտասանական եւ տրամարա-
նական գիտութեանց : Պակաս էին միանգամայն պատմութիւն
ընդհանուր, աշխարհագրութիւնք, համարողութիւնք, բնական
պատմութիւն եւ գիտութիւնք, տիեզերագիտութիւն եւ նմանահան-
դօն գիտութիւնք առողջապահական : Աստուածաբանութիւնն
ամփոփեալ էր ընդհանրականս ի Քրիստոնէական Վարդապե-
տութեան եւ ի մեկնութիւնս դրոց ինչ :

*) ՄԱՆՕԹ. Վ. Եպ. Մ. — Հայրն Գրիգորի Պետրոս ունէր զտկարու-
թիւն աշաց մինչեւ զրկել ի սպառ ի տեսութենէ աշաց : Ոմն պարսիկ աշարոյժ
(«Բէհալ» ըստ պարսից ?) արգիլեալ զՊետրոս ի սեւապատ սենեակ մի ի տան
զաւուրս քառասուն, անկեալ ընդ կրունկն ի մահճի, դարմանէ ըստ բաւականին :

Փութամբ յաւելուլ աստէն ի պարծանս Յարութիւն ամիրայի
Պէղճեան, զի նա, թէպէտ տկար էր ինքն յուսմունս, այլ ուսում-
նաւէր, մանաւանդ նախանձախնդիր էր ներդաշնակ եւ քաղցրա-
նուագ երգեցողութեանց եկեղեցւոյ, ուսմանց եւ կրթութեանց
քահանայից եւ քահանայացուաց, աղագին յառաջադիմութեան,
զարգացման եւ բարդաւաճման, ծաղկմանց եւ տարածմանց ար-
ուեստից եւ վաճառականութեան ի Հայս, որպէս վկայեն գործք
եւ յիշատակը նորա : Սակա կարօտութեանց եւ պիտոյից Ազգի
եւ եկեղեցւոյ Հայաստանեայց խնդրէր զխորհուրդս ի Կարապետ
Արքեպ. է եթէ զիւրդ եւ զի՛նչ պարտ իցէ առնել եւ յաւելուլ,
որպէս զի արդիւնաւորեցէ ինքն : Որում պատասխանէ Կարապետ
Արքեպ. — Պատրիարք համաձայն զարդացման եւ անձուկ ընդու-
նակութեան իւրում, եթէ «Ամիրայ, բարեբարեցեք դու Ազգի եւ
եկեղեցւոյ մերում առաւել քան զոր պարտէիր առնել» : Մինչ Գա-
ղէղ ինքնին շարունակէր եւ յաւելոյր զայսպիսի ձեռնարկս, յետ
խրախուսելոյ զԸնկերութիւնս զպրաց եւ զհամայն ձեռնարկս որ
ի պէտս շինութեանց եկեղեցեաց, զպրոցաց, հիւանդանոցաց,
խոհուն իմն հեռատեսութեամբ հոգաց եւ զպատրաստութենէ քա-
հանայացուաց արժանաւորաց : Այլ եւ կարեւոր միջոցօք սատարէր
հոգակաւոր վանօրէից, Ս. Յակոբեանց Երուսաղէմի, Սսոյ, եւ
այլոց եւ այլոց, եթէ ըստ դրամականին եւ եթէ ըստ զարդուց եւ
անօթաց եւ ըստ այլոց պիտոյից*) :

Արդ, պատանին Գրիգոր, առեալ զհրաման հօր իւրոյ, մեկ-
նեցաւ յարուեստէ եւ ի դործասենեկէ, սկսաւ յաճախել ի յիշեալ
Ուսումնարանն եւ ուսանել եռանդեամբ եւ գիշերաջան աշխատու-

*) ՄԱՆՕԹ. Վ. Եպ. Մ. — Յաւուրս Տ. Չաքարիա Արքեպ. — Պատրիարքի
Կաղզուանցւոյ, հաղիւ ուրեմն տեսանմբ զձանս եւ զձգտումն նոր առ ի ու-
սանել զարտաքին գիտութիւնս՝ ընդ դործածական լեզուաց, թէպէտ սահմա-
նափակ իմն ուղղութեամբ, եւ Կետրոնն-Պատրիարքարանն հաղիւ հաստատէր
զմասնաւոր կրթարան ի պէտս 10-12 ընծայացուաց-աշակերտաց Չաքարիայի :
Գովելի էր յոյժ առաջին թեղադրեալ մտածութիւն եւ ձեռնարկ արժանայիշա-
տակ Յարութիւն ամիրայի Պէղճեան ի պէտս եւ յօդուտ հասարակաց եւ եկե-
ղեցւոյ Հայաստանեայց, այլ Պատրիարքարանն ոչ էր գիտակից պատրաստու-
թեանց իւրոց, եւ ընդարձակ կրթական եւ գիտական պիտոյից, եւ ոչ իսկ
կարէր կամ գիտէր տալ զուսումնալ խորհուրդս Պէղճեանի եւ խրախուսել զնա :
Ժամանակակից անձք ոմանք եւ Միթրաբեանք Վենետիկոյ բանային յաւէտ
զկրօնական վէճս միայն եւ զորսորդութիւնս, եւ ոչ երբեք զմրցումն Ազգային
մտաւորական եւ բարոյական կրթութեանց եւ զարգացմանց, զոյգ ընդ լե-
զուաց եւ արտաքին գիտութեանց եւ ուսմանց : Ի վերայ այսր ամենայնի պարտ
է յաւելուլ զի կրօնական վէճք եւ որսորդութիւնք պապականաց չեւտեցին ի
նորոյ ի Հայս զանհրաժեշտ կարեւորութիւն ընդարձակ կրթական եւ ուսում-
նարանական խնդրոց, միանգամայն ջանալ հաստատել եւ յաւելուլ զգործոց
աղագինս եւ վանականս, սկսեալ յաւուրց Տ. Չաքարիայի Կաղզուանցւոյ,
յաւուրս որոյ սկսան ծաղկիլ զպրավանքն Արմաշու, մինչ հնադարեանն եւ
կարեւորագոյն վանք Ս. Յակոբեանց Երուսաղէմայ անվոյթ տակաւին զտա-
նէր մինչեւ յամ Տեառն 1850—65 :

Թեամբ զորս աւանդէր Փէշտիմալճեան, շարունակեալ ընդ նոսին եւ երաժշտութիւն եւ դուստմն Շարականաց ի հմտագոյն զպրաց Աւաղ-նկեղեցւոյ:

Ընդունակութիւնք, եռանդ եւ բարեջանութիւն Գրիգորի գրաւեցին զուշադրութիւն եւ զհամարումն Գրիգորի Պատուելոյ, որ եւ աննախանձ ջամբէր նմա զուսմունս զորս աւանդէր: Խնամ մեծ ունէր եւ խրախուսէր Փէշտիմալճեան զպատանիս զայս Գրիգոր, եւ յաւէտ ուրախանայր ընդ յառաջելիմութիւն սորա եւ ընդ բարի վարս. զովէր որոց պատահէր, մատնանչէր ի նախանձելի օրինակ աշակերտակցացն, յաճախ յանձնարարեալ եւ Գրիգորի օժանդակել եւ թելադրել ընկերաց իւրոց, որով կրկնակի արդէնաւորէր ուսումն եւ փորձառութիւն իւր:

ԳԼՈՒԽ Գ.

ՅԱՆԱԳՍ ԳՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՄՏԱՆԵԼՈՅ Ի ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Յաւուր միում ի յեղակարծ ժամու այցելէ Տ. Կարապետ Արքեպիսկոպոս-Պատրիարք յիսումնարան, եւ ի հարցաքննելն զաշակերտս՝ հաւանի, միանգամայն հիանայ ընդ յաջող եւ համարձակ պատասխանիս եւ ընդ գեղեցիկ շարադրութիւնս Գրիգորի, լսէ եւ զգովեստս եւ զբարի վկայութիւնս Փէշտիմալճեան պատուելոյ եւ այլոց պաշտօնէից զԳրիգորէ, եւ աջնպէս սեւեռէ Կարապետ Արքեպ. զբարեմիտ ուշադրութիւն իւր ի վերայ սորա:

Գոգցես կարգայ Կարապետ Արքեպ.-Պատրիարք զսիրտ եւ զանդուստ փափաք հոգեւոր Գրիգորի, եւ օժանդակէ սմա հասանիլ եկեղեցական փափաքանացն:

Յանչափս ուրախանայ Գրիգոր ընդ համարումն եւ ընդ խրախոյս Կարապետ Արքեպ.-ի, եւ խնդրէ առնուլ ուղղակի զհաւանութիւն ծնողաց իւրոց, որք ընդդիմանային յաւէտ: Եւ Պատրիարք խորհի հնարս, եւ պատրուակեալ զգրադրութիւն ի պատրիարքական Փոխանորդարանի՝ համոզէ զծնողսն ըստ թախանձանաց պատանեկիս այսորիկ, եւ առնուլ զհաճութիւնս նոցա:

Եւ այսպէս Գրիգոր ի 25 Մայիսի 1830 ամի փրկչական մտանէ ի Պատրիարքարան եւ ստանձնէ զպաշտօն գրադրութեան առ փոխանորդութեամբ (Վէֆիլ) Առաքել քահանայի՝ համաձայն հրամանի եւ տնօրէնութեան Պատրիարքի, զոյգ ընդ նմին շարունակէ եւ զգասառութիւնս իւր յիսումնարանի, պարապելով յա-

ւէտ եւ ի վերժանութիւնս Ս. Գրոց եւ կրօնական մատենից: Չէր սմա փոյթ երբեք պարապելոյ իղբօսանս եւ ի զուարճութիւնս, զորպիսիս փոխանակէր երգեցողութեամբք եւ շարականադիտութեամբք:

Հարկ է յաւելուլ աստէն, զի ոչ գիւրին ինչ էր պաշտօն գրադրութեան փոխանորդարանի (Վէֆիլարանի), թէպէտ գրամական պարզեւք հրապուրէին զպաշտօնավարս: Բաց յայսմանէ, Առաքել քահանայ Վէֆիլն ջանայր զնել զորդի իւր ի գրագիր Փոխանորդարանի. վասն որոյ ընդ տկամբ հայէր ի Գրիգոր, վարէր ընդ սմա յաւէտ հակակրութեամբ, բարդէր զայլ եւ այլ աշխատութիւնս ծանրացուցանէր զպաշտօն սորա, որպէս զի ծանձրացեալ եւ յուսահատեալ ի բաց մեկնեցի ի գրադրութեանէ: Այլ Գրիգոր խոհեմութեամբ եւ համբերութեամբ տարեալ ամենայնի, ոչ ումէք յայտնէր զտրտմնջ եւ ոչ առ Կարապետ Արքեպիսկոպոսն, որում յաւէտ սիրելի եւ հաճոյ ընծայէր զանձն:

Մերթ թեկնածութիւնք, երբեմն պապական խարդաւանութիւնք, յաճախ ետամուրական քմահաճոյք ոմանց ազդեցիկ անձանց, եւ մերթ կրօնական վէճք եւ խնդիրք յաճախ արդիւնաւորէին զպատրիարքական փոփոխութիւնս: Տ. Կարապետ Արքեպ. ի շնորհս պաշտպանութեան եւ ազդեցութեան Յարութիւն ամիրայի Պէղճեան, որոյ էր սիրելի սակս համեղաբան եւ ճարտարախօս քարուղծութեանց իւրոց, համաձայն ըմբռնմանց ժամանակին, վարէր զիշխանութիւն պատրիարքութեան, առանց ունելոյ ինքնին զվարչադիտութիւն բարձր: Եւ յառաջադիմական ջանք ոմանց եւ յարաբերութիւնք արտաքինք ոչ ախորժելի լինէին նմա: Եւ ոչ իսկ փոյթ էր նմա աշխատ լինել ըստ արժանւոյն յօգուտ եւ ի պէտս Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց, հետեւեալ յաւէտ անձնական դիւրութեանց, մինչ «չըջանն Գաղէգեան» կարէր օժանդակել նմա ի յաջողութիւնս ոչ սակաւ ազդօգուտ ձեռնարկութեանց, շնորհիւ գրամական առատութեանց եւ տնտեսական դիւրութեանց: Տ. Կարապետ Արքեպ. թերացաւ եւ յեկեղեցական եւ կանոնական պարտաւորութիւնս իւր, միանգամայն առթիւ խանդարմանց յարաբերութեանց ընդ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, սակս քաղաքական պատճառաց, հաստատեալ զգրութիւն նոր «Իրր առժամանակեայ», զի վարդապետք-առաջնորդք վիճակաց նստցեն յԱթոռ, զործածեսցեն զթագ, զեմիւրոն եպիսկոպոսական, տեղափոխեալ յաճախ եւ զԱռաջնորդ: Ներելի է ասել զի Կարապետ խնդրէր յաւէտ զհանգիստ անձնական քան ծառայել եկեղեցւոյ եւ ազգի, որոյ վասն եւ կամէր հրաժարիլ ի պատրիարքութենէ եւ մեկուսանալ յուսկիւտար, ուր ետ կառուցանել զրնակարան յատուկ հանդէպ Ս. Խաչ եկեղեցւոյ ի Սէլամսրդ թաղի, ծախիւք Գաղէգ ամիրայի, զոր եւ յատկացոյց նախկին պատրիարքաց յետ մահուան իւրոյ*):

*) ՄԱՆՈԹ. Վ. եպ. Մ.— Տ. Յակոբոս Արքեպ. երբեմն Պատրիարքն խանդարեաց զկտակ նորա եւ զկարգադրութիւն: էր արդարեւ ի զաղանի եւ կուսակցութիւն ինչ կազմեալ յաշակերտաց Տ. Յովհաննէս Արքեպ.-Պատրիար-

Ժամանակակից անցը ինչ աղգայինք ծանրացեալ ի վերայ պատրիարքի, Կարապետ Արքեպիսկ. առնու զհաւանութիւն Գաղէզ Յարութիւն ամիրայի եւ հրաժարի, որում յաջորդէ Տ. Ստեփաննոս Արքեպ. Պրուսացի, Աղաւնի անուանեալ, յամի Տեառն 1831, ըստ ընտրութեան երեւելեաց աղգայնոց, որ եւ ըստ յանձնարարութեան նախորդի իւրոյ հսկէ տակաւ եւ հետեւի ի պաշտպանութիւն պատանեկին Գրիգորի: Միանգամայն տեսեալ զբարի վարս, զգովելի ընթացս, զժրաջան գործունէութիւն, զհաւատարիմ պաշտօնավարութիւն, զբարեպաշտ հաւատս եւ զջերմեռանդութիւն, զքաղցրանուաղ երգեցողութիւնս, զաղօթասիրութիւն եւ զուսումնասիրութիւն Գրիգորի, օր աւուր յաւելու զիւրն վստահութիւն եւ զհամակրութիւն, զհամարումն եւ զպաշտպանութիւն, տեսանելով զառատութիւն չնորհաց Աստուծոյ ի վերայ Գրիգորի եւ զապագայ յուսալից եւ փառաւոր:

Յետ Առաքել քահանայի, յաւուրս պատրիարքութեան Ստեփաննոսի, աշակերտակից հոգեւոր եղբայր նորին եւ միաբանակիցն Արմաշու Պօղոս վրդ. Թաքթաքեան ի Պրուսայէ ստանձնեալ վարէր զպաշտօն պատրիարքական Փոխանորդութեան, որ եւ տեսեալ զգործնական հմտութիւնս եւ զփորձառութիւնս Գրիգորի, իբրեւ զօժանդակ եւ զօգնական իւր գործածէ զսա: Որեւ անձնուիրաբար ծառայեալ նմա ոչ միայն իբրեւ զբարեկեր, այլ եւ իբրեւ զփոքրաւոր, օր ըստ օրէ յաւելոյր գրաւել զկատարեալ վստահութիւն եւ զհամարումն Պօղոսի:

Յարաբերութիւնք Ստեփաննոսի ընդ Պօղոսի ոչ էին անկեղծք, սիրալիրք եւ մտերմականք ըստ արտաքին պատճառաց, սակայն Գրիգոր հաւասարապէս վայելէր զսէր եւ զվստահութիւն նոցա:

Պօղոս վարդապետ Թաքթաքեան ունէր զյիշատակելի արդիւնս եւ զգործունէութիւն ի վանս Արմաշու, առաւել ըստ կրթական խնդրոց, եւ զնախանձախնդրութիւն յեկեղեցական եւ ի կրօնական խնդիրս, որոյ վասն եւ առաքեցաւ յաջորդ ի Գաղատիա, ջանիւք Յակոբոս-Մատթէոսեան կուսակցութեան: Յետ աքսորանացն հետեւի այլեւս ծայրայեղ իմն զգուշաւոր պահպանողականութեան, միանգամայն համբերատար լինել ի խօսս եւ ի գործս իւր: Եւ այնպէս իմն առնել, զի զոր կամէր առնել եւ խօսել, ի գաղտնի թելադրէր այլոց եւ տայր նոցա խօսել եւ գործել: Զսոյն զայս ընթաց եւ զուղղութիւն կալաւ եւ ի փոխանորդութեանն, եւ յառաջ վարէր զԳրիգոր եթէ յաշխարհականութեան եւ եթէ ի վարդապետութեան:

Նպաստաւոր հանգամանք այսպիսիք միացեալ ընդ արթնութեան, գործունէութեան, ժրջանութեան, փորձառութեան եւ յաջողակ պաշտօնավարութեանց, ետուն Գրիգորի զաղքեցիկ զիրս ի Պատրիարքարանի, եղեւ բազմաց ծանօթ եւ սիրելի, մինչեւ շարժել զնախանձ սակաւուց ոմանց եւ ամբաստանել զամանէ թէ

քի, զոր կազմէին եւ վարէին Յակոբոս երբեմն պատրիարք եւ Մատթէոս երբեմն պատրիարք եւ ապա կաթողիկոս, այլ սակայն տկարանայր առաջի աղքեցութեանց Գաղէզի, որ զօրացաւ յետ վախճանի նորա, յաւուրս պատրիարքութեան Ստեփաննոս Արքեպ. Պրուսացոյ, Աղաւնի մականունելոյ:

ինքնագլուխ վարէր զպաշտօն Փոխանորդութեան, մինչ խորամանկ եւ խորագէտն Պօղոս գործածէր զսա ըստ արժանւոյն, եւ զոմանս պատասխանիս ղժուարինս աղմուկաւորէր եւ փոխանակէր բանիւ բերանոյ Գրիգորի, փոխանակ վճարելոյ ինքնին եւ ուղղակի եւ այսու առթէր զնախանձ եւ զգրգիւ, թէպէտ Գրիգոր առ ոչինչ համարէր զվերջինս: Վասն որոյ Գրիգոր-Գէորգ երեւէր յաճախ եւ էր առարկայ վրէժխնդրութեանց հակառակորդաց, մինչեւ հիւսել եւ յանուն նորա զոտանաւորս դռնհականս, որպէս եւ յանուանս այլոց, շարադրեալ ի Մատթէոսեանց, յարմարեալ զբամբասանս եթէ ոչ զզրպարտութիւնս թշնամականս ընդդէմ Ստեփաննոսեանց, ի շարս որոց ունէր Գրիգոր զգործօն գեր զլիաւոր:

Փոխանորդն պատրիարքական յայնժամ վայելէր տակաւին զլիազօր արտօնութիւնս եւ զմիջամտութիւնս: Գողցես յաճախ գերադանցէր առաւել քան զպատրիարքական իշխանութիւն, մանաւանդ ի դատական գործս, ի յարաբերութիւնս ի Բ. Դրան, ի վարչութեան Կ: Պօլսոյ եւ ի գործս Կեդր. Հիւանդանոցի Կ. Պօլսոյ, մինչեւ անգամ բանտարկել զյանցաւորս, զան հարկանել կամ առնուլ ի գլանակ (ֆալաֆա) զոտս յանցապախօց արանց, շղթայել զձեռս եւ զոտս (էլէֆէ): Իսկ զան հարկանէին զկանայս ի թիկանց կուսէ՝ տուեալ եւ պրկեալ ի թիկունս ժամկոչաց կամ բարապանաց (եասագնր) պատրիարքարանի: Երբեմն լրացուցանէր եւ Աղգ. Հիւանդանոցն զպէտս զգաստարանի եւ բանտի:

Վասն որոյ, որպէս ծանր էր պաշտօնը Պատրիարքական Փոխանորդի, նոյնպէս կարէր արդիւնաւորել զծառայութիւնս գնահատելիս, եթէ վարչագէտ եւ բարեմիտ էին փոխանորդք եւ գիտէին վարել արժանաւորապէս: Յայս սակս ջանայր Գրիգոր բարձրացուցանել զանուն Պատրիարքի եւ Փոխանորդի, արթուն գործունէութեամբ եւ աղղու վարչութեամբ, եւ այսու դիւրագոյն լիցի իմանալ՝ զի ոչ պակաս էին ղժուարութիւնք, նախանձք, ատելութիւնք եւ հակասութիւնք:

Դատական գործք Փոխանորդարանի յարուցանէին երբեմն զկնճիռս ըստ խոստովանութեանց եւ ըստ ամուսնական խնդրոց, յորպիսիս տկարանային կուսակցօն փոխանորդք: Վասն որոյ քանիցս փորձեցին յանձնել քահանայից զպաշտօնը: Սակայն փոխանակ երկուց՝ տանապատկէին ղժուարութիւնք եւ կնճիռք: Յայս սակս եւ կուսակցական թեկնածութիւնք յարուցանէին զխոչընդոտս: Գրիգոր ջան կալաւ յարդարել զամենայն, եւ ի պատեհ ժամս եւ ի կարեւոր խնդիրս հրաւիրէր զգործակցութիւն քահանայից, որպէսզի մի՛ ստուեր ինչ գայցէ անուան եւ պատուոյ կուսակցօն Փոխանորդի:

Պօղոս վրդ. Թաքթաքեան վարժեալ առաւել ի վանական կեանս, տկարանայր յաճախ ի վարչական եւ ի դատական գործս. որ եւ պատճառ առաւել լինէր աղղու միջամտութեան եւ գործակցութեանց Գրիգորի, որում տուեալ էր Պօղոս զվստահութիւն կատարեալ:

ԳԼՈՒԽ Դ.

ՅԱՂԱԳՍ ՄՏԱՆԵԼՈՅ ԳՐԻԳՈՐԻ Ի ԿՈՒՍԱԿՐՕՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՂԱԳՍ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽԼՐՏՄԱՆՑ

Տեսեալ եւ փորձեալ Տ. Ստեփաննոսի Արքեպ. Պատրիարքի զայսպիսի անձնանուիրութիւնս եւ զջանս Գրիգորի ընդ բարի եւ պարկեշտ վարուցն, զորոց յաւելոյր Պօղոս վրդ. Փոխանորդ զնպաստաւոր վկայութիւնս, լուեալ եւ զհոգեռանդ զիղձս եւ զուխտս Գրիգորի, ետ սմա եւ ձեռնասուն աշակերտի իւրոյ Յա- կոբայ Պրուսացւոյ ճիւղիւղեան եւ այլոց, — միաբանից ոմանց վանուցն Արմաշու, — զսարկաւազութիւն յաւուր տօնի Աւետեաց Ս. Աստուածածնի, ի շարաթ աւուր յԴն Ապրիլի 1834 թուակա- նի, յԱւագ-եկեղեցւոյ ի Գում Գարու:

Որախոյս մեծ եղեւ Գրիգորի եւ յաճախեաց ի դովելի վարս, ի վճարումն կրկնակի պարտուց եւ ի փոյթեռանդ ջանս: Ա՛յն- չափ բուռն էր սէր եւ խանդակաթ իղձ սորա ի կուսակրօն հոգե- տրականութիւն:

Ս. Պատրիարք յաճախ զնահատէր եւ խրախուսէր զԳրիգոր, մինչեւ խրատել զձեռնասուն աշակերտս իւր առնուլ օրինակ բա- րի ի Գրիգորէ:

Իսկ ի 15 Սեպտեմբեր ամսոյ 1835 թուականի ձեռնադրեաց Տ. Ստեփաննոս Արքեպ. զԳրիգոր, յետ միամեայ եւ վեցամսեայ (մի եւ կէս ամեայ) սարկաւազութեան, ի կուսակրօն քահանայ, ընդ աշակերտաց իւրոց յԱւագ-եկեղեցւոյ պատրիարքարանի, համաձայն կանոնաց եւ արարողութեանց Ս. Եկեղեցւոյ Հայաս- տանեայց, անուանեալ Գեորգ, եւ այլոց՝ Յովսէփ (ճիւղիւղեան) եւ Միխայէլ, որք կատարեն զՔառասունն յԱւագ-եկեղեցւոյ, ի գիշերի մնալով ի խուցս ժամարար եւ հերթակալ քահանայից: Պօղոս վարդապետ Թաքթաբեան եւ աւագ քահանայ Աւագ-եկե- ղեցւոյն հակէին ի վերայ նորընծայից, ուսուցանէին զկարեւորս, մինչեւ լրացան Քառասունն առաջին:

Ըստ որում առընթեր միմեանց են երեք եկեղեցիք հանդէպ Պատրիարքարանի ի Գումգարու, համաձայն պատուիրանի Տ. Ստեփաննոսի Արքեպ. ի, մատուցանէ Տ. Գէորգ զառաջին Ս. պա- տարագ յեկեղեցւոյ Ս. Ոռչի ի վեցն Հոկտեմբերի, յաւուր տա- րեղարձի եւ յիշատակի օծման վերաչինեալ Ս. Աստուածածին Աւագ-եկեղեցւոյ, որպէս Տ. Յովսէփ Պրուսացի (աշակերտ եւ փոքրաւոր Ստեփաննոսի) ի Ս. Աստուածածին յԱւագ-եկեղեցւոյ, եւ Տ. Միքայէլ ի Ս. Յարութիւն եկեղեցւոյ, տալով եւ զքարոզս (յորում տկարանայ Տ. Միքայէլ եւ խնդրէ վերադառնալ մնալ ի Զարխափան Ս. Աստուածածին վանս յԱրմաշ): Ի յաջորդ եօթ- նեակս փոխ ի փոխ մատուցանեն Գէորգ, Յովսէփ եւ Միքայէլ

«ՎԷՄ» ԻՆ

Բաժանորդ կարելի է գրել հետեւեալ տեղերը.
Ֆրանսա՝ Լ. Գեւորեան, 17, rue Damesme, Paris, XIII.
Յունաստան՝ «Նոր Օր», 20-A rue Vouli, Athènes.
Կիպրոս՝ Ա. Մահտեսեան, Papho Gate st. 64, Nicosia.
Բուլղարիա՝ Յ. Տէվէճեան, 82, Bld Hristo Boteve, Sofia.
Ռումանիա՝ Ե. Սարգսեան, Typ. «Astoria», 14, str. Pictor Luchian, Bucarest.
Եգիպտոս՝ Գ. Միխիթարեան, խմբագր. «Յուսաբեր»ի: B. P. 868, Le Caire.
Սիրիա՝ Յ. Սիմոնի, B. P. 208, Alep.
,, Զ. Ապաճեան, B.P. 870, Beyrouth.
,, Ս. Պոյաճեան, B. P. 321, Damas.
Իրաք՝ Մ. Սոսեան, South Gate Bataveen 29/1, Bagdad.
Պարսկաստան՝ Խ. Մէլքումեան, Թաւրիզ:
,, Յ. Մուրադեան, Արադան: P. O. Box 22.
,, Վ. Յովհաննիսեան, Թէհրան: Teint. «Hovar», Khiabane Noelery. Téhéran.
Հարաւ. Ամերիկա՝ «Արմենիա», Canning 1087, Buenos-Aires.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ
Խմբագիր՝ ՇԱԽԱՐԾ ՄԻՍԱԲԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	Տարեկան	վեցամսայ	հոսմսայ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆրանք
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 ֆրանք	130 ֆրանք	
Ամերիկա	200 ֆրանք	100 ֆրանք	
Իւրիշ երկրներ	200 ֆրանք	100 ֆրանք	
Հասցէ՝ 17, rue Damesme, Paris XIII.			

Ն Ե Ա Ն Ք Ե Ի Ա Ր Ի Ե Ս Տ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐԻԵՍ. ՏԱՐԵԳՐԻԲ

Խմբագրութիւն՝ Մ. եւ Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
94, Rue Lafayette, Paris 10°.

Հոկտեմբերին լոյս կը տեսնէ Գ. Տարին,
պատկերազարդ և նոյն բովանդութեամբ

Գին՝ 25 ֆրանք

Հոկտեմբերին լոյս կը տեսնէ
Ա. Գիւլիանի-ԴԱՆԵԱՆԻ
ՀԱՅ-ԹԱՓԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ
Հատոր Առաջին
Բազուի առաջին ընդհարումները
Նկարներով
Գին՝ Ամերիկա, Բրիտ. կայսրու-
րիւն եւ Եգիպտոս 20 ֆր.
Միւս երկրներ 15 ,,
Գրադարան-ընթերցարաններուն 10 ,,
Դիմել՝
A. Gulchandian, «Haratch», 17,
rue Damesme, Paris 13°.